Հ Ե Ղ Ա

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մատակարարման զորությունը

Փ Ո Խ Ո Ւ

ԳԱՐԻ ԿԻՍԻ

Թ Յ Ո Ւ Ն Ը

ՀԵՂԱ

ՁԵՐ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մատակարարման զորությունը

ՓՈԽՈՒ

ԳԱՐԻ ԿԻՍԻ

ԹՅՈՒՆԸ

Your Financial Revolution:
The Power of Provision, Armenian
Copyright © 2022 by Gary Keesee

Originally published in English
Copyright © 2020 by Gary Keesee
ISBN: 978-1-945930-39-3

Gary Keesee Ministries,
P.O. Box 779, New Albany,
OH 43054, USA
GaryKeesee.com

This book is a FREE GIFT from Gary Keesee Ministries and is
NOT FOR SALE

Ձեր ֆինանսական հեղափոխությունը.
Մատակարարման զորությունը, հայերեն
© 2022 Գարի Կիսի

Սկզբնապես հրատարակված է անգլերենով
© 2020 Գարի Կիսի
ISBN: 978-0-9729035-9-2

Գարի Կիսիի ծառայություն,
Փ/Ա 779, Նյու Ալբանի,
Օհայո 43054, ԱՄՆ
GaryKeesee.com

Այս գիրքն ԱՆՎՃԱՐ ՆՎԵՐ է Գարի Կիսիի ծառայությունից
և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ:

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, հատուկ նշումների դեպքում՝ անգլերեն «Նոր միջազգային թարգմանությունից» (NIV), «Նոր կենդանի թարգմանությունից» (NLT) և «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչից» (NASB):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԳԼՈՒԽ 1. Լույսը փայլում է խավարում 23

ԳԼՈՒԽ 2. Նոր մտածելակերպ 41

ԳԼՈՒԽ 3. Իրավասության հարցը 63

ԳԼՈՒԽ 4. Չեք հիշում 95

ԳԼՈՒԽ 5. Լիազորեք ձեր մատակարարումը 115

ԳԼՈՒԽ 6. Հավատքը բանալին է 147

ԳԼՈՒԽ 7. Զգուշացում. մնացեք ձեր զարգացրած հավատքի շրջանակներում 167

ԳԼՈՒԽ 8. Դուք ծրագրի կարիք ունեք 187

ԳԼՈՒԽ 9. Գործելու ժամանակն է 203

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս գրքի վերնագիրը կարծես ակնհայտ փաստի հաստատում լինի: Նկատի ունեմ՝ ո՞վ կվիճի դրա կարևորության հետ: Կարծում եմ՝ բոլորս կհամաձայնենք, որ մատակարարում (կյանքում մեզ անհրաժեշտ բաների համար մատակարարում) ունենալը կենսականորեն կարևոր է: Սակայն շատերը չունեն այն մատակարարումը, որն իրենց անհրաժեշտ է: Շատերը, ըստ էության, պայքարում են զուտ գոյատևելու համար: Նրանք ապրում են ստրկության կյանքով՝ հաշիվների ու պարտքերի ծանրության տակ, որոնք կարծես վերջ չունեն: Իրենց երազանքներով ապրելու փոխարեն նրանք ապրում են հուսահատության մեջ, համակված են ատելի աշխատանքով զբաղվելու սարսափով և, ամենավատը, ապրում են առանց իմաստալից նպատակի:

Վերջերս կատարված ուսումնասիրության համաձայն՝ ամերիկացիների 48%-ը տարեկան 31.561 դոլար կամ ամսական 2.630 դոլար կամ ավելի պակաս եկամուտ է ունենում[1], իսկ բնակչության 40%-ը չի կարող 400 դոլարի չեկ գրել՝ առանց դրա համար նախապես պլանավորելու[2]:

Պատկերացնո՞ւմ եք այն լարվածությունը, երբ շաբաթ առ շաբաթ, ամիս առ ամիս ստիպված եք հետևել ձեր ծախսած յուրաքանչյուր մանրադրամին՝ հուսալով, որ կգոյատևեք մինչև հաջորդ աշխատավարձ, և հայտնի չէ, թե երբ այդ ամենը կվերջանա: Փոխանակ առաջ ընթանալու՝ հայտնաբերում եք, որ ավելի եք ընկղմվում պարտքերի մեջ, որոնցից դուրս գալու ելք չկա: Ես

1 https://howmuch.net/articles/how-much-americans-make-in-wages

2 https://www.cnbc.com/2018/05/22/fed-survey-40-percent-of-adults-cantcover-400-emergency-expense.html

կարող եմ պատկերացնել դա, քանի որ ինքս ապրել եմ այդպես ինը տարի շարունակ: Դա իմ երևակայությունը չէ: Դա շատ իրական է:

Պակասության ամոթը

Կինս՝ Դրենդան, ու ես ամուսնացանք՝ հույս ունենալով սկսել զարմանահրաշ կյանք, բայց հայտնվեցինք պարտքերի մեջ և ապրում էինք ֆինանսական լարված կյանքով: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում ունեցանք վարկային սահմանաչափը գերազանցած և չեղարկված տասը քարտ, երեք վարկ ֆինանսական ընկերությունում՝ 28% տոկոսադրույքով, վճարումներ երկու անսարք մեքենաների համար, որոնց վազքը գերազանցում էր 321.000 կիլոմետրը, հարկային տեսչության արգելանքներ և բազմաթիվ այլ պարտքեր, որոնք չէինք կարողանում վճարել: Մենք հազարավոր դոլարներ էինք պարտք մեր ծնողներին՝ այն աստիճան, որ նրանք դադարեցին մեզ գումար փոխ տալուց:

Այնպես չէ, որ որոշել էինք պարտքերով կործանել մեր կյանքը. մենք պարզապես փորձում էինք գոյատևել: Որքան էլ խելացնոր ինչի, ես աշխատում էի ֆինանսական ոլորտում՝ օգնելով մարդկանց ապահովագրության և ներդրումների հարցում: Ինձ վճարում էին 100 տոկոս միջնորդավճարների հիման վրա, որոնք կուտակվում էին իմ կատարած գործարքներից, բայց միջնորդավճարները բավարար չէին: Մենք հույս էինք փայփայում, որ գործը վերելք կապրի, սակայն շաբաթները վերածվում էին տարիների՝ առանց որևէ փոփոխության:

Ի վերջո, հաշիվները վճարելու համար պարտքերի վրա հենվելու ինը տարիներից հետո սպառվեցին պարտք վերցնելու բոլոր հնարավոր միջոցները, որոնց մասին կարող էինք մտածել: Մենք գրավ էինք դրել գրեթե ամեն արժեքավոր բան, որ կարող էինք գտնել, և այդ ֆինանսական ճահճում ապրելու լարվածությունը հուզական լուրջ ազդեցություն թողեց ինձ և իմ ընտանիքի վրա:

Ես խուճապի նոպաներ ունեցա և սկսեցի ընդունել հակադեպրեսանտներ, որոնք իրականում չէին օգնում և կողմնակի լուրջ հետևանքներ էին թողնում: Բժիշկներն ասում էին նաև, որ ես շա-

քարային դիաբետ կունենամ արյան մեջ շաքարի պարունակության հետ կապված խնդիրների պատճառով:

Առողջական խնդիրներից առավել սարսափելի էր այն վախը, որ համակեց ինձ այն աստիճան, որ նույնիսկ վախենում էի տնից դուրս գալուց: Իմ աշխարհը շրջապատված էր դժոխային, տանջող, կաթվածահար անող սարսափով: Մենք մշտապես ուշացնում էինք մեր բոլոր վճարումները, և ամեն ամիս մարտահրավեր էինք ունենում, թե որ հաշիվը փակեինք, և որը կարող էինք թողնել մինչև հաջորդ ամիս:

Կարծում եմ՝ ֆինանսական խառնաշփոթի ամենահյուծիչ կողմը այն ամոթն էր, որ ես զգում էի: Վախը պատում էր ինձ ամեն անգամ, երբ օգտագործում էի վարկային քարտ՝ հուսալով, որ այն կգործի ևս մեկ անգամ: Ես շարունակ պատճառաբանություններ էի բերում, իրականում ստում էի պարտքերը հավաքագրողներին, որոնք զանգում էին գրեթե ամեն օր: Թերևս ամենածանրն այն էր, երբ տեսնում էի, թե ինչպես էր իմ հրաշալի ընտանիքն ապրում կարիքների մեջ, ինչը ցավ էր պատճառում հոգուս: Անկեղծ ասած՝ ես անհաջողակ էի զգում գրեթե ամեն օր, երբ մի խնդրից մյուսին էի բախվում:

Ֆինանսական այս քաոսն աննշան, անցողիկ բան չէր: Այն տևեց ինը տարի:

Եթե ձեզ հետաքրքիր է, ասեմ՝ այո՛, ամեն շաբաթ մենք եկեղեցի էինք հաճախում: Ես ունեի բակալավրի աստիճան աստվածաբանությունից և բիզնեսից և մեկ տարի սովորել էի Աստվածաշնչյան դպրոցում: Ես մկրտված էի Սուրբ Հոգով և սիրում էի Աստծուն, բայց ինչ-որ բան սարսափելիորեն սխալ էր: Ես գիտեի դա, բայց ի՞նչն էր սխալ: Այն պատմությունները, որ կարդում էի Աստվածաշնչում, պարզապես տեղի չէին ունենում իրական կյանքում:

Մենք հաճախում էինք մեծ եկեղեցի, որտեղ սովորեցնում էին, որ Աստծո կամքն է, որ մենք բարգավաճենք, բայց ես չէի տեսնում դա և գաղափար չունեի, թե ինչն է պատճառը: Անկեղծ ասած՝ ես նույնպես չէի տեսնում, որ իմ ընկերներից որևէ մեկը զգալի չափով բարգավաճեր:

Արթնացնող զանգ

Ամեն բան գագաթնակետին հասավ, երբ կրկին զանգեց մի իրավաբան՝ մեկը շատերից, որոնք անհանգստացնում էին ինձ վճարումների համար: Այս անգամ նա շատ վճռական էր և խիստ: «Պարո՛ն Կիսի, ես ձեզ երեք օր եմ տալիս 1.600 դոլարը, որ պարտք եք իմ հաճախորդին, ինձ ուղարկելու համար, այլապես ստիպված կլինեմ ձեր դեմ դատական գործ հարուցել»: Այս ասելուց հետո նա վայր դրեց լսափողը:

Ես գիտեի, որ դա վերջն է: Ես սպառված էի: Ես վատնել էի բոլոր հնարավոր միջոցները: Չկար փող, և չկար կերակուր: Մեր սառնարանը նույնքան մռայլ տեսք ուներ, որքան մեր չեկային հաշիվը: Ես հույսեր էի փայփայում, որ ևս մեկ շաբաթ աշխատելով կկարողանայի փակել հաշիվները, բայց այդպես էլ դա իրականություն չէր դառնում:

Խորը հուսահատության մեջ բարձրացա հին ագարակային տան (որը վարձակալում էինք ամսական 300 դոլարով) իմ փոքրիկ ննջարանը: Գիտեի, որ Աստծո կամքը չէր, որ ապրեինք այդպիսի ֆինանսական գերության մեջ, սակայն մենք անում էինք ամեն բան՝ բացի բարգավաճելուց:

Ես լացակումած նետվեցի մահճակալիս և աղաղակեցի Աստծուն: Ի զարման ինձ՝ հանկարծ լսեցի Նրա պատասխանը: Հոգուս խորքում լսեցի աստվածաշնչյան այս խոսքը.

> *«Եվ իմ Աստված լրացնի ձեր ամեն կարոտությունն Իր հարստության չափով՝ փառքով Քրիստոս Հիսուսում»:*
>
> – Փիլիպեցիների 4.19

Ես բարձրաձայն ասացի. «Ես գիտեմ այդ խոսքը, բայց չեմ տեսնում դա իմ կյանքում»: Այնուհետև լսեցի, թե ինչպես Սուրբ Հոգին ասաց.

> *««Քո կյանքի խառնաշփոթի հետ ես ոչ մի գործ չունեմ: Դու հայտնվել ես այդ խառնաշփոթի մեջ, որովհետև չգիտես, թե ինչպես է Իմ Թագավորությունը գործում»: Նա*

շարունակեց՝ ասելով, որ Իր եկեղեցին ապրում է ճիշտ այնպես, ինչպես Իսրայելն էր ապրում փարավոնի ժամանակ, այսինքն՝ իբրև սպրուկ: Նա ասաց. «Ես ցանկանում եմ, որ Իմ ժողովուրդը ֆինանսապես ազատ լինի»»:

Թեև իսկապես չգիտեի, թե ինչ Նա նկատի ուներ Թագավորություն ասելով, ես հասկացա, որ պարտքերի մեջ ապրելով հարց չէր լուծվի, և Նա ակնարկում էր, որ կար ապրելու ավելի լավ ճանապարհ, որը ես չգիտեի: Ո՞րն էր դա, կամ ինչպե՞ս էր դա գործում, ես չգիտեի, բայց գիտեի, որ պետք է պարզեի:

Առաջին բանը, որ արեցի, աստիճաններով իջա և բռնեցի Դրենդայի ձեռքը: Ես նրան ասացի, թե ինչ է Աստված ասել ինձ, և հիշում եմ, թե ինչպես, այնտեղ կանգնած, նրա ձեռքը բռնած, ապաշխարում էի Աստծո և նրա առջև այն խառնաշփոթի համար, որի մեջ ներքաշել էի բոլորիս: Չնայած այն բանին, որ չէինք հասկանում, թե ինչ նկատի ուներ Աստված Թագավորություն ասելով, հենց այնտեղ մենք որոշում կայացրինք, որ պարզելու ենք դա: Մենք նաև պարտավորվեցինք այլևս չօգտագործել պարտքը՝ որպես ապրելակերպ, բայց ստիպված էինք խոստովանել, որ չգիտեինք, թե ինչպես է դա հնարավոր: Երբ աղոթեցինք, խաղաղություն իջավ ինձ վրա, և ես գիտեի, որ Աստված ցույց էր տալու, թե ինչպես գործենք Իր ճանապարհներով:

Ինչ վերաբերում է «Թագավորություն» բառին, ես իսկապես գաղափար չունեի, թե ինչ Նա նկատի ուներ: Գիտեի, որ գնում եմ Երկինք, և որոշակի ուսուցում էի ստացել Աստվածաշնչից, բայց, միևնույն է, չգիտեի, թե ինչ Նա նկատի ուներ: Ըստ էության, «Թագավորություն» բառն այնպիսի բառ չէր, որի մասին այդքան շատ բան գիտեի: Իմ հիշողության մեջ միակ անգամը, որ այն հիշատակվում էր Աստվածաշնչում, Տերունական աղոթքում էր:

«Քո Արքայությունը գա, Քո կամքը լինի՝ ինչպես Երկնքում, այնպես էլ երկրի վրա»:

– Մատթեոս 6.10

Ես մտածում էի, որ այն ժամանակ սա վերաբերում էր ապագա

Թագավորությանը, որը մի օր Հիսուսը հաստատելու էր երկրի վրա, բայց ես գաղափար չունեի, թե իրականում ինչ էր այն նշանակում: Տեքստը քննելուց հետո հասկացա, որ ես սխալ էի: Հիսուսը սովորեցնում էր, թե ինչպես աղոթենք այստեղ հենց հիմա: Մենք պետք է աղոթենք, որ Աստծո կամքը լինի երկրի վրա: Բայց ի՞նչ է Աստծո Թագավորությունը:

Եթե կարդացել եք իմ նախորդ գրքերը, ապա, ցանկության դեպքում, կարող եք անցնել երկրորդ գլխին, սակայն կարծում եմ, որ վերանայելը միշտ էլ արդարացված է, երբ պատրաստվում եք քննություն հանձնել: Ձեր քննությունը՝ կյանքի խաղը, արդեն սկսվել է, բայց մի՛ անհանգստացեք: Դեռևս բավականին ժամանակ կա ճիշտ պատասխանները գտնելու և քննությունը հանձնելու համար: Բայց եթե կարդում եք առաջին անգամ, ապա այն, ինչ հետևելու է, վճռական նշանակություն ունի:

Նոր ապրելակերպ

Երբ Աստված ասաց, որ ես երբեք չեմ իմացել, թե ինչպես է Իր Թագավորությունը գործում, ես առնվազն շփոթվեցի: Դրենդան ու ես որևէ գաղափար չունեինք, թե ինչ Նա նկատի ուներ: Մենք աղոթեցինք և խնդրեցինք, որ Աստված սովորեցնի, թե ինչ նկատի ուներ, երբ ասաց, որ մենք չգիտենք, թե ինչպես է Նրա Թագավորությունը գործում:

Առաջին բանը, որ պետք է սովորեի, այն էր, թե ինչ է ընդհանրապես թագավորությունը: Կարծում եմ, որ այս հասկացությունը դժվար ըմբռնելի է մեր արևմտյան մտածելակերպի համար, քանի որ մենք ապրում ենք ժողովրդավարության և խոսքի ազատության ամերիկյան հայացքների համակարգում: Աստծո Թագավորությունը ժողովրդավարություն չէ. այն թագավորություն է իր թագավորով: Թագավորի իշխանությունը տարածվում է ամբողջ թագավորության մեջ լիազորված իշխանությամբ, տարբեր կառավարական հաստատությունների և մարդկանց միջոցով, որոնք գործում են այդ իշխանության ներքո: Մարդկանց խառնամբոխը թագավորություն չէ: Խառնամբոխում կարող է լինել միլիոն մարդ, բայց դա թագավորություն չէ: Թագավորությունը

մարդկանց խումբ է, որոնք միավորված են օրենքով կամ կառավարման համակարգով:

Թագավորության սահմանումը բառարանում այսպիսին է. «թագավորություն. պետություն կամ կառավարություն, որի գլուխը թագավորն է կամ թագուհին»:

Թեև Սուրբ ծննդյանը մենք տոնում ենք Հիսուսի գալուստը Երկիր, սովորաբար մենք չենք հասկանում, որ Նա Իր հետ կառավարություն կամ կառավարման համակարգ բերեց: Աստվածաշունչը խոսում է կառավարման այս համակարգի մասին Եսայի 9.6,7 խոսքերում.

> *«Որովհետև մեզ համար մի մանուկ ծնվեց, մեզ մի որդի տրվեց, և իշխանությունը կլինի Նրա ուսի վրա, և Նրա անունը կկոչվի Սքանչելի, Խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենականության Հայր, Խաղաղության Իշխան: Իշխանությունը շատացնելուն և խաղաղությանը վերջ չկա, Դավթի աթոռի վրա և Նրա թագավորության վրա, որ նրան հաստատի և պնդացնի իրավունքով և արդարությունով՝ հիմիկվանից մինչև հավիտյան: Զորաց Տիրոջ նախանձը պիտի անի այս»:*

Հիսուսն այս կառավարության գլուխն է, և երբ մենք ընդունում ենք Հիսուսին մեր անձնական Փրկիչ, դառնում ենք այդ կառավարության շահառուները. մենք դառնում ենք քաղաքացիներ: Դառնում ենք ոչ միայն քաղաքացիներ, այլև, ըստ էության, Աստծո ընտանիքի անդամներ՝ Նրա որդիներն ու դուստրերը:

> *«Բայց որոնք որ Նրան ընդունեցին, իշխանություն տվեց նրանց Աստծո որդիներ լինելու՝ նրանց, որ Նրա անվանը հավատում են: Որոնք ո՛չ արյունից, և ո՛չ մարմնի կամքից, և ո՛չ մարդու կամքից, այլ՝ Աստծուց ծնվեցին»:*
>
> – Հովհաննես 1.12,13

> *«Ուրեմն, այսուհետև այլևս օտար և պանդուխտ չեք, այլ՝ սուրբերի հետ քաղաքացիներ և Աստծո ընտանիքներ»:*
>
> – Եփեսացիների 2.19

Որպես Աստծո ընտանիքի անդամներ՝ մենք դառնում ենք Նրա ընտանիքի մաս և հետևաբար տեր ենք կամ մաս ենք այն ամենի, ինչը Նրան է պատկանում: Մենք դառնում ենք նաև Նրա մեծ Թագավորության քաղաքացիները՝ օրինական իրավունքներով և արտոնություններով:

Նոր թագավորություն

Ասածս ավելի լավ հասկանալու համար, թո՛ւյլ տվեք խոսել Միացյալ Նահանգների քաղաքացի լինելու վերաբերյալ: Որպես Միացյալ Նահանգների քաղաքացի՝ դուք ունեք օրինական իրավունքներ: Դրանք գրված են մեր Սահմանադրության մեջ և մեր կառավարությունում ընդունված օրենքներում: Այս օրենքներն ու արտոնությունները վերաբերում են յուրաքանչյուր քաղաքացու՝ անկախ նրա ով լինելուց: Այդ իրավունքները հիմնված չեն մեր զգացմունքների կամ մտավոր կարողությունների վրա: Ո՛չ, դրանք հաստատված են օրենքով և օրինականորեն հասանելի են յուրաքանչյուր քաղաքացու, որը Ամերիկան իր տունն է կոչում: Հնարավոր է, որ քաղաքացին նույնիսկ չիմանա իր օրինական իրավունքները, բայցևայնպես, նա ունի դրանք, քանի որ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի է:

Ահա մեկ բան, որի մասին արժե մտածել, և հուսով եմ, որ այն կփոխի ձեր ամբողջ պատկերացումն Աստծո մասին, նաև՝ թե ինչպես եք որևէ բան ստանում Նրանից: Այստեղ՝ Միացյալ Նահանգներում, եթե իմանանք, որ ինչ-որ բան կամ ինչ-որ մեկը փորձում է խլել մեզնից մեր օրինական իրավունքները կամ մեզ հետ անարդար են վարվել, մենք ունենք թույլտվություն՝ օգտվելու արդարադատությունից (արդարադատություն՝ նշանակում է օրենքի պահպանում կամ կիրառում). սա մի գործընթաց է, որն ապահովում է մեր օրինական իրավունքները: Մենք գնում ենք դատարան, և դատավորն ուշադրություն չի դարձնում մեր տեսքին, կամ՝ թե որքան հարուստ կամ աղքատ ենք: Նա նայում է օրենքին: Ամեն անգամ նա պետք է գործի հօգուտ օրենքի: Օրենքը և դատավորը մեր ապահովությունն են:

Մենք ունենք օրինական իրավունքներ, և մեր կառավարութ-

յունը կերաշխավորի և կապահովի մեր օրինական իրավունքները Միացյալ Նահանգների իրավական համակարգի շրջանակներում գործող արդարադատության ընթացակարգի միջոցով: Մտապահելով սա՝ ավելի ուշադիր կարդանք Եսայի 9-րդ գլուխը, որտեղ խոսվում է կառավարման այս նոր համակարգի մասին, որ Հիսուսը բերեց Երկիր:

> *«(Հիսուսը կթագավորի) Դավթի աթոռի վրա և Նրա թագավորության վրա, որ նրան հաստատի և պնդացնի իրավունքով և արդարությունով...»:*
>
> – Եսայի 9.7

Այս խոսքն ասում է, որ Աստծո Թագավորությունը հաստատված է և պահվում է իրավունքով՝ Աստծո օրենքի կիրառմամբ: Օրենքի կիրառումը ձեր օրինական իրավունքների ապահովման կամ պահպանման գործընթացն է: Ձեր օրինական իրավունքները այն են, ինչ Աստված արդարություն է կոչում կամ Իր օրենքում արդար է համարում: Որպեսզի հավաստիանաք, որ դուք ունեք այն, ինչ Աստված արդար է համարում Իր Թագավորության մեջ, և ինչն օրինականորեն պատկանում է ձեզ՝ որպես այդ Թագավորության քաղաքացու, Աստված թույլ է տվել ձեզ օգտվել արդարադատությունից՝ այն գործընթացից, որը երաշխավորում է, որ դուք կունենաք այն, ինչ Նա խոստացել է ձեզ:

Աստված Իր կամքը հայտնի է դարձրել մեզ Իր Խոսքի՝ Աստվածաշնչի միջոցով, որպեսզի մենք իմանանք մեր օրինական իրավունքները Իր Թագավորության մեջ: Սա բարի լուր է: Ձեզ տրված Աստծո բոլոր խոստումները, որոնց մասին կարդում եք Աստվածաշնչում, արդեն օրինականորեն ձերն են՝ որպես Նրա Թագավորության քաղաքացու:

Կորնթացիների երկրորդ թղթի 1.20-ում հստակ նշվում է, որ յուրաքանչյուր խոստում՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԽՈՍՏՈՒՄ, «Այո» և «Ամեն» է: Սա արդեն որոշված է. դրանք օրինականորեն ձերն են:

«Որովհետև որքան Աստծո խոստումներ որ կան, Նրանում է «այո»-ն և Նրանում է «ամեն»-ը՝ Աստծո փառքի համար մեզնով»:

– Բ Կորնթացիների 1.20

Աստծո Թագավորության հիմքը արդարություն է և իրավունք, և այն չի կարող սասանվել: Այնպես որ՝ մտածե՛ք այդ մասին այսպես. եթե ես գիտեմ Աստծո Թագավորության օրենքը (Նրա կամքը) և գիտեմ, որ ինձ համար հասանելի է արդարադատությունը՝ իրավունքների ապահովման գործընթացը, որը երաշխավորում է ինձ այն, ինչ գրված է օրենքում, ուրեմն՝ ես ապահով կլինեմ և չեմ վախենա:

«Եվ սա է այն համարձակությունը, որ ունենք դեպի Նա, թե ինչ որ Նրա կամքի պես խնդրում ենք, լսում է մեզ: Եվ եթե գիտենք, թե լսում է մեզ, ինչ որ խնդրում ենք, գիտենք, որ առնում ենք մեր խնդրանքները, որ խնդրեցինք Նրանից»:

– Ա Հովհաննես 5.14,15

Երբ այս խոսքն ասում է, որ Նա լսում է մեզ, նկատի չունի մեր բառերը ձայնային ալիքների միջոցով լսելը. այն նկատի ունի, որ Նա ընդունում է մեր հայցը:

Մտածե՛ք դատավորի մասին, որը դատական գործ է լսում՝ արդարադատություն իրականացնելու համար: Դատական նիստերի դահլիճը և դատավորը պետք է երաշխավորեն արդարադատության հասանելիությունը յուրաքանչյուր քաղաքացու: Դատավորի որոշումը հիմնված չէ իր զգացմունքների վրա, այլ՝ օրենքի, և նրա նախագահությամբ օրենքը պետք է կիրառվի յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ: Դատավորը պետք է երաշխավորի, որ արդարադատությունն (օրենքի կիրառումը) իրականացվի գրված օրենքի համաձայն:

Ինչ վերաբերում է Աստծուն, Նրա գահը (իշխանության վայրը) և Նրա զորությունը երաշխավորում են արդարադատություն (Նրա կամքի կիրառումը) նրանց համար, ովքեր ընդունում են Հի-

սուսին և մուտք են գործում Նրա Թագավորության մեջ:

Խնդրում եմ, որ շատ դանդաղ կարդաք այս պնդումը և թույլ տաք, որ այն մի կողմ հրի Աստծո մասին ձեր ներկայիս պատկերացումը: Մարդկանց մեծ մասին թվում է, թե Աստված Իր որոշումները կայացնում է անհատական սկզբունքով, բայց դա ճիշտ չէ: Նա Թագավոր է մի Թագավորությունում, որի օրենքները չեն փոխվում: Նա չի կայացնում և չի կայացնի որոշումներ, որոնք դուրս են Իր օրենքից: Մենք կարող ենք իմանալ Նրա պատասխանը՝ նախքան խնդրելը, և կարող ենք վստահ լինել, որ ունենք այն, ինչ գրված է Նրա օրենքում, նախքան դա տեսնելը, քանի որ Նա ի զորու է ապահովելու Իր օրենքի կիրառումը:

Վե՛րջ մուրալուն

Երբ Դրենդան ու ես իմացանք Թագավորության մեջ մեր օրինական իրավունքները, դա արմատապես փոխեց մեր պատկերացումն Աստծո և Աստվածաշնչի մասին: Նոր հասկացողությունը փոփոխություն բերեց մեր ապրելակերպի մեջ: Մենք այլևս չէինք մուրում, այլևս չէինք աղաչում: Մենք իմացանք, թե ինչն է օրինականորեն արդեն տրված մեզ՝ որպես Նրա Թագավորության քաղաքացիների: Եվ մենք շարունակեցինք սովորել, թե ինչպես հայց ներկայացնենք այդ խոստումների հանդեպ և արձակենք դրանք այս երկրային տիրույթում: Իսկապես հայտնություն էր այն, որ մեզ է պատկանում այն ամենը, ինչ Երկինքն ունի: Որպես քաղաքացիներ՝ մեզ օրինականորեն հասանելի են Թագավորության օրենքները: Բայց որպես ընտանիքի անդամներ՝ մենք սեփականատերեր ենք և ունենք օրինական պահանջ այն ամբողջ ժառանգության հանդեպ, որ Երկինքն ունի:

> *«Եվ եթե որդիներ, ապա ժառանգներ էլ, Աստծո ժառանգներ և Քրիստոսի **ժառանգակիցներ**...»:*
>
> – Հռոմեացիների 8.17

Ուշադրություն դարձրեք, որ տեքստում գրված է, որ մենք ժառանգակիցներ ենք Քրիստոսի հետ: Դա նշանակում է, որ այն, ինչ Քրիստոսն ունի, նույնպես մերն է:

Երբ այն օրը Աստված խոսեց ինձ հետ իմ փոքրիկ խարխլված ագարակային տնակում և ասաց, որ ես չգիտեմ, թե ինչպես է Իր Թագավորությունը գործում, Նա վկայակոչում էր Իր Թագավորության օրենքներն ու օրինական կառուցվածքը: Նա ճիշտ էր: Ես գաղափար չունեի, թե ինչ է թագավորությունը, կամ ինչպես է այն գործում: Բայց մեկ բան, որից ես արագ կառչեցի, և որն օգնեց ինձ ավելի լավ հասկանալու, թե ինչ է թագավորությունը, այն էր, որ թագավորությունները գործում են անփոփոխ օրենքներով: Օրենքներն աչառություն չեն ցուցաբերում: Դրանք չեն փոխվում՝ նախապատվություն տալով որոշակի անձնավորության: Ո՛չ, դրանք անխախտ են և հաստատուն:

Թո՛ւյլ տվեք օրինակ բերել: Այսօր մենք վայելում ենք էլեկտրականությունը և այն լույսը, որ էլեկտրականությունն ապահովում է մեր տներում: Դուք կհամաձայնեք, որ օրենքները, որոնցով գործում է էլեկտրականությունը, երկրագնդի ստեղծման օրվանից մշտապես գոյություն են ունեցել: Սակայն հազարավոր տարիներ լույսեր չեն եղել: Պատճառը: Ոչ ոք չի բացահայտել էլեկտրականությունը կառավարող օրենքները և այն, թե ինչպես գործածեն դրանք էլեկտրական լամպը վառելու համար: Թեև կայծակը և ստատիկ էլեկտրականությունը դիտվում էին որպես կյանքի բնականոն մաս, սակայն դրանք ընդամենը դիտարկումներ էին: Ոչ ոք չէր մտածում կրկնօրինակել այն, ինչ տեսնում էր, որովհետև չէր գիտակցում, որ իր տեսածը հիմնված է բնական օրենքի վրա, որը կարելի է սովորել:

Նույնպիսի հասկացողության պակաս կա այսօր եկեղեցում: Մարդիկ Աստվածաշնչում կարդում են Աստծո կատարած մեծամեծ բաների մասին, բայց երբեք դուրս չեն գալիս դիտողական ընկալման սահմաններից:

Շատերը տեսել են, թե ինչպես է Աստված զարմանահրաշ բաներ անում իրենց կյանքում, բայց ամռան փոթորկին կայծակի լուսաշող բռնկումը դիտելուն պես կանգնում են և ասում. «Ա՜յ քեզ բան, տեսա՞ք դա», մինչդեռ չեն կարողանում կրկնօրինակել իրենց տեսածը, քանի որ չեն հասկանում այն օրենքները, որոնք կառավարում են այդ ամենը: Օրինակ, այսօր մենք կարող ենք

լույսեր տեղադրել աշխարհի ցանկացած վայրում, որովհետև հասկանում ենք էլեկտրականությունը կառավարող օրենքները:

Նույն կերպով, այսօր մենք վայելում ենք ռեակտիվ ինքնաթիռով աշխարհում հազարավոր մղոններ ճանապարհորդելու հնարավորությունը: Ինքնաթիռը թռչելու հնարավորություն է ձեռք բերում ամբարձիչ ուժի օրենքի մասին մեր հասկացողության և դրա կիրառման շնորհիվ: Այս օրենքը գոյություն է ունեցել երկրագունդը ստեղծվելու օրվանից, ինչի մասին վկայում են թռչունները, որոնք ամեն օր գործածում են այն: Սակայն մարդկության գոյության հազարավոր տարիների ընթացքում ոչ ոք ինքնաթիռով չի թռչել, որովհետև ոչ ոք չի հայտնաբերել ամբարձիչ ուժի օրենքը և չի իմացել, թե ինչպես օգտագործի:

Նույնը վերաբերում է Աստծո Թագավորությանը: Մարդկանց մեծ մասն աղաչում է, լաց լինում և փորձում համոզել Աստծուն, որ ինչ-որ բան անի իր համար: Բայց նրանք չգիտեն, որ երբ դարձան հավատացյալներ, Թագավորության բոլոր օրենքներն ու արտոնությունները դարձան իրենցը՝ գործածելու և վայելելու համար, և այլևս մուրալու կարիք չկա:

Ենթադրենք՝ ես գալիս եմ ձեր եկեղեցի: Մի՞թե աղոթքախմբին կասեիք, որ աղոթի և ծոմ պահի, որ լույսերը միանան այն երեկո, երբ ես կլինեմ այնտեղ: Իհարկե՝ ո՛չ: Եթե պատահաբար ես ժամանեի ձեր եկեղեցի, և լույսերը միացած չլինեին, մի՞թե բոլորը կաղաղակեին Աստծուն՝ լաց լինելով և աղաչելով, որ լույսերը միանան: Ո՛չ, նրանք կփնտրեին անջատիչը և մատի մեկ շարժումով կմիացնեին լույսերը: Ո՛չ մի վախ, ո՛չ մի խառնաշփոթ. պարզապես պետք է միացնել անջատիչը:

Բայց ինչ-ինչ պատճառով քրիստոնյաները երբեք չեն մոտեցել Թագավորությանը և Աստծո Խոսքին այս տեսանկյունից: Նրանք իրենց ժամանակի մեծ մասն անցկացնում են՝ աղաչելով, հուսալով, որ ինչ-որ բան կկատարվի: Երբ դա տեղի չի ունենում, անմիջապես մեղադրում են Աստծուն՝ հավատալով, որ Աստված նախընտրել է չբավարարել իրենց խնդրանքը: Այս թերի հասկացողությունն է պատճառը, որ քրիստոնյաների մեծ մասն այսօր հավատում է, որ Աստված թույլ է տալիս, որ վատ բաներ կատարվեն, կամ Նա

ամենից լավ գիտի, թե երբ է ողբերգություն տեղի ունենում: Բարեկա՛մ, Աստծո Թագավորությունն այսպես ՉԻ գործում: Կրկին նայենք Հովհաննեսի առաջին թղթում գրված մեր խոսքին.

> *«Եվ սա է այն համարձակությունը, որ ունենք դեպի Նա, թե ինչ որ Նրա կամքի պես խնդրում ենք, լսում է մեզ: Եվ եթե գիտենք, թե լսում է մեզ, ինչ որ խնդրում ենք, գիտենք, որ առնում ենք մեր խնդրանքները, որ խնդրեցինք Նրանից»:*
>
> – Ա Հովհաննես 5.14,15

Քանի որ գիտենք, որ խնդրում ենք մեր օրինական իրավունքի համաձայն, և Նա ընդունում է մեր հայցը, մենք վստահ ենք, որ ունենք այն, ինչ խնդրեցինք Նրանից: Ցավոք, քրիստոնյաների զգալի մասը չի հասկանում այն ճշմարտությունը, որ բացահայտվում է այս տեքստում: Իմ փորձառությունից կարող եմ ասել, որ մեծ մասը չի հասկանում դա: Սակայն այս հասկացողությունն էր, որ բառացիորեն փոխեց կյանքս:

Տեսիլք՝ հակառակ գոյատևման

Ես սկսեցի նորոգված հետաքրքրությամբ կարդալ Աստվածաշնչի պատմությունները: Գիտեի, որ յուրաքանչյուր պատմության մեջ կային հոգևոր օրենքներ, որոնք պետք է բացահայտեի: Ես դարձա հոգևոր գիտնական: Յուրաքանչյուր պատմության մեջ հարցեր էի տալիս. «Ինչո՞ւ դա պատահեց», «Ո՞ր օրենքն է լուսաբանված այս պատմության մեջ»: Կամաց-կամաց սկսեցի սովորել Աստծո Թագավորության մեջ ինձ պատկանող սկզբունքներն ու օրենքները, ու դա բառացիորեն փոխեց կյանքս:

Երբ սկսեցինք կիրառել այդ օրենքները, երկուսուկես տարում ազատվեցինք բոլոր պարտքերից: Սկսեցինք կանխիկով վճարել մեր մեքենաների համար, կառուցեցինք մեր երազանքների տունը 22 հա հողատարածքի վրա և ավելին: Այս ամենում լավագույնն այն է, որ չկա ֆինանսական ճնշում: Մեր տան համար վճարված է, և մենք այժմ կարող ենք կենտրոնանալ մեր առաջադրանքի, մեր նպատակի, այլ ոչ թե գոյատևման վրա:

Մենք ոգևորված էինք այն ամենով, ինչ սովորում էինք, սակայն չէինք տեսնում, որ մեր ընկերների ու ծանոթների մեծ մասը ճաշակեին նույնը, ինչ տեղի էր ունենում մեր կյանքում: Ցանկանալով օգնել մարդկանց սովորելու այն, ինչ մենք սովորեցինք՝ 1995 թվականին հիմնադրեցինք «Հավատքի կյանք» եկեղեցին: Մեր նպատակն էր հաղորդել մարդկանց այն օրենքներն ու սկզբունքները, որ Աստված սովորեցրեց մեզ. ասել նրանց, թե ինչպես կարող են ազատ լինել և ապրել Թագավորության հրաշալի կյանքով:

Այնուհետև, 2005 թվականին հիմնադրեցինք «Հավատքի կյանք՝ հիմա» կենտրոնը, որը մեր մեդիա ծառայությունն է: Այն հեռարձակում է մեր երկու ամենօրյա հեռուստահաղորդումները՝ «Ֆինանսների կարգավորում» և «Դրենդա» անվանումներով, աշխարհի բոլոր ժամային գոտիներում՝ տարածելով Թագավորության Բարի լուրը:

Այսօր մենք չենք փնտրում մեր մեքենաների նստատեղերում թաքնված մետաղադրամներ՝ հույս ունենալով բավականաչափ մանրադրամ գտնել «Ուրախ ճաշ» գնելու և մեր երեք երեխաների միջև այն բաժանելու համար: Մենք միլիոններ ենք ծախսում, որպեսզի իրականացնենք այն, ինչ հիմա անում ենք, և մեր փափագն է օգնել մարդկանց սովորելու, թե ինչպես հասանք դրան:

Գոյատևման մտածելակերպից հանկարծ անցում կատարեցինք դեպի տեսիլքի վրա հիմնված մտածելակերպ և սկսեցինք երազել այն մասին, թե ինչ կարող ենք ստեղծել և անել մեր կյանքում: Ֆինանսական քաոսից ու ստրկությունից տեղափոխվեցինք ֆինանսական ազատություն:

Ստրկության և ընչազրկության տարիներին կանխիկ գումարով ցանկացած փոքր գործարք կատարելը լուրջ խնդիր էր մեզ համար: Մեծ լարվածության ներքո փորձում էինք գտնել մեկին, ումից կարող էինք պարտք վերցնել, կամ կրկին գնում էինք մեր տեղական գրավատուն: Բայց այսօր մենք վայելում ենք Մատակարարման Զորությունը:

Գուցե հարցնեք. «Գա՛րի, ի՞նչ է Մատակարարման Զորությունը». ձեր նպատակը գտնելու և գոյատևման կյանքից խուսափելու կարողությունն է: Հիշե՛ք. անգլերենում «մատակարարում»-ը

«provision» բառն է, որը բառացի նշանակում է «նախատեսում»: Կրկին դանդաղ կարդացեք այն. դա կարծես բառախաղ լինի, բայց իմաստն ակնհայտ է:

Մատակարարման բացակայությունն իր հետևից ստրկության կյանք է թողնում, իսկ ստրուկները չունեն մեծ երազանքներ: Միշտ հիշե՛ք. դուք ստրուկ չեք: Դուք Աստծո ընտանիքի անդամ եք, Հիսուսի հետ մի ամբողջ ունեցվածքի ժառանգակից: Այնպես որ՝ բարձրացրե՛ք ձեր աչքերը և տեսե՛ք նոր ապագա: Ուզում եմ, որ ազատ լինեք երազելու, ազատ լինեք հաճույքով կերտելու ձեր տեսիլքը և ապրելու հրաշալի կյանքով: Հուսով եմ, որ այս գիրքը կարդալով ոչ միայն կոգեշնչվեք, այլև կլցվեք վստահությամբ: Թագավորության նույն օրենքները, որոնք փոխեցին իմ կյանքը, նաև ձերն են:

– Գարի Կիսի

Սա հինգ մասից բաղկացած «Ձեր ֆինանսական հեղափոխությունը» գրքաշարի չորրորդ գիրքն է: Քաջալերում եմ ձեզ կարդալ նախորդ երեք գրքերը, որպեսզի լավ պատկերացում կազմեք այն օրենքների մասին, որոնք վկայակոչում եմ, և իմանաք ավելին այն մասին, թե ինչպես է Աստծո Թագավորությունը գործում: Այդ գրքերն են՝ *«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Համաձայնության զորությունը», «Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Հանգստի զորությունը», «Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Մարտավարության զորությունը»:* Դրանք կարող եք գտնել GaryKeesee.com կամ Amazon.com կայքերում:

ԳԼՈՒԽ 1

ԼՈՒՅՍԸ ՓԱՅԼՈՒՄ Է ԽԱՎԱՐՈՒՄ

Ներածության մեջ պատմեցի իրավաբանի զանգի մասին, ինչը ստիպեց ինձ առերեսվել մեր իրավիճակի իրականությանը և, ի վերջո, աղաղակել Աստծուն: Ասացի նաև, թե Տերն ինչ ասաց, երբ մահճակալին պառկած լաց էի լինում: Նա ասաց, որ ես այդ խառնաշփոթի մեջ էի այն պատճառով, որ երբեք չէի սովորել, թե ինչպես է Իր Թագավորությունը գործում: Բայց ինչպե՞ս է այն գործում: Ի՞նչ էր Նա փորձում ցույց տալ ինձ: Ես գաղափար չունեի, բայց պատրաստվում էի սովորել:

Եթե հիշում եք, երեք օրից այդ իրավաբանին պետք է ուղարկեի 1.600 դոլար՝ դատական հայցից խուսափելու համար: Այդ ժամանակ մենք չունեինք գումար, և չկար որևէ հեռանկար, որ մեր գործից կվաստակեինք այնքան, որ ժամանակին վճարեինք 1.600 դոլարը: Ես անհնարին իրավիճակում էի կամ այդպես էի կարծում: Բայց պետք է սովորեի իմ առաջին դասը Թագավորության մասին:

Այդ ժամանակ ես վարում էի «Դոջ Քարավան» մակնիշի մի հին մեքենա, որն, ինչպես ծխնելույզ, ամբողջ ճանապարհը պատում էր ծխով: Այդ երեկո ես հանդիպում ունեի մի ընտանիքի հետ ապահովագրական հարցեր քննարկելու նպատակով, և մեր հանդիպումը տեղի էր ունենալու նրանց տանը, որտեղից իմ գրասենյակ մեքենայով կարելի էր հասնել մոտավորապես 15 րոպեում:

Այդ օրերին ես մեքենան միտումնավոր կայանում էի փողո-

ցի ներքևի հատվածում կամ հաճախորդի տան մոտակայքում: Պատճառը պարզ էր: Երբ շարժման մեջ էի դնում մեքենան, այն օդը լցնում էր սպիտակ ծխով, և ես չէի կարծում, որ դա կխթաներ իմ գործին, քանի որ ես, այսպես կոչված, ֆինանսական փորձագետ էի, որը խորհուրդ էր տալիս իր հաճախորդներին, թե ինչպես ներդրումներ կատարեն և ապահովագրական փաթեթներ գնեն:

Եվ այսպես, այդ երեկո, ինչպես միշտ, մեքենան կայանեցի հաճախորդիս տան մոտակայքում: Մենք հրաշալի հանդիպում ունեցանք, և ես հրաժեշտ տվեցի նրան, սակայն մտահոգվեցի, երբ պարոնը շարունակեց քայլել ինձ հետ դեպի իմ մեքենան: Թեև մի փոքր նյարդայնանում էի, բայց հանգիստ էի, քանի դեռ նա կանգնած չէր մեքենայի մոտ և չէր դիտում, թե ինչպես է շարժիչը միանում: Դժբախտաբար, նա կանգնած մնաց մեքենայի մոտ: Ես ժամանակն օգտագործեցի թղթապանակս և այլ իրեր կարգավորելու համար՝ փորձելով ժամանակ տալ նրան հեռանալու, բայց նա համբերությամբ կանգնեց այնտեղ, մինչև որ հասկացա, որ պետք է միացնեմ շարժիչը: Ինչպես սպասում էի, փողոցը լցվեց սպիտակ ծխով:

Երբ պատրաստվում էի տեղից շարժվել, նա ձեռքով արեց, որ անջատեի շարժիչը, և մոտեցավ մեքենայի պատուհանին: Նա ասաց, որ կես-դրույքով մեխանիկ է աշխատում լրացուցիչ գումար վաստակելու համար և կցանկանար նայել մեքենայի առջևի հատվածը: Ես բարձրացրի առջևի ծածկը: Գիտեի, որ իրականում կարևոր չէ, թե ինչ նա կհայտնաբերեր: Այդ պահին ես որևէ գումար չունեի այդ հին մեքենայի վրա ծախսելու համար:

Մի քանի րոպեից նա վերադարձավ և ասաց. «Ինչպես և կասկածում էի, յուղի խողովակի միջադիրը վնասված է: Գնացեք տուն և նորոգեք այն, նախքան ավելի հեռու կգնաք: Դա կարժենա ընդամենը 700 դոլար»:

Ես շնորհակալություն հայտնեցի նրան խորհրդի համար և վերադարձա իմ գրասենյակ: Գլխումս շարունակ լսում էի այս խոսքերը. «Դա կարժենա ընդամենը 700 դոլար»: Այդ պահին 700 դոլարն ինձ համար հնչում էր ինչպես միլիոն դոլար, իսկ ինձ

դեռևս անհրաժեշտ էր գտնել 1.600 դոլար իրավաբանին ուղարկելու համար: Բացի դա՝ ունեի բազմաթիվ այլ հաշիվներ, որոնք անհրաժեշտ էր փակել:

Ես չունեի պատասխան, բայց հիշեցի այն աղոթքը, որ ավելի վաղ Դրենդայի հետ աղոթել էի. «Աստվա՛ծ, սովորեցրո՛ւ մեզ, թե ինչպես է գործում Քո Թագավորությունը, և ցո՛ւյց տուր, թե ինչպես ապրենք պարտքերից ազատ»:

Գրասենյակի ճանապարհին սկսեցի խոսել Տիրոջ հետ իմ ֆինանսական իրավիճակից: «Տե՛ր, Դու ամեն բան գիտես այն գումարի մասին, որի կարիքն ունեմ: Դու գիտես, որ ես դեռևս պարտք եմ այս մեքենայի համար, և հիմա էլ 700 դոլար է հարկավոր: Տե՛ր, անկեղծ ասած, հաշվելով այն գումարը, որ մեքենայի համար պարտք եմ բանկին, նաև վերանորոգման գինը, թերևս ավելի լավ կլինի, որ մեքենան այրվի, և ապահովագրական ընկերությունը վճարի այդ ամենի համար»: Ես ասացի դա բարձրաձայն, հուսահատությամբ ու հեգնանքով, իրականում ո՛չ աղոթքով՝ որպես այդպիսին:

Այն պահին, երբ ասացի դա, ինչ-որ բան գրավեց իմ ուշադրությունը: Վստահ չէի, որ դա մշտապես եղել է, սակայն թվաց, թե առջևի ծածկի վրա մի փոքրիկ պղպջակ կա: Մինչ նայում էի դրան, այն կարծես ավելի ու ավելի էր մեծանում: Երբ ուշադիր հետևեցի պղպջակին, համոզվեցի, որ նրա չափերն իսկապես մեծանում էին: Ես առնվազն ցնցված էի: Ես չտեսա ուրիշ ծուխ՝ բացի նրանից, որ միշտ դուրս է գալիս մեքենայի ետևամասից, ուստի շարունակեցի ճանապարհս:

Երբ մեքենան կայանեցի գրասենյակի կայանատեղիում, նրա առջևի մասը հանկարծ վերածվեց կրակե գնդի: Կրակի բոցը շարժիչի խցիկից դուրս եկավ և մինչև երկու մետր բարձրացավ օդ: Այն ժամանակ ես բարձրաձայն ասացի. «Տե՛ր, Դու լսեցի՛ր իմ խոսքերը»:

ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՍ ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԱՍԱՑԻ. «ՏԵ՛Ր, ԴՈՒ ԼՍԵՑԻ՛Ր ԻՄ ԽՈՍՔԵՐԸ»:

Հաջորդ օրը ապահովագրական ընկերությունը փոխհատուցեց վնասը, և ես ունեցա բավականաչափ

գումար մեկ գիշերում 1.600 դոլարը իրավաբանին փոխանցելու, ինչպես նաև մեքենայի պարտքը վճարելու համար, և դեռ կանխիկ գումար էլ մնաց՝ որոշ մթերքներ գնելու համար: Մենք միաժամանակ երջանիկ էինք և ցնցված, բայց չունեինք մեքենա, որն անհրաժեշտ էր մեր վեց անդամից բաղկացած ընտանիքին տեղափոխելու համար:

Ես իրականում չէի կարող բացատրել, թե ինչ կատարվեց, բայց այն փաստը, որ բարձրաձայն ասացի, որ մեքենան այրվեր, գրավեց իմ ուշադրությունը: Պետք է խոստովանեի, որ նախկինում իմ մեքենաներից որևէ մեկը չէր հրդեհվել: Մյուս կողմից, ես երբեք բարձրաձայն չէի ասել, որ ուզում եմ, որ մեքենաս այրվի:

Մի՞թե սա կապ ուներ Թագավորության հետ: Մի՞թե ես ինչ-որ բան արեցի, որը պատճառ դարձավ, որ սա տեղի ունենար, թե՞ այս ամենը պարզապես պատահականություն էր: Մենք համոզված չէինք: Թեև ուրախացանք մեքենայի պարտքը մարելու և պարտատիրոջը վճարելու հաղթանակով, մենք կրկին մեքենայի կարիք ունեինք, բայց ինչպե՞ս ձեռք բերեինք այն:

Գտնել նոր մեքենա

Հայրս զանգեց մեզ՝ իմանալու, թե ինչպես ենք, և առաջարկեց իր օգնությունը այրված մեքենան փոխարինելու հարցում: Նա ուներ գումար, և ես ծածուկ հույս էի փայփայում, որ նա մեզ համար մեքենա կգներ: Նա առաջարկեց տարածքում գործող ավտոսրահներում փնտրել օգտագործված, լավ վիճակում գտնվող ավտոմեքենա: Իհարկե, ես լիովին ընդունեցի նրա առաջարկը:

Մենք այցելեցինք մի քանի ավտոսրահներ, և ես գտա «Դոջ Քարավան» մակնիշի մի հրաշալի ավտոմեքենա: Այն մեկ տարեկան էր և անթերի վիճակում: Ես հայրիկիս ասացի, որ, իմ կարծիքով, սա այն է, ինչ Դրենդային դուր կգա՝ մուգ կարմիր, գեղեցիկ մեքենա, և հուսով էի, որ հայրս կասեր. «Հրաշալի՜ է, շատ լավ, գնանք և ձևակերպենք»: Բայց դա այն չէր, ինչ նա ասաց: Փոխարենը՝ ասաց. «Ես կտամ 5.000 դոլար՝ այն գնելու համար»: Այո՛, դա շատ առատաձեռն առաջարկ էր, բայց նա իրականում առաջարկում էր վճարել կանխավճարը՝ մնացածը թողնելով ինձ:

Հանկարծ ես բախվեցի իրականությանը: Ես չունեի վարկային պատմություն, որը կգրավեր որևէ բանկի, որպեսզի ինձ վարկ տրամադրեր: Եվ մինչև այդ պահը ես կարողացել էի հորիցս թաքցնել մեր ծանր ֆինանսական վիճակը: Երկրորդ՝ ես զգում էի, որ պարզապես չեմ կարող ևս մեկ պարտք վերցնել:

Ինչևէ, չունենալով այլ ընտրություն, ես արագ որոշում կայացրի գոնե լրացնել վարկային դիմումը: Ես գիտեի, որ դա անելու համար ստիպված էի լինելու խոստովանել հորս իմ իրավիճակը, իսկ նա ստիպված էր լինելու ստորագրել՝ որպես երաշխավոր: Ես դժկամորեն պատմեցի նրան ամբողջ պատմությունը, նա առաջարկեց, որպես երաշխավոր, ստորագրել վարկի դիմումը, և մենք հանձնեցինք այն: Վաճառքով զբաղվող ընկերությունն ասաց, որ առավոտյան ինձ կտեղեկացնի պատասխանը:

Իհարկե, ես գիտեի, որ բանկը կհաստատեր վարկը, քանի որ հայրս անթերի վարկային պատմություն ուներ: Վարկի հաստատումը չէր, որ մտահոգում էր ինձ տուն վերադառնալիս: Ես գիտեի, որ չէի կարող վերցնել այդ վարկը, բայց կարիքի մեջ էի և չունեի գումար: Ինչ պիտի անեի: Ես շփոթված էի ու մի փոքր խռովված:

Երբ հասա տուն և Դրենդային պատմեցի իրավիճակը, նա նույնպես գիտեր, որ մենք չէինք կարող ևս մեկ պարտքի փաստաթուղթ ստորագրել, բայց ուրիշ ինչ ընտրություն ունեինք: Երկուսս էլ դժվարությամբ քնեցինք այդ գիշեր, բայց առավոտյան համոզված էինք, որ պարտք վերցնելն այն չէր, ինչ պիտի անեինք:

Ես զանգեցի հորս և շնորհակալություն հայտնեցի առաջարկի համար՝ ասելով, որ մենք չենք կարող ևս մեկ պարտք վերցնել մեքենա գնելու համար: Այնուհետև զանգեցի ավտոսրահ և ասացի, որ մենք չենք գնա այնտեղ: Նրանք ասացին, որ վարկը հաստատվել է, և մեքենան մաքուր է ու պատրաստ է առաքման: Ես շնորհակալություն հայտնեցի նրանց, բայց պնդեցի, որ պարզապես չեմ կարող վերցնել մեքենան:

Անջատելով հեռախոսը՝ ես խաղաղություն զգացի, բայց միաժամանակ գաղափար չունեի, թե ինչպես էինք կարողանալու գնել այնպիսի մեքենա, որն այնքան մեծ լիներ, որ տեղավորեր

վեց անդամից բաղկացած մեր ընտանիքին: Ես ունեի օգտագործված հինգտեղանոց կուպե, որը նախատեսված էր գործի համար, և մենք ստիպված էինք բավարարվել դրանով այնքան ժամանակ, մինչև որ որևէ բան մտածեինք: Անցավ գրեթե երկու շաբաթ, և հարկ եղած դեպքում մենք երթևեկեցինք մեր հինգտեղանոց կուպեով:

Այնուհետև մի օր հեռախոսազանգ ստացա մի պարոնից, որի հետ Դրենդան ծանոթացել էր ամիսներ առաջ: Դրենդան փնտրում էր ապրանքներ, որոնք պետք է վաճառվեին ծնողների հնաոճ իրերի աճուրդում: Աճուրդն անցկացվում էր Ատլանտայում, որտեղ նրա ծնողներն ապրում էին: Ամիսը մեկ անգամ նրանք գալիս էին Օհայո՝ իրենց աճուրդի համար ապրանքներ գնելու նպատակով, և Դրենդան աչքերը բաց էր պահում ցանկացած իրի համար, ինչը, նրա կարծիքով, կհետաքրքրեր իր ծնողներին: Դա մի փոքր լրացուցիչ գումար էր բերում յուրաքանչյուր ամիս, քանի որ Դրենդայի ծնողները նրան միջնորդավճար էին տալիս գտած ապրանքների դիմաց:

Ինչպես պարզվեց, Դրենդան ինչ-որ տեղ հանդիպել էր այդ մարդուն, և նրանք զրուցել էին այն մասին, թե յուրաքանչյուրն ինչով է զբաղվում: Դրենդան նշել էր, որ եթե նա երբևէ որևէ բան ունենա վաճառելու, ապա հավանաբար դա կհետաքրքրի իրեն: Այդ անձնավորությանն էր պատկանում բավականին մեծ ծերանոց, և ժամանակ առ ժամանակ ծերանոց տեղափոխվող հիվանդը կարիք էր ունենում ազատվել իր իրերից: Երբ չկար որևէ ընտանիք, որ հոգ տաներ այդ կենցաղային իրերի համար, նա պահում էր դրանք ինչ-որ պահեստում և ի վերջո վաճառում:

Ես չէի ճանաչում նրան, ուստի երբ նա զանգեց, ես նշում արեցի և տեղեկացրի Դրենդային նրա զանգի մասին: Կարճ ասած՝ երբ Դրենդան հետ զանգեց նրան, նա ասաց, որ ունի երեք սենյակ զբաղեցնող կահույք և կենցաղային իրեր, որոնցից պետք է ազատվի, և հարցրեց, թե արդյո՞ք Դրենդան հետաքրքրված չէ դրանցով: Նա առաջարկեց այդ ամենը շատ ցածր գնով:

Դրենդան ու ես գնացինք սենյակները նայելու, և քանի որ դրանք լեփ-լեցուն էին՝ հատակից մինչև առաստաղ, մենք չկա-

րողացանք տեսնել ամեն բան, սակայն տեսանք մի քանի բան, որոնք, մեր կարծիքով, վաճառվելու դեպքում կգերազանցեին այն գինը, որ նա պահանջում էր ամբողջ ապրանքի համար: Մենք զանգեցինք Դրենդայի ծնողներին, և նրանք փոխանցեցին գումարը, բերեցին իրենց բեռնատարը և ամբողջը տեղափոխեցին Ատլանտա՝ իրենց ամենամյա աճուրդի համար:

Աճուրդը մեծ հաջողություն ունեցավ և, որպես միջնորդավճար, նրանք համաձայնեցին տալ մեզ երկծավալ թափքով «Պեժո» մակնիշի ավտոմեքենա, որն ընդամենը մի քանի տարեկան էր և գերազանց վիճակում էր: Գիտեմ, շատերի համար օգտագործված մեքենա ձեռք բերելը գուցե մեծ ցնծության առիթ չէ: Բայց այդ ժամանակ առաջին անգամ էր, որ մենք վարում էինք մեքենա՝ առանց դրա համար վճարելու: Մեքենան հենց նոր էին ներկել և բոլորովին նոր տեսք ուներ: Մենք ցնցված էինք:

Հանկարծ ես սկսեցի տեսնել: Ես կարող էի վստահել Աստծուն, որ Նա օգնի ինձ այն ամենում, ինչի կարիքն ուներ՝ առանց պարտք վերցնելու:

Տեսական հիմքերի տեղաշարժ

Այժմ ինձ համար ավելի պարզ դարձավ մեկ այլ իրադարձություն, որ տեղի ունեցավ Տիրոջ հետ մեկ տարի առաջ, երբ դեռևս ապրում էինք Օկլահոմայում: Հետ նայելով՝ հասկանում եմ, որ Տերը փորձում էր գրավել իմ ուշադրությունը, բայց մենք այնպես էինք կքել պարտքերի ու ճնշումների տակ, որ ինչ-ինչ պատճառով չէինք տեսնում այն, ինչ Աստված փորձում էր սովորեցնել մեզ:

Ես որսորդության սիրահար եմ և հատկապես սիրում եմ եղնիկներ որսալ: Բայց նաև սիրում եմ եղնիկի միս ուտել և արդյունք ստանալ իմ որսորդական ջանքերի դիմաց: Անցած մի քանի տարիներին որսորդություն էի անում, բայց՝ ապարդյուն: Դուրս էի գալիս որսի, նստում ցրտին և օրեր շարունակ նույնիսկ մեկ եղջերու չէի տեսնում: Դա մի փոքր վհատեցնող էր, որովհետև ես ունեի երեխաներ, որոնց պետք էր կերակրել և, իհարկե, կարող էի օգտագործել որսի միսը: Թեև անցյալում ունենում էի հաջողություններ, սակայն տարիներ էին անցել այն ժամանակվանից,

երբ եղնիկների հաջող որսաշրջան էի ունենում և միս էի տուն բերում:

Մի օր, երբ մտածում էի եղնիկների առաջիկա որսաշրջանի մասին, լսեցի Տիրոջ ձայնը. «Ինչո՞ւ թույլ չես տալիս, որ քեզ ցույց տամ, թե ինչպես ստանաս քո եղջերուին այս տարի»: Ես ապշեցի: «Ցույց տաս ինձ, թե ինչպես ստանամ իմ եղջերուի՞ն»: Ի՞նչ է դա նշանակում:

Աղոթելով այս խոսքերի շուրջ՝ զգացի, որ Սուրբ Հոգին մղում է, որ ֆինանսական սերմ կամ ընծա ցանեմ այդ եղջերուն որսալու հստակ նպատակով: Ես երբեք գումար չէի ցանել եղջերու ինձելու ակնկալիքով, և սկզբում դա մի փոքր տարօրինակ թվաց: Բայց ես հստակ զգացի, որ Տերն առաջնորդում է ինձ ցանելու այդ սերմը՝ տալով շատ մանրամասն ցուցումներ: Ես չեկ պետք է գրեի այն գումարի համար, որ առաջնորդություն էի զգում տալու: Դրենդան ու ես մեր ձեռքերը պետք է դնեինք դրա վրա և հռչակեինք, որ ստացանք իմ 1987 թվականի եղջերուն այդտեղ և այդ պահին, երբ աղոթեցինք. ոչ թե ավելի ուշ, երբ կինձեի այն, այլ այն ժամանակ, երբ աղոթեցինք:

Թեև ես՝ որպես քրիստոնյա, մշտապես զոհաբերել էի և աջակցել իմ եկեղեցուն, ինձ համար անսովոր էր նպատակաուղղված կերպով սերմ ցանելը և հավատալը, որ ստանում եմ աղոթելու պահին:

Այսպիսով՝ ես մի չեկ վերցրի և նշումների բաժնում գրեցի. «Իմ 1987 թվականի եղջերուի համար»: Այնուհետև Դրենդայի հետ ձեռքերս դրեցի այդ չեկի վրա, ուղարկեցի այն մի ծառայության, որին վստահում էի, և հռչակեցի, որ հենց նոր ստացա իմ եղջերուին: Ես մի թուղթ վերցրի, որի վրա գրեցի այն օրն ու ժամը, երբ հավատացի, որ ստացա իմ եղջերուին, և դրեցի այն իմ որսորդական վերարկուի գրպանում:

Այն ժամանակ ես ապրում էի Օկլահոմա նահանգի Տալսա քաղաքի սահմանամերձ շրջանում, որտեղ որս անելու տեղ չկար, բայց իմ ընկերներից մեկը, ով մեր եկեղեցուց էր, Գոհության տոնի կապակցությամբ հրավիրեց ինձ իր տատիկի տուն, որը քաղաքից դուրս էր: Նա ասաց, որ ագարակի շուրջ եղնիկներ են լինում:

Այսպիսով՝ Գոհության օրվա առավոտյան ընտանիքով ճամփա ընկանք՝ համեղ կերակուրներ ճաշակելու, հրաշալի հաղորդակցություն ունենալու և իմ եղջերուն որսալու ակնկալիքով: Ընկերս իրականում չգիտեր, թե ուր ուղղորդեր ինձ, բայց այդ սեփական տարածքում անտառին սահմանակից մի արոտավայր կար, և նա առաջարկեց գնալ այնտեղ և նստել մի մեծ ծառի տակ:

Այժմ, ուզում եմ, որ պատկերացնեք տեսարանը: Երբ արևը դանդաղորեն լուսավորեց իմ շրջակայքը, տեսա, որ նստած էի հնձած խոտհարքի մեջտեղում, որտեղ մի հսկա ծառ կար: Մտածեցի, որ բոլորովին սխալ վայրում եմ, քանի որ գիտեի, որ իրեն հարգող ոչ մի եղնիկ չէր հայտնվի իմ առջև, ով նստած է այդ բաց դաշտում:

Ես պատրաստվում էի վեր կենալ և շարժվել անտառի ուղղությամբ, որը գրեթե 120 մետրով հեռու էր ինձնից, երբ զգացի, որ ինչ-որ բան է շարժվում անտառում՝ իմ ձախ կողմում գտնվող ցանկապատի երկայնքով: Հեռվից լսվեց տերևների խշշոց, և ես գիտեի, որ դա եղջերու է:

Հանկարծ տեսադաշտում երևացին երեք էգ եղնիկներ, որոնք քայլում էին անտառով՝ ցանկապատի երկայնքով: Ես արագ հայացք նետեցի նրանց վրա, մինչ նրանք մտան թփերի մեջ: Եղնիկները շատ հեռու էին, բայց դա ստիպեց ինձ կանգ առնել և սպասել մի քանի րոպե, նախքան կմտնեի անտառ, որտեղով, կարծում էի, կանցնեին եղնիկները: Այնուհետև, ես չիմացա, թե ինչպես իմ հետևում մի եղջերու դաշտով վազում էր ուղիղ դեպի իմ ծառը:

Ես ծառի հակառակ կողմում էի, մինչ եղջերուն, դաշտը հատելով, իմ առջևով շարժվեց դեպի անտառ: Նա չտեսավ ինձ: Վազեց դեպի ծառը, որսաց իմ հոտը և բարձր փնչոցով կանգ առավ, ինչը ցնցեց ինձ: Երբ անսպասելի ձայնից նայեցի իմ աջ կողմը, շփոթվեցի՝ տեսնելով վեցճյուղանի եղջերուին, որը նայում էր ինձ ընդամենը 5 մետր հեռավորությունից: Եղջերուն, այժմ հասկանալով, թե ինչ է կատարվում, իսկույն պոկվեց տեղից և բարձր փնչացնելով մեծ արագությամբ սլացավ անտառ:

Մեծ արագությամբ վազող սպիտակապոչ եղջերուին սահմա-

նափակ հնարավորություններով հրացանով նշանառության տակ պահելը հեշտ չէ, և ես գիտեի, որ ընդամենը մեկ կրակոց կարձակեի, նախքան նա կհասներ անտառ: Ես չէի կարողանա դիպուկ նշան դնել եղջերուի վրա, քանի որ նա ցատկում էր մեծ ոստյուններով: Ընդամենը քսան մետր էր մնացել, որ եղջերուն մտներ անտառ, երբ քաշեցի ձգանը: Կրակոցից կենդանին ընկավ և անշարժացավ: Ես ցնցված էի: Իսկապե՞ս դա տեղի ունեցավ: Այդ ամենն այնքան արագ կատարվեց: Ես դանդաղորեն վեր կացա և քայլեցի ընկած եղջերուի ուղղությամբ: Գրպանիցս արագ հանեցի թղթի կտորը և շնորհակալություն հայտնեցի Աստծուն եղնիկի համար:

Հրացանի ձայնից ընկերս եկավ և շնորհավորեց ինձ՝ տեսնելով ընկած եղջերուին: Ես ընկերոջս չէի պատմել, թե ինչ էր Տերն ասել, բայց նայեցի նրան և ասացի. «Չեմ կարծում, որ այս եղջերուն որսացի իմ որսորդական մեծ հմտությունների շնորհիվ»: Այնուհետև ցույց տվեցի նրան այն թղթի կտորը, որի վրա նշել էի այն օրը, երբ Դրենդան ու ես աղոթեցինք այդ եղջերուի հա-

ԱՅՍ ԴԵՊՔԸ ԳՐԱՎԵՑ ԻՄ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ԱՆԿԱՍԿԱԾ՝ ԵՍ ԳԻՏԵԻ, ՈՐ ԱՅՆ ԱՍՏԾՈՒՑ ԷՐ:

մար: Այնտեղ գրված էր. «Ես հավատում եմ, որ ստացա իմ 1987 թվականի եղջերուին այս օրը և այս ժամին, երբ աղոթեցի Հիսուսի անունով»: Թուղթը ցույց տվի ընկերոջս և պատմեցի, թե ինչ էր Տերն ասել, որ անեի:

Այս դեպքը գրավեց իմ ուշադրությունը: Անկասկած՝ ես գիտեի, որ այն Աստծուց էր: Բայց ինչ-ինչ պատճառով դեռևս չէի հավաքել ամբողջական պատկերը: Իմ մտքով դեռևս չէր անցել Թագավորության օրենքի գաղափարը և այն, որ եղջերուի հետ պատահածը կապ ուներ իմ ֆինանսների հետ: Այդ եղջերուն ստանալը զարմանալի էր, բայց արդյո՞ք դա կրկին տեղի կունենար: Չունենալով գաղափար Թագավորության օրենքի մասին՝ ես չգիտեի, թե ինչպես, կամ ո՞ր օրենքները ստիպեցին, որ այդ եղջերուն հայտնվեց այդտեղ: Բայց ես անհամբեր սպասեցի եղնիկների հաջորդ որսաշրջանին՝ դա կրկին փորձելու համար:

Հավատքը գործում է ամեն անգամ

Եղնիկների հաջորդ որսաշրջանը փոփոխություն բերեց, քանի որ մենք Օհայոյից տեղափոխվեցինք Տալսա: Այս մղումը ստացա մի օր, երբ դրսում վազում էի: Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ և ասաց, որ ժամանակն է տեղափոխվելու տուն՝ Օհայո, և այնտեղ ես իրականացնելու էի վերջին ժամանակների իմ աշխատանքը:

Արդեն տասը տարի էր՝ ապրում էի Տալսայում, և ես սիրում էի Տալսան, բայց ավելի երջանիկ էի այն լքելու հեռանկարից: Նավթային տնտեսության անկումը, որ սկսվեց մեկ տարի առաջ, բացառիկ ծանր հարված հասցրեց Տալսային, քանի որ նրա տնտեսությունը գլխավորապես հիմնված էր նավթի վրա: Մենք հայտնվեցինք ֆինանսական ճգնաժամի մեջ և հազիվ էինք ծայրը ծայրին հասցնում: Նոր սկիզբը մի բան էր, որով կարող էի ոգեշնչվել: Ես չէի էլ պատկերացնում, որ հաջորդ ինը տարիներն ավելի մեծ ֆինանսական ճնշում կբերեին, քան տեսել էինք Տալսայում:

Մենք տեղափոխվեցինք Օհայո վաղ ամռանը, և ես անհամբեր սպասում էի, թե Օհայոն ինչ էր առաջարկելու մեզ: Մենք շատ արագ պարզեցինք, որ մեր գործը կրկին սկսելը և մեր բոլոր պարտքերը մեզ հետ Օհայո բերելը չափազանց ցնցումային եղան:

Իհարկե, եղնիկների որսաշրջանը մոտենում էր, մոտենում էր նաև մեր երրորդ զավակի՝ Թոմի ծնվելու ժամանակը: Թոմը ծնվեց Օհայոյի եղնիկների որսաշրջանի երկրորդ օրը, այնպես որ, ակնհայտորեն ես ժամանակ չունեի զբաղվելու հետախուզությամբ՝ երեխայի ծննդյան և մեր գործը կրկին սկսելու պատճառով: Ես միայն մեկ տեղ գիտեի որսի համար:

Իմ հորական տան փողոցի մյուս կողմում մի վազքուղի կար, որտեղով ես վազում էի ավագ դպրոցում սովորելու տարիներին: Ծնողներիս հողատարածքում մի լճակ կար, որը սնվում էր հարևանի ագարակով հոսող փոքրիկ առվակով: Պետք է խոստովանեմ, որ փոքր հասակից տարիներ շարունակ անցել եմ այդ առվակի մոտով, բայց երբեք որևէ եղնիկ կամ, նույնիսկ, եղնիկի հետք չեմ տեսել այդ հողատարածքում: Բայց հիշում եմ, որ երբ սովորում էի քոլեջում, մի օր եղբայրս զանգեց և ասաց, որ ցնցված է, քանի որ այնտեղ եղջերու է տեսել և ծրագրել է եկող աշնանը գնալ որսի: Երկուսս էլ զարմացած էինք: Ես մտաբերեցի այդ խոսակցությունը, որը տեղի էր ունեցել ինը կամ տասը տարի առաջ:

Հիշում էի ճիշտ այն տեղը, որտեղ, ըստ նրա խոսքերի, տեսել էր եղնիկին, քանի որ ես շատ ծանոթ էի այդ առվակին: Նա նշեց, որ եղնիկին տեսել էր այնտեղ, որտեղ առվակը բաժանվում է, և որտեղ մի հսկա թխկի է աճում: Այնուհետև նա ասաց, որ այդ թխկու կողքին կար ավելի փոքր թխկի, և կարծում էր, որ փոքր թխկին կարելի էր օգտագործել ավելի մեծ թխկին մագլցելու համար, որը հրաշալի վայր կլիներ եղնիկ որսալու համար:

Եղբայրս երբեք եղնիկ չէր որսացել առվակի մոտ, չնայած ասում էր, որ մի անգամ բաց է թողել նրան: Տարիներ շարունակ նա նույնպես այնտեղ չէր եղել, ուստի ես գաղափար չունեի՝ արդյո՞ք ծառը դեռ տեղում է, կամ՝ կկարողանայի՞ այն գտնել մթության մեջ՝ որսի դուրս գալու առավոտյան:

Իրավիճակն ավելի բարդ էր այն առումով, որ Օհայոյում օրենքը թույլ էր տալիս որսի դուրս գալ միայն որսորդական հրացանով: Եղջերուների որսաշրջանին չէր թույլատրվում գործածել ակոսավոր հրացաններ, եղջերուին կարելի էր հարվածել միայն

որսորդական հրացանից: Այն ժամանակ ես ունեի 20 տրամաչափի երկփողանի հրացան և վստահ չէի, որ դրանով կարող էի հարվածել եղջերուին ավելի քան 18 մետր հեռավորությունից: Բայց դա այն ամենն էր, ինչ ես ունեի, և դա էր իմ ծրագիրը:

Դրենդան ու ես ցանեցինք մեր սերմը, ձեռքներս դրեցինք չեկի վրա այնպես, ինչպես արեցինք նախորդ տարի, և պնդեցինք, որ ես ստացա իմ եղջերուին՝ համաձայն Մարկոսի 11.24-ի: Կարճ ասած՝ Օհայոյի որսաշրջանի չորրորդ օրը՝ իմ որսորդության առաջին օրը, 40 րոպեում ես հնձեցի մեկ էգ և մեկ արու եղջերու՝ երկուսն էլ 68 մետր հեռավորությունից, ինչը վեր էր այն հնարավորությունից, որ կարող էր ընձեռնել իմ հարթափող որսորդական հրացանը: Այն ժամանակ Օհայոյում կար երկու եղնիկի սահմանափակում. դա էր պատճառը, որ այդ տարի ես հնձեցի ընդամենը երկու եղնիկ: Ճիշտ է, ես ստացա իմ երկու եղնիկներին 40 րոպեում:

Ես գիտեի, որ ինչ-որ բան էի հայտնաբերել: Բայց այս եղնիկների հունձքի ժամանակ մեր ֆինանսական վիճակն իսկապես ծանր էր, իսկ լարվածությունը՝ հեղձուցիչ: Իմ մտքով երբեք չէր անցել, որ այս նույն սկզբունքը կիրառեի մեր ֆինանսական ոլորտում:

Չափից շատ «զուգադիպություններ»

Օհայոյում գտնվելու առաջին ձմեռը և հաջորդող 12 ամիսները սոսկալի էին, քանի որ ես պայքարում էի խորը հուզական խնդիրների, տագնապի նոպաների և ընկճվածության դեմ, ինչի մասին խոսեցի այս գրքի ներածության մեջ:

Հենց հաջորդ նոյեմբերին՝ եղնիկների որսաշրջանից անմիջապես առաջ, մեքենաս այրվեց: Թեև նախորդ երկու որսաշրջանին տեսել էի եղնիկների զարմանալի հունձք, ես դեռևս չունեի հայտնություն Թագավորության մասին: Մեքենայի այրվելը և այն, որ Աստված խոսեց ինձ հետ Թագավորության մասին, ստիպեցին ինձ հասկանալ, որ այս երեք պատմությունների ասելիքն ավելին էր, քան սկզբում մտածում էի: Ես մեծապես քաջալերվեցի, բայց, միևնույն է, դեռևս պատկերացում չունեի

Թագավորության օրենքից:

Եկավ եղնիկների հաջորդ որսաշրջանը, և ժամացույցի ճշգրտությամբ 40 րոպեում ես կրկին որսացի իմ եղնիկին: Մենք սկսեցինք տեսնել, որ Թագավորությունը գործում է նաև մեր ֆինանսական բնագավառում, որի մասին կխոսեմ 2-րդ գլխում: Բայց այդ վաղ տարիներին ես զարմանալի բաների ականատես եղա:

Անշուշտ, Աստված կարծես նոր բան էր սովորեցնում ինձ, երբ հերթը հասնում էր եղնիկների որսորդությանը: Կարծում եմ՝ պատճառն այն է, որ եղնիկների որսաշրջանն ամբողջությամբ հունձքի մասին է, և դա տեղի է ունենում վերահսկելի և խիստ սահմանափակ ժամանակահատվածում: Օհայոյում որսաշրջանը սովորաբար տևում է ընդամենը երկու շաբաթ: Հունձքի այսպիսի կենտրոնացված ժամանակաշրջանում դուք չեք ցանկանում ժամանակ վատնել: Փոխարենը՝ եղնիկ որսացողների մեծ մասը նպատակաուղղված նախապատրաստվում է որսաշրջանին: Շատերը ժամեր են անցկացնում՝ հետախուզելով և նախապատրաստվելով այդ երկշաբաթյա հնարավորությանը: Այնպես որ՝ սա հրաշալի լաբորատորիա է Թագավորությունն ուսումնասիրելու համար:

ԱՆԿԵՂԾ ԱՍԱԾ՝ ԱՍՏՎԱԾ ԿՕԳՏԱԳՈՐԾԻ ՑԱՆԿԱՑԱԾ ԲԱՆ՝ ՁԵՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Ներեցեք որսորդական բոլոր պատմությունների համար, բայց դրանք շատ կարևոր էին ինձ համար: Դրանք հայտնեցին թաքնված օրենքներ, որոնք ես այլ կերպ չէի տեսնի: Անկեղծ ասած՝ Աստված կօգտագործի ցանկացած բան՝ ձեր ուշադրությունը գրավելու համար: Ղուկասի Ավետարանի 5-րդ գլխում Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի ուշադրությունը գրավելու համար Նա օգտագործեց ձկնորսությունը, որի ժամանակ այնքան ձուկ որսացին, որ նրանց նավերը սուզվում էին: Ինչ վերաբերում է ինձ, Նա օգտագործեց եղնիկների որսորդությունը:

Այն ամենից հետո, երբ իմ ննջասենյակում Աստված խոսեց

ինձ հետ Թագավորության մասին, երբ այրվեց իմ մեքենան, երբ հիշեցի եղնիկների որսորդությունները և տեսա, թե ինչպես Աստված մեզ համար դուռ բացեց՝ առանց պարտքի ձեռք բերելու երկծավալ թափքով հրաշալի վիճակում գտնվող մեքենան, հանկարծ մենք սկսեցինք հասկանալ: Դրենդան ու ես ամբողջությամբ խորամուխ եղանք այդ գիտության մեջ:

Ես սկսեցի ուսումնասիրել Աստվածաշունչը բոլորովին նոր ձևով: Ես ինձ անվանեցի հոգևոր գիտնական: Սկսեցի հարցեր տալ. «Ինչո՞ւ դա տեղի ունեցավ: Ինչո՞ւ դա տեղի չունեցավ»: Ես ուշադիր փնտրում էի այն հոգևոր օրենքների բանալիները, որոնք գտնվում էին իմ կարդացած աստվածաշնչյան պատմությունների հիմքում:

Աստված շարունակում էր ինձ բաներ ցույց տալ, և կրկին, Նա օգտագործում էր եղնիկների որսորդությունը՝ Թագավորության մասին ավելին ցույց տալու համար: Ներքոհիշյալ պատմությունն իսկապես գրավեց իմ ուշադրությունը: Այն՝ «Դու տեսա՞ր դա» շարքից է:

Հելոուինի երեկոն էր, և ես ունեի մոտավորապես 45 րոպե, մինչև որ մեր ընտանիքը պատրաստ կլիներ ուղևորվելու եկեղեցի, որպեսզի մասնակցեր մի երեկույթի, որը մենք կազմակերպում էինք՝ որպես այլընտրանք դևերից ներշնչված ավանդական տոնակատարության:

Մի քանի շաբաթ առաջ Դրենդան ու ես սերմ էինք ցանել եղջերուի համար, ձեռքներս դրել էինք չեկի վրա, այն ուղարկել էինք մի ծառայության, որը, հավատում էինք, որ Աստված էր ցույց տվել, և համարել էինք դա կատարված՝ համաձայն Մարկոսի 11.24-ի: Սա իմ առաջին որսորդությունն էր այդ որսաշրջանին, և ես արբալետով որս էի անում այն հողատարածքում, որ վարձել էինք:

Քանի որ Աստված սովորեցրել էր, թե ինչպես հավատքով որս անեմ, ես սովորաբար ստանում էի իմ եղնիկին 40 րոպեում, և այդ օրը, չնայած ժամանակի սղությանը, ես մտածում էի, որ ժամանակ ունեմ իմ եղջերուին որսալու համար: Ես ճանապարհ ընկա դեպի իմ դիտանոցը, որը մեր հին ագարակային տան հետևում տարածվող սոճու անտառի հետնամասում էր: Ես մագլցեցի ծա-

ռը, և տասը րոպե չէր անցել, երբ նկատեցի, թե ինչպես մի եղջերու, որը հեռու էր ինձնից գրեթե 200 մետր, մոտենում է հարևանի անտառային տարածքին: Ես գիտեի, որ դա իմ եղջերուն էր, բայց նա շարժվում էր սխալ ուղղությամբ:

Սա ընդամենը երկրորդ տարին էր, որ ես որս էի անում աղեղով, և իրականում շատ բան չգիտեի այդ մասին: Ես չէի կրում քողածածկող հագուստ, չունեի փռթկացնող սուլիչ և նույնիսկ չէի լսել բուրանյութերի մասին, որոնք օգտագործում էին եղնիկներին գրավելու համար: Իմ դիտանոցը մի տախտակ էր, որ գամել էի ծառի երկու ճյուղերի արանքում՝ գետնից ընդամենը 3.6 մետր բարձրության վրա, որը, եթե որևէ բան գիտեք ծառի դիտանոցից աղեղով որս անելու վերաբերյալ, իսկապես այդքան էլ բարձր չէր: Բայց մեկ տարի առաջ՝ աղեղով որս անելու իմ առաջին տարին, ես հնձեցի երկու եղջերու՝ երկու անգամն էլ օգտագործելով իմ հավատքը, և այդ տարի այլ բան չէի ակնկալում:

Երբ հետևում էի, թե ինչպես էր եղջերուն շարժվում սխալ ուղղությամբ, չգիտեի ինչ անել, ուստի սկսեցի աղոթել: Հանկարծ լսեցի, որ Սուրբ Հոգին ասաց. «Ասա՛ եղջերուին, որ գա քեզ մոտ»: Ես մի փոքր ցնցվեցի: Ասել եղջերուին, որ գա ինձ մո՞տ: Գիտեի, որ չէի կարող բարձրաձայն բղավել, ուստի խոսակցական ձայնով ասացի. «Եղջերո՛ւ, կանգնի՛ր: Շրջվի՛ր և ե՛կ իմ ծառի տակ»: Խենթություն է, այդպես չէ՞: Ոչ մի փռթկացնող սուլիչ, ոչի՛նչ: Բայց այն պահին, երբ ասացի դա, եղջերուն կանգ առավ, նայեց երկու ուղղությամբ, այնուհետև շրջվեց և մոտավորապես 180 մետր քայլեց իմ ուղղությամբ: Թեև ես գտնվում էի 365 մետր լայնությամբ անտառում, եղջերուն քայլեց ուղիղ դեպի իմ ծառը և կանգնեց տակը:

Իհարկե, ես չէի կարող բաց թողնել այդ կրակոցը: Ա՜յ քեզ բան: Մի՞թե ես հենց նոր տեսա դա: Դիպուկ հարվածից եղջերուն ընկավ ուղիղ իմ ոտքերի տակ: Ես նայեցի ժամացույցիս և հասկացա, որ եթե պատրաստվում էի հասնել երեկույթին, ապա ավելի լավ է՝ եղջերուին թողնեի այնտեղ, մինչև կվերադառնայի և կտանեի նրան ախոռ: Պետք է խոստովանեմ, որ դրանից հետո շաբաթներ շարունակ ես մտածում էի այն մասին, ինչ տեսա:

Բայց Աստված շարունակում էր գրավել իմ ուշադրությունը:

Մեր վարձակալած ագարակով հոսում էր մի առու, որի երկայնքով թփեր էին աճում: Այնտեղ մշտապես կարելի էր նապաստակ որսալ: Այդ օրն ամբողջ գիշեր ձյուն էր տեղացել, և ձյունը մշտապես հեշտացնում է նապաստակներին տեսնելը: Ես չկարողացա դիմադրել, ուստի որդիս՝ Թիմը, և ես իջանք առվակն ի վար՝ ճանապարհին տրորելով թփերը, և հանկարծ թփուտից մի արու փասիան հայտնվեց:

Օհայոյում կար փասիանի որսաշրջան, բայց ես հազվադեպ էի տեսնում փասիան ագարակում՝ գուցե տարին մեկ անգամ: Երբ այս մեկը հայտնվեց, ես ոգևորվեցի նրան որսալու հնարավորությունից: Երբ կրակեցի, թռչունն ընկավ, բայց գետնին բախվելով սկսեց վազել: Անմիջապես հասկացա, թե ինչ էի արել: Ես վնասել էի նրա թևը: Թռչունն ամբողջ ուժով վազում էր առվակից դեպի բլուրը, իսկ արու փասիանը կարող է վազել ժամում մինչև 55 կիլոմետր արագությամբ: Իհարկե, ձյան պատճառով նա այդքան արագ չէր վազում, բայց վազում էր:

Քանի որ առվակն անցնում էր երկար հովիտով, իմ տեսադաշտում էր սարալանջի յուրաքանչյուր թիզը: Սարալանջն օգտագործվել էր նախորդ տարի ցանքածածկ աճեցնելու համար, այնպես որ՝ այն շատ հարթ էր, և երբեմն միայն խոտի փունջ էր վեր ցցվում:

Քանի որ թռչունն ամբողջ ուժով բարձրանում էր բլուրը, ես գիտեի, որ ոչ մի կերպ չէի կարողանա բռնել նրան, և այն դուրս էր հրացանի հասանելիության սահմաններից: Բայց հանկարծ հիշեցի եղջերուին, թե ինչպես եկավ ինձ մոտ, երբ խոսեցի: Ուստի, ես բարձրաձայն բղավեցի. «Փասիան, ԿԱՆԳՆԻՐ»: Այն վայրկյանին, երբ ասացի դա, փասիանն անհետացավ: Ես հստակ տեսնում էի ամբողջ սարալանջը, որը ծածկված էր ձյունով, և միայն մի քանի տեղ ցցված խոտեր էին երևում, սակայն փասիանը չկար: Թիմը բղավեց. «Ո՞ւր գնաց, հայրիկ»: «Չգիտեմ»,- պատասխանեցի ես:

Մենք գնացինք նրա հետքերով, և ահա նա նստած էր այնտեղ՝ փոքրիկ գլուխը ձյան մեջ մտցրած: Ես մտածեցի. «Արդյո՞ք խփեցի նրան, ու նա վազեց այնքան, մինչև սատկեց»: Ես մոտեցա և

բռնեցի թռչունին, ու նա սկսեց ճիչեր արձակել, թևերը թափահարել: Դա վայրի փասիան էր և լիովին ողջ: Այդ գիշեր, երբ մորթեցի թռչունին, շատ ուշադիր նայեցի. թռչնի վրա գնդակի հետքեր չկային, բայց ես տեսա, թե աջ թևի ո՛ր հատվածն էի վնասել: Այնպես որ՝ թռչունն իսկապես ողջ էր, բայց կանգ էր առել հենց այն պահին, երբ ես բղավել էի՝ կանգնի՛ր:

Այո՛, Տե՛ր, Դու լիովին գրավել ես իմ ուշադրությունը:

ԳԼՈՒԽ 2

ՆՈՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ

Երբ Դրենդան ու ես սկսեցինք տեսնել, թե ինչպես է Թագավորությունը գործում մեր կյանքում, մենք պարզապես չէինք կարող չպատմել մարդկանց այդ մասին: Գիտեինք, որ քայլում էինք բացահայտման և ազատագրման հիանալի ճանապարհով: Ես դեռ ապահովագրության փաթեթներ և արժեթղթեր էի վաճառում, բայց զգում էի, որ ինչ-որ բան փոխվում էր: Չգիտեի՝ ինչ, բայց գիտեի, որ պետք է լինեն պատասխաններ իմ ֆինանսների համար այնպես, ինչպես դրանք տեսա իմ եղնիկներին որսալիս և հրաշալի վիճակում գտնվող երկծավալ թափքով մեքենան ձեռք բերելիս: Ես գիտեի, որ ինձ անհրաժեշտ էր ավելին, քան հրաշալի վիճակում գտնվող այդ երկծավալ մեքենան, թեև միանգամայն ուրախ էի, որ ունեի այն:

Մեր պատմության այս կետում ես դեռևս շատ պարտքեր ունեի: Ուզում էի պարտքերից ազատ լինել, բայց գաղափար չունեի, թե ինչն էր անհրաժեշտ փոխել: Թեև չգիտեի, թե ինչն էր պետք փոխել, բայց համոզված էի, որ պարզելու էի դա: Գիտեի, որ բացահայտել էի իմ պատասխանը, բայց կրկին, կարիք ունեի իմանալու ավելին այն մասին, թե ինչպես իմ կյանքում իրականություն դարձնեի այն տեսարանները, որոնք պատկերված էին Աստվածաշնչում: Այն գործը, որ անում էի, հազիվ էր լրացնում մեր ապրուստի ծախսերը: Բայց դա ավելի լավ էր, քան այն ժամանակ, երբ ամեն ամիս ավելի էինք մխրճվում պարտքերի մեջ:

Դրենդան ու ես շարունակում էինք կարդալ Աստվածաշունչը և փնտրել լրացուցիչ հուշումներ Թագավորության գործունեության

մասին: Մենք նաև գումար էինք ցանում այն ֆինանսների համար, որոնց կարիքն ունեինք:

Եվ մի գիշեր ես երազ տեսա: Երազում թրթուրը դանդաղ բարձրանում էր բույսի ցողունի վրայով: Այնուհետև կանգ առավ մի տերևակոթի վրա և բոժոժ հյուսեց: Հանկարծ բոժոժից դուրս եկավ մի գեղեցիկ թիթեռ, որը թռավ-հեռացավ: Այն ժամանակ մի ձայն ասաց. «Այդպես էլ կլինի քո բիզնեսը»:

Ես արթնացա և հասկացա, թե ինչ էր նշանակում երազը: Թրթուրը կարող է միայն սողալ և խիստ սահմանափակ է իր կենսակերպով՝ սովորաբար ապրելով միևնույն բույսի վրա ամբողջ կյանքում: Բայց տեղի է ունենում կերպարանափոխում, որը փոխում է այդ թրթուրի ներուժը և ամբողջ կյանքը: Այն կերպարանափոխվում է թիթեռի, ինչը հնարավորություն է տալիս նրան թռչելու՝ ուր որ կամենա: Որոշ թիթեռներ, օրինակ՝ միապետ թիթեռները, կարող են թռչել հազարավոր կիլոմետրեր հյուսիսային կիսագնդում ձմռան ամիսներից խուսափելու համար: Թեև երազը տեսնելու ժամանակ պատկերացում չունեի, թե ինչպես էր այդ կերպարանափոխումը տեղի ունենալու, բայց գիտեի, որ Աստված ցույց էր տալիս, որ այն տեղի էր ունենալու: Ես քաջալերված էի:

Զարմանալի բացահայտում

Օհայո վերադառնալուց ի վեր, իմ սովորության համաձայն, առավոտյան օրական 90 գովազդային զանգ էի կատարում: Կուզեի ասել, որ հրաշալի համակարգ էի ստեղծել դա անելու համար, բայց, անկեղծ ասած, ամեն օր պարզապես թերթում էի հեռախոսագիրքը (դա նախքան «Զզանգել» ցուցակի ի հայտ գալն էր):

Քանի որ ես տարածաշրջանային փոխնախագահ էի այն ընկերությունում, որի համար աշխատում էի, իմ հիմնական գործառույթն էր վաճառքի նոր ներկայացուցիչներ վարձելը և նրանց սովորեցնելը: Ես զանգում էի և ասում, որ իմ ընկերությունն ընդլայնում է իր գործունեությունն Օհայոյում, և ես տարածքում զանգեր էի կատարում՝ տեսնելու, թե արդյոք կա՞ որևէ մեկը, ում կհետաքրքրի դա: Մեծ մասամբ լսում էի ինքնապատասխանիչի ձայնը և հողորդագրություն էի թողնում: Եթե ինչ-որ մեկին հե-

տաքրքրում էր, հետ էր զանգում: Օրական 90 հեռախոսազանգ կատարելով՝ ես կարող էի ակնկալել, որ կունենայի երկուսից երեք հարցազրույց և հնարավոր գործարք:

Այս գործընթացի միջոցով էր, որ հանդիպեցի Դեյվին: Հեռախոսազրույցի ժամանակ նա արտահայտեց իր ցանկությունը աշխատանքային գործունեության նոր դաշտ գտնելու վերաբերյալ և հետաքրքրված էր, թե ինչ կառաջարկեի իրեն: Ես առաջարկեցի այդ երեկո այցելել իրենց տուն, և նա ասաց, որ դա հրաշալի կլինի: Երբ նստեցի նրա ու կնոջ կողքին, սկսեցի տալ բոլոր բնականոն հարցերը՝ որտեղ է աշխատում, ինչո՞ւ է ցանկանում փոխել գործունեության ոլորտը, և թե ո՞ր կարգավիճակում են ֆինանսական առումով: Սովորաբար հնարավոր թեկնածուներին մշտապես հարցնում էի իրենց անձնական ֆինանսներից, որովհետև, ըստ էության, եթե նրանք հետաքրքրություն չէին ունենում ընկերության հանդեպ, այդ դեպքում ես մոտենում էի զանգին՝ որպես հնարավոր գործարքի: Այնպես որ՝ ֆինանսական տվյալներ հավաքելը թույլ էր տալիս ինձ գաղափար կազմել այն մասին, թե ինչ չափի ապահովագրություն նրանք պետք է դիտարկեին, և տեսնել, թե ուրիշ ինչ ապահովագրական արտադրանքներ կարող էին արդեն ունենալ:

Ի զարման ինձ՝ մինչ քննարկում էինք նրանց ընթացիկ ֆինանսական վիճակը, կինը սկսեց հուսահատությունից լաց լինել: Նրանց ֆինանսական բնագավառում խառնաշփոթ էր, և նրանք գաղափար չունեին, թե ինչ պետք է անեին կամ ինչ փոխեին: Ես հասկացա, որ նրանց խնդիրը ապահովագրությունը չէր: Նրանց անհրաժեշտ էր ավելացնել կանխիկի հոսքը և դուրս գալ պարտքերից: Ես խոսեցի նաև Աստծո Թագավորության մասին և ասացի, որ Դրենդան ու ես սովորում ենք, թե ինչպես է այն գործում: Ես հավաստիացրի, որ կանեմ այն, ինչ կարող եմ նրանց օգնելու համար, և կրկին կհանդիպենք մեկ շաբաթ անց, որպեսզի քննարկենք ցանկացած փոփոխություն, որ նրանք գուցե կարիք կունենան կատարելու:

Այդ հանդիպումից հետո գրասենյակ վերադառնալու ճանապարհին ես անհանգստացած էի: Պետք է լիներ ինչ-որ բան, որ կարող էի անել:

Երբ վերադարձա գրասենյակ, նստեցի գրասեղանիս մոտ, և հանկարծ մի միտք ծագեց. ես կուսումնասիրեմ ցանկացած ապրանք կամ ծառայություն, որից նրանք օգտվում են՝ հույս ունենալով գտնել միևնույն ծառայությունից ավելի ցածր գնով: Իմ նպատակն էր տեսնել, թե որքան գումար կկարողանայի խնայել, որը նրանք կօգտագործեին պարտքերի կրճատման համար: Սա ինտերնետի ժամանակաշրջանից առաջ էր, ուստի իմ ամբողջ ուսումնասիրությունը պետք է կատարվեր «Դեղին էջեր» տեղեկագրքի և հեռախոսազանգերի միջոցով:

Մեկ շաբաթ անց ես ստուգել էի բոլոր ապրանքների կամ ծառայությունների գները, որոնցից նրանք օգտվում էին, և բավականին զարմացած էի այն բանից, ինչ հայտնաբերեցի: Վերադասավորելով կամ փոխարինելով ընթացիկ մատակարարներին առավել էժան մատակարարներով կամ ընկերություններով՝ ես կարողացա ամսական 600 դոլարի դրամական հոսք խնայել: Այնուհետև վերցրի իմ ֆինանսական հաշվիչը և խնայած դրամական հոսքը մուտքագրեցի նրանց ընթացիկ պարտքի համակարգում և սեղմեցի հաշվելու կոճակը:

Երբ թիվը հայտնվեց էկրանին, ես ապշեցի. հաստատ ինչ-որ տեղ սխալվել էի: Իմ հաշվարկը ցույց էր տալիս, որ այս զույգը կարող էր լիովին ազատվել պարտքերից՝ ներառյալ հիփոթեքային վարկից, ավելի պակաս, քան յոթ տարում՝ առանց եկամտի փոփոխության: *«Անհնար է»,*- մտածեցի ես: Կրկին հաշվարկեցի և ստացա միևնույն արդյունքը:

Այնուհետև մոտեցա իմ թղթապանակների դարակին, հանեցի մյուս հաճախորդներից մի քանիսի թղթապանակները և այդ շաբաթ աշխատեցի դրանց վրա: Ինչպես այս հաճախորդը՝ նրանցից յուրաքանչյուրը կարող էր լիովին ազատվել պարտքերից, այդ թվում՝ հիփոթեքային վարկից, հինգից յոթ տարում՝ առանց ընթացիկ եկամտի փոփոխության: Եթե սա հնարավոր էր, և այժմ ես գիտեի, որ հնարավոր է, այդ դեպքում ինչո՞ւ հասանելի չդարձնել այն բոլորին: Իմ հաճախորդի համար տպեցի տվյալների թերթիկ, որը ցույց էր տալիս, թե ինչպես նա կարող էր լիովին ազատվել պարտքերից ավելի պակաս, քան յոթ տարում: Ես այն-

քան ոգևորված էի՝ կրկին հանդիպելու այդ զույգին և ցույց տալու այն, ինչ բացահայտել էի, և հետաքրքիր էր, թե ինչպես նրանք կընդունեին այդ տեղեկությունը:

Ես նստեցի Դեյվի և կնոջ կողքին և, անդրադառնալով թվերին, մեկ առ մեկ բացատրեցի, թե ինչպես կարելի էր գումար խնայել: Ես նպատակաուղղված թաքցրի վերջնական արդյունքը, մինչև որ ամբողջովին անցա բոլոր կետերով, որոնք հնարավորություն էին տալիս խնայելու դրամական հոսքերը: Մինչ ներկայացնում էի այս ամենը, իմ հաճախորդները գրեթե ցնցված նստած էին: Նրանց տեսանկյունից չկար գումար և չկար ելք պարտքերից ազատվելու համար՝ երբեք: Երբ հասա վերջին էջին՝ հայտնելով, որ նրանք կարող են մարել պարտքերը, այդ թվում՝ հիփոթեքային վարկը, ավելի պակաս, քան յոթ տարում, հանկարծ ամուսինը վեր թռավ՝ արցունքներն աչքերին: Նա այնքան հուզված էր: Երկուսն էլ արտասվեցին և կրկին ու կրկին շնորհակալություն հայտնեցին իրենց այցելելու համար: Այնուհետև ես որոշ ժամանակ մնացի այնտեղ՝ հաղորդելով նրանց այն ամենը, ինչ Աստված հայտնել էր ինձ, և ինչ մինչ այդ սովորել էի Աստծո Թագավորության մասին: Նրանք համակ ուշադրությամբ լսում էին:

Ես մեկ դրամ չվերցրի այդ հաճախորդից, բայց երբեք այդքան երջանիկ չէի եղել որևէ հաճախորդի հետ. այժմ միտքս պտտվում էր ժամում միլիոն կիլոմետր արագությամբ: Այն, ինչ հենց նոր արեցի, ուզում էի անել յուրաքանչյուր հաճախորդի համար, և Տիրոջից իմաստություն խնդրեցի, թե ինչպես գումար վաստակեի այդ գործընթացից: Գիտեի, որ սա լինելու էր իմ նոր բիզնես մոդելը, եթե կարողանայի հասկանալ, թե ինչպես կարող էի գումար վաստակել այդ աշխատանքի դիմաց: Որոշ փորձերից ու սխալներից հետո մենք գտանք միջոց՝ մեր ծրագրերն անվճար առաջարկելու յուրաքանչյուրին, ով կցանկանար, և միաժամանակ դրամական հոսք ապահովելու մեր բիզնեսի համար մեր մշակած ուղղորդման համակարգի միջոցով: Դա այնքան հրաշալի էր, որ դժվար էր հավատալ, և Դրենդան ու ես չափազանց ոգեշնչված էինք:

Ես գիտեի, որ սա այն կերպարանափոխումն էր, որ տեսա երա-

զում: Թեև գիտակցում էի, որ մենք բոժոժի փուլում էինք, բայց այնպես պատրաստ էի թռչելու: Նախքան թռչելը դեռևս շատ բան կար սովորելու, բայց ես գիտեի, որ ճիշտ ճանապարհին եմ:

Մենք ստեղծեցինք մեր նոր ընկերությունը և անվանեցինք այն «Հավատքով լեցուն ընտանեկան ֆինանսներ» (Faith-Full Family Finances), որովհետև գիտեինք, որ հավատքով ձեր ֆինանսները լեցուն կլինեն, և դա այն ուղերձն էր, որ իսկապես ցանկանում էինք փոխանցել ավելի, քան ֆինանսական պատասխանները, որ առաջարկում էինք: Մենք պահպանեցինք այդ անվանումը շուրջ 20 տարի, բայց հետո մտածեցինք, որ այն ակնհայտորեն քրիստոնեական անվանում է, իսկ մենք ուզում էինք հասնել ավելի շատ անհավատների, ուստի որոշեցինք փոխել այն՝ դարձնելով «Դեպի առաջ ֆինանսական խումբ» (Forward Financial Group), որը պահպանվում է մինչև օրս: (Ի դեպ, մենք շարունակում ենք առաջարկել պարտքերից ազատվելու մեր անվճար ծրագրերը, ինչպես նաև օգնում ենք մարդկանց խուսափել տնտեսական անկումների ռիսկից, որն ազդում է նրանց կենսաթոշակային հաշիվների վրա: Դուք կարող եք կապ հաստատել «Forward Financial Group» ընկերության հետ 1-(888)-815-0818 հեռախոսահամարով կամ forwardfinancialgroup.com կայքի միջոցով:

Թեև ընկերությունը հիմնադրելու պահին դեռևս լուրջ պարտքերի մեջ էինք, մենք գիտեինք, որ ճիշտ ուղով էինք ընթանում: Ընկերությունը մեծ հաջողություն ունեցավ, և երկուսուկես տարում Դրենդան ու ես ազատվեցինք պարտքերից: Ես չեմ կարող պատմել, թե որքան հուզումնալից էր դա: Հանկարծ մեր կյանքը դուրս եկավ գոյատևման համակարգից, և մեր ներսում սկսեց տեսիլք ծլարձակել:

Նոր մեքենայի համար կանխիկով վճարելը հրաշալի էր: Օհայոյի գեղատեսիլ վայրերից մեկում 22 հա հողատարածք գնելը և դրա համար կանխիկով վճարելը աննկարագրելի էր: Անհավանակա՛ն էր 715մ^2 տարածքով մեր երազանքի տունը կառուցելը և դրա համար ամբողջությամբ վճարելը: Երբեք չեմ մոռանա այն օրը, երբ Դրենդայի հետ կանգնած դիտում էինք, թե ինչպես էին փորում մեր նոր տան նկուղը: Նկուղն ավելի մեծ էր, քան այն

փոքրիկ ագարակային տունը, որտեղ ապրում էինք: Մեր աչքերից արցունքներ էին հոսում, մինչ երկուսով կանգնած դիտում էինք: Մենք նայում էինք երկրի վրա անցկացրած դժոխային այն ինը տարիներին, որոնք մնացին հետևում: Գիտեինք, որ այլևս նույնը չէր լինելու: Մենք բացահայտել էինք Աստծո Թագավորությունը, և այժմ գիտեինք, թե ինչու էր Եսայի մարգարեն անվանել այն Բարի լուր (ավետիք):

> *«Տեր Եհովայի Հոգին ինձ վրա է, ըստ որում Տերը օծել է ինձ. Նա ուղարկել է ինձ աղքատներին ավետիք տալու»:*
>
> – Եսայի 61.1

Անկեղծ ասած՝ Դրենդան ու ես ստիպված էինք լինում անընդհատ կսմթել մեզ, որովհետև այնպիսի՛ անհավանական բաներ էին կատարվում: Պարտքերից լիովին ազատ լինելը ժամանակին անհնարին երազանք էր, բայց այժմ այն իրականություն էր:

Լսե՛ք, ես այդքան լավը չեմ: Դուք տեսաք իմ աշխատանքային կենսագրությունը: Տարիներ շարունակ գործի եմ դրել իմ մեթոդները և քրտնաջան աշխատել եմ՝ վաստակելով ոչինչ՝ բացի տառապանքից ու լարվածությունից: Ես սովորում էի ապրել կյանքը Աստծո ճանապարհներով, և դա գործում էր: Այդ է պատճառը, որ դուք կարդում եք այս գիրքը, որպեսզի հայտնաբերեք այն, ինչ ես հայտնաբերեցի, և դուք կհայտնաբերե՛ք: Բայց, նախևառաջ, պետք է գիտակցեք, որ ես միացա նոր համակարգի, նոր Թագավորության, կյանքն ապրելու բոլորովին նոր ճանապարհի: Սա նաև ձեր պատասխանն է: Սա այն պատասխանն է, որի կարիքն ունեք: Սա այն ավետիքն է, որին սպասում էիք: Գիտեմ, գիտեմ, որ ձեր եկեղեցին չի սովորեցնում այս բաները: Իմը նույնպես չէր սովորեցնում, բայց այս ամենն Աստվածաշնչում է:

Աստված բարի է մի՛շտ

Թույլ տվեք տալ ձեզ կարևոր բանալի ասածս հասկանալու համար. ազատվե՛ք կրոնից: Սա կրոնական հարց չէ: Սա Աստծո մասին է, այն մասին, թե ինչ է Նա ցանկանում, որ ունենաք,

և թե ինչպես Հիսուսի միջոցով Նա գին վճարեց, որպեսզի տա ձեզ Թագավորությունը: Այնպես որ՝ խորամուխ լինենք Թագավորության մեջ և պարզենք, թե ինչպես է այն գործում:

Երբ Դրենդան ու ես տեսանք, թե ինչպես է Աստծո Թագավորությունը գործում մեր կյանքում, շատ անգամներ ապշահար էինք լինում մեր տեսածից: Մենք հասկացանք, որ հավատացյալների մեծ մասը գաղափար չունի, թե ինչպես է այն գործում:

Օրինակ, հենց նոր ես կարդացի մի խորագիր այն մասին, որ յոթ տարեկան երեխան նշիկները հեռացնելու ժամանակ մահացել է վիրահատական սեղանին: Չնայած չափազանց տարածված և սովորաբար շատ անվտանգ վիրահատությանը՝ նրա սիրտը վիրահատման ընթացքում կանգ էր առել, ինչը չափազանց տխուր ելք էր: Կարծում եմ՝ բոլորս սրտի հառաչանքով լսեցինք պատահածի մասին: Ինչևէ, որքան էլ ողբերգական լիներ իրադարձությունը, պատմությունն ուներ մեկ այլ ողբերգական կողմ, որը կարող էր իր ազդեցությունը թողնել այս ընտանիքի վրա կյանքի հետագա տարիներին: Թույլ տվեք մեջբերել, թե ինչ ասաց երեխայի հայրը մի լրագրողի.

> *«Դուք չեք հասկանում, թե ինչու են այս բաները տեղի ունենում, բայց մենք գիտենք, որ դա Աստծո ծրագիրն էր: Եվ դա միակ բանն է, որ կարող է անցկացնել մեզ այս ամենի միջով, որովհետև մենք գիտենք, որ դա Աստված էր»*[3]*:*

Թույլ տվեք մեջբերել նաև «Գրին Բեյ Փեքերս» ֆուտբոլային թիմի հարձակվող Ահարոն Ռոջերսի խոսքերը, որի պատմությունը հայտնվել էր «People» ամսագրում 2020 թվականի հունվարի 22-ին[4]:

> *«Ռոջերսը բացատրում էր, որ երեխա ժամանակ կասկածի տակ է դրել աստվածապաշտությունը և, մեծանալով,*

3 https://nypost.com/2020/02/26/7-year-old-south-carolina-girl-dies-duringtonsillectomy

4 https://people.com/sports/aaron-rodgers-opens-up-about-religion-to-danicapatrick-i-dont-know-how- you-can-believe-in-a-god

առնչվել է «կրոնի այլ տեսակների» հետ: «Մարդկանց մեծ մասը, որոնց ճանաչում էի, համարում էր, որ եկեղեցին այնպիսի տեղ է, որտեղ պարզապես պետք է հաճախես»: Նա նաև ասում էր. «Ես չգիտեմ, թե ինչպես կարող եք հավատալ մի Աստծո, Ով ուզում է մոլորակի մեծ մասին դատապարտել կրակե դժոխքի: Ինչպիսի՞ սիրող, զգայուն, ամենուր ներկա, ամենակարող էակ է ցանկանում իր գեղեցիկ արարչությանը վերջում դատապարտել կրակե դժոխքի»»:

Խելացնոր մեկնաբանություններ: Բայց եթե սա այն է, ինչ նրանք մտածում են Աստծո մասին, ուրեմն պետք է համաձայնեք՝ ո՞վ կկարողանար վստահել կամ ո՞վ կփափագեր ծառայել մի Աստծո, Ով ցանկանում է տանել իր յոթամյա դստերը: Ո՛չ ոք: Եվ ո՞վ է ցանկանում ծառայել մի Աստծո, Ով «ցանկանում է» մոլորակի մեծ մասին դատապարտել դժոխքի: Ո՛չ ոք: Բայց դա այն է, ինչին հավատում է քրիստոնյաների մեծ մասը: Ամբողջ կյանքում դուք լսել եք. «Աստված թույլ տվեց դա», «Աստված արեց դա», «Դա Աստծո ծրագիրն էր», «Նրանց ժամանակն էր գնալու» և նմանատիպ այլ արտահայտություններ: Ըստ էության, պատրաստվում եմ գրազ գալ, որ դուք հավանաբար նույն կերպ եք մտածում: Այնպես որ՝ ես խիստ եմ լինելու: Եթե իսկապես հավատում եք, որ Աստված այդպիսին է, որ Նա հոժարությամբ կսպաներ երեխայի կամ թույլ կտար որևէ մեկին տառապել քաղցկեղով, այդ դեպքում մենք լուրջ խոսակցության կարիք ունենք: Թույլ տվեք ասել այսպես.

ԴՈՒՔ ԵՐԲԵՔ ՉԵՔ ՀԱՎԱՏԱ ՄԵԿԻՆ, ՈՒՄ ՉԵՔ ՎՍՏԱՀՈՒՄ

Եթե ձեզ սովորեցրել են չվստահել Աստծուն, ասել են, որ Նա սպանում է անմեղ մարդկանց, և եթե դուք համաձայն եք, որ Նա տիեզերքի Ամենակարող Արարիչն է, այդ դեպքում ավելի լավ է՝ բոլորս լավագույնն անենք Նրա հետ լավ հարաբերությունների մեջ մնալու համար: Այսպես էին վարվում մարդիկ անցյալում՝ նախնադարյան քաղաքակրթություններում: Նրանք տարբեր զոհաբերություններ էին անում՝ բարկության Աստծուն հանգստաց-

նելու համար: Իրենց ենթարկում էին զանազան սահմանափակումների, նույնիսկ՝ տարբեր տեսակի ցավերի, որպեսզի ցույց տային, որ իսկապես հնազանդ էին Նրան՝ հուսալով խուսափել Նրա բարկությունից: Բայց մի՞թե սա է Աստվածաշնչի Աստծո բնավորությունը: Մի՞թե մենք պետք է ապրենք Աստծո վախի մեջ: Ո՛չ, իհարկե՝ ո՛չ: Այն պատկերացումը, որ Աստված հակառակ է մեզ, կամ Նա վստահելի չէ, հետևանք է վատ ուսմունքի, որը սկիզբ առավ Եդեմի պարտեզում՝ Ադամի ու Եվայի միջոցով:

> *«Եվ օձը ավելի խորամանկ էր, քան թե դաշտի բոլոր գազանները, որ Եհովա Աստված ստեղծել էր: Եվ կնոջն ասաց. «Իրա՞վ Աստված ասաց, որ Պարտեզի ոչ մի ծառից չուտեք»:*
>
> *Եվ կինն ասաց օձին. «Պարտեզի ծառերի պտղից ուտում ենք. բայց այն ծառի պտղից, որ Պարտեզի մեջտեղն է, Աստված ասաց՝ մի՛ կերեք նրանից և նրան մի՛ դիպչեք, որ չմեռնեք»:*
>
> *Եվ օձը կնոջն ասաց. «Բնավ չե՛ք մեռնի: Այլ Աստված գիտի, թե այն օրը, որ նրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն, և Աստծո պես կլինեք՝ բարին և չարը գիտեցող»:*
>
> *Եվ կինը տեսավ, որ ծառը լավ էր ուտելու համար, և թե հաճելի էր աչքերին և փափագելի է իմաստություն ձեռք բերելու համար, առավ նրա պտղից և կերավ և իր հետ իր մարդուն էլ տվեց, և նա կերավ»:*
>
> – Ծննդոց 3.1-6, NIV

Սատանան ժամանակների սկզբից կասկածներ է նետում Աստծո բնավորությանը: Տարօրինակ է, բայց հենց Աստծո հետ փոխհարաբերության միջոցով Եվան արդեն ուներ իմաստություն, որը գուցե թվացել էր, թե պակասում է իրեն: Այնուամենայնիվ, սատանան կարողացավ համոզել Եվային, որ կար ինչ-որ բան, որ նա բաց էր թողնում, և Աստված պահում էր դա նրանից: Ադամն ու Եվան հավատացին մի ստի, որ վերաբերում էր Աստ-

ծուն, և հոժարակամորեն թողեցին իրենց դիրքերը Նրա Թագավորությունում, որպեսզի հետամուտ լինեն մեկ այլ թագավորության: Նրանք հավատացին, որ սատանան ավելի լավ ապագա ունի իրենց համար: Իհարկե, նրանց որոշումը միայն բերեց ցավ, կսկիծ ու մահ:

Սատանայի գործելակերպը երբեք չի փոխվել, և զարմանալի չէ, որ նրա ամենամեծ թիրախը հենց եկեղեցին է: Որովհետև եկեղեցին արդեն ունի իշխանություն՝ դնելու սատանային իր ոտքերի տակ և պարտության մատնելու յուրաքանչյուր ճակատում, իսկ սատանայի միակ զենքը, ինչպես և այն ժամանակ, խաբեությունն է ու սուտը:

Աստծո բնավորությունը

Ինչ վերաբերում է ձեր ապագային և ձեր մատակարարմանը, Աստծո բնավորությունն ամենակարևոր թեման է, որին պետք է անդրադառնանք առաջինը: Եթե այս հարցը չլուծենք, դուք կարող եք թերևս մի կողմ նետել այս գիրքը՝ որպես մեկ այլ գիրք, որի նպատակն է օգնել ձեզ հարստանալու: Հուսով եմ, որ կտաք ինձ ժամանակ՝ անցկացնելու ձեզ այս գրքի միջով: Հուսով եմ, որ իսկապես ցանկանում եք ֆինանսապես ազատ լինել և լցվել իմաստությամբ ու գիտությամբ: Այս անգամ ուսմունքը ոչ թե ստախոսից՝ սատանայից է, ով խաբեց Ադամին ու Եվային, այլ՝ հենց Աստծուց:

Նախևառաջ, ես կարող եմ հասկանալ, թե ինչու եք կարծում, որ Աստված թույլ է տալիս, որ վատ բաներ պատահեն: Նկատի ունեմ, եթե Նա Աստված է, ուրեմն ունի զորություն անելու ցանկացած բան, ճի՞շտ է: Ուստի՝ եթե յոթամյա երեխան մահանում է, և Աստված ունի զորություն միջամտելու և կանխելու, այդ դեպքում Նա, հավանաբար, թույլ է տվել դա: Այս պնդումը միայն մասամբ է ճշմարիտ: Թեև Աստված ուներ զորություն կանգնեցնելու դա, Նա չուներ օրինական իրավասություն՝ դա անելու համար: Իրավասության հարցի մասին կխոսեմ հաջորդ գլխում, բայց նախ պետք է անդրադառնամ բնավորության հարցին, այնուհետև համոզված լինեմ, որ դուք, առանց վարանելու կամ կասկածելու, գի-

տեք, որ Աստված բարի է, և Նրա Խոսքը ճշմարտություն է:

Գուցե զարմանում եք, թե ինչու է սա այսքան կարևոր: Գրքի մեջ խորամուխ լինելուն զուգընթաց՝ կքննարկեմ Թագավորության օրենքները, դրանց գործառույթները և այն, թե ինչպես այդ օրենքներն ազատեցին ինձ ֆինանսական դժոխքից, որում ապրում էի: Եթե չվստահեք հենց Իրեն՝ Թագավորին, Նրա օրենքները ոչինչ չեն նշանակի ձեզ համար:

Հիշե՛ք՝ այս ճանապարհորդության ընթացքում իմ առաջին հայտնագործությունն այն էր, որ Աստծո Թագավորությունը կառավարություն է կամ կառավարման համակարգ: Այս կառավարությունն ունի Թագավոր, Ով հաստատում է Թագավորության օրենքները: Այս օրենքները սահմանում են Թագավորությունում ապրող քաղաքացիների հասանելի արտոնություններն ու պարտականությունները: Դրանք Թագավորության մեջ պաշտպանում և երաշխավորում են Թագավորի կամքը յուրաքանչյուր քաղաքացու կյանքի համար: Թագավորի բնավորությունը հասկանալը նախապայման է օրենքները հասկանալու համար:

Ինչպես արդեն ասել եմ, երբ հասկացա, որ Աստծո Թագավորությունը կառավարություն է՝ օրենքներով ու արտոնություններով, որոնք օրինականորեն պատկանում են Թագավորության յուրաքանչյուր քաղաքացու, ես դարձա հոգևոր գիտնական: Ես իմացա, որ Թագավորության յուրաքանչյուր գործողության հետևում կա դրան սատարող հոգևոր օրենք: Ես համակվեցի հույսով: Ես կարո՛ղ էի սովորել օրենքները: Ցանկացած ոք կարո՛ղ է: Սա այն է, ինչ հայտնաբերեցին Քիթը և Քեթին:

Չորս տարիները փոխեցին նրանց կյանքը

Քիթն ու Քեթին աշխատավարձ էին ստանում իրենց աշխատանքի դիմաց և ապրում էին սովորական կյանքով: Նրանք նոր էին տուն գնել, երբ Քիթը կորցրեց աշխատանքը: Ավելի քան մեկ տարի առաջ Քիթն իմացել էր «Ֆինանսների կարգավորում» հեռուստահաղորդման մասին և ժամանակ էր անցկացրել՝ ուսումնասիրելով ու խորհելով իմ նյութերի շուրջ, սովորելով Թագավորության՝ նաև որպես քաղաքացի իր օրինական իրավունքների մասին:

Երբ նա կորցրեց իր աշխատանքը, աղոթեց ու որոշեց, որ մեկ այլ աշխատանք փնտրելու փոխարեն կհիմնի իր սեփական բեռնափոխադրող ընկերությունը: Նա խոստովանում էր, որ շատ բան չգիտեր այդ գործի մասին, բայց զգում էր, որ կարող է սովորել: Նա սկսեց իր բեռնափոխադրման բիզնեսը մեկ բեռնատարով և փոխադրում էր մեքենաներ, ինչպես նաև ցանկացած բան, որ հարմար էր փոխադրման համար: Մինչ Քիթն ու Քեթին շարունակում էին սովորել, նրանց առջև բացվեց նոր հնարավորություն՝ իրականացնելու բեռնափոխադրում ազգային ընկերության համար, որն օգնության կարիք ուներ: Սա մեծ քայլ էր Քիթի համար, և նրանից պահանջվեց ունենալ իր սեփական քարշակը և սովորել նորանոր օրենքներ բեռնափոխադրման բիզնեսի մասին, ինչևէ, նա ընդունեց առաջարկը և վստահեց Աստծո առաջնորդությանը:

Այդ ժամանակվանից ընկերությունը մեծ վերելք ապրեց: Այժմ նա ունի ութ քարշակ, որոնք աշխատում են ամեն օր: Քիթն ինձ ասաց, որ այն ընկերությունում, որտեղ աշխատում էր, վաստակում էր շաբաթական շուրջ 1.500 դոլար, իսկ սեփական բեռնափոխադրման ընկերությունը հիմնելու առաջին տարում նա վաստակում էր շաբաթական գրեթե 4.000 դոլար: Երկրորդ տարում նրա շաբաթական եկամուտն անցավ 15.000 դոլարից: Հաջորդ տարի այն հասավ շաբաթական 25.000 դոլարի, իսկ մյուս տարի անցավ 38.000 դոլարից: Չորս տարում Քիթի եկամուտը տարեկան 78.000 դոլարից հասավ երկու միլիոն դոլարի:

Այս գլուխը գրելիս Քիթից հաղորդագրություն ստացա, որտեղ նա նշում էր, որ ստիպված է վարձել ևս չորս վարորդի, և նրա դրամական հոսքն այժմ կազմում է շաբաթական 70.000 դոլար: Տարեկան 78.000 դոլարից մինչև շաբաթական 70.000 դոլար՝ չորս տարում: Դա գրավում է իմ ուշադրությունը: Քիթն ու Քեթին սպասում են առավել մեծ բաների, քանի որ ծրագրում են հիմնել ևս երկու ընկերություն:

Եթե Քիթին ու Քեթին հարցնեք, թե ինչպես արեցին դա, նրանք կպատասխանեն՝ քանի որ մենք սովորեցինք, թե ինչպես է Թագավորությունը գործում:

ՑԱՆԿԱՑԱԾ ԲԱՆ ԿԱՄ ՑԱՆԿԱՑԱԾ ՈՔ, ՈՐ ՁԵԶ ԱՍՈՒՄ Է, ԹԵ ԱՍՏՎԱԾ ԲԱՐԻ ՉԷ, ՍՏՈՒՄ Է:

Առաջին բանը, որ Քիթն ու Քեթին կասեն, այն է, որ նրանք ստիպված եղան ազատվել մեծ քանակությամբ կրոնական աղբից՝ այն ուսմունքներից, որոնք սերմանվել էին նրանց մեջ Աստծո և Նրա գործելակերպի մասին: Բանալիներից մեկը, որի վրա նրանք պետք է կենտրոնանային, այն էր, որ Աստված բարի է, ՄԻՇՏ ԲԱՐԻ, և Նա ԵՐԲԵՔ չի ստում: Ցանկացած բան կամ ցանկացած ոք, որ ձեզ ասում է, թե Աստված բարի չէ, ստում է:

> *«Մի՛ խաբվեք, իմ սիրելի՛ եղբայրներ: Ամեն բարի փուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում՝ լույսի Հորից, որի մեջ բնավ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա»:*
>
> – Հակոբոս 1.16,17

Երկրորդ՝ նրանք կասեն, որ ստիպված եղան սովորել, թե ինչպես լինեն տվողներ բոլորովին նոր ձևով: Սեփական գումարներով Աստծո առաջադրանքներին աջակցելը կարևոր բանալի է նրանց հաջողության համար:

Աստվածաշունչը հստակ է: Ճիշտ չէ մեղադրել Աստծուն այն սոսկալի բաների համար, որ պատահում է մարդկանց: Աստվածաշունչն ասում է, որ սատանան է, որ գալիս է սպանելու, գողանալու և կործանելու:

> *«Գողը չի գալիս, բայց միայն, որ գողանա և սպանի և կորցնի. Ես եկա, որ կյանք ունենան, և էլ ավելի ունենան»:*
>
> – Հովհաննես 10.10

Ուշադրություն դարձրեք, թե ինչ ասաց Հիսուսն առաջին պնդումից հետո. «Ես եկա, որ կյանք ունենան, և էլ ավելի ունենան», կամ որոշ թարգմանություններում գրված է. «Լիարժեք չափով ունենան»: Աստված ձեր թշնամին չէ: Բայց եթե կարծում եք,

որ Նա ձեր թշնամին է, ապա համաձայն Հակոբոսի 1.16-ի, ձեզ ինչ-որ մեկը խաբել է: Դուք պետք է ինքներդ հարցնեք, թե ո՞վ ասաց, որ Աստված ստում է: Ո՞վ ձեզ ասաց, որ Աստված սպանեց այդ յոթամյա երեխային: Ո՞վ ձեզ ասաց, որ Աստված երբեմն բժշկում է, երբեմն էլ նախընտրում է չբժշկել: Կարող եմ կռահել, որ դա մի քարոզիչ էր, որն ավելին չգիտեր: Բայց ահա մի պնդում, որից պետք է կառչեք, եթե պատրաստվում եք որևէ բան ստանալ Աստծուց: Աստված չի ստում: Իրականում, Աստվածաշունչն ասում է, որ անհնար է, որ Նա սուտ խոսի (տես Եբր. 6.18):

Կրկնեմ, մարդիկ հավատում են, որ Աստված միշտ չէ, որ բարի է, որովհետև նրանք չեն հասկանում Թագավորության իրավական համակարգն այստեղ՝ երկրային տիրույթում: Ինչպես ավելի վաղ նշեցի, մենք ավելի մանրամասն կքննարկենք դա հաջորդ գլխում, և դուք կստանաք ձեր բազում հարցերի պատասխանները: Բայց եթե ցանկանում եք հասկանալ, թե ինչպես է Թագավորությունը գործում, պետք է իմանաք, որ Աստված բարի է, և Նա երբեք չի ստում:

Աստծո Թագավորության հաստատուն մեծությունները

Ավագ դպրոցում ես սովորեցի մի դաս, որը, կարծում եմ, կիրառելի է այստեղ: Մեզ սովորեցրին, որ երբ գործ ենք ունենում ֆիզիկական նյութերի հետ, կան որոշակի հատկանիշներ, որոնք երբեք չեն փոխվում և հաստատուն են: Դուք կռահեցիք: Ֆիզիկայում այդ օրենքներն անվանում են հաստատուն մեծություններ: Օրինակ՝ զրո աստիճանում ջուրը սառչում է: Դա հաստատուն մեծություն է. այն երբեք չի փոխվում: Նույնկերպ, այն փաստը, որ Աստված բարի է, հաստատուն է: Այնպես որ՝ ինչ վերաբերում է ջրին, ջրի հետ կապված բոլոր հավասարումներում դուք կօգտագործեք ջրի սառեցման ջերմաստիճանի հաստատուն մեծությունը:

Նույնը վերաբերում է Աստծո բնավորությունը հասկանալուն: Եթե գիտեք, որ Աստված բարի է ու երբեք չի փոխվում, կկարողանաք մեկնաբանել սուրբգրային ցանկացած հատված այդ հաս-

տատուն մեծության պրիզմայով: Որպես օրինակ, նայենք Ելից գրքի 4.11 խոսքին.

> *«Եվ Եհովան ասաց նրան. «Ո՞վ է մարդուն բերան տվել, կամ ո՞վ է անում համրը կամ խուլը կամ աչք ունեցողը կամ կույրը, չէ՞ որ Ես՝ Եհովաս»»:*
>
> – Ելից 4.11

Առաջին հայացքից թվում է, թե Աստված միտումնավոր կուրացնում է մարդկանց և անկարող դարձնում լսելու: Բայց մենք պետք է հիշենք մեր հաստատուն մեծությունը՝ այն, որ Աստված միշտ բարի է: Նայենք նույն խոսքին մեկ այլ թարգմանության մեջ:

> *«Այն ժամանակ Տերը հարցրեց Մովսեսին. «Ո՞վ է ստեղծում մարդու բերանը: Ո՞վ է որոշում՝ մարդիկ խոսեն, թե ոչ. լսեն, թե ոչ, կամ՝ տեսնեն, թե ոչ. չէ՞ որ Ես՝ Տերս»»:*
>
> – Ելից 4.11, NLT

Այս հատվածի ենթատեքստն այն է, որ Աստված կանչել է Մովսեսին, որպեսզի գնա իր ժողովրդի՝ եբրայեցիների մոտ, և նրանց ասի, որ Աստված կանչել է իրեն՝ գնալու փարավոնի մոտ և պահանջելու, որ եբրայեցիներն ազատ արձակվեն: Բայց Մովսեսն ասում է Աստծուն. «Իսկ ինչ, եթե եբրայեցիները չհավատան, որ Դու երևացել ես ինձ»: Աստված նրան մի քանի միջոցներ է ցույց տալիս՝ նրանց ապացուցելու համար: Բայց Մովսեսն աղաչում է Տիրոջը.

> *««Ո՛հ, Տե՛ր իմ, ես ճարտարախոս չեմ, չե՛մ եղել, և ո՛չ էլ հիմա եմ՝ ծառայիդ հետ խոսելուց հետո, այլ ես ծանրախոս և ծանրալեզու եմ»:*
>
> *Այն ժամանակ Տերը հարցրեց Մովսեսին. «Ո՞վ է ստեղծում մարդու բերանը: Ո՞վ է որոշում՝ մարդիկ խոսեն, թե ոչ. լսեն, թե ոչ, կամ՝ տեսնեն, թե ոչ. չէ՞ որ Ես՝ Տերս: Եվ հիմա գնա՛, և Ես քեզ հետ կլինեմ, երբ խոսես, և քեզ կսովորեցնեմ՝ ինչ որ պիտի խոսես»»:*
>
> – Ելից 4.10-12, NLT

Թո՛ւյլ տվեք շրջասել այն, ինչ Աստված ասում էր Մովսեսին. «Ես ստեղծել եմ մարդու բերանը խոսելո՛ւ, թե՞ չխոսելու համար: Ես ստեղծել եմ մարդու աչքերը տեսնելո՛ւ, թե՞ չտեսնելու համար»: Պատասխանն ակնհայտ է: Բերանը ստեղծվել է խոսելու համար, իսկ աչքերը՝ տեսնելու: Դա այն ամենն է, ինչ Աստված փորձում է հասկացնել Մովսեսին: Ըստ էության, Նա ասում է. «Եթե ես ստեղծել եմ բերանը, ուրեմն, անկասկած, կարող եմ օգնել քեզ օգտագործելու այն»: Աստված փորձում է հասկացնել Մովսեսին, որ նա կարող է վստահել Իրեն, Ով կօգնի նրան խոսելու եբրայեցիների հետ:

Բայց չունենալով ճիշտ տեսանկյուն Աստծո մասին՝ մենք կարող ենք սխալ մեկնաբանել այս մտադրությունը: Կարծում եմ՝ բոլորս լսել ենք, որ Մովսեսը կակազում էր: Մեծ մասը կհաստատի դա՝ որպես բացարձակ փաստ, բայց մի՞թե այդպես է: Ի պատասխան՝ դուք կասեք. «Միանշանա՛կ: Մովսեսն ինքն ասաց, որ լավ չի խոսում»: Համաձայն եմ, նա իսկապես ասաց դա, բայց ի՞նչ նկատառումով: Եթե Մովսեսը չէր կարողանում լավ խոսել, այդ դեպքում մենք պետք է բացատրենք Գործք առաքելոցի 7.22-ը.

> *«Եվ Մովսեսը վարժվեց եգիպտացիների ամբողջ իմաստությունով և զորավոր էր խոսքերով և գործերով»:*
>
> – Գործք առաքելոց 7.22

Իրականում, մենք տեսնում ենք, որ Մովսեսը ճիշտ հակառակն էր մեկի, ով դժվարանում էր խոսել: Նա զորավոր էր խոսքի մեջ: Ուստի, ի՞նչ նկատի ուներ Մովսեսը, երբ ասաց. «Ո՛հ, Տե՛ր իմ, ես ճարտարախոս չեմ, չե՛մ եղել, և ո՛չ էլ հիմա եմ՝ ծառայիդ հետ խոսելուց հետո, այլ ես ծանրախոս և ծանրալեզու եմ»:

Երբ Ելից 4-րդ գլխում խոսվում է այն մասին, որ Մովսեսը ծանրախոս է, դա վկայակոչում է այն փաստը, որ Մովսեսը լավ չէր խոսում եբրայերեն: Նա չէր մեծացել եբրայեցիների մեջ: Նա մեծացել էր որպես եգիպտացի և հիմնականում խոսում էր եգիպտական լեզվով: Աստված հավաստիացնում էր Մովսեսին, որ քանի որ Ինքն է ստեղծել մարդու բերանը, կօգնի նրան խոսելու եբրայեցիների հետ: Բայց, կրկին, Մովսեսը հապաղում է:

«Եվ նա ասաց. «Ո՛հ, Տե՛ր իմ, աղաչեմ՝ ուղարկի՛ր, որի ձեռքով, որ ուզում ես ուղարկել»:

Եվ Եհովայի բարկությունը բորբոքվեց Մովսեսի դեմ և ասաց. «Մի՞թե Ես քո Ահարոն եղբորը՝ ղևտացուն, չեմ ճանաչում, որ ճարտարախոս է: Նաև ահա նա դուրս է գալիս քեզ դիմավորելու և քեզ տեսածի պես իր սրտում պիտի ուրախանա: Եվ դու խոսիր նրա հետ և խոսքեր դիր նրա բերանում, և Ես քո բերանի և նրա բերանի հետ կլինեմ և ձեզ կսովորեցնեմ՝ ինչ որ պիտի անեք: Եվ քո տեղը նա կխոսի ժողովրդի հետ, և նա քեզ համար բերանի տեղ կլինի, ու դու նրա համար Աստծո տեղ կլինես»»:

– Ելից 4.13-16

Եզրակացությունն այն է, որ ոչ թե Մովսեսը կակազում էր, այլ Ահարոնը շատ լավ գիտեր եբրայերեն, քանի որ մեծացել էր որպես եբրայեցի և կարող էր Մովսեսի փոխարեն խոսել եբրայեցիների հետ:

Այժմ տեսնում եք, թե որքան կարևոր է ունենալ ճիշտ և հաստատուն տեսանկյուն Աստծո բնավորության մասին: Իմանալով, որ Աստված միշտ բարի է՝ կարող ենք կասկածի տակ դնել տեքստի ենթադրյալ իմաստը և ավելի խորը գնալ ճիշտ մեկնաբանության համար: Այսպիսով՝ հիշեցնեմ, ձեր հիմքը Թագավորության մեջ հենց Իր՝ Թագավորի բնավորությունն իմանալն է: Եթե դա չգիտեք, սատանան կարող է խաբել ձեզ, ինչպես խաբեց Եվային՝ հավատացնելով, որ Աստված ամբողջ ճշմարտությունը չի ասում, կամ, առավել վատ, Նա ստում է:

Հասկանալ Աստծո խոստումները

Աստվածաշնչում կա 7.000-ից ավելի խոստում, որոնք սահմանում են ձեր օրինական իրավունքները՝ որպես Աստծո զավակի: Յուրաքանչյուր խոստում տրված է ձեզ հենց Իր՝ Թագավորի կողմից, և դրանց կարելի է վստահել: Իսկապե՞ս կարելի է վստահել: Եթե կարող է կասկած առաջանալ Աստծո բարության վերաբերյալ, ապա կարող է կասկած առաջանալ նաև Նրա խոստումների վերաբերյալ:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ԿԱ 7.000-ԻՑ ԱՎԵԼԻ ԽՈՍՏՈՒՄ, ՈՐՈՆՔ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ՁԵՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՍՏԾՈ ՁԱՎԱԿԻ:

Թույլ տվեք օրինակ բերել: Ենթադրենք՝ ես ձեզ տվեցի 1.000 դոլարի չեկ: Դուք շնորհակալություն կհայտնեք ինձ և կմտածեք, որ ունեք 1.000 դոլար: Դուք կվարվեք այնպես, կարծես ունեք 1.000 դոլար, կխոսեք այնպես, կարծես ունեք 1.000 դոլար, և կրկին շնորհակալություն կհայտնեք ինձ 1.000 դոլարի համար: Բայց բանն այն է, որ դուք չեք ունենա 1.000 դոլար, դուք կունենաք սովորական մուրհակ: Չեկը պարզապես խոստում է, որ տվեցի ձեզ՝ հաստատելով, որ դուք ունեք օրինական իրավունք՝ իմ բանկից ստանալու 1.000 դոլար: Դուք դեռևս պետք է կանխիկացնեք չեկը այդ գումարն ունենալու համար: Բայց քանի որ իմ մտադրությունը ձեր հանդեպ հայտնի է, քանի որ ես ստորագրեցի չեկը և հոժարակամ տվեցի ձեզ, և որովհետև դուք վստահում եք, որ ես ունեմ այդ 1.000 դոլարը, դուք կասեք, որ ունեք 1.000 դոլար, երբ այն, ինչ իրականում ունեք, ընդամենը խոստում է:

Աստված, անշուշտ, ավելի մեծ է, քան ես: Նրա Խոսքը չի ստում: Նա տալիս է մեզ Իր մեծ ու պատվական խոստումները: Եթե Աստված տալիս է ձեզ Իր խոստումը, դա գրեթե կատարված է: Միակ բանը, որ սատանան կարող է անել խոստումի իրականացումը կասեցնելու համար, Աստծո Խոսքի հանդեպ ձեզ կասկածամիտ դարձնելն է: Ահա թե ինչու է կարևոր իմանալ, որ Աստված բարի է և չի ստում:

Մեկ այլ օրինակ բերեմ: Ես գիտեմ, որ շատերը լսել են, թե հրաշքների ժամանակաշրջանն անցել է, և Աստված չի անում նույն բաները, ինչ Հիսուսն էր անում, երբ քայլում էր երկրի վրա: Ես մեծացել եմ շատ ավանդական եկեղեցում և, անկեղծ ասած, երբեք չեմ տեսել Աստծո զորության դրսևորումը, համենայն դեպս, որքան հիշում եմ: Քանի որ չեմ տեսել, թե ինչպես են մարդիկ բժշկվում, մի՞թե դա նշանակում է, որ Աստված այլևս չի բժշկում: Այդ հարցին պատասխանելու համար մենք չենք կա-

որոշ հենվել մեր փորձառության վրա: Մենք պետք է պարզենք, թե ինչ է Աստվածաշունչն ասում, ինչ է Թագավորի օրենքն ասում բժշկության մասին:

> *«Այն Հիսուսին, որ Նազարեթից է, թե ինչպես Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությունով **օծեց**, որ ման եկավ բարի անելով և սատանայից բոլոր հարստահարվածներին բժշկելով, **որովհետև Աստված Նրա հետ էր**»:*
>
> – Գործք առաքելոց 10.38

Ինչպես տեսնում ենք, բժշկությունը Հիսուսի ծառայության բանալին էր: Տեքստում գրված է, որ Հիսուսը բժշկեց բոլորին, որովհետև Աստված Նրա հետ էր: «Աստված Նրա հետ էր» նախադասությունը մի պնդում է, որը դուք կարիք ունեք հասկանալու: Իհարկե, Աստված Հիսուսի հետ էր Նրա ամբողջ երկրային կյանքում: Բայց այս արտահայտությունն իրականում վկայակոչում է այն պահը, երբ Հիսուսը մկրտվում էր ջրով, և Սուրբ Հոգին իջավ Նրա վրա՝ աղավնու պես: Մինչև այդ պահը Հիսուսը որևէ հրաշք չէր արել: Մենք չունենք տեղեկություններ այն մասին, որ Հիսուսը մանուկ հասակում բազմացնում էր Իր նախաճաշը կամ բժշկում էր որևէ մեկին: Միայն Սուրբ Հոգով մկրտվելուց հետո էր, որ իրականում սկսվեց Նրա ծառայությունը: Աստված Նրա հետ էր հրաշագործություններ անելիս:

Լավ, գուցե ասեք. «Այո՛, Հիսուսը բժշկում էր, բայց Նա այստեղ չէ»: Համաձայն եմ, դուք ճիշտ եք, բայց Նա այդ հանձնարարությունը փոխանցեց եկեղեցուն: Հասկանո՞ւմ եք, նույն զորությունը, որ իջավ Հիսուսի վրա, տրվեց նաև եկեղեցուն: Երկրից հեռանալիս Հիսուսն Իր աշակերտներին ասում է հետևյալը.

> *«Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա կգա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և ամբողջ Հրեաստանի և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը»:*
>
> – Գործք առաքելոց 1.8

Միևնույն զորությունը Սուրբ Հոգու միջոցով իջավ եկեղեցու

վրա, որպեսզի կատարվեին նույն հրաշքները, որ Հիսուսն արեց:

Դուք չեք կարող այլ բան ասել: Իմ դուստրը՝ Էմին, որովայնում գրեթե 6 կգ-անոց ուռուցք ուներ: Բոլորս աղոթեցինք նրա բժշկության համար՝ հիմնվելով Աստծո Խոսքի վրա, և նա գնաց քնելու, իսկ առավոտյան արթնացավ՝ լիովին բժշկված. 6 կգ-անոց ուռուցքն անհետացել էր, և նրա մեջքը (որը կծկվել էր ու ծռվել) լիովին վերականգնվել էր: Դուք կարող եք տեսնել և կարդալ այս պատմությունը նրա՝ «Բժշկված մեկ գիշերում» գրքում:

Իմ հարսը մարմնի մի կողմում նարնջի մեծության ուռուցք ուներ, որն, ըստ բժիշկների, պետք է հեռացվեր վիրահատության միջոցով: Նրանք ասում էին, որ դա քաղցկեղի հազվադեպ տեսակ է, և նրան ապրելու մեկ կամ երկու ամիս է մնացել: Նա նույնպես հավատաց Աստծո խոստումներին և առավոտյան արթնացավ լիովին բժշկված. ուռուցքն անհետացել էր:

Կինս՝ Դրենդան, նույնպես մեջքի շրջանում ուներ 50 ցենտանոց մետաղադրամի չափ հսկայական գոյացություն: Նա սկսեց հրամայել, որ այն հեռանա իր մարմնից, և երկու շաբաթում այն նույնպես անհետացավ:

Միթե Աստված նախընտրեց բժշկել այս կանանց: Միթե կար որևէ բան, որը ստիպեց Աստծուն նման ընտրություն կատարել: Միթե Նա ավելի շատ էր հավանում այս կանանց, քան ձեզ: Ո՛չ: Նրանք հասկացան Թագավորության օրենքներն ու արտոնությունները և պարզապես պահանջ ներկայացրին դրանց հանդեպ: «Այդ դեպքում,- կհարցնեք դուք,- ինչո՞ւ այդքան շատ հիվանդներ կան: Ինչո՞ւ մեր եկեղեցիներում ավելի հաճախ բժշկություններ չեն լինում»:

Ուրախ եմ, որ տվեցիք այդ հարցը: Եկեք խորամուխ լինենք դրանում հաջորդ գլխում:

ԳԼՈՒԽ 3

ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ինչպես ավելի վաղ նշեցի, ես ապրում եմ քաղաքից դուրս՝ Օհայոյի գեղատեսիլ վայրերից մեկում, որը զբաղեցնում է շուրջ 24 հա հողատարածք: Սկզբում այն 22 հա էր, բայց հարևանս վաճառեց ինձ մի հողակտոր, որը սահմանակից էր իմ հողատարածքին, և արդյունքում ես ունեցա 24 հա: Վերջին 22 տարում մենք իսկապես վայելում ենք այս հողատարածքը: Եղնիկներ որսալու համար՝ անտառ, բադեր որսալու համար՝ ճահճուտ, ճագարներ և փասիաններ որսալու համար դաշտեր ունենալը, ինչպես նաև մեր մոտոամենագնացներով շրջելն իսկապես օրինություն են: Բայց եթե ուշադիր նայեք իմ տարածքին, ապա կգտնեք «ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է» ցուցանակներ հողատարածքի ամբողջ պարագծով: Ցուցանակները նրա համար են, որ մարդիկ իմանան, թե որտեղից է սկսվում իմ սեփականության սահմանը:

Օհայոյում օրենքն ասում է, որ այն մարդը, ով ցանկանում է լինել իմ հողատարածքում, պետք է ունենա գրավոր համաձայնության ձևաթուղթ հողատարածքում գտնվելու ամբողջ ընթացքում: Եթե չունենա, դա կհամարվի օրինախախտություն, և նրան կարող են օրինականորեն դուրս հանել տարածքից՝ ընթացքում ենթարկելով տույժերի ու տուգանքների: Հարցն այն է, որ ով ընտրում է մտնել իմ հողատարածք՝ առանց իմ գիտության, չունի օրինական իրավասություն այդ որոշումը կայացնելու համար, քանի որ դա նրա հողը չէ: Եթե ես նրան ասեմ, որ դուրս գա իմ հողատարածքից, նա ընտրություն չունի:

Այսպիսով, կարճ ասած, դուք չեք կարող զբաղեցնել մի բան, ինչի նկատմամբ չունեք օրինական իրավասություն:

Օրինախախտության այս օրինակը կպատասխանի բազում հարցերի, որ մարդիկ ունեն՝ կապված նրա հետ, թե Աստծո Թագավորությունում ինչու են որոշ բաներ տեղի ունենում կամ ինչու տեղի չեն ունենում: Թագավորության մեջ իրավասության հարցը հասկանալը նախապայման է Թագավորության մեջ արդյունավետ գործելու համար:

Ինչո՞ւ նրանք չբժշկվեցին

Համոզված եմ, որ լսել եք այսպիսի պատմություն. հանրաճանաչ մեկը հիվանդանում է, և նրա համար աղոթք է արվում: Միլիոնավոր մարդիկ միաբան աղոթում են այս մարդու բժշկության համար, բայց նա մահանում է: Ինչո՞ւ: Կամ ինչ-որ մեկը ձեզ ասում է, որ իր տատիկը մահացավ, թեև աղոթում էին նրա համար, և հիմա ուզում է իմանալ, թե ինչու այդպես եղավ: Կամ մեկ ուրիշն ասում է, որ գումար է ցանել ֆինանսական կարիքի համար, սակայն շարունակում է ընչազուրկ մնալ: Արդյո՞ք կան պատասխաններ այսպիսի հարցերի համար:

Նախքան կպատասխանեմ, ընդունենք, որ մենք չգիտենք այն ամենը, ինչ տեղի է ունենում հոգևոր տիրույթում, և ես չեմ ձևացնում, թե գիտեմ: Ինչևէ, Աստծո Խոսքի վրա հիմնվելով, մենք գիտենք, որ եթե որևէ մեկը հիվանդ է, Հիսուսն արդեն գին է վճարել նրա բժշկության համար: Գիտենք, որ եթե առատաձեռն լինենք և տանք, Աստվածաշունչն ասում է, որ կստանանք: Մինչդեռ առօրյայում տեսնում ենք, որ շատերի կյանքում Աստծո Խոսքը չի գործում այնպես, ինչպես գրված է: Արդյո՞ք պետք է մեղադրել Աստծուն:

Նայելով նրան, ինչ սովորեցինք նախորդ գլխում, և քննարկելով այս թեման այս գլխում՝ դուք կպարզեք, որ պատասխանը, միանշանակ, ոչ է: Եթե այդպես է, այդ դեպքում ո՞րն է խնդիրը: Սա լուրջ խնդիր է: Մարդկանց մեծ մասը, որը չունի նույնիսկ տարրական հիմնարար հասկացողություն Աստծո մշտապես բարի լինելու մասին, ընդունում է, որ Աստված է մեղավոր ինչ-որ ողբերգության համար: Քանի որ նրանք գիտեն, որ Աստված ունի զորություն վերջ դնելու վատ բաներին և ակնհայտորեն չի անում դա, մտածում են, որ հավանաբար Նա թույլ է տվել դա: Բայց եթե

ունենայիք հասկացողություն այն մասին, որ Աստված բարի է և չի կարող ստել, կիմանայիք, որ խնդիրն այլ տեղ է, և կսկսեիք պատասխանը գտնելու որոնումները:

Աշակերտները ցուցաբերեցին այս մտածելակերպը, երբ չկարողացան տղայի միջից հանել դևը: Փոխանակ հարցնելու՝ «Ինչո՞ւ Աստված ընտրեց թողնել այդ դևին այնտեղ», նրանք Հիսուսին հարցրին. «Ինչո՞ւ մենք չկարողացանք հանել նրան»:

Սա պետք է լինի մեր առաջին հարցը, երբ թվում է, թե հանգամանքները հակասում են Աստծո Խոսքին: Այսպիսով, կրկնեմ, խիստ կարևոր է, որ նախևառաջ իմանանք, որ Աստված բարի է, և երկրորդ՝ Նա չի ստում: Այս է պատճառը, որ այսքան շատ ժամանակ եմ հատկացրել՝ շարադրելու այն, ինչը, կարծում եմ, դժվար չէ հասկանալ, սակայն, զարմանալիորեն, առեղծված է եկեղեցական աշխարհի մեծ մասի համար: Աստվածաշունչ կարդալիս պետք է հարցեր տաք, եթե ցանկանում եք սովորել, թե ինչպես է Թագավորությունը գործում:

Հիշե՛ք, աստվածաշնչյան այս հրաշալի պատմությունները գրված են ինչ-որ պատճառով: Հիսուսը փորձում է ինչ-որ բան ցույց տալ ձեզ: Պարզենք, թե ինչու ոմանք չստացան այն, ինչ գրված էր Աստծո Խոսքում: Կարող են լինել շատ հարցեր, որոնք խոչընդոտ են երկնքի իրավասության համար: Որոշ հարցեր անմիջապես ակնհայտ չեն, իսկ որոշ հարցեր էլ անձնական են և թաքնված:

ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ԵՎ ԳՈՐԾՈՒՄ Է ՕՐԵՆՔՆԵՐՈՎ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ, ՈՐՈՆՔ ԵՐԲԵՔ ՉԵՆ ՓՈԽՎՈՒՄ:

Աստծո Թագավորությունը թագավորություն է և գործում է օրենքներով ու սկզբունքներով, որոնք երբեք չեն փոխվում: Այդ սկզբունքները, ինչպես ասացի, կարելի է սովորել և օգտագործել ճիշտ այնպես, ինչպես հողագործն է հասկանում ցանքի և հունձքի օրենքները երկրային տիրույթում և օգտագործում է դրանք բարգավաճելու համար: Քանի որ Թագավորությունը գործում է օրենքներով, որոնք տրված են

յուրաքանչյուր քաղաքացու՝ հասկանալու և գործածելու համար, ցանկացած ոք կարող է սովորել դրանք: Երբեմն այս օրենքների իմացությունը կարող է կյանքի ու մահվան հարց լինել:

Կյանքի ու մահվան հարց

Մարկն ու Հանան եկան մեր եկեղեցի: Նրանք ցանկանում էին երեխա ունենալ: Մինչ այդ՝ բժիշկները Հանային ասել էին, որ տարբեր առողջական խնդիրների պատճառով գրեթե անհնար կլիներ, որ նա հղիանար կամ երեխա ունենար: Բայց «Հավատքի կյանք» եկեղեցում նա լսեց Աստծո բարության մասին և սովորեց Թագավորության օրենքները և որոշ ժամանակ անց իմացավ, որ հղի է: Նա ցնցված էր: Բայց շուտով որովայնի շրջանում սուր ցավեր ունեցավ: Մի քանի անգամ ցավն այնքան ուժգին էր, որ նա նույնիսկ ուշաթափվեց:

Հերթական նոպայից հետո Հանան ցանկացավ հետազոտվել, ուստի այցելեց իր բժշկին: Բժիշկը տեղում չէր, բայց հերթապահ բժիշկը ցանկացավ ուլտրաձայնային հետազոտություն կատարել, որպեսզի հասկանար, թե ինչ է կատարվում: Բժիշկն արյան մի մեծ գունդ տեսավ և ասաց, որ Հանան վիժել է: Չկար սրտի բաբախ: Բժիշկն առաջարկեց նրան հաջորդ օրը գալ, որպեսզի մահացած երեխային հեռացներ արգանդից, բայց Հանան հրաժարվեց: Փոխարենը, նրա ամուսինը՝ Մարկը, քաջալերեց նրան Աստծո Խոսքով և Աստծո խոստումներով ու հորդորեց մի կողմ չդնել իր վստահությունը երեխայի վերաբերյալ: Հանգստյան օրերին եկեղեցին աղոթեց Հանայի համար, և նա համոզվեց, որ ունենալու է առողջ երեխա՝ անկախ նրանից, թե ինչ էր ասել բժիշկը:

Երկուշաբթի օրը նա այցելեց իր անձնական բժշկին, քանի որ վերջինս տեղում չէր եղել այն օրը, երբ նա գնացել էր նրա աշխատասենյակ: Բժիշկն առաջարկեց ևս մեկ ուլտրաձայնային հետազոտություն անցնել: Նա կարծես ապշեց, երբ հայացքը սևեռեց ուլտրաձայնային էկրանին և անմիջապես նայեց այն տեսածրված պատկերներին, որոնք արվել էին մի քանի օր առաջ: Այնուհետև Հանային դիմեց հետևյալ խոսքերով. «30 տարի է՝ զբաղվում եմ այս գործով և երբեք նման բան չեմ տեսել: Անցյալ շաբաթվա տե-

սածրային պատկերներում տեսնում եմ արյան մեծ գունդ և սրտի բաբախի բացակայություն: Իսկ այսօր տեսնում եմ, որ արյան գունդն անհետացել է, և ձեր արգանդում անթերի սրտի բաբախով անթերի երեխա է ապրում»: Մի քանի ամիս անց Հանան ծնեց մի առողջ աղջիկ, որին անվանեց Էվելին: Մի օր, հետաքրքրվելով, թե ինչ է նշանակում «Էվելին» անունը, նա փնտրեց և, ի զարման իրեն, հայտնաբերեց, որ այն նշանակում է կյանք:

Այս զարմանահրաշ պատմությունն ակնհայտորեն Աստծո գործն է: Բայց որպես հոգևոր գիտնական՝ հենց հիմա դուք պետք է մտածեք մի քանի հարցերի վերաբերյալ, ինչպես օրինակ. «Ինչո՞ւ դա տեղի ունեցավ: Արդյո՞ք Հանան Աստծո սիրելին է: Արդյո՞ք Աստված պարզապես պատահականորեն ընտրեց բժշկել նրա մարմինը»: Սրանք հարցեր են, որոնց պետք է պատասխանել: Սովորական քրիստոնյայի համար սա հրաշք է: Բայց ես քաջալերում եմ մարդկանց վերանայել «հրաշք» բառը, քանի որ այն արտասովոր բան է ենթադրում: Թագավորության մեջ սա պարզապես Թագավորության օրենքի գործառույթ էր:

Եթե ես քար նետեի, և այն ընկներ գետնին, դուք կմտածեիք, որ ես խելագար եմ, եթե բացականչեի. «Ա՜յ քեզ բան, տեսա՞ք դա: Քարն ընկավ գետնին: Դա հրա՞շք է»: Դուք չեք համաձայնի, որ դա հրաշք է, որովհետև գիտեք, որ այդ գործողությունը պարզապես ձգողության օրենքի գործառույթն է, և այն գործում է միևնույն կերպով ամեն անգամ յուրաքանչյուրի համար: Քարը միշտ կընկնի: Այսպիսով, որպես հոգևոր գիտնական, դուք պետք է փնտրեք պատասխաններ կատարվածի վերաբերյալ, հոգևոր պատասխաններ, որոնք կհայտնեն Թագավորության օրենքը կամ օրենքները, որ առկա էին պատմության մեջ:

Բանալին բացահայտված է

Դիտարկենք մեկ այլ պատմություն, որտեղ կարող ենք ավելին իմանալ Թագավորության գործունեության մասին, ինչ վերաբերում է այս հարցերին: Աստվածաշնչում ամենահզոր պատմություններից մեկը, որ կօգնի մեզ գտնելու որոշ պատասխաններ, գրված է Ղուկասի Ավետարանի 8-րդ գլխում:

«…Եվ Նրա գալու ժամանակ ժողովուրդները նեղում էին Նրան: Եվ մի կին կար՝ տասներկու տարի շարունակ տեռապեսության մեջ, որ իր ամբողջ ունեցվածքը բժիշկներին ծախսելով չէր կարողացել ոչ մեկից բժշկվել: Սա մոտ եկավ ետևից, Նրա հանդերձի ծայրին դիպավ, և իսկույն Նրա արյան հոսքը դադարեց:

Եվ Հիսուսն ասաց. «Ո՞վ է, որ Ինձ դիպավ»:

Եվ երբ որ ամենքն ուրանում էին, ասացին Պետրոսը և Նրա հետ լինողները. «Վարդապե՛տ, ժողովուրդները սեղմում են Քեզ և նեղում, և Դու ասում ես՝ ո՞վ է, որ Ինձ դիպավ»:

Եվ Հիսուսը ասաց. «Մեկը դիպավ Ինձ. որովհետև Ես իմացա, որ զորություն դուրս եկավ Ինձնից»:

Եվ երբ որ տեսավ կնոջը, որ ծածուկ չմնաց, դողալով եկավ, Նրա առջև ընկավ և ամբողջ ժողովրդի առջև պատմեց Նրան, թե ինչ պատճառով Նրան դիպավ և թե ինչպես իսկույն բժշկվեց: Նա էլ ասաց նրան. «Քաջացի՛ր, դո՛ւստր, քո հավա՛տքը բժշկեց քեզ, գնա՛ խաղաղությունով»»:

– Ղուկաս 8.42-48

Այս պատմության մեջ տեսնում ենք մի կնոջ, որը տարիներ շարունակ ծանր հիվանդ էր և չէր կարողացել առողջանալ: Ետևից մոտենալով Հիսուսին՝ դիպավ Նրա հանդերձին և իսկույն բժշկվեց: Պատմության մեջ կան մի քանի խորիմաստ ակնարկներ Թագավորության գործունեության վերաբերյալ, որոնցից կարող ենք սովորել, և որոնք լույս կսփռեն պատասխաններից մի քանիսի վրա, որ փնտրում ենք:

Նախևառաջ՝ Հիսուսին շրջապատող ամբոխի մեջ բոլորն էլ դիպչում էին Նրան: Ինչպես պատմության մեջ ասվում է, ամբոխը նեղում էր Նրան և սեղմում: Երբ Հիսուսը հարցրեց՝ ո՞վ դիպավ Ինձ, Պետրոսը զարմացավ Նրա հարցից, քանի որ բոլորն էին դիպչում Նրան: Բայց Հիսուսն ասաց, որ այդ մարդն այլ կերպ դիպավ Իրեն, քանի որ Նա զգաց, թե ինչպես Սուրբ Հոգու զորությունը հոսեց Իրենից:

Այս պատմությունը կարդալուց հետո ձեր հոգում պետք է հնչեն բոլոր տեսակի զանգերն ու սուլիչները՝ մղելով ձեզ կանգ առնելու և մտածելու, թե ինչ կատարվեց հենց նոր: Ձեր միտքն անմիջապես պետք է անցնի հետաքննական ռեժիմի՝ անհամար հարցերով: Որպես հոգևոր գիտնականներ՝ մենք պետք է իմանանք, թե ինչու հենց այս կինը բժշկվեց, և ուրիշ ոչ ոք: Ենթադրում եմ, որ այնտեղ կային շատ մարդիկ, որոնք նույնպես հիվանդ էին և ֆիզիկապես դիպչում էին Նրան, սակայն չբժշկվեցին: Այսպիսով՝ մենք պետք է հարցնենք. «Ինչո՞ւ օծությունը հոսեց միայն դեպի այդ կինը և չհոսեց դեպի մյուսները, որոնք այդ պահին հպվում էին Հիսուսին»:

Ավանդական կրոնական պատասխանն այն է, որ նա բժշկվեց, որովհետև Հիսուսը բժշկեց նրան: Բայց իսկապե՞ս Նա բժշկեց նրան: Արդյո՞ք Հիսուսը նպատակաուղղված ծառայում էր այդ կնոջը, երբ նա բժշկվեց: Արդյո՞ք Նա ձեռքերը դրեց նրա վրա: Արդյո՞ք Նա հրամայեց, որ հիվանդությունը հեռանա նրա մարմնից: Պատասխանն է՝ ո՛չ: Իրականում, Հիսուսը նույնիսկ չգիտեր, որ նա այնտեղ էր: Նա ստիպված էր հարցնել, թե ով դիպավ Իրեն: Այսպիսով՝ արդյո՞ք Հիսուսն ընտրեց բժշկել նրան այդ պահին: Կրկնեմ, Նա նույնիսկ չգիտեր, որ այդ կինն այնտեղ էր: Իսկ ինչպե՞ս նա բժշկվեց: Ինչո՞ւ նա՛ բժշկվեց:

Որպես հոգևոր գիտնականներ՝ մենք կարող ենք բացառել այն միտքը, որ նա Աստծո հատուկ զավակներից մեկն էր կամ հատուկ կապ ուներ Հիսուսի հետ, որովհետև Գործք առաքելոցի 10.34-ում ասվում է, որ Աստված աչառ չէ: Կարող ենք նաև ենթադրել, որ քանի որ Հիսուսը նույնիսկ չգիտեր այդ կնոջ այնտեղ լինելու մասին, Նա ոչ մի մասնակցություն չուներ այդ օրը բժշկվելու նրա որոշման մեջ: Մենք կարող ենք համաձայնել, որ Հիսուսն օծության ջրամբարն էր, բայց Նա մասնակցություն չուներ այն որոշման մեջ, որ այդ կինը կայացրեց այդ պահին բժշկվելու համար:

Հիսուսը հստակ ասում է, թե ինչպես նա միացավ Թագավորության իշխանությանն ու զորությանը: Նա ասաց. «*Դո՛ւստր, քո հավա՛տքը բժշկեց քեզ: Գնա՛ խաղաղությունով»:* Այս նախադասությունը հայտնում է այն ամենը, ինչ հարկավոր է իմանալ, և

պատասխանում է մեր այն հարցին, թե ինչու և ինչպես նա այդ օրը ստացավ բժշկություն: Որպես հոգևոր գիտնականներ՝ ավելի ուշադիր նայենք այս պատմությանը և տեսնենք՝ արդյոք կարո՞ղ ենք գտնել հուշումներ այն մասին, թե ինչու նա ստացավ իր բժշկությունը:

Նախևառաջ՝ Հիսուսը նրան անվանում է դուստր՝ նկատի ունենալով, որ նա Իսրայելի ժողովրդի մի մասնիկն էր, Աբրահամի ժառանգորդը: Որպես Աբրահամի զավակ՝ նրան էր պատկանում այն օրհնությունը, որ տրվեց Աբրահամին, և այն ուխտի օգուտները, որ Աստված կնքեց Աբրահամի հետ:

> *«Եվ ասաց. «Եթե իրավ լսես քո Եհովա Աստծո ձայնին և ինչ որ Նրա աչքի առջև ուղիղ է, անես, և Նրա պատվիրաններին ականջ դնես և Նրա բոլոր կանոնները պահես, այն ախտերից ոչ մեկը քեզ վրա չեմ բերի, որոնք եգիպտացիների վրա բերի. որովհետև Ես եմ Եհովան՝ քո բժիշկը»»:*
>
> – Ելից 15.26

Այսպիսով, երբ Հիսուսն այդ կնոջը դուստր անվանեց, նշանակում էր, նա ուներ օրինական իրավունք այն ամենի հանդեպ, ինչը ներառված էր Աստծո հետ Աբրահամի կնքած ուխտի մեջ: Բայց միայն այս փաստը չի կարող լինել միակ պատճառը, որ նա բժշկություն ստացավ, քանի որ այդ օրը նրանք, ովքեր նեղում էին Հիսուսին, ունեին միևնույն իրավասությունը: Պետք է լիներ մեկ այլ պատճառ, որը ստիպեց, որ Աստծո Թագավորության զորությունը հոսեր: Հիսուսը հայտնում է ևս մեկ պատճառ, թե ինչու նա ստացավ իր բժշկությունը: Փաստացի, Նա ասաց, որ հենց դա էր պատճառը, որ նա անձամբ ստացավ իր պատասխանը: Նա ասաց, որ նրա հավատքը բժշկեց նրան:

Այժմ մենք գիտենք, թե ինչն էր պատճառը, որ նա կարողացավ ստանալ իր հրաշքը: Նա ուներ ստանալու օրինական իրավունք, քանի որ Աբրահամի դուստրն էր, և նրա հավատքն այն անջատիչն էր, որի շնորհիվ զորությունը հենց այդ պահին հոսեց նրա մարմնով: Այն փաստը, որ նա դուստր էր, կարելի է համեմատել

այն բանի հետ, որ էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությունը լարերի միջոցով հոսանքը հասցրել է ձեր տուն: Հոսանքը հասանելի է, բայց չի նշանակում, որ ձեր տան լույսերը կմիանան: Որպեսզի լույսերը միանան, դուք նաև պետք է միացնեք անջատիչը:

ՀԱՎԱՏՔԸ ՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ Է, ՈՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐՆ ԱՆԽՆԱ ԱՅՍ ՈՒ ԱՅՆ ԿՈՂՄ ԵՆ ՆԵՏՈՒՄ:

Այսպիսով, որպես Աբրահամի օրինական ժառանգորդ, այս կինն ուներ բժշկվելու օրինական իրավունք: Բայցևայնպես, քանի որ նա ուներ իրավասություն երկրի և իր սեփական կյանքի վրա, նա պետք է անձամբ միացներ անջատիչը՝ այդ զորությունն արձակելու համար: Բայց որտեղ է անջատիչը: Ինչպե՞ս միացնենք այն: Պարզելու համար պետք է սահմանենք մեր հասկացությունները:

Ի՞նչ է հավատքը

Հավատքը մի հասկացություն է, որը քրիստոնյաներն անխնա այս ու այն կողմ են նետում, և ես համոզված եմ, որ շատերը, եթե ոչ՝ մեծ մասը, չգիտեն, թե ինչ է իրականում հավատքը, ինչու է այն անհրաժեշտ, ինչպես իմանան, որ հավատքի մեջ են, և ինչպես ստանան հավատք: Եթե հավատքն այն անջատիչն է, որ թույլ տվեց օձությանը հոսել և բժշկել այս կնոջը, այդ դեպքում մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք հավատքին: Հավատքի սահմանումը գտնում ենք Հռոմեացիների 4-րդ գլխի 18-21 խոսքերում:

> *«Որ առանց հույսի՝ հույսով հավատաց, թե շատ ազգերի հայր կլինի. ինչպես ասվեց, թե՝ այնպես պիտի լինի քո զավակը: Եվ չտկարացավ հավատքով, այսինքն՝ մտիկ չարեց իր մարմնին, որ արդեն մեռած էր, ինքը իբրև հարյուրամյա լինելով, և ո՛չ էլ՝ Սառայի արգանդի մեռած լինելուն: Եվ Աստծո խոստմունքի համար չերկմտեց անհավատությունով, այլ զորացավ հավատքով և Աստծուն փառք*

տվեց: Եվ իր մտքում համոզված էր (անգլերենում՝ լիովին համոզված էր), թե Նա, որ խոստացավ, կարող է և անել»:

– Հռոմեացիների 4.18-21

Հասկանանք այս պատմության ենթատեքստը: Աբրահամն ու Սառան չէին կարող երեխա ունենալ: Ես նկատի չունեմ, որ բեղմնավորվելու հետ կապված դժվարություններ կային, և նրանք պետք է շարունակեին իրենց փորձերը: Ես նկատի ունեմ, որ նրանք գրեթե 100 տարեկան էին, և ամեն բան վերջացած էր: Նրանք ֆիզիկապես անկարող էին երեխա ունենալ. դա անհնար էր: Մինչդեռ Աստված Աբրահամին երեխա էր խոստացել, թեև բնական տեսանկյունից դա միանգամայն անհնար էր: Աստվածաշունչն ասում է, որ Աբրահամը լիովին համոզված էր, որ Աստված ի զորու է անելու այն, ինչ ասել է՝ չնայած բնական փաստերին, որոնք այլ բան էին հաստատում:

Ահա և հավատքի մեր սահմանումը. լիովին համոզված լինել, որ Աստված ի զորու է անելու այն, ինչ խոստացել է: Ես ձևակերպում եմ դա այսպես. «**Սրտով համաձայն լինել երկնքի հետ**»: Ոչ թե պարզապես մտովի համաձայնել Աստծո ասածին, այլ լիովին համոզված լինել դրանում:

Հավատքի մեր սահմանումն է.

թո՛ւյլ տվեք ևս մեկ անգամ կրկնել, որպեսզի համոզված լինեմ, որ հասկացել ենք: Հավատքը՝ լիովին համոզված լինելն է այն բանում, ինչ Աստված ասում է: Դա սրտով ու մտքով երկնքի հետ համաձայնություն ունենալն է, լիովին համոզված լինելը:

Ինչո՞ւ է հավատքն անհրաժեշտ

Ինչո՞ւ Աստված չի կարողանում բուժել հիվանդանոցում գտնվող բոլոր հիվանդներին, երբ ցանկանում է դա: Ինչո՞ւ Նա չի դադարեցնում պատերազմները: Ինչո՞ւ Նա չի ուղարկում հրեշտակներին՝ Ավետարանը քարոզելու: Վստահ եմ, որ նախկինում լսել եք այս բոլոր հարցերը: Պատասխանն է՝ Նա չի կարող: Այնպես չէ, որ Աստված չունի զորություն՝ դա անելու, բայց Նա չունի

իրավասություն դա անելու համար: Որպեսզի հասկանանք, թե ինչ եմ ասում, պետք է նայենք Եբրայեցիների 2.6-8 խոսքերին:

> *«Մեկը վկայեց մեկ տեղ՝ ասելով.*
>
> *«Մարդն ի՞նչ է, որ Դու հիշես նրան, կամ մարդու որդին, որ այցելես նրան: Մի քիչ ցած արիր նրան հրեշտակներից, փառքով և պատվով պսակեցիր նրան և Քո ձեռքի գործերի վրա կանգնեցրիր նրան: Ամեն բան հնազանդ արիր նրա ոտքերի տակ»:*
>
> *Որովհետև ամենը, որ հնազանդեցրեց նրան, ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի նրան. բայց հիմա տակավին չենք տեսնում, թե ամեն բան հնազանդված է նրան»:*
>
> – Եբրայեցիների 2.6-8

Աստված մարդուն տվեց լիարժեք օրինական իրավասություն ամբողջ երկրային տիրույթում, երբ նա դրվեց երկրի վրա: Չկար մի բան, որ չլիներ նրա իրավասության ներքո: Նա տիրում էր այս տիրույթում բացարձակ իրավասությամբ և իշխանությամբ: Նրա՝ իշխանությամբ կառավարելու կարողությունը սատարում էր այն կառավարությունը, որը դրել էր նրան երկրի վրա: Ըստ էության, նա տիրում էր Աստծո Թագավորության լիազորված իշխանությամբ: Նա կրում էր այդ կառավարության թագը (պսակը), որը ներկայացնում էր Աստծո փառքը, օծությունը և պատվի կամ իշխանության այն դիրքը, որ նա ուներ:

Իհարկե, նա բառացիորեն չէր կրում իսկական մետաղյա թագ, բայց ուներ թագ կամ պսակ այն իմաստով, ինչ դա ենթադրում է: Որպեսզի լավ պատկերացում կազմեք, թե ինչի է սա նման, մտածե՛ք երկրային թագավորի մասին: Թեև նա մարդ է և չի կրում իրական զորություն, բայց կրում է թագ, ինչը ցույց է տալիս, որ նա ներկայացնում է ոչ միայն իրեն, այլև մի ամբողջ թագավորություն և կառավարման համակարգ: Նրա խոսքերն ունեն իշխանություն միայն այն պատճառով, որ դրանք պաշտպանվում են իր ներկայացրած կառավարման համակարգի և թագավորության բոլոր ուժերի ու բնական ռեսուրսների կողմից:

Մտածե՛ք երթևեկությունն ուղղորդող ոստիկանի մասին. նա

կանգնեցնում է կցորդով հսկա բեռնատարը ընդամենը մեկ խոսքով. «Կանգնի՛ր՝ օրենքի անունից»: Այո՛, բեռնատարը շատ ավելի մեծ է, քան մարդը, և նա ինքնին չի կարող համեմատվել բեռնատարի հետ: Բայց բեռնատարը կանգ է առնում ոչ թե մարդու պատճառով, այլ այն կրծքանշանի, որ նա կրում է, և որը ներկայացնում է այն կառավարությունը, որ սատարում է նրան: Այս դեպքում կառավարությունը շատ ավելի մեծ է, քան այդ կրծքանշանը կրող մարդը: Բեռնատարի վարորդը չի վախենում մարդուց, նա վախենում է կառավարությունից, որն այդ մարդը ներկայացնում է՝ ստիպելով վարորդին կանգնել:

Նույնը ճշմարիտ է այստեղ: Ադամն իշխում էր այն ամենի վրա, ինչ ստեղծված էր երկրային տիրույթում: Աստծո զորությունն ու իշխանությունը՝ ներկայացված փառքի և պատվի պսակով, վստահություն էին հաղորդում մարդուն, որ իր խոսքերն ունեն իշխանություն Աստծո Թագավորության անունից:

Շատ կարևոր է նկատի առնել այն, որ երբ Ադամը կորցրեց երկրի վրա իշխելու կարողությունը՝ Աստծո կառավարության դեմ դավաճանություն գործելով, նա կորցրեց իր պսակը՝ իշխանության դիրքը Աստծո Թագավորության մեջ, սակայն չկորցրեց երկրային տիրույթում օրինական պահանջ ներկայացնելու իրավունքը: Մարդը դեռևս օրինականորեն պատասխանատու էր երկրի ղեկավարման համար: Աստված տվել էր այն նրան՝ իշխելու համար: Եթե վերադառնանք Եբրայեցիների մեր տեքստին, կտեսնենք սա.

> *«Մեկը վկայեց մեկ տեղ՝ ասելով.*
>
> *«Մարդն ի՞նչ է, որ Դու հիշես նրան, կամ մարդու որդին, որ այցելես նրան: Մի քիչ ցած արիր նրան հրեշտակներից, փառքով և պատվով պսակեցիր նրան և Քո ձեռքի գործերի վրա կանգնեցրիր նրան: Ամեն բան հնազանդ արիր նրա ոտքերի տակ»:*
>
> *Որովհետև ամենը, որ հնազանդեցրեց նրան, ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի նրան. բայց հիմա տակավին չենք տեսնում, թե ամեն բան հնազանդված է նրան»:*
>
> – Եբրայեցիների 2.6-8

Թեև այս տեքստը խոսում է այն ժամանակի մասին, երբ Ադամն ու Եվան ստեղծվեցին, այն ասում է. «Աստված ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի նրան»:

> *«Երկինքների երկինքը Տիրոջն է, և Նա երկիրը **մարդկանց որդիներին տվեց**»:*
>
> – Սաղմոս 115.16

Մարդը հեռացրեց Աստծուն

Թեև մարդն ունի օրինական իրավասություն երկրի վրա, սակայն նա կորցրեց հոգևոր առումով տիրելու իր իշխանությունը: Ըստ էության, Ադամը Եդեմի պարտեզում հեռացրեց Աստծուն մարդկանց գործերից, և մեղանչման ժամանակ երկրային տիրույթն արատավորվեց ու փոխվեց: Մահը մուտք գործեց այս աշխարհ, և սատանան այժմ ուներ օրինական իրավունք՝ ազդեցություն ունենալու մարդկանց գործերի վրա: Չնայած այս ամենին՝ անչափ կարևոր է, որ հասկանաք, որ մարդը դեռևս երկրի օրինական տերն է: Նույնիսկ իր անկում ապրած վիճակում նա դեռևս պատասխանատու է երկրի համար: Այո՛, նա այլևս չունի Աստծո կառավարության թագը, որը սատարում էր իրեն: Նա չունի իշխանություն՝ տիրելու Աստծո զորությամբ և փառքով, և կորցրել է իր պատվավոր դիրքը: Բայց նա դեռևս միակ կենդանի արարածն է, որ ունի օրինական իրավունք իշխելու երկրային տիրույթում:

Ահա թե ինչու Աստված պետք է գործածի Հոգով լցված քրիստոնյաներին՝ մարդկանց կյանքերում Իր կամքը կատարելու համար: Նույն կերպով, սատանան օգտագործում է դևերով ոգեշնչված մարդկանց, որպեսզի ազդի այս երկրի վրա և իրագործի իր ծրագիրը մարդկության համար: Երկրի վրա մարդու իրավասության այս սկզբունքը

ԱՀԱ ԹԵ ԻՆՉՈՒ ԱՍՏՎԱԾ ՊԵՏՔ Է ԳՈՐԾԱԾԻ ՀՈԳՈՎ ԼՑՎԱԾ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԵՐՈՒՄ ԻՐ ԿԱՄՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

կենսական նշանակություն ունի Թագավորության օրենքը հասկանալու համար, հատկապես, թե ինչու է Աստծուն անհրաժեշտ հավատք՝ տվյալ իրավիճակում օրինական իրավասություն ձեռք բերելու համար:

Միգուցե ասեք. «Բայց ես կարծում էի, որ Տիրոջն է երկիրը և դրա լիությունը»: Այո՛, այդպես է: Հուսով եմ՝ հետևյալ օրինակը կօգնի ձեզ հասկանալու, թե ինչ նկատի ունեմ: Եթե ես վարձակալության հանձնեի ձեզ իմ տունը, թեև իրավաբանորեն այն պատկանում է ինձ, ես կհրաժարվեի ցանկացած պահին այդտեղ գալու իմ օրինական իրավունքից: Վարձակալական պայմանագրերի մեծամասնության մեջ կա պարբերություն, որը հստակեցնում է, թե երբ սեփականատերերը կարող են օրինական մուտք գործել վարձակալվող տարածքները, օրինակ՝ արտակարգ պատահար կարգավորելու կամ վերանորոգում կատարելու նպատակով, նաև պահանջվում է նշել ծանուցման ժամկետը: Եթե ես փորձեի մտնել իմ տուն՝ խախտելով այդ պայմանագիրը, իմ արարքը կոտրանք կհամարվեր, թեև այդ գույքը պատկանում է ինձ: Եթե ես խախտեի վարձակալական պայմանագրում հստակեցված օրենքը, ինձ կարելի էր օրենքի համաձայն հարկադրաբար հեռացնել այդտեղից, թեև դա իմ սեփականությունն է:

Սա լուսաբանում է այն, թե ինչու էր սատանան ստիպված օգտագործել Ադամին՝ երկրային տիրույթում իշխանություն ստանալու համար: Միայն Ադամն ուներ այդ բանալին: Սատանան պետք է մտներ դռնով, և բանալին պետք է ստանար նրանից, ով օրինականորեն ուներ այն, այլապես՝ նա օրենքի ուժով դուրս կվռնդվեր:

Նույն կերպով, երբ Ադամը Աստծո կառավարման համակարգը հեռացրեց երկրային տիրույթից, Աստված ստիպված էր ճանապարհ գտնել Իր կառավարման համակարգը երկրային տիրույթ վերադարձնելու համար: Նա պետք է աներ դա մարդու միջոցով: Այս դեպքում այդ մարդն Աբրահամն էր, որը բացեց այդ դուռը:

> *«Եվ Տերն ասաց Աբրամին. «Գնա՛ քո երկրից և քո ազգականներից և քո հոր տնից այն երկիրը, որ Ես քեզ ցույց*

կտամ: Եվ Ես քեզ մեծ ազգ պիտի շինեմ և քեզ օրհնեմ և քո անունը մեծացնեմ, և դու օրհնյալ կլինես: Եվ քեզ օրհնողներին կօրհնեմ, և քեզ անիծողներին կանիծեմ, և երկրի բոլոր ազգերը քեզնով կօրհնվեն»»:

– Ծննդոց 12.1-3

Աբրահամը կոչվում է մեր հավատքի հայրը, քանի որ նա այն մարդն էր, որն Աստծո առջև բացեց երկրային տիրույթի դուռը, որի միջոցով երկրի բոլոր ազգերն օրհնված էին լինելու: Իհարկե, սա խոսում է Հիսուս Քրիստոսի և մարդկության համար Աստծո փրկարար ծրագրի մասին: Աբրահամի հավատքն օրինական դուռ բացեց, որն Աստված ընդմիշտ բաց պահեց՝ օրինական պայմանագիր կնքելով Աբրահամի և Իր միջև: Այս պայմանագիրը նաև տարածվում էր Աբրահամի սերնդի վրա, և սա այն է, ինչ նկատի ուներ Աստվածաշունչը Ծննդոց 12-րդ գլխում. «Երկրի բոլոր ազգերը քեզնով կօրհնվեն»: «Քեզնով կօրհնվեն» արտահայտությունը վերաբերում է Հիսուսին, Ով դուրս էր գալու Աբրահամի սերնդից և վերականգնելու էր Ադամի կորցրածը:

Թո՛ւյլ տվեք այլ կերպ արտահայտել ասելիքս: Որպեսզի երկինքն օրինական մուտք ունենա երկրային տիրույթ, տղամարդը կամ կինը, որն ունի օրինական իրավասություն երկրային տիրույթում, պետք է համաձայնության մեջ լինի երկնքի հետ: Երկնքի հետ այս համաձայնությունը կոչվում է հավատք: Այս նույն սկզբունքով սատանան օրինական մուտք ստացավ երկրային տիրույթ՝ Ադամի միջոցով, որն ուներ այդ բանալին:

«Եվ սատանան Նրան մի բարձր սար հանեց և աշխարհի բոլոր թագավորությունները ցույց տվեց Նրան մի վայրկյանի մեջ: Եվ սատանան ասաց Նրան. «Այս ամբողջ իշխանությունը և սրանց փառքը Քեզ կտամ, որ ինձ է տրված, և ում որ կամենում եմ, տալիս եմ: Արդ, Դո՛ւ, եթե իմ առջև ընկած երկրպագություն անես, բոլորը Քոնը կլինի»»:

– Ղուկաս 4.5-7

Այս խոսքում կարող եք տեսնել, որ սատանան պնդում է, որ մարդկանց թագավորությունների իշխանությունը և փառքը

(հարստությունը) տրվել է իրեն: Նա բացարձակ իշխանության պահանջ է ներկայացնում երկրային տիրույթի հանդեպ, քանի որ այն վերաբերում է մարդկությանը: Այսպիսով՝ ո՞վ տվեց նրան այդ իշխանությունը: Նա, ով ուներ այն, այսինքն՝ Ադամը: Հետևաբար Աստված չի կարող միջամտել մարդկանց գործերում՝ առանց օրինական մուտքի իրավունքի, այլապես դա անօրինական կլիներ: Սատանան կպնդեր, որ դա անազնիվ խաղ է: Ո՛չ, Աստված պետք է անցնի նույն դռնով, ինչ՝ սատանան, այսինքն՝ երկրի վրա տղամարդու կամ կնոջ միջոցով:

Հիսուսը չկարողացավ բժշկել նրանց. բացահայտվում է մի հզոր դաս.

> *«Հիսուսն էլ նրանց ասաց. «Մի մարգարե անարգ չէ, բայց միայն իր հայրենիքի և իր ազգականների և իր տան մեջ»: Եվ* ***չէր կարողանում այնտեղ ոչ մի զորություն անել****, բայց միայն մի քանի հիվանդների վրա ձեռք դրեց և բժշկեց: Եվ նրանց անհավատության համար զարմանում էր…»:*
>
> – Մարկոս 6.4-6

Եթե փողոցում մարդկանց հարցնեի, թե արդյոք Հիսուսը կարող է որևէ բան անել, նրանք, հավանաբար, կպատասխանեին, որ կարող է: Այնուհետև, եթե հարցնեի, թե արդյոք Աստվածաշնչում կա որևէ տեղ, որ Հիսուսը փորձեց, բայց չկարողացավ հրաշքներ անել, ապա ի՞նչ կպատասխանեին նրանք: Հավաստիացնում եմ, նրանք կասեին, որ Աստվածաշնչում չկա նման տեղ, մինչդեռ հենց նոր դուք կարդացիք դրանցից մեկը: Հիսուսը չէր կարողանում բժշկել նրանց: Որպես հոգևոր գիտնական՝ ես ուզում եմ իմանալ, թե ինչու: Պատասխանը պարզ է. Նա չէր կարող, և այժմ դուք գիտեք, որ պատճառն այն էր, որ նրանք չունեին հավատք, ինչը նշանակում է, որ չկար համաձայնություն երկնքի հետ, հետևաբար երկինքը չուներ օրինական իրավասություն այդ իրավիճակում: Ձգտե՛ք հստակ պատկերացում կազմել այն մասին, ինչ բացահայտեցինք:

Երկինքը չունի իրավասություն երկրի վրա, քանի դեռ որևէ տղամարդու կամ կնոջ սիրտ լիովին համոզված չէ այն բանում, ինչ երկինքն ասում է, որը և կոչվում է ՀԱՎԱՏՔ:

Եթե վերադառնանք չպատասխանված աղոթքի վերաբերյալ այն հարցերին, որ տվեցի այս գլխի առաջին հատվածում, ապա այժմ կարող ենք ստանալ մեր պատասխանները: Հիշե՛ք, ես նշեցի հնարավոր իրավիճակ, երբ միլիոնավոր մարդիկ աղոթում են ինչ-որ մեկի համար, բայց նա, միևնույն է, մահանում է: Ինչո՞ւ: Հիմնական պատճառը, կրկին, հավատքի բացակայությունն է: Մարդկանց մեծ մասը շփոթում է մեծ աղմուկը հավատքի հետ:

> *«Եվ աղոթք անելիս շատախոս մի՛ եղեք՝ ինչպես հեթանոսները, որովհետև նրանք կարծում են, թե իրենց շատ խոսելու համար կլսվեն: Արդ, նրանց մի՛ նմանվեք. որովհետև ձեր Հայրը գիտի, թե ինչ բաներ պետք են ձեզ՝ ձեր՝ Նրանից խնդրելուց առաջ»:*
>
> – Մատթեոս 6.7,8

Շատերը հավատում են, որ որքան շատ լինեն աղոթողները, այնքան մեծ հնարավորություն կա, որ Աստված կլսի և կշտապի օգնել: Հուսով եմ, որ մինչև այժմ այնքան եմ խոսել այս թեմայի շուրջ, որ դուք գիտեք, որ սա բոլորովին սխալ է: Եվ երբ ասում ենք, որ չկար հավատք, հիմնականում խոսում ենք այն մասին, որ նա, ով Աստծուց որևէ բան է ուզում ստանալ, պետք է ունենա հավատք:

Դուք կհամաձայնեք, որ Մարկոսի 6-րդ գլխում նկարագրված պատմության մեջ Հիսուսը մեծ հավատք ուներ, սակայն չկարողացավ բժշկել մարդկանց: Այսպիսով՝ եթե մենք խոսեինք հիվանդ ընկերոջ մասին, որի համար աղոթում են միլիոնավոր մարդիկ, ապա ձեզ կհարցնեի. «Ինչ է հիվանդն ասում»: Ոչ մի մարդ չունի հոգևոր իշխանություն մեկ ուրիշի վրա: Մենք կարող էինք ունենալ 20 միլիարդ աղոթող, բայց եթե հիվանդը հավատքի մեջ չէ և ասում է, որ ինքը մահանալու է, ապա կմահանա:

Կրկին դիտարկենք մեր օրինակը, որ հենց նոր տեսանք Մարկոսի 6-րդ գլխում: Մենք գիտենք, որ Հիսուսն ուներ բժշկելու հա-

վատք, բայց Նա չէր կարող որևէ բան անել մարդկանց համար, եթե նրանց հավատքը ներգրավված չլիներ:

Բազմաթիվ մարդիկ մոտեցել են ինձ և ասել, որ իրենց տատիկը կամ պապիկը կամ որևէ հարազատ հիվանդ է, և նրանց համար աղոթում են, բայց ոչինչ տեղի չի ունենում: Ես մշտապես հարցնում եմ. «Ինչ է ասում տատիկը: Ինչ է ասում պապիկը: Արդյո՞ք կա հավատք»: Հասկանո՞ւմ եք, դուք չունեք հոգևոր իշխանություն մեկ այլ մարդու վրա: Դուք կարող եք ծառայել նրան, բայց նա պետք է ներգրավվի դրանում: Եթե մարդիկ ցանկանում են տեսնել արդյունավետ ծառայություն, ես նրանց ասում եմ, որ առաջին հերթին պետք է փոխեն իրենց պատկերը: Ես խոսում եմ այն պատկերի մասին, որ հիվանդը մտովի տեսնում է իր իրավիճակի վերաբերյալ: Մի՛ տվեք նրան բազմաթիվ կրոնական մեջբերումներ, տվե՛ք պատկեր: Փորձեմ բացատրել, թե ինչ նկատի ունեմ:

> *«Եվ Հովհաննեսին պատմեցին իր աշակերտներն այս բոլոր բաները: Եվ Հովհաննեսն իր աշակերտներից երկուսին կանչեց իր մոտ, ուղարկեց Հիսուսի մոտ և ասաց. «Դո՞ւ ես այն, որ գալու է, թե՞ ուրիշին սպասենք»:*
>
> *Այն մարդիկ էլ Նրա մոտ գալով՝ ասացին. «Հովհաննես Մկրտիչը մեզ ուղարկել է Քեզ մոտ և ասում է. «Դո՞ւ ես այն, որ գալու է, թե՞ ուրիշին սպասենք»»:*
>
> *Եվ այն ժամին շատերին բժշկեց հիվանդություններից և հարվածներից և չար ոգիներից և շատ կույրերի տեսնել շնորհեց: Եվ Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Գնացե՛ք Հովհաննեսին պատմեք՝ ինչ որ տեսաք և լսեցիք. որ կույրերը տեսնում են, կաղերը գնում են, բորոտները սրբվում են, խուլերը լսում են, մեռելները հարություն են առնում, աղքատներին Ավետարան է քարոզվում»»:*
>
> – Ղուկաս 7.18-22

Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը հղում չարեց Սուրբ Գրքին: Նա կարող էր ասել. «Գնացե՛ք և Հովհաննեսին ասե՛ք այս կամ այն Խոսքը»: Ո՛չ, Նա նրանց պատմեց այն բոլոր բարի գործերի մասին, որ կատարվում էին Աստծո Թագավորության

միջոցով: Նույնը դո՛ւք արեք: Ձեր ընկերոջը, ով հիվանդ է, պատմե՛ք, թե ինչպես է Հիսուսը բժշկել այս կամ այն մարդուն: Եթե հնարավոր է, պատմե՛ք նրան ինչ-որ մեկի մասին, ով բժշկվել է նույն հիվանդությունից, ինչով նա է տառապում: Այդպիսի պատկեր հաղորդելը ոգեշնչում և հույսով է լցնում նրան: Հույսը միշտ իր հետ պատկեր է կրում, և այն պատկերը, որ ուզում եք՝ ձեր ընկերը կամ հարազատը տեսնի, այն է, որ կա բժշկություն այդ հիվանդությունից:

Հենց որ ձեր ընկերը տեսնի, որ հնարավոր է բժշկվել, ձեզ կհարցնի, թե ինչպես է դա հնարավոր: Սա այն պահն է, որին դուք սպասում էիք: Քարոզներ լսելու փոխարեն՝ այժմ նա բաց է՝ ստանալու ուսուցում Աստծո Խոսքի և Թագավորության սկզբունքների վերաբերյալ: Նախևառաջ՝ հարկ կլինի, որ նրան բերեք Թագավորություն, եթե վերստին ծնված չէ, երկրորդ՝ որոշ ժամանակ անցկացրեք նրա հետ՝ բացատրելով բժշկությանը վերաբերող սուրբգրային խոսքերը: Եթե հնարավոր է, թողեք նրան որոշ նյութեր՝ ամրապնդելու համար այն ամենը, ինչ ասացիք:

«ՀԵՏԵՎԱԲԱՐ, ՀԱՎԱՏՔԸ ԳԱԼԻՍ Է ՈՒՂԵՐՁԸ ԼՍԵԼՈՒՑ, ԻՍԿ ՈՒՂԵՐՁԸ ԼՍՎՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ ԽՈՍՔԻ ՄԻՋՈՑՈՎ»:

– ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 10.17, NIV

Այժմ մենք գիտենք, թե ինչ է հավատքը (համաձայնություն երկնքի հետ), և ինչու է այն օրինականորեն անհրաժեշտ, բայց դեռևս պետք է իմանանք, թե ինչպես ստանանք հավատք, և ինչպես իմանանք, որ հավատքի մեջ ենք:

Ինչպե՞ս ենք հավատք ստանում

«Հետևաբար, հավատքը գալիս է ուղերձը լսելուց, իսկ ուղերձը լսվում է Քրիստոսի մասին Խոսքի միջոցով»:

– Հռոմեացիների 10.17, NIV

Հավատքը գալիս է Աստծո Խոսքը լսելուց: Ինչպե՞ս: Այդ ի՞նչ

գործընթաց է: Միթե Խոսքը լսելը միակ պահանջն է, որ մարդու հոգում հավատք ձևավորվի: Հասկանալու համար, թե ինչպես է գալիս հավատքը, և ինչ նկատի ունի Հռոմեացիների 10.17-ը, մենք կարող ենք նայել Մարկոսի 4-րդ գլուխը: Ես մշտապես ասում եմ, որ եթե ձեր Աստվածաշունչը նետեք օդ, երբ այն վայր ընկնի, կբացվի Մարկոսի չորրորդ գլուխը. ահա թե որքան կարևոր է այս գլուխը: Մարկոսի 4.13-ում Հիսուսն ասաց, որ եթե դուք չհասկանաք այն, ինչ Ինքը սովորեցնում է այդ առակում, ապա չեք կարողանա հասկանալ ցանկացած այլ առակ, որ գրված է Աստվածաշնչում: Ես կասեի, որ դա չափազանց կարևոր է:

Ինչո՞ւ է այս գլուխն այդքան կարևոր: Որովհետև այն մեզ հայտնում է, թե ինչպես է երկինքը փոխգործակցում երկրի հետ, ինչպես է այն իրավասություն ստանում, և որտեղ է դա տեղի ունենում: Ձեր կյանքում չկա ավելի կարևոր բան, քան իմանալը այն, ինչ սովորեցնում է այս ամբողջ գլուխը:

Այս գլխում Հիսուսը պատմում է մեզ երեք առակ այն մասին, թե ինչպես է հավատքն առաջանում մարդու հոգում, որը, ինչպես գիտեք, անհրաժեշտ պայման է, որպեսզի երկինքն օրինականորեն ներխուժի Երկիր: Գլխում ներկայացված երեք պատմություններն են սերմնացանի առակը, սերմ գցող մարդու առակը և մանանեխի հատի առակը: Սկսենք երկրորդ պատմությունից, որ Հիսուսը պատմում է Մարկոսի 4-րդ գլխում. այն սերմ գցող մարդու պատմությունն է:

> *«Եվ ասում էր. «Այսպես է Աստծո արքայությունը, որպես թե մի մարդ սերմ գցեր հողի մեջ: Եվ գիշեր-ցերեկ քնի և վեր կենա, և սերմը բուսնի և աճի, այնպես որ նա չգիտի: Որովհետև երկիրն ինքն իրեն պտուղ է բերում՝ առաջ խոտը, հետո հասկը, և դրանից հետո լցված ցորեն հասկի մեջ: Բայց երբ որ պտուղը կտա, շուտով կուղարկի մանգաղը, որովհետև հունձքը հասել է»»:*
>
> – Մարկոս 4.26-29

Առաջին բանը, որ պետք է անենք, մեր հասկացությունները սահմանելն է: Ո՞րն է այն սերմը, որի մասին խոսում է Հիսուսը, և

ոՐն է հողը: Ըստ էության, Հիսուսը սահմանում է այս երկու հասկացությունները նույն գլխի նախորդ՝ սերմնացանի առակում: Սերմն Աստծո Խոսքն է, իսկ հողը՝ մարդու սիրտը կամ հոգին:

Այսպիսով՝ այս առակում Հիսուսն ասում է, որ մարդը ցանում է Աստծո Խոսքը իր սրտի մեջ: Այնուհետև, երկիրը կամ մարդու սիրտը ինքն իրեն սկսում է ծնել հավատք կամ երկնքի հետ համաձայնություն: Սա մարդկային հոգու բնական գործընթացն է և գործառույթը. ինչ դնում եք այնտեղ, աճելու է: Նախքան առաջ անցնելը՝ խիստ կարևոր է, որ հիշեք, թե որն է հավատքի մեր սահմանումը. երբ որևէ տղամարդու կամ կնոջ սիրտը լիովին համոզված է այն բանում, ինչ ասում է երկինքը: Այստեղ պետք է հիշել, որ երկնքի հետ համաձայնությունը նույնը չէ, ինչ Աստծո Խոսքի հետ մտովի համաձայնելը: Աստվածաշունչն ասում է, որ Աբրահամը լիովին համոզված էր:

Լիովին համոզված

Որպեսզի հստակ պատկերացում կազմեք, թե ինչ է նշանակում լիովին համոզված լինել, ենթադրենք՝ ես ձեզ ասում եմ ցատկել Նյու Յորքի «Էմփայր Սթեյթ» երկնաքերից: Ձեզ համոզելու համար ասում եմ, որ եթե բավականաչափ ուժեղ թափահարեք ձեր թևերը, ապա կկարողանաք ապահով իջնել Երկիր: Դուք կծիծաղեք, որովհետև ԳԻՏԵՔ, թե ինչ կպատահի ձեզ հետ: Դուք լիովին համոզված եք հետևանքի մեջ: Ահա թե ինչի է նման լիովին համոզված լինելը: Դուք գիտեք, համոզված եք, որ այլ կերպ չի կարող լինել: Դուք կմահանաք, եթե ցատկեք:

Քննարկենք մեկ այլ իրավիճակ և տեսնենք, թե ինչպես կվարվեք այս դեպքում: Ենթադրենք՝ դուք ունեք շատ տեսանելի, խոշոր ուռուցք ձեր մարմնում, և բժիշկն ասում է, որ ձեզ ապրելու մեկ ամիս է մնացել: Դուք տառապում եք քաղցկեղով: Իրականում, բժիշկն ասում է, որ այդ տեսակի քաղցկեղն այնքան հազվադեպ է, որ չկա մեկը, ով ունեցել է նման ախտորոշում և ողջ է մնացել: Այժմ, ենթադրենք, դուք գիտեք, թե ինչ է գրված Ա Պետրոսի 2.24-ում.

«Որ Ինքը մեր մեղքերն Իր մարմնում խաչափայտի վրա բարձրացրեց, որ մեղքերից հեռանալով՝ արդարության համար ապրենք, որ Նրա խոցերով բժշկվեցիք»:

– Ա Պետրոս 2.24

Աստվածաշունչը տալիս է մեզ պատասխանը, բայց դուք և ես ունենք լուրջ խնդիր: Մենք մեծացել ենք խավարի թագավորությունում, և մեր շուրջն ամենուրեք այլասերվածություն է ու մահ: Մենք մեծացել ենք վախի թագավորությունում և լիովին համոզված ենք եղել նրանում, ինչ վախն ասում է: Վերոհիշյալ օրինակում մեզ սովորեցրել են, որ քաղցկեղը կարող է սպանել: Բոլոր լրատվամիջոցներով ապացուցվում է, որ դա ճիշտ է: Ուստի՝ ինչպե՞ս ենք պատրաստվում փոխել մեր համաձայնությունը: Ինչպե՞ս կարող ենք լիովին համոզվել նրանում, ինչ Աստված է ասում: Իրականում, մեր ուժերով չենք կարող: Բայց Աստծո Խոսքը կենդանի է և զորավոր, և երբ այն տնկում եք ձեր հոգում, ինքնըստինքյան, ձեր հոգին և Խոսքը սկսում են ստեղծել համաձայնություն այն բանի հետ, ինչ երկինքն ասում է:

Համաձայնություն երկնքի հետ

«Եվ ասում էր. «Այսպես է Աստծո արքայությունը, որպես թե մի մարդ սերմ գցեր հողի մեջ: Եվ գիշեր-ցերեկ քնի և վեր կենա, և սերմը բուսնի և աճի, այնպես որ նա չգիտի: Որովհետև <u>երկիրն ինքն իրեն պտուղ է բերում</u>՝ առաջ խոտը, հետո հասկը, և դրանից հետո լցված ցորեն հասկի մեջ: Բայց երբ որ պտուղը կտա, շուտով կուղարկի մանգաղը, որովհետև հունձքը հասել է»»:

– Մարկոս 4.26-29

Ինքն իրեն երկիրը (ձեր սիրտը) համաձայնություն է ստեղծում: Ուշադրություն դարձրեք, որ դուք չեք կարող աղոթել հավատքի համար. այն ձեր սրտի և Խոսքի գործառույթ է: Նայելով այս տեքստին՝ կարող ենք տեսնել, որ մեր սրտի և երկնքի համաձայնությունը գործընթաց է. այն անմիջապես տեղի չի ունենում:

Այս պատկերավոր օրինակը մեզ ասում է, որ սկզբում, երբ մեր սիրտն ընդունում է Խոսքը, հավատքն սկսում է աճել այնպես, ինչպես աճում է նոր տնկված սերմի ծիլը: Այնուհետև այն վերածվում է ցողունի, ապա ձևավորվում է գլխիկը կամ հասկը: Այստեղ է, որ սկսվում է ձևավորվել սերմը կամ պտուղը: Բույսի կյանքի այս փուլում դեռևս ուտելու ոչինչ չկա: Բույսը դեռ չի տվել իր հասուն, հասած պտուղը, բայց այն աճում է:

Այդպես էլ Աստծո Խոսքն է: Երբ հավատքն աճում է, բնական տիրույթում դեռևս ոչ մի տեսանելի փոփոխություն չկա: Դեռևս չկա համաձայնություն, բայց հաստա՛տ իմացեք, որ բույսն աճում է, հավատքը ձևավորվում է, և համաձայնությունը հաստատվում է: Հիսուսը շարունակում է՝ բացատրելով, որ երբ սերմը գլխիկում լիովին հասունանում է կամ հասնում, նշանակում է՝ հունձքը հասել է, կա համաձայնություն, և կա հավատք:

Ահա թե ինչ պետք է հասկանալ: Երբ հողի մեջ սերմ եք ցանում, ծլարձակման գործընթացի միջոցով բույսը սկսում է աճել, բայց դեռևս պտուղ չկա: Բույսը շարունակում է աճել, քանի դեռ մնում է ճիշտ միջավայրում: Երբ այն հասունանում է, տալիս է իր պտուղը: Պատկերացրեք՝ եգիպտացորեն եք աճեցնում: Այն եգիպտացորենի հասկ է արձակում, բայց սկզբում ընդամենը մի փոքրիկ հասկ է, որի վրա չկա ոչ մի հասած եգիպտացորեն, որ կարելի է ուտել: Բայց որոշ ժամանակ անց հասկի վրայի եգիպտացորենը հասնում է: Փորձե՛ք ըմբռնել միտքը: Այն պահին, երբ հասկի վրա եղած եգիպտացորենի հատիկը համընկնում է այն եգիպտացորենի հատիկի հետ, որը ցանվել է հողի մեջ, տեղի է ունենում համաձայնություն:

Երբ հասկի միջի սերմը հասունանա, այն կունենա ՃԻՇՏ նույն տեսքը, ինչ հողի մեջ ցանված սերմը:

Եթե եգիպտացորեն ցանեք, հասկի միջի հասուն սերմը կհամընկնի այն սերմի հետ, որ ցանել եք: Դրանք նույնն են, նույն տեսքը և նույն համն ունեն, այնպես որ՝ անկարելի է տարբերել:

Այսպիսով՝ թո՛ւյլ տվեք շրջասության ենթարկել այն, ինչ Հիսուսն ասում է: Երբ լսում ենք Աստծո Խոսքը (տե՛ս Հռոմ. 10.17),

ըստ էության, այն ցանում ենք մեր հոգևոր մարդու՝ մեր սրտի մեջ: Եթե պահենք այդ Խոսքը մեր սրտում, այն կաճի և կհասունանա, և երբ հասունանա, մեր սիրտը լիովին համոզված կլինի այն բանում, ինչ ասում է երկինքը: Երկինքն ու երկիրը համընկնում են, և երկինքը օրինական իրավասություն է ստանում երկրային տիրույթում այն մարդու միջոցով, որը լիովին համոզված է: Մեր մտքերն ու համոզմունքները ճիշտ և ճիշտ համընկնում են այն ամենին, ինչ ասում է երկինքը: Սա մտավոր գործունեության արգասիք չէ: Մենք սկսում ենք հավատալ ճիշտ այնպես, ինչպես հավատում ենք, որ քարը կընկնի, եթե ցած նետենք: Երկինքը երկնային տիրույթից Խոսք է ցանում երկրային տիրույթ, որտեղ առաջանում է համաձայնություն, և հաստատվում է Աստծո կամքը: Եթե երկինքն ասում է, որ դուք բժշկված եք, ապա երբ այդ Խոսքը հասունանա ձեր սրտում, դուք կտեսնեք միայն այն, ինչ ասում է երկինքը: Այլևս ոչ մի վախ: Երբ փակեք ձեր աչքերը, ձեզ կտեսնեք բժշկված: Այս է պատճառը, որ Եբրայեցիների 11.1-ում ասվում է.

> *«Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը և <u>չերևացող բաների ապացույցն է</u>»:*

Հնարավոր է՝ դուք դեռ չեք տեսնում դա բնական տիրույթում, բայց տեսել եք ձեր հոգում, և դա այնքան իրական է, որ կարծես ձեռքում պահած լինեք: Այդ համաձայնությունը կոչվում է հավատք, և հավատքն այդ պատկերն իրական կդարձնի այստեղ՝ երկրի վրա, ձեր անձնական կյանքում:

Միացնել անջատիչը

Բայց սպասեք. Մարկոսի 4-րդ գլուխն այստեղ կանգ չի առնում: Սովորեցնելով, թե ինչպես է մեր սիրտը համաձայնության գալիս երկնքի հետ, և ինչպես է առաջանում հավատքը՝ այն մեզ թելադրում է, թե ինչպես հնձենք բերքը:

> *«Բայց երբ որ պտուղը կտա, շուտով **<u>կմոտեցնի մանգաղը</u>**, որովհետև հունձքը հասել է»:*
>
> – Մարկոս 4.29, NIV

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԱՐՁԱԿԵՔ ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՏԵՂ՝ ԵՐԿՐԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՄԻԱՅՆ ԴՈՒՔ՝ ԵՐԿՐԻ ՎՐԱ ԱՊՐՈՂ ԿԻՆԸ ԿԱՄ ՏՂԱՄԱՐԴԸ, ԿԱՐՈՂ ԵՔ ՕՐԻՆԱԿԱՆՈՐԵՆ ԱՆԵԼ ԴԱ:

Ուշադրություն դարձրեք, որ թեև սիրտը համաձայնության մեջ է երկնքի հետ, և կա հավատք, դեռևս ոչինչ տեղի չի ունենում: Ինչո՞ւ: Ինչպես շարունակ ասում ենք, դուք ունեք օրինական իրավասություն այստեղ՝ երկրային տիրույթում: Հիշո՞ւմ եք մեր քննարկումն արյունահոսող կնոջ մասին, որի պատմությունը գրված է Ղուկասի 8-րդ գլխում: Հիսուսն ասում է. «Դո՛ւստր, քո հավա՛տքը բժշկեց քեզ»: Այն ժամանակ ես ձեզ ասացի, որ դուստրը ենթադրում էր օրինական դիրք երկնքի առջև, որ այդ կինն ուներ օրինական իրավունքներ, քանի որ Աբրահամի դուստր էր:

Ես համեմատեցի դա էլեկտրականությանից հոսանքի լարերը ձեր տուն բերելու հետ: Հոսանքը կա և հասանելի է, բայց դեռ պետք է միացնեք լույսերը: Նույն կերպով, երբ հավատքը հաստատվում է, զորությունը հասանելի է, բայց ոչինչ տեղի չի ունենում, մինչև չեք միացնում անջատիչը: Դուք պետք է արձակեք Աստծո Թագավորության զորությունն այստեղ՝ երկրային տիրույթում, որովհետև միայն դուք՝ երկրի վրա ապրող կինը կամ տղամարդը, կարող եք օրինականորեն անել դա: Հենց այս սկզբունքն է գործում այն ժամանակ, երբ փրկվում եք, ինչպես նշված է Հռոմեացիների 10.10-ում:

> *«Քանի որ, սրտով հավատում ենք՝ արդարանալու համար, և բերանով դավանում ենք՝ փրկվելու համար»:*
>
> – Հռոմեացիների 10.10

Մարդը սրտով հավատում է Խոսքին և արդարանում: «Արդարացումն» իրավական եզրույթ է, որը նշանակում է օրենքի կիրառում: Այնպես որ՝ երբ տղամարդու կամ կնոջ սիրտը համաձայ-

նության մեջ է երկնքի հետ, երբ այդ տղամարդը կամ կինը հավատում է երկնքի խոսքերին, նա արդարանում է երկնքի և Երկրի առջև: Այժմ երկինքն օրինականորեն կարող է մուտք գործել նրա կյանքի մեջ և նրա կյանքի միջոցով ազդեցություն թողնել Երկրի վրա Աստծո Թագավորության անունից: Բայց տարօրինակն այն է, որ թեև դա այժմ օրինական է, և մարդը հավատքի մեջ է, դեռևս ոչինչ տեղի չի ունենում: «Բայց, Գա՛րի, դուք ասացիք, որ եթե ես հավատքի մեջ լինեմ, դա երկնքին օրինական իրավասություն կտա այստեղ»: Ճիշտ է, բայց երբ կա հավատք, ինչ-որ մեկը պետք է արձակի երկնքի իշխանությունն այստեղ: Եվս մեկ անգամ նայենք մեր Խոսքին.

> *«Քանի որ, սրտով հավատում ենք՝ արդարանալու համար, **<u>և բերանով դավանում ենք՝ փրկվելու համար</u>**»:*
>
> – Հռոմեացիների 10.10

Երբ հավատքի մեջ եք կամ արդարացել եք, այժմ երկինքն օրինականորեն կարող է ներխուժել Երկիր: Բայց ուշադրություն դարձրեք, որ հետո ասվում է, որ բերանով դավանում եք և փրկվում: Տեսնո՞ւմ եք այս խոսքի երկու մասերը: Երկնքի գործն է Խոսքը բերել ձեր սրտի մեջ, որտեղ այն համաձայնություն է ծնում այստեղ՝ երկրային տիրույթում: Այնուհետև, երբ համաձայնությունը կամ հավատքը կա, պետք է վարվեք այդ համաձայնության հիման վրա և արձակեք երկնքի իշխանությունը ձեր իրավիճակի մեջ, որպեսզի իրականում ստանաք այն, ինչ ասում է երկինքը: Մարկոսի 4.29-ում ասվում է, որ երբ հունձքը հասնում է, մարդն (երկրի վրա) ուղարկում է մանգաղը: Հենց նա՛ պետք է գործի Աստծո Խոսքի հիման վրա, երբ հավատքը կա, և, ըստ էության, ստանա իր հունձքը:

Ստանալ Աստծո Թագավորության մեջ

Թո՛ւյլ տվեք մի պահ անդրադառնալ և խոսել Մարկոսի 4-րդ գլխում հիշատակված մանգաղի մասին: Ես կարծում եմ, որ եկեղեցական աշխարհի մեծ մասին չեն սովորեցրել, թե ինչպես օգտագործեն մանգաղը՝ նկատի ունենալով, որ նրանց չեն սովորեց-

րել՝ ինչպես ինձեն այն, ինչի կարիքն ունեն: Ես նույնպես չգիտեի դա, մինչև Տերը չսովորեցրեց ինձ, թե ինչպես է Թագավորությունը գործում: Ահա այն պատմությունը, թե ինչպես ստացա իմ առաջին հայտնությունը Թագավորության մեջ տեղի ունեցող այս կարևորագույն գործընթացի մասին:

Ինձ հրավիրել էին քարոզելու Ատլանտայում գտնվող մի եկեղեցում: Ծառայությունը չորեքշաբթի երեկոյան էր, և եկեղեցին այդքան էլ մեծ չէր, սակայն դա խնդիր չէր ինձ համար: Ես սիրում էի սովորեցնել մարդկանց Թագավորության մասին: Երբ եկեղեցի հասա, ինձ համար տարօրինակ էր, որ դռները փակ էին, և ոչ ոք չկար: Տասը րոպեից ծառայությունը սկսվում էր: Իմ հետևից մեքենայի բարձր ձայն լսեցի, հետ նայելով՝ տեսա մի հին բաց թափքով մեքենա, որ շարժվում էր եկեղեցու ետնամասի ծառուղով: Ես ոչինչ չմտածեցի այդ մասին: Վերջին հաշվով՝ ես Ատլանտայի կենտրոնում էի:

Մինչ սպասում էի, շենքի ետևից մի մարդ մոտեցավ և ներկայացավ որպես հովիվ: Նա ներողություն խնդրեց ուշանալու համար, քանի որ նրա հին մեքենայի շարժիչը չէր միանում: Նա ինձ ասաց, որ ստիպված էր մեքենան իջեցնել զառիվայրով, քանի որ ընթացաշարժիչն անսարք էր: Նա շարունակեց՝ ասելով, որ երբեմն շարժիչն ընդհանրապես չի միանում, և ինքը ստիպված է լինում ութ կիլոմետր քայլել՝ եկեղեցի հասնելու համար: Պետք է խոստովանեմ, որ մի փոքր զարմացած էի այս խոսակցությունից:

Այնուհետև նա բացատրեց, որ իր ծառայությունը հիմնականում սոցիալական օգնության ծառայություն է, որն ամեն ամիս կերակրում է հազարավոր մարդկանց, միայն այդ տարածքում ամսական շուրջ 10.000 բաժին կերակուր է բաժանվում: Երբ հովիվը խոսում էր, ես վրդովվում էի: Ահա՛ Աստծո մարդ, որն ամեն ամիս կերակրում է 10.000 մարդու, բայց նույնիսկ չունի վայելուչ մեքենա: Ես կարող էի հոգալ այդ մասին: Ես տանն ունեի բավականին նոր մեքենա, որի վազքը 32.000 կիլոմետր էր, և այն կարող էի նվիրել նրան: Նրան հայտնեցի իմ մտադրությունը և ասացի, որ աշխատակիցներիցս մեկի հետ այդ մեքենան կուղարկեմ Ատլանտա: Իհարկե, նա ցնցված էր:

Այդ երեկո նրան և նրա փոքր եկեղեցուն սովորեցրի Աստծո Թագավորության մասին, նաև՝ թե ինչպես է այն գործում ֆինանսական ոլորտում: Ես գիտեի, որ խիստ կարևոր էր, որ եկեղեցին սկսեր ցուցադրել Թագավորությունը նրանց, ովքեր ծայրահեղորեն դրա կարիքն ունեին:

Երբ գնացի տուն, պատվիրեցի, որ մեքենան տանեն Ատլանտա: Երբ իմ աշխատակազմի անդամներից մեկը եկավ մեքենան տանելու, ես գիտեի, որ հոգևոր գործարք էի կատարում երկնքում: Գիտեի, որ քանի որ այդ մեքենան բաց էի թողնում Աստծո Թագավորության մեջ, ես կարող էի հավատալ Աստծուն այն մեքենայի համար, որի կարիքն ինքս կունենայի: Ես մեքենաների սիրահար չեմ, նկատի ունեմ, որ չեմ տարվում դրանցով: Ոմանք այդպիսին են, բայց ես՝ ոչ: Ուստի, երբ իմ աշխատակազմի անդամը եկավ այն տանելու, ձեռքս դրի մեքենայի վրա և ասացի. «Հա՛յր, ես բաց եմ թողնում այս մեքենան Ատլանտայում գործող այս ծառայության համար: Այն բաց թողնելով՝ ես ցանում եմ սերմ և հավատում եմ, որ ստանում եմ…»: Ես չկարողացա մտածել, թե ինչ մեքենա էի ուզում, ուստի ասացի. «Ես կհայտնեմ Քեզ այդ մասին»:

Հաջորդ մի քանի ամիսներին առանձնապես շատ չէի մտածում մեքենայի մասին, բայց մի առավոտ հարցրի Դրենդային, թե ինչպիսի մեքենա կցանկանար ունենալ: Մի փոքր մտածելուց հետո նա ասաց, որ լավ կլիներ, եթե ծալվող տանիքով մեքենա ունենար: Ես հարցրի, թե ինչ տեսակի ծալվող մեքենա էր ուզում, և մեզնից ոչ ոք չկարողացավ մտաբերել որևէ մակնիշի մեքենա: Քանի որ մեքենան Դրենդայի համար էր, ես ուզում էի, որ նա անպայման ստանար այն մեքենան, որն իրեն էր դուր գալիս, ուստի նրան հորդորեցի ստուգել առցանց կամ նայել շուրջը և ինձ տեղյակ պահել, եթե գտնի այն մեքենան, որ իրեն դուր կգա: Այդ ընթացքում մենք որևէ մեկին չասացինք նոր մեքենա ունենալու մեր ցանկության մասին, բայց մեքենայով շրջելիս մեր աչքերը բաց էինք պահում՝ փնտրելով այն մեքենան, որը կգրավեր մեր ուշադրությունը:

Մի օր գնում էինք տեղական ռեստորաններից մեկում ճաշելու,

երբ հանկարծ Դրենդան բացականչեց.

– Ահա՛ այն:

– Ի՞նչը,- հարցրի ես:

– Այն մեքենան, որ ինձ դուր է գալիս:

Նա մատնացույց արեց ավտոկայանատեղիի մյուս կողմը: Ես շրջանցեցի ավտոկայանատեղին և կանգ առա «BMW 6 Ci» շարքի ծալվող տանիքով մեքենայի ետնամասում: Անշուշտ, գեղեցիկ մեքենա էր, և ավելացնեմ, որ նաև շատ թանկ արժեր: Ես գովեցի նրա ճաշակը և ասացի, որ գեղեցիկ մեքենա է:

Ասեմ ձեզ, որ Դրենդան ու ես սովորություն չունենք մեծ գումարներ վճարել մեքենաների համար: Ինչպես ասացի, ես երբեք չեմ եղել մեքենայի սիրահար: Գործելով ֆինանսների ոլորտում՝ նաև գիտեմ, թե որքան արագ են դրանք արժեզրկվում, և մշտապես լավագույն տարբերակը՝ մեկից երկու տարվա արտադրության մեքենա գնելն է: Այնպես որ՝ ես մտադիր էի գնել քիչ օգտագործված մեքենա:

Մեկ շաբաթ անց եկեղեցուց մի մարդ զանգեց և ասաց. «Ես գտել եմ Դրենդայի մեքենան»: Ես շփոթվեցի, քանի որ մենք ոչ ոքի չէինք պատմել «BMW» մակնիշի մեքենայի մասին, որ տեսել էինք ռեստորանում ճաշելու օրը: Ես հարցրի, թե ինչ մեքենա է այն, և նա պատասխանեց, որ «BMW 6 Ci» շարքի ծալվող տանիքով մեքենա է: Նա ասաց, որ մեքենա վարելիս տեսել էր այն, և Տերն ասել էր, որ դա Դրենդայի մեքենան է:

– Շատ լավ, դու գրավեցիր իմ ուշադրությունը,- ասացի ես:

Մեքենան մեկ տարեկան էր և գերազանց վիճակում: Պատմությունն ավարտվեց նրանով, որ ես կանխիկ գումարով գնեցի այն: Դրենդան ստացավ իր մեքենան:

Ինչպե՞ս դա պատահեց:

Եկե՛ք պատմությունը համեմատենք այն բանի հետ, ինչ սովորեցինք հավատքում լինելու և մանգաղը մոտեցնելու մասին: Երբ մեքենաս տվեցի, ես հավատքի մեջ էի: Բայց երբ Դրենդան բարձրաձայն ասաց. «Ահա՛ այն», նա մոտեցրեց մանգաղը, և մի քանի օր անց մեքենան հայտնվեց: Թեև ես լսեցի, թե ինչպես

նա բացականչեց՝ ահա՛ այն, ես երբեք նրա հոչակումը չկապեցի Մարկոսի 4-րդ գլխի և մանգաղի հետ: Բայց հաջորդ պատմությունը հստակ ցույց տվեց այս սկզբունքը:

Ձեր խոսքերի զորությունը

Ինչպես ասացի, ես ունեմ 24 հա հողատարածք, որի գրեթե 10 հա-ը ճահճուտ է: Ես սիրում եմ որսորդություն անել աշնանը, բայց այստեղ՝ Օհայոյում, երբևէ բադի որս չէի արել, չնայած ավագ դպրոցի տարիներին բադեր որսացել էի: Այդ տարի ճահճուտը լի էր ջրով, և բադերը մեծ երամներով թռչում էին դեպի ճահճուտը: Օրական հարյուրավոր բադեր թռչում-գալիս էին այդտեղ՝ գիշերը թառելու համար: Ուստի՝ մի գիշեր վերցրի հրացանս, դուրս եկա և մի քանի բադ որսացի ճաշի համար:

Այդ աշուն թե՛ տղաներս, թե՛ ես բադի հրաշալի որս ունեցանք: Մեկ բան, որ նկատեցի, այն էր, որ շատ անգամներ բադերը իմ որսորդական հրացանի առավելագույն հեռահարության սահմանին էին գտնվում: Բադեր որսալիս օրինականորեն թույլատրվում է օգտագործել պողպատե գնդակ՝ ավանդական կապարե գնդակի փոխարեն: Կապարե գնդակն ավելի ծանր է և շատ ավելի հեռու է պահպանում իր ուժը, քան պողպատե գնդակը, այդ իսկ պատճառով բադի որսորդության ժամանակ առաջանում է հեռահարության խնդիր:

Բայց այդ աշնանը բադի որս անող մի քանի ընկերների հետ զրուցելիս իմացա, որ կային նոր հրացաններ, որոնք նախատեսված էին հատուկ բադի որսի համար: Դրանք ընդունակ էի արձակելու ավելի ծանր գնդակներ և քողածածկված էին: Ինձ շատ հետաքրքրեց նման հրացան գնելու միտքը, բայց դեկտեմբեր ամիսն էր, և բադերի որսաշրջանն ավարտվում էր, այնպես որ՝ շատ չմտածեցի դրա մասին:

Հունվարի սկզբին ինչ-որ բան գնելու նպատակով պատահաբար մտա «Կաբելաս» խանութը (սպորտային ապրանքների մեր տեղական խանութը) և հիշեցի բադի որսի համար նախատեսված հրացանները: Ցանկանալով տեսնել, թե ինչպիսին են դրանք՝ անցա հրացանների բաժնի կողքով և տեսա նոր հրա-

ցանների մի ամբողջ ենթաբաժին՝ նախատեսված ջրլող թռչունների որսի համար: Հիշում եմ, առանց մտածելու, մատնացույց արի այն հրացանը, որն, իմ կարծիքով, ամենալավն էր, և բարձրաձայն ասացի. «Տե՛ր, ես կունենամ այդ հրացանը»: Ես դա ասացի՝ առանց մտածելու. այդ խոսքերը պարզապես դուրս եկան իմ շուրթերից: Բադերի որսաշրջանը բացվում էր աշնանը, ուստի ես մտադիր չէի գնել այդ հրացանը, մինչև չմոտենար որսաշրջանի ժամանակը:

Երկու շաբաթ անց ինձ հրավիրեցին քարոզելու մի գործարար համաժողովում: Երբ ավարտեցի խոսքս, ընկերության տնօրենը մոտեցավ ինձ, որպեսզի շնորհակալություն հայտնի, և ասաց, որ ինձ համար նվեր ունեն: Զարմանալիորեն նա հանեց ճիշտ այն հրացանը, ճիշտ այն մոդելը, որ ես մատնացույց էի արել երկու շաբաթ առաջ «Կաբելաս» խանութում: Իհարկե, անակնկալի եկա նման առատաձեռն նվերից, բայց նաև գիտեի, որ դա զուգադիպություն չէր: Ես հիշում էի, թե ինչ էի ասել «Կաբելաս» խանութում, և հասկացա, թե ինչ էի արել. ես մոտեցրել էի մանգաղը:

> *«Եվ ասում էր. «Այսպես է Աստծո արքայությունը, որպես թե մի մարդ սերմ գցեր հողի մեջ: Եվ գիշեր-ցերեկ քնի և վեր կենա, և սերմը բուսնի և աճի, այնպես որ նա չգիտի: Որովհետև երկիրն ինքն իրեն պտուղ է բերում՝ առաջ խոտը, հետո հասկը, և դրանից հետո լցված ցորեն հասկի մեջ: Բայց երբ որ պտուղը կտա, <u>շուտով կմոտեցնի մանգաղը, որովհետև հունձքը հասել է</u>»»:*
>
> – Մարկոս 4.26-29

Մանգաղը մոտեցնելը լուսաբանում է հավատքի վերաբերյալ նույն սկզբունքը, ինչ ավելի վաղ քննարկեցինք Հռոմեացիների 10.10-ում:

> *«Քանի որ, սրտով հավատում ենք՝ արդարանալու համար, և բերանով դավանում ենք՝ փրկվելու համար»:*
>
> – Հռոմեացիների 10.10

Ես հավատացի սրտով և բերանով արձակեցի Թագավորութ-

յունը այս երկրային տիրույթում: Ես 30-ից ավելի հրացան էի նվիրել, բայց, որքան հիշում եմ, առաջին անգամն էր, որ բարձրաձայն ասացի. «Ես կվերցնեմ այդ հրացանը»: Սակայն երբ մի պահ մտածեցի այս մասին, մտաբերեցի ևս մեկ դեպք, երբ արել էի նույն բանը, բայց այն ժամանակ գաղափար չունեի, թե ինչպես է Թագավորությունը գործում:

Երբ Դրենդան ու ես տեղափոխվեցինք Օհայո՝ Օկլահոմայում, որտեղ մինչ այդ ապրում էինք, եղնիկների որսը կատարվում էր սովորական հրացանով: Բայց Օհայոյում սովորական հրացաններն անօրինական էին. միայն թույլատրվում էին որսորդական հրացաններ: Այն ժամանակ իմ ունեցածն ընդամենը 20 տրամաչափի հորիզոնական փողերով երկփողանի հրացան էր, որով կարողացա երկու եղնիկ որսալ մեր տեղափոխվելու առաջին տարին: Բայց ես իսկապես ուզում էի լավ որսորդական հրացան ունենալ, որը հատուկ նախատեսված էր եղնիկներ որսալու համար: Հիշում եմ, որ Օհայոյում եղնիկների առաջին որսաշրջանի ավարտից հետո Դրենդային հայտնեցի, որ ուզում եմ ունենալ «Ռեմինգտոն 11-87» մոդելի 12 տրամաչափի սև, սինթետիկ կոթով հրացան եղնիկների որսի համար: Մի քանի շաբաթ հետո Սուրբ ծնունդն էր, և ես զարմացա, երբ հայրս նվիրեց ինձ հենց այդ հրացանից: Ես նույնիսկ չէի ակնարկել, որ որսորդական հրացանի կարիք ունեմ: Ես մտածում էի. «Տարօրինակ է». առանց իմանալու՝ ես մոտեցրել էի մանգաղը:

ԳԼՈՒԽ 4

ՉԵՔ ՀԻՇՈՒՄ

Առաջին օրերին, երբ նոր էի սովորում, թե ինչպես է Թագավորությունը գործում, ապշում էի իմ տեսածից: Պատճառը հիմնականում այն էր, որ ինձ չէին սովորեցրել որևէ բան այն ամենից, ինչ ես տեսնում էի: Բայց ինչպես ասացի գրքի առաջին մասում, Աստված կարծես օգտագործում էր իմ եղնիկների որսորդությունը՝ ինձ դասեր տալու համար: Ես բավականին հասարակ մարդ եմ և ենթադրում եմ, որ որսորդությունը հիանալի միջոց էր՝ իմ ուշադրությունը գրավելու համար: Երբ սովորեցի ցանել իմ եղնիկի համար և սկսեցի հնձել այն սովորաբար որսի դուրս գալուց մոտավորապես 40 րոպե հետո, Աստված սկսեց կատարելագործել իմ դասերը, որպեսզի ավելի խորը պատկերացում կազմեի Թագավորության գործունեության մասին:

Ես Օկլահոմայի Տալսա քաղաքում էի, երբ Աստված ցույց տվեց, թե ինչպես հավատքով որսամ վեցճյուղանի եղջերուին: Ինչպես ասացի, հաջորդ տարի մենք տեղափոխվեցինք Օհայո: Օհայոյում եղնիկների մեծ հոտ կար, և թույլատրվում էր որսալ երկու եղնիկ, որոնցից միայն մեկը կարող էր լինել արու: Ուստի, երբ եկա Օհայո, սկսեցի յուրաքանչյուր տարի սերմ ցանել երկու եղնիկի՝ մեկ արուի և մեկ էգի համար: Եվ ճշգրտորեն հենց դա էլ ստանում էի:

Բայց մի տարի նկատեցի ինչ-որ շփոթեցնող բան: Ես մտածում էի, որ նման բան չէր կարող պատահել: Երբ ավարտվեց եղնիկների որսաշրջանը, ես նկատեցի, որ եղնիկները գալիս էին այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ գրել էի չեկի վրա, երբ ցանել էի իմ սերմը: Օրինակ, եթե գրել էի՝ արու եղջերուի և

էգ եղնիկի համար, եղջերուն գալիս էր առաջինը, իսկ եղնիկը՝ երկրորդը: Անդրադառնալով նախորդ մի քանի որսաշրջաններին՝ մտածեցի, որ դա տեղի էր ունենում ամեն տարի: Համոզված չէի, քանի որ այդքան շատ ուշադրություն չէի դարձրել դրան, բայց, չգիտես ինչու, ինձ հետաքրքիր էր՝ արդյո՞ք դա ճիշտ է:

Այնպես որ՝ հաջորդ տարի ես գիտեի, որ պիտի պարզեմ դա: Համաձայն եմ՝ դա խելագար միտք էր, բայց ինձ թվաց, որ այդպես է գործում, և ես երբեք չէի իմանա դա, մինչև չկատարեի մի քանի փորձարկում: Ուստի ես փոխեցի հերթականությունը, երբ այդ տարի ցանեցի իմ սերմը: Այս անգամ էգին դրեցի ցուցակի առաջին տեղում: Մինչ այդ, սերմ ցանելիս առաջինը նշում էի արուին: Հենց այդ հերթականությամբ էլ նրանք գալիս էին: Այսպիսով՝ հաջորդ տարի արեցի նույնը, և նրանք եկան իմ գրած հերթականությամբ: Երբեք չէի մտածել, որ նման բան կարող է պատահել: Նկատի ունեմ՝ մի՞թե Թագավորությունն այդքան հստակ է:

Որպեսզի հասկանայի՝ իրո՞ք սա տեղի է ունենում, թե՞ պարզապես զուգադիպություն է, որոշեցի անպայման պարզել և մի փոքր ավելի մանրամասն փորձ կատարել: Այդ տարի սերմ ցանեցի յոթ-ցյուղանի եղջերուի համար: Ես գիտեի, որ սովորական եղջերուն ունենում է հավասար ճյուղեր երկու կողմերում, ուստի ես ընտրեցի կենտ և ճշգրիտ թիվ: Որքան էլ տարօրինակ թվա, Դրենդան ու ես ցանեցինք հենց այդպիսի եղջերուի համար: Մենք աղոթեցինք և բաց թողեցինք մեր սերմը յոթ-ցյուղանի եղջերուի համար:

Որքա՞ն հստակ է հավատքը

Ի վերջո, եկավ հոկտեմբեր ամիսը, և բացվեց աղեղով որսաշրջանը: Սովորաբար ես անհամբեր սպասում էի աղեղով անտառ մտնելուն, բայց նկատեցի, որ տարօրինակ զգացում ունեի, երբ բացվեց որսաշրջանը: Ես ցանկություն չունեի որսի դուրս գալու: Զգացողությունն ուժեղ էր, և տարօրինակ կերպով ես գիտեի, որ չեմ կարող դեռևս որսի դուրս գալ: Մտածում էի, որ որսի գնալու ցանկության բացակայությունը կվերանա, երբ որսաշրջանը շա-

ռունակվի, և տերևները սկսեն թափվել: Բայց, ո՛չ, անհնար էր դա բացատրել, բայց ես չունեի ցանկություն՝ որսի դուրս գալու: Ես մտածում էի. «Մի՞թե այսպես է լինում, երբ մեծանում ես և պարզապես դադարում ես ինչ-որ բաներ անելուց»: Ես չէի կարող բացատրել այն տարօրինակ զգացումը, որ պատել էր ինձ: Կարծես այնքան էլ չէի մտահոգվում, որ երբևէ կրկին կգնամ եղջերու որսալու: Արդեն նոյեմբերն էր, և ես սկսեցի մի փոքր անհանգստանալ: Ես բաց էի թողել ամենագեղեցիկ և, պետք է ավելացնեմ, ամենատաք ժամանակն անտառում: Նոյեմբերը կիսվեց, իսկ ես դեռ որևէ ցանկություն չունեի եղջերու որսալու: Ես մտածում էի՝ ընդհանրապես դուրս կգամ որսի. ահա թե ինչպիսի զգացողություն ունեի:

Դրենդայի ծնողները Ալաբամայից մեքենայով եկել էին մեր տուն՝ մի քանի օր մեզ հետ անցկացնելու: Երբ հյուրասենյակում նստած զրուցում էինք, հանկարծ զգացի, որ հաջորդ օրը պետք է դուրս գամ անտառ: Կարծես ներսումս լույս վառվեց: Ես բոլորին ասացի, որ առավոտյան պետք է դուրս գամ իմ եղջերուին որսալու: Հանկարծ լցվեցի խանդավառությամբ և սպասումով՝ պատրաստելով հանդերձանքս առավոտյան որսի համար:

Ես գիտեի, որ իմ յոթճյուղանի եղջերուն այնտեղ է լինելու: Եվ այն ժամանակ ես հասկացա: Յոթճյուղանի եղջերուն չէր եղել այնտեղ հոկտեմբերին և չկար նույնիսկ մեկ օր առաջ: Հավանաբար դա էր պատճառը, որ ես այդպիսի զգացողություն ունեի եղջերուի որսի վերաբերյալ: Պատկերացնում եմ, թե որքան ծանր կլիներ մեկ ու կես ամիս սպասելը, եթե պարզապես նայեի իմ պատուհանից՝ ցանկանալով, որ այդ ժամանակահատվածում ամեն օր անտառում լինեի: Դա ճնշող կլիներ: Այս ամենն ընդամենը տեսություն էր, բայց ես պատրաստվում էի ստուգել դա հաջորդ առավոտյան:

Առավոտյան, երբ արթնացա, մութ էր: Գիշերն աղոթել էի, թե որ դիտանոցը բարձրանայի: Հողատարածքում ունեի մի քանի դիտանոցներ, և երբ աղոթում էի, հստակ զգացի, որ պետք է շարժվեի դեպի ճահճուտի դիտանոցը: Մենք այն անվանում ենք ճահճուտի դիտանոց, որովհետև մի կողմից սահմանակից է 10

հեկտար ճահճուտին, իսկ մյուս կողմից՝ թփուտներին: Ես գիտեի, որ երբեմն եղնիկները շրջանցում էին ճահճուտը և շարժվում եզրով: Դիտանոցը նախկինում տվել էր իր արդյունքը, և ես լիովին ակնկալում էի, որ այդ օրը ճահճուտի դիտանոցից կտեսնեի իմ եղջերուին:

Երբ շարժվում էի դիտանոցի ուղղությամբ, վերհիշեցի այն, ինչ Աստված ցույց էր տվել Իր Թագավորության վերաբերյալ եղնիկների որսի միջոցով, և զգացի, որ Նա ավելին էր սովորեցնում: Ես խանդավառված էի՝ տեսնելու իմ փորձարկման արդյունքը:

Լույսը դանդաղորեն բացվեց, և աշնան առավոտյան ձայներն ու հոտերը հաճելիորեն շեղեցին ինձ կյանքի սովորական ընթացքից: Ես իսկապես բաց էի թողել դա: Անցավ գրեթե մեկ ժամ, և չկար եղնիկի ոչ մի նշան: Այդուհանդերձ, իմ հողատարածքում հետևելով եղնիկների վարքին՝ ես գիտեի, որ առավոտյան ավելի ուշ նրանք գալիս էին այս տարածք, քանի որ այն իջևանելու գերազանց վայր էր: Թեև գրեթե մեկ ժամ էր՝ գտնվում էի դիտանոցում, սակայն որսի թույլատրելի ժամանակից ընդամենը 40 րոպե էր անցել:

Մինչ այնտեղ նստած էի, տան մոտից լսվեց մեքենայի դռան շրխկոց: Հիշեցի, որ Դրենդայի ծնողներն այդ առավոտ վերադառնում էին Ալաբամա, և ցանկացա հրաժեշտ տալ նրանց: Ուստի՝ դժկամորեն իջա իմ դիտանոցից՝ մտածելով, որ ստիպված կլինեմ մեկ ուրիշ օր գալ՝ իմ յոթ ճյուղանի եղջերուին որսալու համար:

Երբ հասա տուն, բոլորն արթնացել էին և պատրաստ էին նախաճաշելու: Իմ ընտանիքում նախաճաշ պատրաստողը ես եմ. գրեթե ամեն օր ես նախաճաշ եմ պատրաստում Դրենդայի, ինձ և մյուսների համար: Այնպես որ՝ ես գնացի նախաճաշ պատրաստելու, մինչ Դրենդայի ծնողներն իրենց իրերը տեղավորում էին մեքենայի մեջ: Իհարկե, նրանք հարցրին իմ եղջերուից, և ես ստիպված եղա ասել, որ որոշել էի թողնել իմ ծրագիրը, որպեսզի կարողանայի առավոտն անցկացնել նրանց հետ: Այո՛, ես մի փոքր հիասթափված էի: Ես սպասում էի, որ նրանք առավոտյան մի փոքր ուշ կմեկնեին՝ ինձ ժամանակ թողնելով իմ եղջերուին որսալու համար:

Բայց մինչ կանգնած էի գազօջախի մոտ և հետևում էի ձվածեղին, նայեցի խոհանոցի պատուհանից, որտեղ երևում էին անտառն ու դաշտերը: Ես նկատեցի, որ դաշտի հետևի կողմում մի եղջերու հետապնդում էր մի եղնիկի՝ շարժվելով ուղիղ դեպի ճահճուտը, որտեղ իմ դիտանոցն էր: Ես իմացա, որ դա իմ եղջերուն էր: Հանկարծ բղավեցի՝ խնդրելով, որ ինչ-որ մեկը գա և փոխարինի ինձ: Ես ասացի, որ հենց նոր տեսա իմ եղջերուին և գնում եմ այն որսալու: Գիտեի, որ շատ ժամանակ չունեի:

Ես պետք է վազեի հողատարածքի երկայնքով հակառակ ուղղությամբ, որպեսզի աննկատ մնայի եղջերուից: Ես մտածեցի, որ նա կարող էր պարզապես իջնել այն արահետով, որտեղ իմ դիտանոցն էր: Որքան հնարավոր էր, արագ վազեցի դաշտի եզրով և հասա դիտանոցին: Ճանապարհին եղնիկ չտեսա, և դա լավ էր: Ես գիտեի, որ կխրտնեցնեի նրանց, եթե, ըստ էության, նրանք ընտրեին իջնել իմ արահետով: Արագ բարձրացա իմ դիտանոցը՝ սրտի տրոփյունով և քրտինքի կաթիլներով:

Եվ հանկարծ, երբ նստեցի, նրանք եկան: Եղնիկը վազեց ուղիղ իմ դիտանոցի տակով, և ես պատրաստվեցի, քանի որ գիտեի, որ եղջերուն հեռու չէր: Իհարկե, նա եկավ: Ես ժամանակ չունեի ճշտելու՝ նա իսկապե՞ս յոթճյուղանի էր: Ես հազիվ ժամանակ ունեի աղեղս վերցնելու և կրակոց արձակելու: Կրակոցից հասկացա, որ հարվածել էի եղջերուին, բայց հարվածը մի փոքր ցածր էր, ինչն անհանգստացրեց ինձ: Կրակոցից եղջերուն ցատկեց դեպի թփուտները: Գրեթե 20 րոպե սպասեցի դիտանոցում և ի վերջո իջա ծառից՝ ցանկանալով ստուգել նետը և պարզել, թե ինչպիսի հարված է եղել: Դժբախտաբար, արյան շատ քիչ հետք կար նետի և գետնի վրա:

Ես մի փոքր վրդովվեցի իմ կրակոցից, բայց գիտեի, որ եղջերուն իջևանելու էր թփուտներում և չէի ցանկանում նրան հանել այնտեղից: Նախկինում ես կրակել էի եղջերուների, որոնք շատ քիչ արյան հետք էին թողել, և գիտեի, որ լավագույն բանը թույլ տալն է, որ նրանք որոշ ժամանակով նստեն: Ուստի վերադարձա տուն, ավարտեցի նախաճաշը, բոլորին պատմեցի կատարվածը, այնուհետև տղաներիս ասացի, որ նրանց օգնության կարիքն

ունեմ, որպեսզի քայլենք դաշտով և փորձենք գտնել եղջերուին: Հուսով էի, որ եղջերուն ավելի լավ էր խոցվել, քան նետը ցույց էր տալիս, և հնարավոր է, որ այն արդեն սատկած լիներ: Բայց գիտեի, որ միշտ կա հավանականություն, որ ես ցածր էի հարվածել, և եղջերուն պարզապես վիրավորվել էր:

ԱՅՈ՛, ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴՔԱՆ ՀՍՏԱԿ Է: ՈՉ ՈՔ ԵՐԲԵՎԷ ՉԷՐ ԱՍԵԼ ԻՆՁ, ՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է ԱՅԴՊԵՍ, ՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴՔԱՆ ՀՍՏԱԿ Է, ԵՎ ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ԱՅԴՊԻՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ:

Մի քանի ժամ սպասելուց հետո երեքով դուրս եկանք և տարածվեցինք դաշտի երկայնքով: Աղեղս պատրաստ պահել էի՝ անհրաժեշտության դեպքում կրակելու համար: Հանկարծ դաշտի հեռավոր մասում Թիմը խրտնեցրեց եղջերուին: Նա չէր տեսել ինձ և վազում էր իմ ուղղությամբ: Վազելիս հանկարծ նկատեց Թոմին և կանգ առավ, որպեսզի հասկանար, թե որ ճանապարհով գնար:

Եղջերուն 60-65 մետր հեռավորության վրա էր, ինչը չափազանց հեռու էր այդ օրերին գործածվող ցածր ուժ ունեցող արբալետից կրակոց արձակելու համար, բայց ես գիտեի, որ դա իմ միակ հնարավորությունն էր: Ես անմիջապես բարձրացրի աղեղը, նշան դրեցի եղնիկի գլխավերևին և արձակեցի նետը: Ի զարման ինձ՝ նետը թռավ դեպի եղջերուն և խոցեց վիզը: Նա իջավ բլրից և անհետացավ տեսադաշտից: Ես ցնցված էի. մ՛այ քեզ բան: Մենք դանդաղ շարժվեցինք այն ուղղությամբ, որ եղջերուն վազեց, և տեսա նրան՝ գետնին պառկած՝ մեզնից գրեթե 91 մետր հեռու: Նա գլուխը վերև էր պահել, բայց չէր տեսել մեզ, ուստի մենք հետ գնացինք և որոշեցինք վերադառնալ ավելի ուշ:

Ավելի ուշն իրականում շատ ուշ էր, քանի որ իմ առջևում մի ամբողջ օր կար, որ պիտի անցկացնեի եկեղեցում, և ես չկարողացա վերադառնալ տուն՝ նախքան մութն ընկնելը: Թիմն ու ես վերցրինք լապտերը և վերադարձանք այնտեղ, որտեղ թողել էինք

եղջերուին: Մենք գտանք նրան մի քանի մետր հեռու այնտեղից, որտեղ եղել էր: Ես արագ նայեցի եղջյուրներին, և իմ առջև պառկած էր յոթճյուղանի եղջերու: Ես ապշած նայում էի նրան: Թիմն ու ես շնորհակալություն հայտնեցինք Աստծուն եղջերուի համար, և մինչ նրան քարշ էինք տալիս տուն, մենք խոսում էինք Թագավորության և հենց նոր պատահածի մասին:

Այո՛, Թագավորությունն այդքան հստակ է: Ոչ ոք երբևէ չէր ասել ինձ, որ Թագավորությունը գործում է այդպես, որ Թագավորությունն այդքան հստակ է, և մենք ունենք այդպիսի իշխանություն:

Եվս մեկ բացահայտում

Հիշում եմ եղնիկների մեկ այլ որսորդություն, երբ սերմ էի ցանել երիտասարդ եղջերուի համար: Երիտասարդ եղջերուն մեկ տարեկան եղջերուն է, որն ունի շատ փոքր կոտոշներ: Քանի որ կոտոշներն այդքան փոքր են, երիտասարդ եղջերուն հեռվից կարող է նման լինել եղնիկի: Այս պատճառով երիտասարդ եղջերուները համարվում են եղնիկներ Օհայոյի նահանգում: Խնդրում եմ, ուշադրություն դարձրեք, որ դրանք եղնիկի ձագեր չեն: Դրանք այնքան մեծ չեն, որքան հասուն եղնիկը, բայց գրեթե նման են նրանց:

Այսպիսով՝ այդ օրը ես գտնվում էի իմ դիտանոցում, երբ հայտնվեց ինը կամ տասը եղջերուից կազմված մի խումբ: Նրանք մի փոքր դուրս էին իմ աղեղի հեռահարության սահմաններից, սակայն դանդաղորեն մոտենում էին ինձ: Հանկարծ հարևանը միացրեց իր մոտոամենագնացի շարժիչը: Այդ ձայնից ամբողջ հոտը սկսեց հեռանալ ինձնից: Ես ասացի բարձրաձայն. «Երիտասա՛րդ եղջերու, ես հրամայո՛ւմ եմ քեզ, որ վերադառնաս և կանգնես իմ ծառի տակ»: Պատկերացրե՛ք տեսարանը: Հնձած եգիպտացորենի դաշտ, և ինը եղջերուները հեռանում են ինձնից: Իմ խոսքից մի եղջերու թողնում է հոտը, շարունակում է շրջանաձև հետ վազել, գալիս է ուղիղ իմ դիտանոցի տակ և կանգ է առնում: Ես նրան տարա տուն. այո՛, նա երիտասարդ եղջերու էր:

Սա մի բան էր, որ ես շարունակ տեսնում էի: Ավելի ուշ առավել

մանրամասն կքննարկեմ այն մասին, թե որքան անհավատալիորեն մանրակրկիտ և հստակ է Թագավորությունը, բայց այս պահին գիտակցենք, որ ինչ-որ անհավանական բան է կատարվում այստեղ:

Թագավորությունը փոխեց մեր կյանքը, և մենք չէինք կարող չպատմել մարդկանց այդ մասին: Մենք այնքան շատ պատմություններ ունենք և այնքան շատ բան ենք տեսել: Տեսել ենք, թե ինչպես են մահացածները կյանք վերադառնում, ուռուցքներն ակնթարթորեն անհետանում, ականատես ենք եղել ֆինանսական, ազատագրման և ուղղորդման զարմանալի պատմությունների: Փափագելով մարդկանց պատմել Աստծո Թագավորության Բարի լուրը՝ Դրենդան ու ես առաջնորդություն զգացինք 1995 թվականին հիմնել «Հավատքի կյանք» եկեղեցին, որպեսզի մարդկանց օգնեինք հասկանալու, թե ինչ է Թագավորությունը: Այնուհետև, 2006 թվականին Աստված ուղղորդեց մեզ մեկնարկելու «Հավատքի կյանք՝ հիմա» մեդիա ծառայությունը, որն ամեն օր հեռարձակում է մեր հեռուստատեսային ծառայությունը երկրագնդի բոլոր ժամային գոտիներում: Մենք հայտնաբերեցինք, որ ամենուրեք մարդիկ ցանկանում են իմանալ, թե ինչպես ապրեն ազատության և հաղթանակի այս թագավորական ապրելակերպով:

Աստծո Թագավորությունը գործում է յուրաքանչյուրի համար

Երբ այս առավոտ նստեցի՝ գրելու այս գլուխը, ստուգեցի իմ էլեկտրոնային նամակները: Ամեն օր մենք էլեկտրոնային նամակներ ենք ստանում մարդկանցից, որոնք պատմում են, թե ինչպես է Աստծո Թագավորությունը փոխում իրենց կյանքը: Մտածեցի, որ ձեզ մասնակից դարձնեմ իմ օրվան, քանի որ այս նամակը եկավ ընդամենը մի քանի րոպե առաջ:

> *«Ո՞վ եմ ես, որ Դու հիշում ես ինձ: Տարիներ առաջ* ես սկսեցի լսել ձեր ուսմունքները և այդ ժամանակվանից հրաշքների ականատես եմ: Ես տեսել եմ բժշկություն-

ներ և ֆինանսական հրաշքներ: Հենց հիմա իսկապես ցնցվում եմ, երբ նայում եմ շուրջս և տեսնում Նրա բարությունը: Տեսնում եմ կարիքավոր մարդկանց և դռներ, որոնք բաց են Ավետարանի ու ճշմարտության համար: Տեսնում եմ դռներ, որոնք բաց են ճշմարտության համար: Եվ ինձ ցնցում է այն, որ իմ գանձարանները լիքն են: Նա հարստացրել է ինձ, որպեսզի ես կարողանամ տալ, որպեսզի ուրիշները կարողանան տեսնել Իրեն: Ես սեփական գործով զբաղվող տնային տեսուչ եմ: Պարբերաբար սովորեցնում եմ երիտասարդ տեսուչների և հիմնել եմ քրիստոնյաների գործարար խումբ, որտեղ խոսում ենք առատաձեռն լինելու և հաջորդ սերնդին բարձրացնելու մասին... այն մասին, որ Թագավորության ճանապարհը մրցակցությունը չէ, այլ՝ առատությունը: Ամենայն լրջությամբ, ձեր ուսմունքները փոխել են իմ կյանքը, և այժմ դրանք փոխանցվում են ուրիշներին, և քանի որ Նա հաստատեց ինձ, այժմ ուրիշները լսում և տեսնում են Նրա փառքը: Այնքան խոնարհեցնող է տեսնել, թե ինչ է Նա արել, և ինչպես է Նա շարունակում մատակարարել: Շնորհակալությո՛ւն ձեր ծառայության համար»:

Խոնարհաբար՝ Բ.Ֆ.
Նոքսվիլ, Տենեսի

Այսպիսի նամակներ մենք ստանում ենք ամեն ժամանակ: Բայց նաև բազմաթիվ հարցեր ենք ստանում Թագավորության գործունեության վերաբերյալ: Մարդիկ հարցնում են, թե ինչպես գործեն Թագավորության մեջ և ինչպես տեսնեն այն բաները, որ տեսել ենք Դրենդան ու ես: Դա է այս գրքի նպատակը, որը չորրորդն է իմ՝ «Ձեր ֆինանսական հեղափոխությունը» գրքաշարում: Եթե ունեք իմ մյուս գրքերը, ապա գիտեք, որ մինչև այս պահը ես որոշ ժամանակ հատկացրի՝ վերանայելու մի քանի կարևոր գաղափարներ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուրին, որ ցանկանում է գործել Թագավորության մեջ:

Բայց այժմ ուզում եմ մի փոքր խորամուխ լինել Թագավորության գործունեության մեջ և հուսով եմ, որ կօգնեմ ձեզ ավելի լավ

հասկանալու, թե ինչպես ապրեք Թագավորության մեջ՝ ունենալով արդյունքներ: Ուզում եմ սկսել՝ շարադրելով, ինչպես ես եմ անվանում, հինգ հիմնական քայլերը՝ Աստծո Թագավորությունից անհրաժեշտ մատակարարում ստանալու համար: Դրանք այն քայլերն են, որոնք Աստված սովորեցրեց ինձ:

Հինգ հիմնական քայլերը՝ ձեզ անհրաժեշտ մատակարարումը ստանալու համար.

Սկսենք Մարկոսի 8.14-21 խոսքերում շարադրված պատմությունից.

> *«Եվ մոռացան հաց վեր առնել և մեկ հացից ավելի չունեին իրենց հետ նավի մեջ: Եվ նրանց պատվիրում էր և ասում. «Զգո՛ւյշ կացեք փարիսեցիների խմորից և հերովդեսեանների խմորից»:*
>
> *Եվ իրար հետ միտք էին անում և ասում. «Որովհետև հաց չունենք»:*
>
> *Եվ Հիսուսը, իմանալով, ասաց նրանց. «**Ինչ եք միտք անում, թե հաց չունեք**. տակավին չե՞ք իմանում և չե՞ք հիշում: Տակավին թմրա՞ծ է ձեր սիրտը: Աչք ունեք և չե՞ք տեսնում, և ականջ ունեք և չե՞ք լսում և **չե՞ք հիշում**: Երբ որ այն հինգ հացը այն հինգ հազարի համար կտրեցի, քանի՞ կողով լիքը վեր առաք նրա կտորները»:*
>
> *Եվ Նրան ասացին՝ տասներկու:*
>
> *«Եվ երբ որ յոթ հացը չորս հազարի համար, քանի՞ զամբյուղ լիքը վեր առաք նրա կտորները»:*
>
> *Եվ նրանք ասացին՝ յոթ:*
>
> *Եվ նրանց ասաց. «Ապա ինչպե՞ս չեք իմանում»»:*
>
> – Մարկոս 8.14-21

Ըստ էության, Հիսուսն ասում էր. «Հե՛յ, տղանե՛ր, չե՞ք հիշում: Մենք արդեն անդրադարձել ենք սրան, և դուք տեսաք, թե ինչպես անցյալում լուծեցինք հացի պակասության հարցը»: Բայց աշակերտները չէին կարողանում տեղավորել այս ամենն իրենց

գլխում: Ուստի Հիսուսն ասաց, որ նրանք մտաբերեն այն, ինչ կատարվեց անցյալում: Նա նրանց կարևոր հուշում էր տալիս: «Մտածե՛ք, թե վերջին անգամ ինչպես վարվեցինք նման իրավիճակում, և դուք կգտնեք պատասխանը»: Կարծում եմ՝ սա նաև մեր պատասխանն է: Այո՛, մենք տեսանք, որ հացն ու ձուկը բազմացան, յուրաքանչյուրը կարող է տեսնել դա, բայց, որպես հոգևոր գիտնականներ, մենք ցանկանում ենք ավելի խորը նայել: Ինչպե՞ս դա պատահեց: Վերադառնանք այն պատմություններին, որոնք վկայակոչում էր Հիսուսը, և փնտրենք բանալիներ:

> *«Եվ երբ որ արդեն շատ ժամանակ էր անցել, Նրա աշակերտները մոտ եկան և ասացին. «Այս տեղը անապատ է, և ժամանակն էլ արդեն ուշ: Արձակի՛ր դրանց, որ չորս կողմի շեները և գյուղերը գնան, իրենց համար հաց առնեն, որովհետև այստեղ ուտելու բան չունեն»:*
>
> *Նա էլ պատասխանեց և նրանց ասաց. «Դո՛ւք կերակրեք նրանց»: Նրանք էլ ասացին Նրան. «Գնա՞նք երկու հարյուր դահեկանի հաց առնենք և դրանց տանք, որ ուտեն»:*
>
> *Նա էլ նրանց ասաց. «Քանի՞ հատ հաց ունեք. գնացե՛ք և տեսե՛ք»: Երբ որ իմացան, Նրան ասացին. «Հինգ և երկու ձուկ»:*
>
> *Եվ հրամայեց նրանց, որ ամենքը գունդ-գունդ կանաչ խոտի վրա նստեն: Եվ դաս-դաս նստեցին, հարյուր-հարյուր և հիսուն-հիսուն: Եվ այն հինգ հացը և երկու ձուկն առած դեպի երկինքը նայեց, օրհնեց, կտրեց հացերը և Իր աշակերտներին տվեց, որ գցեն նրանց առջև, և այն երկու ձուկը բաժանեց ամենին: Եվ ամենքը կերան և կշտացան և փշրանքներից տասներկու կողով լիքը վեր առան, և ձկներից էլ: Եվ հացը ուտողները հինգ հազարի չափ մարդիկ էին»:*
>
> – Մարկոս 6.35-44

Համոզված եմ, որ աշակերտները ցնցվեցին, երբ Հիսուսին խնդրեցին, որ մարդկանց ուղարկի՝ ուտելիք գտնելու, իսկ Նա շրջվեց նրանց կողմը և ասաց. «Դո՛ւք կերակրեք նրանց»: Նրանք,

ՀԻՍՈՒՍԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԷՐ ՀԱՄՈԶՎԱԾ ԼԻՆԵԼ, ՈՐ ՆՐԱՆՔ ԿԻՄԱՆԱՆ, ԹԵ ԿՅԱՆՔՈՒՄ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵՆ ԱՅԼ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ՝ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ:

ըստ էության, հինգ հազարից ավելի էին: Աստվածաշունչն ասում է, որ այնտեղ 5.000 տղամարդ կար, ուստի ես կարող եմ ենթադրել, որ այնտեղ կային նաև կանայք և երեխաներ, և մարդկանց ընդհանուր թիվը կարող էր հասնել 15.000-20.000-ի: Կարծում եմ՝ յուրաքանչյուրը կհամաձայնի, որ պետք էր կերակրել մեծաքանակ ժողովրդի, այն էլ՝ առանց նախապես զգուշացման կամ նախապատրաստման:

Իհարկե, ես հավատում եմ, որ Հիսուսին հետաքրքրում էր մարդկանց կերակրելը, բայց կարծում եմ, որ այս իրավիճակում Նա ավելի շատ մտադիր էր կրթել Իր աշակերտներին: Ահա թե ինչու Նա ասաց. «Դո՛ւք կերակրեք նրանց»: Նրանք տեսել էին, որ Հիսուսը բազմաթիվ հրաշքներ էր անում, իսկ հիմա նրանց հերթն էր: Վերջին հաշվով, մոտ ապագայում Նա հեռանալու էր, և Հիսուսը ցանկանում էր համոզված լինել, որ նրանք կիմանան, թե կյանքում ինչպես վարվեն այլ տեսանկյունից՝ Թագավորության տեսանկյունից:

Քայլ 1. Ի՞նչ ունեք:

«Նա էլ նրանց ասաց. «Քանի՞ հատ հաց ունեք. գնացե՛ք և տեսե՛ք»:

Երբ որ իմացան, Նրան ասացին. «Հինգ և երկու ձուկ»»:

Ահա կարևոր բանալի: Հիսուսը չասաց. «Եկեք քարերը հաց դարձնենք»: Դա հոգևոր առումով անօրինական կլիներ: Փոխարենը՝ Նա հարցրեց, թե ինչ նրանք արդեն ունեն: Մասնավորապես, Նա հարցնում էր, թե որքան արդեն ունեն այն բանից, ինչ իրենց անհրաժեշտ էր: Նա գիտեր, որ չկար բավականաչափ հաց և ձուկ՝ այդ բազմությանը կերակրելու համար, և դա չէր Նրա հարցի

նպատակը: Բնական տեսանկյունից այդ մարդկանց կերակրելու ամբողջ հեռանկարը խելացնորություն էր թվում: Աշակերտներն, առանց նայելու, գիտեին, որ որտեղ էլ փնտրեին, չէին կարողանա գտնել բավականաչափ ուտելիք՝ 20.000 մարդու կերակրելու համար: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ էին նրանք մտածում, երբ Հիսուսն ասաց, որ գնան և տեսնեն, թե որքան հաց ու ձուկ կա, իսկ հետո վերադառնային և ասեին, որ կարողացել են գտնել ընդամենը հինգ հաց և երկու ձուկ: Խելացնորություն է, այդպես չէ՞:

Թույլ տվեք ավելի լայն հայացք նետել այս խոսակցությանը: Որպես հովիվ՝ անցյալում ես օգնել եմ ընտանիքների, որոնք ծանր ֆինանսական վիճակում են հայտնվել: Օգնել եմ ամսվա հիփոթեքը, տան վարձավճարը, կոմունալ հաշիվները փակելու և վճարելու կամ մթերքներ գնելու հարցում: Բայց ենթադրենք՝ ես գիտեի, որ իրական պատասխանը նրանց նյութապես օգնելը չէր, այլ՝ Թագավորությունը:

Մեր խոսակցությունը մոտավորապես կլիներ այսպիսին. «Հովի՛վ Գարի, այս ամիս մեր միջոցները սուղ են եղել, և շուտով մեզ տնից կվտարեն: Կարո՞ղ է եկեղեցին օգնել մեզ»: «Իհա՛րկե, ես կարող եմ օգնել ձեզ: Ահա՛ իմ խորհուրդը: Պարզապես ամբողջությամբ մարե՛ք տան գումարը և այլևս չեք անհանգստանա որևէ վճարման համար»: Նրանք կնայեն ինձ և կասեն. «Հովի՛վ, չեմ կարծում, որ դուք հասկանում եք: Մենք չունենք փող տան հաջորդ ամսվա վճարումը կատարելու համար, ուր մնաց՝ ամբողջությամբ մարենք այն»: «Գիտեմ,- կպատասխանեմ ես,- այդ է պատճառը, որ ասացի ձեզ մարել տան գումարը, որպեսզի չունենաք տան համար վճարելու կարիք»:

Այնուհետև, եթե նրանց խնդրեի գնալ և տեսնել, թե որքան փող ունեն տան գումարը մարելու համար, նրանք իսկապես կմտածեին, որ ես ցնորված եմ: Բայց ի՞նչ կլիներ, եթե, հնազանդվելով ինձ, գնային, նայեին և վերադառնային ու ասեին. «Մենք կրկնակի ստուգեցինք: Հովի՛վ, այն ամենը, ինչ կարողացանք գտնել, 20 դոլար է, բայց հիփոթեքի հաշվեկշռում 360.000 դոլար է»: Կարծում եմ, հասկանում եք: Նրանք կմտածեին, որ խելքս կորցրել եմ, ճի՞շտ է:

Ահա թե ինչպես պետք է զգային աշակերտներն այդ օրը. նրանք բոլորովին շփոթված էին. հինգ հացով և երկու ձկով կերակրել 20.000 մարդո՞ւ:

ԻՆՉ ՑԱՆՈՒՄ ԵՔ, ԱՅՆ ԷԼ ՀՆՁՈՒՄ ԵՔ

Նախքան այս պատմության մեջ խորամուխ լինելը՝ պետք է մի պահ շեղվեմ, որպեսզի հայտնեմ Թագավորության մեկ այլ օրենք, որը շուտով երևան կգա: Հացից հաց է բազմանում, և ձկից՝ ձուկ: Այնպես որ՝ գրի՛ առեք սա:

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԲԱՑ ԹՈՂՆԵՔ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈՐՈՇ ՄԱՍ ԱՅՆ ԲԱՆԻՑ, ԻՆՉԻ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՔ, ՈՐՊԵՍԶԻ ԱՅՆ ԲԱԶՄԱՆԱ:

Բերենք մեկ այլ օրինակ Աստվածաշնչում, այնուհետև ես կվերադառնամ Մարկոսի 6-րդ գլխի մեր պատմությանը: Բացենք Դ Թագավորաց 4.1-7-ը:

> *«Եվ մարգարեների որդիների կանանցից մեկն աղաղակեց դեպի Եղիսեն՝ ասելով. «Ծառադ՝ իմ մարդը, մեռել է, և դու գիտես, որ ծառադ երկյուղած էր Տիրոջից: Բայց պարտատերը եկել է, որ իմ երկու երեխաներին իր համար ծառաներ անի»:*
>
> *Եվ Եղիսեն ասաց նրան. **«Ես քեզ ի՞նչ անեմ: Ասա՛ ինձ՝ ի՞նչ ունես տանդ»:***
>
> *Եվ նա ասաց. «Աղախինդ իր տանը ամենևին ոչինչ չունի՝ բացի մի յուղի ամանից»:*
>
> *Եվ նա ասաց. «Գնա՛ դրսից՝ քո բոլոր դրացիներից, դատարկ ամաններ ուզի՛ր. քիչ չհավաքես: Եվ տունդ մտի՛ր ու դուռը քո ետևից և քո որդիների ետևից կողպի՛ր և յուղը լցրո՛ւ այն բոլոր ամանների մեջ և լցվածները վե՛ր առ»:*
>
> *Եվ կինը գնաց նրա կշտից և դուռը կողպեց իր ետևից և իր որդիների ետևից: Նրանք իրեն ամաններ էին տալիս, և նա լցնում էր: Եվ երբ որ ամանները լցվեցին, ասաց իր*

փղային. «Էլ ման փուր ինձ», և նրան ասաց. «Էլ ման չկա»: Եվ յուղը դադարեց:

Եվ կինը եկավ ու պատմեց Աստծո մարդուն: Նա էլ ասաց. «Գնա՛, յուղը ծախի՛ր և պարտքդ վճարի՛ր և մնացածով ապրի՛ր դու և տղաներդ»»:

– Դ Թագավորաց 4.1-7

Ուշադրությո՛ւն դարձրեք, որ մարգարեն չասաց. «Լա՛վ, գնանք գանձարան և տեսնենք, թե ինչ ունենք»: Ո՛չ, նա ավելի լավ ճանապարհ գիտեր այս հարցը լուծելու համար: Նա ասաց. «Ես քեզ ի՞նչ անեմ»: Կինը, հնարավոր է, մի փոքր շփոթվեր ու պատասխաներ. «Դու ինձ ի՞նչ անես. ես փողի կարիք ունեմ»: Բայց մարգարեն չէր փորձում նվաստացնել նրան: Նա շատ կարևոր հարց էր տալիս, որը, գիտեր, որ կօգներ կնոջը՝ գտնելու իր պատասխանը: Նույն հարցը կօգնի նաև ձեզ՝ գտնելու ձե՛ր պատասխանը:

«Ես քեզ ի՞նչ անեմ: Ասա՛ ինձ՝ ի՞նչ ունես տանդ»:

Ի՞նչ ունես

Ի՞նչ ունես տանդ: Համոզված եմ, որ նա մի փոքր ցնցված էր այդ հարցից, քանի որ արդեն բացատրել էր, թե ինչու էր այնտեղ:

«Աղախինդ իր տանը ամենևին ոչինչ չունի՝ բացի մի յուղի ամանից»:

Ուշադրությո՛ւն դարձրեք նրա շեշտադրմանը. «ամենևին՝ ոչինչ»: Բայց իսկապե՞ս նա ոչինչ չուներ:

Ո՛չ, նրա պնդումը տեխնիկապես ճիշտ չէր: Նա ասաց, որ մի յուղի ման ունի: Ահա՛: Դա այն ամենն էր, ինչ մարգարեն ուզում էր պարզել:

Եվ դա այն է, ինչ պետք է հարցնեք ինքներդ ձեզ: Աստծուն անհրաժեշտ է ձեր օրինական իրավասության ներքո գտնվող որևէ բան, որով Նա կարող է աշխատել:

Ամփոփենք առաջին քայլը: Ձեզ անհրաժեշտ կլինի տալ Աստծուն որոշ մաս նրանից, ինչի կարիքն ունեք: Երբ ինչ-որ բան տալիս եք Աստծո Թագավորությանը, փոխվում է իրավասությունը, և

այն դրվում է Աստծո օրինական իշխանության ներքո, որպեսզի կարողանա բազմանալ: Հիշենք, որ բազմանալ միգուցե չնշանակի այն, ինչ տեսանք այս պատմության մեջ, այսինքն՝ ձեր հացը, պահարանում դրված, ինքն իրեն բազմանա, թեև ես տեսել եմ նման բան: Բայց, սովորաբար, Աստված ճանապարհ կհարթի հացի բազմացման համար այլ մարդկանց հետ փոխգործակցության միջոցով: Ինչ-որ մեկը կարող է առատաձեռն լինել ձեր հանդեպ, կամ, հնարավոր է, առաջխաղացում ունենաք աշխատանքում, կամ էլ անսպասելի փոխհատուցում ստանաք: Կան անթիվ միջոցներ, որոնցով Աստված կարող է բազմացնել ձեր հացը:

Դուք կարող եք անուն տալ ձեր փողին

Ցանկանում եմ մատնանշել մի շատ կարևոր կետ փողի վերաբերյալ:

Փողը կարող է օգտագործվել որպես սերմ ցանկացած բանի համար:

ԵՐԲ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ՏԱԼԻՍ ԵՔ ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ, ՓՈԽՎՈՒՄ Է ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԱՅՆ ԴՐՎՈՒՄ Է ԱՍՏԾՈ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ, ՈՐՊԵՍԶԻ ԿԱՐՈՂԱՆԱ ԲԱԶՄԱՆԱԼ:

Դուք անուն եք տալիս փողին յուրաքանչյուր օր՝ ամեն անգամ, երբ ինչ-որ բան եք գնում: Օրինակ, երբ մթերային խանութում եք և հաց եք գնում, ձեր փողը փոխանակում եք այդ հացի հետ կամ, իրականում, ձեր փողն անվանում եք «հաց»: Քննենք ասածս: Եթե հացի կարիք ունեք, դուք արդեն գիտեք Թագավորության օրենքներից մեկը, որ կոչվում է ցանելու և հնձելու օրենք: Կիրառելով այդ օրենքը՝ դուք գիտեք, որ եթե հաց ցանեք, հաց էլ կստանաք: Բայց ենթադրենք՝ հացի կարիք ունեք, սակայն չունեք հաց՝ ցանելու համար: Ի՞նչ կանեք: Դուք կարող եք ցանել փող և ցանելիս անվանել այն հաց: Հիշե՛ք, փողը պարզապես ապրանքափոխանակ-

ման միջոց է: Ամեն օր մենք անուն ենք տալիս փողին այն ամենի համար, ինչի կարիքն ունենք՝ սկսած կաթից ու վարձակալությունից մինչև կոշիկներ ու սնունդ: Այնպես որ՝ դուք կարող եք անուն տալ փողին նաև այն ցանելիս:

Դուք կարող եք անուն տալ ձեր փողին, երբ ցանում եք

«Հավատքի կյանք» եկեղեցին, որը գտնվում է Օհայո նահանգի Նյու Ալբանի քաղաքում, այն եկեղեցին է, որ Դրենդան ու ես հիմնադրեցինք 25 տարի առաջ: Մենք կառուցեցինք «Հիմա» կենտրոնը՝ այն համալիրը, որտեղ 2008 թվականին տեղակայվեց «Հավատքի կյանք» եկեղեցին: Այն ժամանակ դա 6.5 միլիոն դոլար արժողությամբ ահռելի նախագիծ էր, որին մասնակցեց շուրջ 550 մարդ:

Վերջին 10 տարիներին մենք գերազանցել էինք շենքի թույլատրելի հնարավորությունները: Շաբաթ և կիրակի օրերին մենք կարողանում էինք տեղավորել ոչ ավելի, քան 3.000 մարդու: Յուրաքանչյուր շաբաթավերջ չորս հեռարձակվող ծառայությունն իսկապես այն ամենն էր, ինչ ես կարող էի անել: Այնպես որ՝ մենք որոշեցինք ընդլայնել մեր շենքը: Դա լինելու էր 10 միլիոն դոլար արժողության նախագիծ և հնարավորություն էր տալու մեզ աճելու՝ ավելացնելով մեր դահլիճի չափը և մանկական տարածքը: Միաժամանակ, մենք հասկացանք, որ մեզ համար խնդիր էր լինելու գումարը հավաքելու, այնուհետև շենքը կառուցելու համար անհրաժեշտ ժամանակը: Դա նշանակում էր, որ մենք պետք է սպասեինք երկուսուկես տարի, մինչև կկարողանայինք օգտագործել ավելացված տարածքը:

Այդ ամենը մտքում ունենալով՝ զգացինք, որ պետք է առաջ շարժվենք և սկսենք շենքն ընդլայնելու գործը՝ միաժամանակ փնտրելով տարածք, որը, մեր կարծիքով, կկարողանայինք շահագործել մոտավորապես վեց ամսից: Մենք համոզված էինք, որ դա որոշ չափով կնվազեցներ հիմնական շենքի վրա եղած ճնշումը, միաժամանակ հնարավորություն տալով, որ եկեղեցին աճի: Ուստի՝ մենք թիմ կազմեցինք եկեղեցու համար տարածք փնտրելու նպատակով: Ուսումնասիրեցինք ժողովրդագրական

տվյալները և կանգ առանք այն շրջանի վրա, որը, կարծում էինք, հրաշալի տեղանք կլիներ: Մենք նայում էինք տարածքները և մի քանի անգամ գրեթե հանգեցինք վերջնական որոշման, բայց երբ նստում և փորձում էինք համաձայնության գալ տվյալ տարածքի շուրջ, բոլորս համակարծիք էինք, որ ինչ-որ բան ճիշտ չէր: Մեր հոգում բոլորս արգելք էինք զգում:

Անցավ վեց ամիս, և նոր մասնաշենքի համար տարածք գտնելու գործում մենք ավելի հեռու չէինք գնացել, քան այն օրը, երբ սկսեցինք որոնումները: Պետք է ընդունեմ, որ Դրենդան ու ես մի փոքր հիասթափված էինք մեր որոնումներում: Մենք նայել էինք բոլոր հնարավոր տարբերակները մեր որոնման տարածքում և դեռևս չէինք գտնում որևէ շենք, որն իսկապես իդեալական կլիներ: Այո՛, մենք ցանել էինք մեր սերմը ճանապարհորդության սկզբում և գիտեինք, որ Աստված ուներ գերազանց շենք մեզ համար, բայց չէինք սպասում որ այսքան երկար ժամանակ կպահանջվեր դրա նյութականացման համար: Ահա հուշում. գերազանցը երբեմն ավելի երկար ժամանակ է պահանջում:

Այս ընթացքում մենք պետք է մասնակցեինք մի հեռուստամարաթոնի, որի նպատակն էր դրամ հավաքել նոր հեռուստատեսային ցանցի համար: Սա լինելու էր եռօրյա միջոցառում, որը հեռարձակվելու էր ուղիղ եթերով առավոտյան և երեկոյան: Կարծում եմ՝ երրորդ օրն էր, և ես նստած էի տաղավարում, երբ լսեցի Տիրոջ ձայնը. «Վերցրո՛ւ 100.000 դոլարի չեկ և ցանի՛ր այս հեռուստատեսային ծառայության մեջ՝ ձեր մասնաշենքի փակուղին բացելու նպատակով: Չեկը տար բոլոր չորս ծառայություններին, և թող եկեղեցին աղոթի այդ նվիրատվության համար՝ կանչելով մասնաշենքի տարածքի հարցը լուծված»: Այնուհետև Նա ասաց, որ երբ աղոթեմ, հանդիմանեմ սատանային և հրամայեմ, որ խառնաշփոթն ու ուշացումը դադարեն: Մենք արեցինք դա հաջորդ շաբաթ՝ մեր շաբաթօրյա և կիրակնօրյա ծառայություններին:

Հաջորդ օրը երկուշաբթի էր, մասնաշենքի տարածքով զբաղվող թիմն ասաց, որ անշարժ գույքի գործակալը զանգել է և տեղեկացրել, որ գտել է մի մասնավոր դպրոցական համալիր, որը

նոր էր հայտնվել շուկայում: Նրանք որոշեցին տեսնել այն: Երբ գնացին այնտեղ, գտան մի ամբողջական համալիր՝ սկսած մանկապարտեզից մինչև 12-րդ դասարան՝ ներառյալ նախակրթարանը: Այն շատ ավելի թանկ արժեր, քան մենք ցանկանում էինք ծախսել մասնաշենքի տարածքի համար, քանի որ, իրականում, մենք մտադրություն ունեինք վարձակալության տալ մեր նոր տարածքը, որպեսզի պահպանեինք դրամական հոսքը գլխավոր մասնաշենքի լրակառուցման համար: Թեև գինն այնպիսին չէր, որ մենք կարող էինք դիտարկել, այնուամենայնիվ, Դրենդան ու ես որոշեցինք երեքշաբթի առավոտյան տեսնել այդ տարածքը:

Այն, ինչ տեսանք, զարմանահրաշ համալիր էր՝ 8.268մ^2 տարածքով: Այնտեղ կար չորս շինություն, վազքուղի, մարզասրահ, թենիսի չորս դաշտ, արվեստի շենք, գիտական լաբորատորիաներ և հիմնականում այն ամենը, ինչ անհրաժեշտ կլիներ դպրոցական համալիրի համար: Պատմության անհավանական մասն այն է, որ շինությունն ամբողջությամբ կահավորված էր և պարագաներով հագեցած: Դրենդան ու ես հիացած էինք, բայց որևէ ճանապարհ չէինք տեսնում այն գնելու համար:

Այնպես պատահեց, որ այդ երեկո տեսակցություն ունեինք մեր գործընկերներից մեկի հետ՝ պարզապես միմյանց հետ հաղորդակցվելու նպատակով: Վերջին երկու ամսվա ընթացքում այս հանդիպումը հավանաբար երեք կամ չորս անգամ տեղափոխել էինք, քանի որ երկուսս էլ շատ զբաղված էինք: Բայց այդ երեկո հանդիպեցինք: Երբ նստած էինք ընթրիքի սեղանի շուրջ, մենք սկսեցինք խոսել մեր հիմնական շենքի լրակառուցման մասին: Զույգը հարցրեց, թե որքան արագ էին մեր գործերն ընթանում, և մենք նրանց պատմեցինք թույլտվության ու նախագծի հետ կապված լուրջ ուշացումների և այլ խնդիրների մասին: Մենք ասացինք, որ, ըստերևույթին, մենք չենք սկսի լրակառուցումը մինչև 2022 թվականի ավարտը կամ 2023 թվականի գարունը՝ հաշվի առնելով առաջխաղացման տեմպերը:

Նրանք անմիջապես հարցրին՝ արդյո՞ք մենք երբևէ մտածել ենք մասնաշենք ձեռք բերելու մասին, և մենք պատասխանեցինք՝ այո՛: Մենք բացատրեցինք, թե ինչ որոնումների մեջ ենք եղել վեր-

ջին վեց ամսում, բայց այդպես էլ որևէ հարմար տարածք չենք գտել: Այնուհետև պատմեցինք այն հրաշալի դպրոցի մասին, որ առավոտյան տեսել էինք՝ ասելով, որ նմանատիպ մասնաշենքը կատարյալ կլիներ, բայց այն վաճառվում էր միլիոնավոր դոլարներով:

Զույգն, այնտեղ նստած և առանց աչք թարթելու, ասաց. «Լա՛վ, իսկ եթե այն անվճար լինե՞ր»: Այդ պահին մենք իսկապես չհասկացանք, և նրանք կրկին հարցրին. «Իսկ եթե այն անվճար լինե՞ր»: Կրկին մենք մտածեցինք, թե նրանք կատակում են, բայց այս անգամ պարոնն ասաց. «Դրե՛նդա, իսկ եթե այդ համալիրն անվճար լինե՞ր»: «Ինչ նկատի ունեք»,- հարցրինք մենք: Նրանք ասացին. «Մենք չեկ կգրենք»: Մի պահ ապշած մնացինք, մինչ նստած էինք այնտեղ: Մի խոսքով՝ նրանք այդպես էլ արեցին:

Մեր մասնաշենքի համար սերմ ցանելուց երկու օր անց Աստված ուղղորդեց մեզ դեպի այդ գերազանց տարածքը: Այժմ մենք ունենք 12 միլիոն դոլարի արժողության համալիր, որի համար լիովին վճարված է: Ո՞վ երբևէ կմտածեր, կամ, անկեղծ ասած, նույնիսկ կպատկերացներ դա: Այդ տեսնելուց հետո Դրենդան ու ես համաձայնեցինք, որ չնայած այն ամենին, ինչ տեսել ենք, մենք պետք է ավելի մեծ բաների մասին մտածենք: Աստված կարող է փառահեղ բաներ անել:

Ենթադրում եմ, որ նույնը զգացին աշակերտները այն օրը, երբ 20.000 մարդ կերակրվեց հինգ հացով և երկու ձկով: Գրազ կգամ, որ նրանք գնացին քնելու՝ ասելով. «Ա՜յ քեզ բան, դուք տեսա՞ք դա»:

ԳԼՈՒԽ 5

ԼԻԱԶՈՐԵՔ ՁԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Նախորդ գլխում խոսեցինք ձեր մատակարարման համար Թագավորության օրենքը գործի դնելու առաջին քայլի մասին:

ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԲԱՑ ԹՈՂՆԵՔ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈՐՈՇ ՄԱՍ ԱՅՆ ԲԱՆԻՑ, ԻՆՉԻ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՔ, ՈՐՊԵՍԶԻ ԱՅՆ ԲԱԶՄԱՆԱ:

Այն ժամանակ ես ասացի, որ կպատասխանեմ մի քանի հարցերի, որոնք վերաբերում են այս պնդմանը, և դրանցից առաջինը սա է. «Ի՞նչ է նշանակում Թագավորության մեջ բաց թողնել ինչ-որ բան, որպեսզի այն բազմանա»:

Կրկին, վերադառնանք Մարկոսի 6-րդ գլխում գրված մեր պատմությանը՝ որոշ պատկերացում կազմելու համար:

«Եվ երբ որ արդեն շատ ժամանակ էր անցել, Նրա աշակերտները մոտ եկան և ասացին, թե. «Այս տեղը անապատ է, և ժամանակն էլ արդեն ուշ: Արձակի՛ր դրանց, որ չորս կողմի շեները և գյուղերը գնան, իրենց համար հաց առնեն, որովհետև այստեղ ուտելու բան չունեն»:

Նա էլ պատասխանեց և նրանց ասաց. «Դո՛ւք կերակրեք նրանց»: Նրանք էլ ասացին. «Գնա՞նք երկու հարյուր դահեկանի հաց առնենք և նրանց տանք, որ ուտեն»:

Նա էլ նրանց ասաց. «Քանի՞ հաց ունեք: Գնացե՛ք և տեսե՛ք»:

Երբ որ իմացան, Նրան ասացին. «Հինգ հաց և երկու ձուկ»:

Եվ հրամայեց նրանց, որ ամենը գունդ-գունդ կանաչ խոտի վրա նստեն: Եվ դաս-դաս նստեցին՝ հարյուր-հարյուր և հիսուն-հիսուն: Եվ այն հինգ հացը և երկու ձուկն առած դեպի երկինքը նայեց, օրհնեց, կտրեց հացերը և Իր աշակերտներին տվեց, որ գցեն նրանց առջև, և այն երկու ձուկը բաժանեց ամենին: Եվ ամենը կերան և կշտացան և փշրանքներից տասներկու կողով լիքը վեր առան, և ձկներից էլ: Եվ հացը ուտողները հինգ հազարի չափ մարդիկ էին»:

– Մարկոս 6.35-44

Ցանկանում եմ՝ այս պատմության մեջ ուշադրություն դարձնեք մի քանի բանի, որոնք միգուցե չեք նկատում: Երբ Հիսուսն ասաց՝ դո՛ւք կերակրեք նրանց, նրանց պատասխանը և Հիսուսի արձագանքը ցույց են տալիս կարևոր բանալիներից մեկը մատակարարման հարցում Թագավորությունը հասկանալու համար: Նրանք պատասխանեցին, որ այդքանին կերակրելու համար ավելի քան կես տարվա աշխատավարձ է հարկավոր: Ուշադրություն դարձրեք, որ բախվելով այդ խնդրին, նրանք մտովի իրենց անհրաժեշտ մատակարարումը կապեցին աշխատանքի հետ: Փաստն այն է, որ բոլորս ենք այդպես անում: Բայց ժամերի դիմաց դոլարներ ստանալու մտածելակերպը միշտ չէ, որ եղել է մարդու գիտակցության մեջ: Այն ի հայտ եկավ Ադամի հետ՝ մեղանչման ժամանակ: Մենք պետք է վերադառնանք Ադամի մեղանչման պատմությանը, որտեղ կարող ենք հստակ տեսնել, թե ինչպես դա տեղի ունեցավ:

Ժամերի դիմաց դոլարներ ստանալու մտածելակերպ

«Եվ Ադամին ասաց. «Որովհետև դու լսեցիր քո կնոջ խոսքին և կերար այն ծառից, որի համար պատվիրեցի քեզ՝ ասելով՝ նրանից չուտես, անիծյա՛լ լինի երկիրը քո պատճառով, նեղությունով ուտես նրանից կյանքիդ բո-

լոր օրերում: Եվ նա փուշ ու տատասկ բուսցնի քեզ համար, և դաշտի խոտն ուտես: Երեսիդ քրտինքով հաց ուտես, մինչև որ եր դառնաս դեպի երկիրը, որովհետև նրանից առնվեցիր. նրա համար, որ հող էիր դու և դեպի հողը դառնաս»»:

– Ծննդոց 3.17-19

Եթե հիշում եք, Ադամն ու Եվան դրվեցին երկրի վրա, որպեսզի իշխեն Աստծո Թագավորության անունից: Նրանք իշխում էին լիազորված իշխանությամբ: Սատանան, որ արդեն երկրի վրա էր, արհամարհում էր նրանց և տենչում էր այն իշխանությանը, որ նրանք ունեին: Թեև Ադամն ու Եվան ունեին լիակատար իշխանություն նրա վրա, նա կարողացավ խաբել նրանց՝ հավատացնելով, որ Աստված նրանց կողմից չէ և արժանի չէ վստահության: Նա առաջարկեց նրանց ավելի լավ թվացող ապագա, ուստի նրանք որոշեցին Աստծո փոխարեն հետևել նրան: Ապստամբության պատճառով նրանք կորցրին իրենց օրինական դիրքն Աստծո Թագավորության մեջ և, ըստ էության, հեռացրին Աստծուն իրենց կյանքից՝ օրինական իրավասություն տալով սատանային ամբողջ երկրային տիրույթում, քանի որ այն ենթակա է մարդկությանը: Պողոսը Բ Կորնթացիներում սատանային անվանում է այս աշխարհի աստվածը:

«Որոնցում այս աշխարհի աստվածն այն անհավատների սրտերը կուրացրեց, որ Քրիստոսի փառավոր Ավետարանի լուսավորությունը չծագի նրանց վրա, որ աներևույթ Աստծո պատկերն է»:

– Բ Կորնթացիների 4.4

Բախվելով Ադամի մեղքին՝ Աստված նրան ասում է. «Անիծյա՛լ լինի երկիրը քո պատճառով, նեղությունով (կամ՝ «տանջալի աշխատանքով») ուտես նրանից կյանքիդ բոլոր օրերում»: Այնուհետև ասվում է. «Երեսիդ քրտինքով հաց ուտես»:

Աստված Ադամին ասում է, որ նրա ապստամբության պատճառով երկիրը պտուղ չի տա այնպես, ինչպես տալիս էր անց-

յալում: Այժմ Աստծո ձեռքերը կապված են, և Ադամը ստիպված կլինի կյանքում ինքնուրույն ճանապարհ անցնել սեփական քրտինքով և տանջալի աշխատանքով: Խնդրում եմ, ուշադրություն դարձրեք, որ Ադամն էր, որ անիծեց երկիրը, ոչ թե Աստված: Ադամն ուներ լիակատար օրինական իրավասություն երկրի վրա, և երբ նա ապստամբեց Աստծո դեմ, Աստծո օրինությունը հարկադրված հետ քաշվեց: Այս է պատճառը, որ Աստված ասում է Ադամին. **«Անիծյա՛լ լինի երկիրը քո պատճառով»:** Պարտեզը, որտեղ Ադամը ստեղծված էր ապրելու, որը լի էր մատակարարմամբ, այլևս չկար: Նախքան ապստամբությունը՝ Ադամը երբեք չէր մտածել կամ չէր մտահոգվել մատակարարման համար. ամենուրեք առատ մատակարարում էր: Բայց այժմ նա ստիպված էր գտնել իր մատակարարումը տանջալի աշխատանքի և քրտինքի միջոցով: Ես սա անվանում եմ տանջալի աշխատանքի և քրտինքի համակարգ:

Այժմ անհրաժեշտ էր տանջալի աշխատանք և քրտինք՝ մատակարարում ստանալու համար:

Երկիրը միակ բանը չէր, որ փոխվեց: Փոխվեցին Ադամը և ամբողջ մարդկությունը: Ադամը կորցրեց իր ինքնությունը, նպատակը և մատակարարումը և դարձավ գոյատևման գերի: Այսպես ենք նաև մեծացել մենք՝ տանջալի աշխատանքի և քրիտինքի համակարգի ներքո:

Յուրաքանչյուր որոշում այս երկրային անեծքի համակարգում կապված է գոյատևման հետ և սովորաբար պտտվում է փող հայթայթելու կամ փողային հարցեր լուծելու շուրջ: Մեզ անհրաժեշտ մատակարարում գտնելու հոգսն իշխում է մեր մտքում և կյանքում: Մեր ինքնությունը, որը ժամանակին յուրահատուկ կերպով նախագծվել էր Աստծո կողմից՝ երկրի վրա մեր նպատակների և առաջադրանքների համար, առևանգվել է և փոխարինվել գոյատևման համար անհրաժեշտ գումար հայթայթելու և հաջորդ օրվա համար մշտապես մատակարարում փնտրելու անհրաժեշտությամբ:

Ստրկության համակարգ

Ես նկատեցի վերջերս կատարած մի հարցում, համաձայն որի Միացյալ Նահանգներում մարդկանց 70 %-ից ավելին չի սիրում իր աշխատանքը[5]: Հնարավոր է՝ հարցնեք. «Այդ դեպքում ինչո՞ւ են գնում աշխատանքի, եթե չեն սիրում այդ աշխատանքը»: Պարզ ասած՝ նրանք հաջորդ աշխատավարձի գերին են:

ԱԴԱՄԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՍԿՍԱԾ՝ ՏՂԱՄԱՐԴԻԿ ԵՎ ԿԱՆԱՅՔ ԴԱՐՁԵԼ ԵՆ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ԳԵՐԻ՝ ԿԱ՛Մ ՎԱԶԵԼՈՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԻՑ, ԿԱ՛Մ ԿՈՒՏԱԿԵԼՈՎ ՄԻՋՈՑՆԵՐ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՓՈՂ ՈՒՆԵՆԱԼԸ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՌՆԵՏԱՎԱԶՔԻՑ:

Տանջալի աշխատանքի և քրտինքի երկրային անեծքի ներքո յուրաքանչյուրը երազում է դառնալ միլիոնատեր, ազատվել անվերջանալի առնետավազքից և մատակարարում գտնելու ճնշումից: Մարդիկ երազում են շահել վիճակախաղում, դառնալ հարուստ և լինել ազատ՝ անելու այն, ինչ ցանկանում են, այլ ոչ թե այն, ինչ ստիպված են: Ադամի ժամանակներից սկսած՝ տղամարդիկ և կանայք դարձել են գոյատևման գերի՝ կա՛մ վազելով մատակարարման հետևից, կա՛մ կուտակելով միջոցներ, որովհետև փող ունենալը միակ փրկությունն է առնետավազքից:

Թո՛ւյլ տվեք բերել օրինակ, թե ինչպես է այս համակարգը սովորեցրել բոլորիս մտածել: Եթե ձեզ ասեի, որ հաջորդ 12 ամսում դուք պետք է լիովին ազատվեք պարտքերից, ինքնաբերաբար կսկսեիք հաշվարկել, թե որքան տանջալի աշխատանք և քրտինք պետք է ավելացնեք, որ հասնեք դրան: Դուք կհաշվարկեք, թե, անհրաժեշտության դեպքում, ինչպես կարող եք երկու կամ երեք տեղ աշխատել՝ անկախ նրանից, թե ինչ դա կպահանջի: Իսկ դա կպահանջի ավելի շատ տանջալի աշխատանք և քրտինք: Տանջալի աշխատանքը և քրտինքն այն հայտարարն են, որ հաշվի

5 https://returntonow.net/2017/09/22/85-people-hate-jobs-gallup-poll-says

է առնվում յուրաքանչյուր երազանքում: Եթե դուք նոր մեքենայի կարիք ունեք, դրա արժեքը կբաժանեք աշխատանքի և քրտինքի վրա և կասեք. «Ո՛չ, մենք չենք կարող մեզ թույլ տալ»: «Ավելի՞ մեծ տուն: Ո՛չ, մենք չենք կարող մեզ թույլ տալ»:

Աստված տեսնում է հնարավորություններ անհնարինի մեջ

Երկրային անեծքի համակարգի ներքո երազանքները փոխարինվում են կարճատև այցերով դեպի «Ուոլմարտ» խանութների ցանց, ինչն էլ ավարտվում է մեկ համբուրգերով: Ու եթե չկա բավականաչափ ժամանակ կամ աշխատանք ձեր երազանքն իրականացնելու համար, դուք թողնում եք այն և ընդունում, որ պետք է շարունակեք զբաղվել այն աշխատանքով, որն ատում եք, ինչպես մյուսներն են անում: Տանջալի աշխատանքի և քրտինքի հավասարումը հավասարման նշանից հետո սովորաբար ունենում է անհնարին բառը մարդկանց մեծ մասի համար:

Հենց այսպես էլ աշակերտներն ընկալեցին իրենց իրավիճակը. «Կերակրել 20.000 մարդո՞ւ: Անհնար է: Դա ավելի քան վեց ամսվա աշխատավարձ կպահանջի»: Աշխատավարձը նշանակում էր ավելի շատ տանջալի աշխատանք և քրտինք՝ կարիքը բավարարելու համար: Կրկնեմ, նրանց ընկալմամբ մատակարարում ստանալու միակ միջոցը քրտնաջան աշխատանքն էր: Երկրային տիրույթում այսպես է: Բոլորը գիտեն դա, բայց Հիսուսը պատրաստվում էր ցույց տալ նրանց նոր ապրելակերպ, նոր Թագավորություն՝ նոր օրենքներով: Այո՛, իրականում կա փրկություն տանջալի աշխատանքի և քրտինքի համակարգից: Իսկապե՛ս կա:

Վերադառնանք այն պահին, երբ աշակերտներն ասացին, որ անհնար կլինի կերակրել այդ բազմությանը, և տեսնենք, թե ինչպես Հիսուսն արձագանքեց: Հավանաբար դուք պետք է ունենաք ԱԱԻՀԱ (Արա՛ այն, ինչ Հիսուսն արեց) կաշվե թևնոց, որպեսզի աշակերտների նման չմոռանաք այն, ինչ Նա պատրաստվում է ցույց տալ մեզ: Փոխանակ համաձայնելու իրավիճակին տված աշակերտների վերլուծությանը՝ Հիսուսը պատասխանատվություն է վերցնում՝ նրանց տալով հետևյալ հրահանգը. «Գնացե՛ք և

տեսեք՝ քանի հաց ունեք»: Նախքան նայելը՝ նրանք գիտեին, որ բավականաչափ չի լինի ամբողջ բազմությանը կերակրելու համար: Սա էր պատճառը, որ սկզբում նրանք եկան Հիսուսի մոտ և խնդրեցին, որ Նա մարդկանց ուղարկեր, որպեսզի վերջիններս իրենց համար կերակուր գտնեին: Բայց հնազանդվելով Հիսուսին՝ նրանք գնացին, նայեցին և վերադարձան՝ հայտնելով, որ ընդամենը հինգ հաց և երկու ձուկ են գտել:

Այստեղ ինչ-որ բան է կատարվում, որը դուք պետք է տեսնեք. մեկ այլ կարևոր բանալի: Այն տեսնելու համար նայենք նույն պատմությանը, բայց՝ Մատթեոսի Ավետարանում:

> *«Հիսուսն էլ ասաց նրանց. «Պետք չէ, որ գնան, դո՛ւք կերակրեք նրանց»:*
>
> *Նրանք էլ ասացին Նրան. «Մենք այստեղ բան չունենք, բայց միայն հինգ հաց և երկու ձուկ»:*
>
> *Նա էլ ասաց. «Դրանք այստեղ բերեք՝ Ինձ մոտ»: Եվ հրամայեց, որ ժողովուրդները խոտերի վրա նստեն: Եվ հինգ հացը և երկու ձուկն առավ, դեպի երկինքը նայեց, օրհնեց և կտրեց, հացերը տվեց աշակերտներին, և աշակերտները՝ ժողովուրդներին: Եվ ամենքը կերան և կշտացան և կտորների ավելացածը տասներկու քթոց լիքը վեր առան: Եվ ուտողները հինգ հազարի չափ մարդիկ էին՝ բացի կանանցից և երեխաներից»:*
>
> – Մատթեոս 14.16-21

Ուշադրություն դարձրեք, որ 18-րդ խոսքում Հիսուսը խնդրում է, որ աշակերտները հացն ու ձուկն Իր մոտ բերեն: Այնուհետև 19-րդ խոսքի վերջում մենք տեսնում ենք, որ Նա հացն ու ձուկը վերադարձնում է աշակերտներին: Ինչ-որ բան տեղի ունեցավ Սուրբ Գրքի այս երկու հատվածների միջև, որը պետք է գրավի ձեր ուշադրությունը և հարց առաջացնի. «Ինչո՞ւ Հիսուսը խնդրեց, որ աշակերտները հացն ու ձուկն Իր մոտ բերեն, եթե հաջորդ պահին դրանք վերադարձնելու էր նրանց»: Հիսուսը որևէ կրոնական բան չի անում, ուստի պետք է լինի պատճառ, որ Նա խնդրեց հացն ու ձուկը: Որպես հոգևոր գիտնականներ՝ մենք պետք է

իմանանք, թե ինչ կատարվեց, երբ Նա աշակերտների ձեռքից վերցրեց հացն ու ձուկը:

> ***Եվ հինգ հացը և երկու ձուկն առավ, դեպի երկինքը նայեց, օրհնեց և կտրեց, հացերը տվեց աշակերտներին, և աշակերտները՝ ժողովուրդներին:***

Աստվածաշունչն ասում է, որ Նա օրհնեց: Որոշ տարբերակներում գրված է, որ Նա գոհացավ: Բայց ի՞նչ է դա նշանակում: Հունարեն բառը, որ այստեղ օգտագործվել է գոհանալու կամ օրհնելու փոխարեն, բառացիորեն նշանակում է՝ սրբագործել ինչ-որ բան, խնդրել Աստծո օրհնությունն ինչ-որ բանի համար կամ խնդրել Աստծուն օրհնել ինչ-որ բան՝ որևէ մեկի գործածության համար: Մեկ քայլ առաջ գնալով՝ ասենք, որ սրբագործել ինչ-որ բան՝ նշանակում է հռչակել այն որպես սուրբ, պաշտոնապես նվիրված աստվածային նպատակի:

Այսպիսով, ըստ էության, երբ Հիսուսն օրհնեց ձուկն ու հացը, դրանք առանձնացան երկրային տիրույթի իրավասությունից և մտան երկնքի իրավասության ներքո:

Երբ Նա խոսեց դրանց վրա և օրհնեց, հացն ու ձուկը փոխեցին թագավորությունները:

Իրերը բերել նոր իրավասության ներքո

Հացն ու ձուկը նախկինում մարդկանց իրավասության ներքո էին՝ երկրային տիրույթում, և Աստված որևէ բան չէր կարող անել դրանց հետ: Բայց այժմ տեսնում ենք, որ փոքրիկ տղայի առատաձեռնության շնորհիվ դրանք առաջարկվեցին Հիսուսին և տեղափոխվեցին Թագավորության իրավասության ներքո: Մենք նաև պետք է գիտակցենք, որ եթե հացն ու ձուկը մնային երկրային տիրույթի իրավասության ներքո, երբեք չէին բազմանա:

Որպես հոգևոր գիտնականներ՝ մենք պետք է ուշադրություն դարձնենք մանրամասներին: Իրականում ե՞րբ տեղի ունեցավ այս փոխադրումը: Սկզբում գուցե մտածեք, որ իրավասության փոփոխությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ փոքրիկ տղան

ձուկն ու հացը տվեց աշակերտներին: Դա, իհարկե, գործընթացի մի մասն էր, և այն, որ տղան արեց դա հոժարությամբ, նույնպես կարևոր բանալի է: Բայց իրական փոխադրումը տեղի չունեցավ այն ժամանակ, երբ հացն ու ձուկը տրվեցին աշակերտներին: Իրական օրինական փոխադրումը տեղի ունեցավ այն պահին, երբ Հիսուսը խոսեց դրանց վրա և օրհնեց: Ես հաստատում եմ, որ չնայած հացն ու ձուկն անցան Հիսուսի տիրապետության ներքո, և Նա պահում էր դրանք Իր ձեռքերում, դրանք չէին բազմանա, մինչև Նա չխոսեր դրանց վրա հատուկ կարգադրությամբ:

Եկեք դիտարկենք դա մեր հավատքի դասի տեսանկյունից, որն ավելի վաղ սովորեցինք: Մենք պարզեցինք, որ չնայած ձեր սիրտը կարող է լինել հավատքի մեջ, ինչն օրինական է դարձնում երկնքի ներխուժումը Երկիր, ոչինչ տեղի չի ունենա, մինչև դուք, ունենալով օրինական իրավասություն երկրի վրա, չարձակեք երկնքի իշխանությունն այստեղ:

> *«Քանի որ, սրտով հավատում ենք՝ արդարանալու համար, և բերանով դավանում ենք՝ փրկվելու համար»:*
>
> – Հռոմեացիների 10.10

Թեև Հիսուսի խոսքերն արձանագրված չեն Աստվածաշնչում այն առումով, թե ինչ Նա ասաց, երբ օրհնեց հացն ու ձուկը, վստահ եմ, որ դրանք մոտավորապես այսպիսին էին. «Հայր, շնորհակալ եմ Քո մատակարարման համար, և Ես ընդունում եմ այս հացն ու ձուկը Քո Թագավորության մեջ Քո փառքի համար: Այս հացն ու ձուկն այժմ կբազմանան, որպեսզի կերակրեն այս հսկայական բազմությանը ավելի, քան բավական է, որպեսզի նրանք գտնեն հանգիստ և ուժ ու տեսնեն Քո փառքը»: Ինչպես ասացի, Նրա Խոսքերն արձանագրված չեն: Բայց համոզված եմ, որ Նա հացին և ձկներին տվեց հրահանգ, երբ դրանք դրվեցին Նրա ձեռքերի մեջ: Որտեղից գիտեմ դա: Որովհետև Նա արդեն գիտեր ծրագիրը և արդեն խումբ-խումբ նստեցրել էր նրանց:

> *«Հիսուսն էլ ասաց նրանց. «Պետք չէ, որ գնան, դուք կերակրեք նրանց»:*

Նրանք էլ ասացին Նրան. «Մենք այստեղ բան չունենք, բայց միայն հինգ հաց և երկու ձուկ»:

Նա էլ ասաց. «Դրանք այստեղ բերեք՝ Ինձ մոտ»: Եվ հրամայեց, որ ժողովուրդները խոտերի վրա նստեն: Եվ հինգ հացը և երկու ձուկն առավ, դեպի երկինքը նայեց, օրհնեց և կտրեց, հացերը տվեց աշակերտներին, և աշակերտները՝ ժողովուրդներին»:

– Մատթեոս 14.16-19

Ուշադրություն դարձրեք, որ Նա արդեն կարգադրել էր նրանց նստել խոտերին, նախքան կօրհներ հացն ու ձուկը: Նա հստակ գիտեր, թե որն էր Իր ծրագիրը: Համոզված եմ, որ Նա հրահանգ տվեց հացին և ձկանը, երբ դրանք դրվեցին Նրա ձեռքերի մեջ: Ձեր սերմն արձակելիս հրահանգ տալը խիստ կարևոր է: Ես ասացի «խիստ կարևոր»: Այո՛, ուստի՝ ուշադրությո՛ւն դարձրեք: Հենց այստեղ ես պետք է հատկացնեմ որոշ ժամանակ՝ անդրադառնալու սերմը ցանելիս հրահանգ տալու կարևորությանը:

«Նրանց ասաց. «Իսկ դուք ո՞վ եք ասում Ինձ համար, թե լինեմ»:

Սիմոն Պետրոսը պատասխան տվեց և ասաց. «Դո՛ւ ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին»:

Եվ Հիսուսը պատասխան տվեց և ասաց նրան. «Երանի՛ քեզ, Սիմո՛ն՝ Հովնանի՛ որդի, որովհետև մարմինը և արյունը չհայտնեցին քեզ, բայց Իմ Հայրը, որ Երկնքում է: Ես էլ ասում եմ քեզ, որ դու ես Պետրոս, և այդ վեմի վրա կշինեմ իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան: <u>Եվ Ես կտամ քեզ Երկնքի արքայության բանալիները, և այն, որ կապես երկրի վրա, կապված կլինի երկնքում, և այն որ երկրի վրա արձակես, արձակված կլինի երկնքում»»:</u>

– Մատթեոս 16.15-19

Այս խոսքը հստակ ասում է, որ Աստծո Թագավորության անունից երկրի վրա իշխելու մեր կարողությունը վերականգնվել

ՄԵԶ ՏՐՎԵԼ Է ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՊԵԼՈՒ ՍԱՏԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԵՐԿՆՔԻ ԿԱՄՔԸ ԵՐԿՐԻ ՎՐԱ:

է Հիսուս Քրիստոսի միջոցով: Մեզ տրվել է իշխանություն՝ կապելու սատանային և արձակելու երկնքի կամքը երկրի վրա: Ես հավատում եմ, կամ, առնվազն, հույս ունեմ, որ շատ քրիստոնյաներ արդեն գիտեն, թե ինչ է նշանակում կապել սատանային: Շատ պարզ, սատանային կապել՝ նշանակում է կանգնեցնել նրան՝ թույլ չտալով իրականացնել իր չար ծրագրերը: Դա կարող է տեղի ունենալ, երբ մարդկանց ազատագրում եք դևերից, հիվանդների վրա ձեռք եք դնում, և նրանք առողջանում են, կամ պարզապես ասում եք. «Դադարի՛ր, Հիսուսի՛ անունով»: Դուք վերցնում եք ձեր իշխանությունը Աստծո Թագավորության մեջ և օգտագործում եք՝ պարտադրելով այն հաղթանակը, որ Հիսուսը տարել է սատանայի հանդեպ:

Օգտագործե՛ք ձեր իշխանությունը

Իմ դիտարկմամբ շատ քչերը գիտեն, թե ինչպես արձակեն երկինքը երկրի վրա: Ես արդեն խոսել եմ Ա Հովհաննեսի 5.14,15-ի մասին՝ որպես արդյունավետ աղոթքի ուրվագիծ:

> *«Եվ սա է այն համարձակությունը, որ ունենք դեպի Նա, թե ինչ որ Նրա կամքի պես խնդրում ենք, լսում է մեզ: Եվ եթե գիտենք, թե լսում է մեզ, ինչ որ խնդրում ենք, գիտենք, որ առնում ենք մեր խնդրանքները, որ խնդրեցինք Նրանից»:*
>
> – Ա Հովհաննես 5.14,15

Սրտում հավատալը կամ հավատք ունենալը հավասարման վերջը չէ: Ինչպես արդեն տեսանք, երբ հավատում եք նրան, ինչ ասում է երկինքը, դուք արդարանում եք: Այժմ երկինքը կարող է օրինականորեն մուտք գործել երկրային տիրույթ, բայց ոչինչ տեղի չի ունենում, մինչև այդ իշխանությունը չեք արձակում երկրային տիրույթի մեջ: Դուք նստած եք Քրիստոսի հետ երկնային

վայրերում՝ Հոր աջ կողմում: Ձեր խոսքերը թագավորի խոսքեր են, և երկինքը չի կարող արձակվել այստեղ, մինչև դուք չխոսեք: Սա կարող է լինել հռչակում կամ համաձայնություն աղոթքում, բայց Թագավորության բանալիները ձեր ձեռքերում են: Աստված չի կարող որևէ բան անել առանց ձեզ:

Հարցը պարզապես այն իմացությունը չէ, թե աղոթքի ինչ գործողություն է պետք իրականացնել, որպեսզի ինչ-որ բան տեղի ունենա: Հարցը աղոթքի ժամանակ հրահանգ տալն է: Հիշեք, եթե դուք չարձակեք երկինքն այստեղ՝ երկրի վրա, ոչինչ տեղի չի ունենա: Այնպես որ՝ հրամայական է, որ մենք հասկանանք, թե ինչպես երկնքի կամքն արձակենք մեր կյանքի և մեր աշխարհի մեջ:

Հրահանգ տալու լավագույն օրինակ է Տերունական աղոթքը: Տերունական աղոթքում կան մի քանի կարևոր բանալիներ, որոնց մասին դուք պետք է տեղյակ լինեք: Առաջին՝ տեքստն ասում է, որ Աստված արդեն գիտի, թե ինչի կարիք դուք ունեք, այնպես որ՝ դադարեք մուրալուց: Մուրալը հավատք չէ, և այն ցույց է տալիս ձեր՝ որպես Թագավորության քաղաքացու, անտեղյակությունը Թագավորության գործելակերպի և ձեր իրավունքների վերաբերյալ: Աղոթքում հրահանգ տալն իրականում պահանջագիր ներկայացնելն է: Պահանջագիրը մանրամասն ցուցակն է այն ամենի, ինչի կարիքն ունեք: Դուք ոչ թե խնդրում եք այդ իրերը, այլ՝ պահանջ եք ներկայացնում դրանց հանդեպ:

> *«Եվ աղոթք անելիս շատախոս մի՛ եղեք՝ ինչպես հեթանոսները, որովհետև նրանք կարծում են, թե իրենց շատ խոսելու համար կլսվեն: Արդ, նրանց մի՛ նմանվեք, որովհետև ձեր Հայրը գիտի, թե ինչ բաներ են պետք ձեզ Նրանից խնդրելուց առաջ: Արդ դուք այսպես աղոթք արեք. «Մեր Հա՛յր, որ Երկնքում ես, սո՛ւրբ լինի Քո անունը: Գա՛ Քո արքայությունը, լինի՛ Քո կամքը, ինչպես Երկնքում, այնպես էլ երկրի վրա: Մեր ամեն օրվա հացը տո՛ւր մեզ այսօր»»:*
>
> – Մատթեոս 6.7-11

Հիսուսն աղոթքն սկսում է այսպես. «Մեր Հայր, որ Երկնքում ես, սո՛ւրբ (մեծապես հարգված և մեծարված) լինի Քո անունը (անդրադառնում է Նրա տիրակալությանը և իշխանությանը)»: Հիսուսն առաջին նախադասության մեջ հաստատում է աղոթքի օրինական դիրքը: Համեմատենք այն դատարանի դահլիճում հնչող առաջին նախադասության հետ:

Դատական կատարածուն կանգնում է և ասում. «Խնդրո՛ւմ եմ, ոտքի՛: Այսինչ (նա տալիս է դատարանի անունը) դատարանը…»: Դա կարող է լինել Ֆրանկլինի շրջանի ընդհանուր իրավասության դատարանը կամ Երկրորդ դատական շրջանի քրեական դատարանը կամ ցանկացած այլ դատարան: Բայց սկզբում նիստերի դահլիճում մի քանի բան է տեղի ունենում: Դատական կատարածուն ասում է. «Բոլորը ոտքի կանգնեն»՝ պատիվ տալով դատարանին, ինչպես նաև այն դատավորին, որը նախագահելու է դատական նիստը: Դատարանի անունը նշվում է պատշաճ իրավասություն հաստատելու համար, որպեսզի դուք իմանաք, որ ճիշտ դահլիճում եք, որն ունի իրավասություն ձեր գործի նկատմամբ:

Շարունակենք հետևել, թե ինչ է դատական կատարածուն ասում. «Խնդրո՛ւմ եմ, ոտքի՛: Ֆրանկլինի շրջանի ընդհանուր իրավասության դատարանը սկսում է իր նիստը, նախագահում է Մեծարգո դատավոր Սմիթը»:

Առաջին՝ **«Մեր Հայր, որ Երկնքում ես, սո՛ւրբ լինի Քո անունը»** նախադասությունը սահմանում է Նրա դիրքը, Ով ղեկավարելու է այս դատական գործը, և լիազորում է մեզ լինելու այնտեղ: Նա մեր Հայրն է, և մենք ունենք օրինական մուտք դեպի այս դատարան: Այս առաջին նախադասությունը նաև սահմանում է երկնային դատարանի՝ ամբողջ իշխանության բարձրագույն դատարանի իրավասությունը:

Այնուհետև Տերունական աղոթքում ասվում է. «**Գա՛ Քո արքայությունը, լինի՛ Քո կամքը**»:

Այս արտահայտությունը պահանջ է ներկայացնում դատարանին՝ ղեկավարելու Թագավորության օրենքի համաձայն: Դուք պատրաստվում եք խնդրանք ներկայացնել կամ հարց բարձրացնել ու խնդրում եք Դատավորին կիրառել այն, ինչ Նրա կամքն

(օրենքը) ասում է տվյալ դեպքի վերաբերյալ: Հաջորդ խոսքերն են. «**Ինչպես Երկնքում, այնպես էլ երկրի վրա**»: Կրկին, դուք հաստատում եք, որ ցանկանում եք, որ երկնքում եղած վճիռը կիրառվի երկրի վրա: Այս ամենը ձեզ և դատարանին հաստատելու և որոշակի դիրքում դնելու համար էր: Դեռևս ոչինչ չեք խնդրել կամ չեք ներկայացրել: Բայց հաջորդը խնդրանքն է.

«Մեր ամեն օրվա հացը տո՛ւր մեզ այսօր»: Այս արտահայտությունն իրականում այնքան էլ առնչություն չունի հացի հետ, եթե դա հենց այն չէ, ինչի կարիքն ունեք: Փոխարենը՝ այն ասում է, որ ներկայացնեք ձեր կարիքը: Հիշե՛ք, այս խոսակցությունը սկսվեց այնտեղ, որտեղ Հիսուսը սովորեցնում էր Իր աշակերտներին, թե ինչպես աղոթեն, որ իրենց կարիքները լրացվեն: Այստեղ է, որ դուք ներկայացնում եք ձեր խնդրանքը, բայց ինչպես ասացի, ավելի հարմար բառ, որ կարելի է օգտագործել այստեղ, պահանջագիր բառն է: Անշուշտ, երկուսն էլ կիրառելի են, և խնդրանք (հայերեն Աստվածաշնչում՝ աղաչանք) բառն օգտագործվում է Փիլիպեցիների 4-րդ գլխում: Բայց ասելիքս այն է, որ պահանջագիրը մանրամասն խնդրանքն է: Այստեղ պետք է հիշել մանրամասն բառը: Աղոթքում դուք հրահանգ եք տալիս. այն պետք է լինի մանրամասն և ճշգրիտ: Փիլիպեցիների 4.6,7-ն ասում է միևնույն բանը.

> *«Ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով և աղաչանքով (խնդրանքով) և գոհությունով ձեր խնդրվածքները թող հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում»:*
>
> – Փիլիպեցիների 4.6,7

Ուշադրություն դարձրեք, որ աղոթքներն ու խնդրանքները տարբեր են: Մեր աղոթքները կրում են մեր խնդրանքները, բայց աղոթքներն այն փոխադրամիջոցներն են, որոնք խնդրանքները տանում են մեր Հոր մոտ: Կրկնեմ, խնդրանքը շատ մանրամասն է և ճշգրիտ: Բայց քրիստոնյաների մեծ մասն այսպես կասի. «Օ՜հ, ինչ էլ Աստված ցանկանա տալ ինձ, հրաշալի է: Նա ամենից լավ

գիտի»: Սխալ է, սխալ է, սխալ է:

Աստված տվել է ՁԵԶ Թագավորության բանալիները:

Եթե կարդացել եք իմ նյութերը, ապա տեսել եք Թագավորությանը վերաբերող անթիվ մանրամասն պատմություններ: Այս գրքում նույնպես կան շատ պատմություններ, որոնք, հուսով եմ, կօգնեն ձեզ տեսնելու, թե որքան մանրակրկիտ է Թագավորությունը, և որքան մանրակրկիտ պետք է լինեն ձեր խոսքերը: Ասածս հաստատելու նպատակով գուցե ձանձրացնեմ մի քանի հին պատմություններով, որոնք, հնարավոր է, արդեն լսել եք: Բայց զգում եմ, որ պետք է հատկացնեմ այնքան ժամանակ, որքան հարկավոր է, որպեսզի դուք լավ պատկերացում կազմեք այն մասին, թե որքան հստակ է Թագավորությունը: Թո՛ւյլ տվեք արագ հիշեցնել մի քանի պատմություն, որոնց մասին խոսել ենք:

ԲԱՅՑ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍՆ ԱՅՍՊԵՍ ԿԱՍԻ. «Օ՛Հ, ԻՆՉ ԷԼ ԱՍՏՎԱԾ ՑԱՆԿԱՆԱ ՏԱԼ ԻՆՁ, ՀՐԱՇԱԼԻ Է: ՆԱ ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ԳԻՏԻ»: ՍԽԱԼ Է, ՍԽԱԼ Է, ՍԽԱԼ Է:

Թագավորությունը գործում է

Դուք կարդացել եք, թե ինչպես իմ մեքենան այրվեց այն բանից հետո, երբ բարձրաձայն ասացի. «Տե՛ր, միգուցե ավելի լավ կլիներ, որ այս մեքենան այրվեր»: Զուգադիպությո՞ւն էր: Առաջ անցնենք: Ես պատմեցի եղնիկների մասին, թե ինչպես Տերը ցույց տվեց, որ սերմ ցանեմ դրանց համար, և թե ինչպես այդ ժամանակվանից իմ դիտանոցի տակ երբեք չի հայտնվել մի եղնիկ, որի համար ես սերմ ցանած չլինեմ: Ամեն անգամ հայտնվել է ճիշտ եղնիկը՝ այն եղնիկը, որի համար ես ցանել եմ: Այնուհետև ասացի, թե ինչպես Աստված ցույց տվեց, որ եղնիկները հայտնվում էին այն հաջորդականությամբ, ինչ հաջորդականությամբ ցանում էի նրանց համար: Երբևէ նման բան լսե՞լ եք: Ես էլ չէի լսել, մինչև չտեսա դա սեփական աչքերով: Թագավորությունն այնքան ճշգրիտ է, որ ես կարողացա պատմել ձեզ յոթճյուղանի եղջերուի և վեցճյուղանի եղջերուի մասին, որի համար Թիմը սերմ

էր ցանել: Ես պատմեցի, թե ինչպես Աստված սովորեցրեց ինձ խոսել իշխանությամբ, և եղջերուն, որ ինձնից 183 մետր հեռավորության վրա էր, կանգ առավ նույն վայրկյանին, երբ ես խոսեցի, այնուհետև եկավ ու կանգնեց ուղիղ իմ դիտանոցի տակ: Ես պատմեցի ձեզ փասիանի մասին, երբ հրամայեցի նրան կանգնել, և նա անմիջապես կանգ առավ:

Պատմեցի այն հրացանի մասին, որը մատնացույց արեցի սպորտային ապրանքների խանութում՝ ասելով. «Ես կունենամ դա», և մի քանի շաբաթ անց ինձ նվիրեցին ճիշտ այդ հրացանից: Նաև պատմեցի «BMW 645 Ci» ծալվող տանիքով մեքենայի մասին, որը Դրենդան տեսավ ավտոկայանատեղիում և ասաց. «Ահա՛ այն»: Մենք ոչ ոքի չասացինք, բայց մի քանի շաբաթ անց եկեղեցուց մի մարդ զանգեց ինձ և ասաց. «Այսօր ես տեսա Դրենդայի մեքենան»: Ես ցնցված էի և հարցրի նրան, թե ինչ նկատի ուներ: Նա շարունակեց՝ ասելով, որ երբ քաղաքում մեքենա էր վարում, տեսավ «BMW 645 Ci» ծալվող տանիքով մի մեքենա, որը հրաշալի վիճակում էր և դրված էր վաճառքի: Երբ նա տեսավ այդ մեքենան, Տերն ասաց, որ այն Դրենդայի մեքենան է: Դա գրավեց իմ ուշադրությունը. ճիշտ նույն մեքենան:

Յոթերորդ գլխում ձեզ կպատմեմ մի պատմություն այն մասին, թե ինչպես բոլորովին անսպասելի մի աղբյուրից ստացա ճիշտ այն ինքնաթիռը, որի համար ցանել էի, և ինչպես ստացա այն գումարը, որն անհրաժեշտ էր ինքնաթիռը գնելու համար: Ես ունեմ անհամար պատմություններ, որոնք ցույց են տալիս, թե որքան ճշգրիտ է գործում Թագավորությունը:

Հիշում եմ այն օրը, երբ խփեցի քսանվեցճյուղանի եղջյուրներով իմ հսկա եղջերուին: Բավականին տաք օր էր նոյեմբեր ամսվա համար: Այդ օրը եղջերուին կախած թողեցի և հաջորդ օրը տարա խրտվիլակներ լցնողի մոտ՝ գլուխը մշակելու համար: Նա նայեց մորթուն և ասաց. «Ցավում եմ, բայց կարծես տաք եղանակը վնասել է մորթին: Չեմ կարծում, որ ինչ-որ բան կհաջողվի, բայց կփորձեմ և կտեսնեմ»: Ես չէի պատրաստվում թույլ տալ, որ հաղթանշանային եղջերուն, որը հնձել էի հավատքով, չդառնար հրաշալի խրտվիլակ իմ աշխատասենյակի համար: Այդ պա-

հին նա մտավ գրասենյակ՝ պատվերի ձևաթուղթ վերցնելու: Երբ նա մտավ գրասենյակ, ձեռքս դրեցի եղջերուի վրա և հռչակեցի, որ մորթին անթերի է, և անթերի խրտվիլակ դուրս կգա նրանից: Մեկ ամսից վերադարձա խրտվիլակը վերցնելու, և խրտվիլակներ լցնողն ասաց. «Գիտեք, ես ձեզ ասացի, որ մորթին վնասված է, բայց այս խրտվիլակն անթերի դուրս եկավ: Մորթին անթերի է»:

Ես կարող եմ ժամերով խոսել այս մասին, բայց գլխավոր միտքն այն է, թե ինչ եք դուք ասում: Յուրաքանչյուր խոսքով դուք շարժման մեջ եք դնում հոգևոր օրենք: Հնարավոր է՝ դուք չեք իմացել դա: Ես էլ չգիտեի, բայց դա ճշմարիտ է: Թագավորությունը շատ հստակ է: Թույլ տվեք պատմել ևս մեկ պատմություն, և հաջորդ գլուխներում կտեսնեք ավելի շատ պատմություններ, որոնք կապացուցեն այն, ինչ ասում եմ: Ինչպես հասկանում եք, ես ունեմ մեծ փափագ՝ այս ամենը մարդկանց հասցնելու համար:

Շարժման մեջ դնել հոգևոր օրենքը

Դրենդայի նախաձեռնությամբ անցկացվող կանանց համաժողովներից մեկի ժամանակ էր: Մենք վարձել էինք «Կադիլակ Էսկալադ»՝ հյուրերից մեկին տեղափոխելու համար, մինչ նա քաղաքում էր: Երբ համաժողովն ավարտվեց, Էսկալադը մինչև առավոտ դեռևս կարող էր մնալ մեզ մոտ, ուստի Դրենդան ու ես որոշեցինք այդ գիշեր դրանով վերադառնալ տուն և տեսնել, թե ինչպես է այն ընթանում: Նախկինում մենք երբեք չէինք վարել Էսկալադ: Ինչպես պատկերացնում եք, այն հրաշալի ընթացք ուներ: Երբ հաջորդ առավոտյան դրանով վերադառնում էինք եկեղեցի, մենք զրուցում էինք և համաձայնության եկանք, որ կցանկանայինք այդպիսի մեքենա ունենալ: Մեր վարած մեքենան կարճ մոդելն էր և մարգարտե սպիտակ գույն ուներ: Երկուսս էլ համաձայն էինք, որ մեզ ավելի շատ դուր է գալիս կարճ մոդելը և մարգարտե սպիտակ գույնը:

Այդ միջոցառումից ընդամենը մեկ ամիս անց, երբ տնից դուրս էի գալիս օրաթերթս վերցնելու, բջջային հեռախոսս զանգեց: Զանգողը մեր եկեղեցու անդամներից էր: Նա պարզապես ասաց.

«Ես ուզում եմ «Կադիլակ Էսկալադ» գնել ձեզ համար: Ո՞ր գույնն եք նախընտրում»: Ես հանկարծակիի եկա, բայց ասացի՝ մարգարտե սպիտակը: Սակայն, մոռացա նշել կարճ մոդելը: Անցավ գրեթե մեկ ամիս, և ես մտածեցի, որ միգուցե նա մոռացել է Էսկալադի մասին, սակայն նա զանգեց և ասաց, որ մեքենան իր մոտ է: Մենք գնացինք նրան հանդիպելու և տեսանք կարճ մոդելի հիասքանչ մարգարտե սպիտակ Էսկալադ: Երբ մոտեցանք մեքենային, նա ասաց. «Ներողություն եմ խնդրում, որ այսքան երկար ժամանակ պահանջվեց, բայց ես չէի կարողանում գտնել երկար մոդելը»: Նա չգիտեր, որ մենք չէինք ցանկանում երկար մոդելը: Նրան դուր էր գալիս երկար մոդելը և կարծում էր, թե դա այն էր, ինչ մենք կցանկանայինք, բայց կարողացել էր գտնել միայն կարճը: Կրկին, ճիշտ այն մեքենան, որի շուրջ բարձրաձայն համաձայնության էինք եկել:

Զարմանալի օրինակ, որ ես տեսա բիզնեսում, տեղի ունեցավ վերջին մի քանի տարիներին: Ինչպես գիտեք կամ գուցե չգիտեք, ես դեռևս ունեմ ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերություն: Նախքան 25 տարի առաջ հովվության ծառայության մեջ մտնելը՝ իմ ընկերությունը 5.000 գրասենյակներից առաջինն էր իմ մատակարարներից մեկի համար: Երբ հիմնեցինք մեր եկեղեցին, գիտեի, որ շատ զբաղված կլինեի, և ենթադրում էի, որ չէի կարողանա պահպանել այդ առաջատար դիրքը, և այդպես էլ եղավ: Իմ բիզնեսում մեր մատակարարներն առաջարկում են խրախուսական ուղևորություններ՝ իրենց առևտրական գործակալներին այդ տարվա արդյունքների համար պարգևատրելու նպատակով:

Մի մատակարար, որի հետ ես աշխատում էի, իր ամենամյա համաժողովին 100.000 դոլարի պարգևավճար էր տալիս տասը լավագույն գրասենյակներին, որոնք ավելի քան 10 միլիոն դոլարի գործարք էին կատարում: Իսկ նրանք, ովքեր ավելի քան 3 միլիոն դոլարի գործարք էին կատարում, պարգևատրվում էին հաճելի ուղևորությամբ դեպի ամենամյա համաժողով: Սովորաբար ես տարեկան մոտավորապես 4 միլիոն դոլարի գործարք էի կնքում այս ընկերության հետ, ուստի ստանում էի այդ անվճար

ուղևորությունը, այնուհետև նստում էի այնտեղ և դիտում, թե ինչպես էին նրանք ամեն տարի հանձնում այդ 100.000 դոլարի չեկերը տասը լավագույն ընկերություններին: Դա շարունակվեց 18 տարի: Այո՛, 18 տարի: Ես երբեք չէի մտածել, որ կարող էի հասնել այդ նպատակին՝ միաժամանակ հովվություն անելով եկեղեցում, այնպես որ՝ հավատքս երբեք չէի հաստատել այդ ուղղությամբ:

Բայց մի օր, երբ համաժողովում նստած դիտում էի, թե ինչպես էին տասը լավագույնները ստանում իրենց 100.000 դոլարի չեկերը, Տերը խոսեց ինձ հետ. «Ինչո՞ւ դու այնտեղ չես»: Մինչ կկարողանայի պատասխանել, Նա ասաց. «Ես ուզում եմ, որ դու այնտեղ լինես: Ես ուզում եմ, որ Իմ անունը երևա այստեղ»: Արդեն մարտ ամիսն էր, և, ինչպես ասացի, վերջին 18 տարում մենք կատարում էինք մոտավորապես 4 միլիոն դոլարի գործարք այս ընկերության համար: Բնականում ես որևէ ճանապարհ չէի տեսնում այդ նպատակին հասնելու համար, բայց աղոթեցի դրա համար, և Դրենդան ու ես ցանեցինք մեր սերմը այդ 10 միլիոն ցուցանիշին հասնելու համար: Տերը ցույց տվեց ինձ մի փոփոխություն, որը կարող էի ներմուծել ընկերության կողմից հարցումների մշակման գործընթացում: Այս փոփոխությունը մեծ ազդեցություն ունեցավ: Կարճ ասած՝ մենք մտանք լավագույն տասնյակի մեջ և ստացանք 100.000 դոլարի չեկը: Բայց ահա այն մասը, որ ցանկանում եմ կիսել ձեզ հետ: Մենք հասանք դրան մեկ առևտրային գործարքով:

Հաջորդ տարի ընկերությունը նպատակադրվեց կատարելու 12 միլիոն դոլարի գործարք՝ 100.000 դոլարի չեկը ստանալու համար: Մենք ցանեցինք մեր սերմը և հենց այդ տարի հնձեցինք բերքը: Բայց դուք կռահեցիք. մենք հասանք դրան մեկ առևտրային գործարքով: Հաջորդ երկու տարիներին այդ ծրագիրը չեղարկվեց: Բայց անցյալ տարի՝ 2019թ.-ին, նրանք կրկին մեկնարկեցին այն՝ 10 միլիոն դոլարի շեմով: Մենք ցանեցինք մեր սերմը և հայտնվեցինք լավագույն տասնյակի մեջ, և դուք կռահեցիք. կրկին, մենք դա արեցինք մեկ առևտրային գործարքով: Մի՞թե զուգադիպություն էր այն, որ ամեն տարի մենք հասնում էինք մեր նպատակին մեկ առևտրային գործարքով: Ո՛չ, մենք ցանում

էինք, որպեսզի հասնեինք նվազագույն թվին՝ 100.000 դոլարի չեկը ստանալու համար: Եվ դա հենց այն էր, ինչին մենք հասնում էինք: Մի՞թե մենք մտադիր էինք, որ հասնեինք մեր նպատակին միայն մեկ գործարքով: Իհարկե՝ ո՛չ: Տարվա ընթացքում ամբողջ ուժով աշխատում էինք և մինչև ամսվա վերջին օրը չգիտեինք, թե երբ էր դա տեղի ունենալու: Կրկին, զարմանահրաշ պատկերն այն բանի, թե ինչպես է այս օրենքը գործում:

Հրահանգ տալու կարևորությունը

Այս տարվա «Մատակարարման համաժողովին» Աստված խոսեց ինձ հետ, որ մարդկանց սովորեցնեմ այն, ինչ Դրենդան ու ես սովորել ենք հրահանգ տալու մասին: Սա հենց այն է, ինչ Սուրբ Հոգին անվանեց հրահանգ: Ուստի ես որոշ ժամանակ անցկացրի՝ սովորեցնելով այս մասին, քանի որ գիտեմ, որ շատերը բավականաչափ տեղյակ չեն այս բանից: Համաձայն բառարանի՝ հրահանգը պաշտոնական կամ հեղինակավոր կարգադրությունն է: Ուշադրություն դարձրեք, որ այն ողորմության աղաչանք չէ, «վա՛յ ինձ» կարգադրություն չէ: Ո՛չ, այն հեղինակավոր, պաշտոնական կարգադրություն է: Մեկ քայլ առաջ գնանք: Եթե ես հրահանգ եմ տալիս հոգևոր առումով, ո՞վ է այն կատարում: Այո՛, ինչ-որ մեկը կատարում է. պարզենք, թե՝ ով.

> *«Եվ Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Աստծո հավա՛տքն ունեցեք: Որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ, թե՝ ով որ այս սարին ասի՝ վե՛ր կաց և ծովն ընկի՛ր, և իր սրտում չերկմտի, բայց հավատա, թե ինչ որ ասում է, կլինի նրան, կլինի՝ ինչ որ ասի: Սրա համար ասում եմ ձեզ, թե՝ այն, ինչ որ աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, թե կառնեք, և կլինի ձեզ»»:*
>
> – Մարկոս 11.22-24

Այս հատվածում կա երկու բան, որ ցանկանում եմ մատնացույց անել: Ուշադրություն դարձրեք, որ գրված է. «Ով որ ասի»: Այստեղ տեսնում ենք այն, ինչ Դրենդան ու ես բացահայտեցինք: Մեր խոսքերն արձակում են երկինքը այստեղ՝ երկրային տիրույ-

թի մեջ: Երկրորդ՝ ուզում եմ, որ ձեր ուշադրությունը կենտրոնացնեք այս խոսքերի վրա:

«...և իր սրտում չերկմտի, բայց հավատա, թե ինչ որ ասում է, կլինի նրան, կլինի՝ ինչ որ ասի»:

Գրված է. «Կլինի նրան»: Ոչ թե Աստծուն, այլ՝ նրան, ով խոսում է այստեղ՝ երկրի վրա:

Ա՜յ քեզ բան: Թողե՛ք ամեն բան: Մի պահ դուք պետք է խորհեք դրա շուրջ: Թո՛ւյլ տվեք, որ այն ընկղմվի ձեր հոգու մեջ. սա խոսում է ձեր մասին:

Ո՞վ է կատարում հրահանգը: Նայենք Եբրայեցիների 1.14-ը (NIV)՝ դա պարզելու համար:

«Չէ՞ որ ամենքը պաշտոնատար հոգիներ են՝ ուղարկված ծառայելու նրանց, որ փրկությունը պիտի ժառանգեն»:

Ուշադրություն դարձրեք, որ այստեղ երկու բառ կա, որ նկարագրում է հրեշտակներին՝ պաշտոնատար և ծառայող: Ծառայել՝ նշանակում է կատարել պարտականություններ կամ մատուցել ծառայություններ մեկ այլ անձի համար, այս դեպքում՝ ձեզ համար: Պաշտոնատար՝ նշանակում է պետական բարձրաստիճան պաշտոնյա, որին վստահված է կառավարության գործունեության որևէ բաժնի կառավարումը: Այլ կերպ ասած՝ հրեշտակը երկնային դատարանի ներկայացուցիչ է՝ լիազորված գործելու Աստծո Թագավորության անունից ձեր օգտին: Խնդրո՛ւմ եմ, նկատի առեք, որ մենք չենք կարող ղեկավարել հրեշտակներին, քանի որ նրանք հաշվետու չեն մեզ, բայց կարող ենք դիմել երկնային դատարանին այն ամենի համար, ինչի կարիքն ունենք, և դրանք կուղարկվեն: Անհավատալի՛ է:

«Պետք է ինչ-որ բա՞ն ասեմ: Ես չգիտեի դա»: Սա նկարագրում է այն դասը, որ Աստված սովորեցրեց ինձ հետևյալ պատմության մեջ:

Մի տարի ես սերմ էի ցանել երիտասարդ եղջերուի համար: Ես լիովին վստահ էի, որ ստանալու եմ իմ եղջերուին: Ուստի դուրս

եկա որսի՝ ակնկալելով, որ սովորականի պես կարճ ժամանակում կստանամ իմ երիտասարդ եղջերուին: Երբ նստած էի ծառի վրայի իմ դիտանոցում, իսկապես տեսա երիտասարդ եղջերուի՝ անտառի միջով քայլելիս, բայց նա չափազանց հեռու էր ինձնից, որպեսզի կարողանայի նետով հարվածել նրան: Ես փորձեցի նրան ինձ մոտ բերել, բայց չհաջողվեց: Այդ առավոտ այլևս ոչինչ չտեսա: Հաջորդ առավոտյան դուրս եկա և նույնիսկ մեկ եղնիկ չտեսա: Այդ պահին գիտեի, որ ինչ-որ բան այն չէր:

Երբ երկրորդ օրը դուրս էի գալիս անտառից, սկսեցի աղոթել Սուրբ Հոգով՝ պատասխանի համար: Շատ արագ Սուրբ Հոգին ցույց տվեց, թե ինչն էր սխալ: Երբ ցանեցի իմ եղջերուի համար, պարզապես գրեցի սերմի չեկի վրա, դրեցի այն ծրարի մեջ և փոստով ուղարկեցի: Ես ձեռքերս չդրեցի այդ չեկի վրա և չխոսեցի, ինչպես սովորաբար անում էի: Այն ժամանակ Սուրբ Հոգին հիշեցրեց ինձ այն պատմությունը, որտեղ Հիսուսը բազմացրեց հացն ու ձուկը, և նշեց, որ Հիսուսն օրհնեց դրանք, նախքան կբազմանային: Հիշում եմ, որ մտածեցի. «Ես պե՞տք է դա անեմ»: Անցյալում մշտապես ձեռքերս դնում էի ծրարի վրա և խոսում, բայց այդ տարի ծրարն ուղարկելու օրն այնքան զբաղված էի, որ մոռացա դա անել: Ես մտածում էի, որ սերմը ցանելը բավական էր, որ եղնիկը բերվեր Թագավորության իրավասության ներքո:

Ես մտահոգված էի իմ սխալն ուղղելու և Թագավորության մասին իմ նոր հասկացողությունը ստուգելու կապակցությամբ, որպեսզի տեսնեի՝ արդյո՞ք ճիշտ էի: Այնպես որ՝ կրկին ցանեցի իմ սերմը երիտասարդ եղջերուի համար, բայց այս անգամ հետևեցի, որ ցանելիս խոսեի սերմի վրա: Երբ ասում եմ՝ խոսել սերմի վրա, թո՛ւյլ տվեք օրինակ բերել, թե ինչ կարող էի ասել. «Հա՛յր, այսօր երբ ցանում եմ այս սերմը, ես ստանում եմ իմ երիտասարդ եղջերուին, Հիսուսի անունով: Ես անվանում եմ այն կատարված՝ համաձայն Մարկոսի 11.24-ի, և շնորհակա՛լ եմ դրա համար: Սո՛ւրբ Հոգի, կանգնեցրո՛ւ այդ եղջերուին այնպիսի հեռավորության վրա, որ կարողանամ գերազանց կրակոց արձակել, Հիսուսի անունով, ամե՛ն»: Ինչպես տեսնում եք, ոչ մի արտասովոր բան, բայց ես չեմ խնդրում կամ չեմ աղաչում եղնիկի համար: Ես

հռչակում եմ՝ հայտնի դարձնելով իմ խնդրանքը: Զինված ուժերի առաջնագծում գտնվողը զինամթերք խնդրելու կարիք չունի. նա պարզապես պահանջագիր է ներկայացնում: Այլ խոսքով՝ նրան արդեն օրինականորեն հասանելի է այն ամենը, ինչի կարիքն ունի, և խնդրելու անհրաժեշտություն չկա, պարզապես պետք է ասել. «Փոխանցե՛ք զինամթերքը»:

Հաջորդ առավոտյան՝ նախքան լույսը բացվելը, ես իմ դիտանոցում էի, և հենց անտառը սկսեց մոխրագունել, տեսա մի միայնակ եղջերու, որը շարժվում էր իմ ուղղությամբ: Չափազանց մութ էր կրակոց արձակելու համար, բայց ես տեսնում էի, թե ինչպես էր կենդանին մոտենում ուղիղ իմ ծառին: Երբ նա մոտեցավ, կանգնեց և հաջորդ 15 րոպեների ընթացքում դանդաղ քայլեց իմ ծառի շուրջը: Մեղմ ասած՝ ես ապշած էի. ղջերուն մնաց իմ ծառից 18 մետր հեռավորության վրա և պարզապես դանդաղ պտտվեց դրա շուրջը:

Երբ անտառի լույսն աստիճանաբար պայծառացավ, ես տեսա, որ այն եղջյուրներով եղջերու չէր: Իրականում, այն նման էր էգ եղնիկի, քանի որ ես չէի կարողանում նշմարել «կոճակներ» եղջերուի գլխի վրա: Դեռևս ամբողջովին չէր լուսացել, բայց այժմ օրենքով թույլատրվում էր կրակել, քանի որ Օհայոյում կրակոցի թույլատրելի ժամանակն առավոտյան էր: Ես չէի կարող ասել, որ այն երիտասարդ եղջերու էր, ինչպես նշեցի, բայց նաև գիտեի, որ շատ անգամներ փոքրիկ կոտոշները մորթու տակ էին լինում: Ես մտածեցի, որ որքան էլ եղջերուն իրեն տարօրինակ պահեր, այն պետք է որ իմ եղջերուն լիներ, ուստի կրակոց արձակեցի և եղջերուին վայր գցեցի: Երբ մոտեցա նրան, հաճելիորեն տեսա փոքրիկ «կոճակները» և հասկացա, որ այն իսկապես իմ երիտասարդ եղջերուն էր: Ես թողեցի եղջերուին այնտեղ, որտեղ ընկած էր, և շտապեցի տուն՝ դանակի հետևից, քանի որ մոռացել էի այն բերել:

Երբ վերադարձա եղջերուի մոտ, տեսա, որ Թիմը քայլում էր իմ ուղղությամբ: Նա հարցրեց, թե արդյոք տեսել եմ որևէ բան, և ես բացատրեցի առավոտվա իրադարձությունները: Երբ մոտեցանք այն տեղին, որտեղ ընկած էր եղջերուն, նա ասաց, որ վերջին երեք օրում, որ անցկացրել է անտառում, նույնիսկ մեկ եղնիկ

չի տեսել: Երեք օրերին էլ Թիմն ինձ հետ էր դուրս եկել անտառ, և երբ նա ասաց դա, ես հասկացա, թե որն է խնդիրը: Հիշեցի այն օրը, երբ նա եկավ իմ աշխատասենյակ և հանձնեց մի չեկ, որը ցանում էր եկեղեցու մեջ՝ որպես սերմ իր եղնիկի համար: Ես հիշեցի, որ նա նույնպես չխոսեց իր սերմի վրա: Ես ժամանակ հատկացրի և բացատրեցի նրան, թե ինչ էր Աստված ցույց տվել ցանելիս սերմի վրա խոսելու վերաբերյալ:

Այդ երեկո Թիմն ու ես գործեր ունեինք Կոլամբուսում և տունդարձի ճանապարհին անցնելու էինք եկեղեցու կողքով: Թիմը հարցրեց՝ կարո՞ղ է արդյոք կանգ առնել և կրկին ցանել իր սերմը՝ այս անգամ խոսելով դրա վրա: Երբ նստեցինք իմ աշխատասենյակում, նա պատրաստեց իր սերմը, և ես տեսա, որ նա ցանում էր վեցճյուղանի եղջյուրներով եղջերուի համար: Ես մտածեցի, որ դա բավականին համարձակ և հստակ հռչակում է:

Հաջորդ առավոտյան Թիմը գնաց նույն ծառի մոտ, որտեղ ես եղել էի մեկ օր առաջ: Նա ունեցավ նույն փորձառությունը, ինչ ես՝ մեկ օր առաջ: Նախքան լույսը կբացվեր, մի եղջերու մոտեցավ ուղիղ այդ ծառին և պարզապես պտտվեց դրա շուրջը՝ մինչև կրակոցի թույլատրելի ժամը: Թիմը կրակոց արձակեց և զգաց, որ խոցեց եղջերուին: Դժբախտաբար, եղջերուն փախավ տեսադաշտից: Թեև երկու ժամ փնտրեցինք, բայց չկարողացանք տեղորոշել նրան: Զարմանալիորեն, այդ օրն՝ ավելի ուշ, մեր ընկերներից մեկը, ով մեզնից 1200 մետր հեռու է ապրում, ասաց, որ իր հարևանն այդ առավոտ արթնացել է և իր մերձուղու վրա սատկած վեցճյուղանի եղջերու է գտել: Եղջերուն խոցված էր նետով: Այս հարևանի տունը մեր անտառից հենց այն ուղղության վրա էր, որով եղջերուն փախչել էր: Ընկերս ասաց, որ հարևանը, չիմանալով, թե ով է խփել եղջերուին, հենց այդ առավոտ մորթել է: Գիտեմ, որ խելացնոր պատմություն է, բայց դրանից դաս քաղեցինք:

Խոսեք ձեր սերմի վրա, երբ արձակում եք այն, ճիշտ այնպես, ինչպես Հիսուսն արեց:

Ի դեպ՝ Թիմը նոր սերմ ցանեց և հաջորդ շաբաթ գնաց ու ստացավ իր եղջերուին:

Երբ խոսում եք, եղե՛ք հստակ

Գիտեմ, որ վեցճյուղանի եղջերուն բավականին հստակ է, բայց ինչպես պարզվում էր, Թագավորությունն է հստակ: Օրինակ, հայացք նետենք բնությանը:

> *«Որովհետև Նրա աներևույթ բաները աշխարհի սկզբից ստեղծվածներով իմացվելով տեսնվում են, որն է՝ Նրա մշտնջենավոր զորությունը և Աստվածությունը, այնպես, որ (մարդիկ) անպատասխան մնան»:*
>
> – Հռոմեացիների 1.20

Աստվածաշունչն ասում է, որ Աստծո աներևույթ հատկությունները երևում են բնության մեջ: Ուստի՝ թույլ տվեք հարցնել. «Որքա՞ն մանրակրկիտ է բնությունը»: Չափազանց մանրակրկիտ: Եթե ձեզ ասեի, որ պատրաստվում եմ մեքենա գնել, անմիջապես կհարցնեիք. «Ինչ մեքենա», այդպես չէ՞: Ձեր մտքում դուք չեք կարողանում տեսնել որևէ մեքենա, երբ ես ասում եմ՝ մեքենա: Դուք տեսնում եք «տվյալ մեքենան»՝ «Ֆորդ» կամ «Շեվրոլետ», որոշակի մոդելի, որոշակի գույնի շատ հստակ մեքենա: Մեքենա բառը որևէ պատկեր չի առաջացնում. դուք մշտապես որոշակի մեքենա եք պատկերացնում: Այսպես պետք է լինեք նաև ձեր աղոթքի կյանքում:

Երբևէ օրինական փաստաթուղթ կարդացե՞լ եք: Համոզված եմ՝ կարդացել եք: Դրանք չափազանց մանրակրկիտ են: Այն, ինչ ձեր խոսքերով բաց եք թողնում, իրականում այդպես էլ կա, նույնիսկ երբ չեք ցանկանում, որ դա լինի: Տեսե՛ք, թե ինչպես էր Հիսուսը ծառայում: Նա հասկանում էր խոսքերի կարևորությունը:

> *«Եվ երբ որ սարից իջավ, շատ ժողովուրդներ գնացին Նրա ետևից: Եվ ահա մի բորոտ՝ գալով երկրպագում էր Նրան և ասում. «Տե՛ր, թե որ կամենաս, կարող ես ինձ սրբել»:*
>
> *Եվ Հիսուսը ձեռքը մեկնելով՝ նրան դիպավ և ասաց. «Կամենո՛ւմ եմ՝ սրբվի՛ր»: Եվ նրա բորոտությունը շուտով սրբվեց»:*
>
> – Մատթեոս 8.1-3

Ուշադրություն դարձրեք, որ ոչինչ տեղի չունեցավ, մինչև Հիսուսը չասաց. «Սրբվի՛ր»:

> *«Եվ երբ որ Նա այն կողմը՝ Գերգեսացիների երկիրն անցավ, երկու դիվահարներ պատահեցին Նրան, գերեզմաններից դուրս եկած և շատ չար, մինչև որ մեկը չէր կարող այն ճանապարհով անցնել: Եվ ահա աղաղակեցին և ասացին. «Քեզ ի՞նչ բան կա մեզ հետ, Հիսո՛ւս՝ Աստծո Որդի, եկել ես այստեղ ժամանակից առաջ մեզ տանջելո՞ւ»:*
>
> *Եվ նրանցից հեռու շատ խոզերի երամակ կար, որ արածում էր: Եվ դևերն աղաչում էին նրան և ասում. «Եթե մեզ հանում ես, հրամա՛ն տուր մեզ այն խոզերի երամակը գնալու»:*
>
> *Եվ նրանց ասաց՝ գնացե՛ք: Եվ նրանք դուրս եկան և գնացին խոզերի երամակի մեջ: Եվ ահա խոզերի ամբողջ երամակն այն գահավեժ տեղից վազեց ծովը, և ջրերի մեջ մեռան»:*
>
> – Մատթեոս 8.28-32

Խնդրում եմ, նկատի առեք, որ դևը խոսում էր Հիսուսի հետ և չէր փախչում: Իրականում նրանք զրուցում էին: Դևը հեռացավ միայն այն ժամանակ, երբ Հիսուսն ասաց՝ գնա՛: Դուք ղեկավարում եք, դուք ունեք բանալիները, բայց դուք պետք է խոսեք: Ինչոր բան ասեք: Հիշեցնեմ, Աստծո Թագավորությունը օրենքների թագավորություն է՝ իշխանության սահուն հոսքով: Ձեր խոսքերը նշանակություն ունեն:

Նախքան առաջ կշարժվենք, ամփոփենք այն, ինչ սովորեցինք: Երբ Հիսուսն օրհնեց հացն ու ձուկը, դրանք փոխեցին թագավորությունները: Եվ ինչպես Հիսուսը, դուք պետք է հրահանգ տաք ձեր սերմին, երբ արձակում եք: Ի՞նչ եք ակնկալում տեսնել, երբ արձակում եք ձեր սերմը: Յուրաքանչյուր սերմին կցված է մի պատկեր: Յուրաքանչյուր խոստում նույնպես

ԴՈՒՔ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԵՔ, ԴՈՒՔ ՈՒՆԵՔ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ, ԲԱՅՑ ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԽՈՍԵՔ:

իր հետ պատկեր է կրում: Սրա մասին մենք կխոսենք ավելի ուշ, բայց հաջորդ հարցը, որ ցանկանում եմ տալ, հետևյալն է. որտեղ պետք է ցանեք ձեր սերմը:

Որտեղ պետք է ցանեք ձեր սերմը

Նախևառաջ՝ անհրաժեշտ է, որ ցանեք երկրային տիրույթում՝ Աստծո առաջադրանքի մեջ: Խնդրում եմ, նկատի առեք, որ ես չեմ խոսում առատաձեռնության բնական ապրելակեպի մասին, երբ տալիս եք կարիքավորներին:

> *«Աղքատին ողորմողը, Տիրոջն է փոխ տալիս, և Նա կհատուցի նրա վարձը»:*
>
> – Առակաց 19.17

Ճիշտ է, որ երբ առատաձեռն եք, Աստված վարձահատույց է լինում:

> *«Որովհետև սա եմ ասում, թե՝ խնայելով սերմողը, խնայելով էլ կինձի, և առատությամբ սերմողը, առատությամբ էլ կինձի: Ամեն մեկը՝ ինչպես որ սրտի հոժարություն կա, ոչ թե տրտմությունով կամ հարկադրությունով. որովհետև Աստված սիրում է ուրախ տվողին: Բայց Աստված կարող է բոլոր շնորհքներն ավելացնել ձեզանում, որ ամեն բանի մեջ, ամեն ժամանակ, ամեն բավականություն ունենալով՝ ամեն բարի գործի համար ավելանաք: Ինչպես գրված է.*
>
> *«Փռեց՝ աղքատներին տվեց. Նրա արդարությունը մնում է հավիտյան»:*
>
> *Բայց Նա, որ սերմ ցանողին սերմ է պարգևում, և հաց՝ կերակուրի համար, Նա <u>կպարգևի և կշատացնի ձեր սերմունքը և կաճեցնի ձեր արդարության պտուղը: Դուք ամեն կերպ հարստացած կլինեք, որպեսզի առատաձեռն լինեք ամեն առիթով,</u> և մեր միջոցով ձեր առատաձեռնությունը գոհություն կբերի Աստծուն:*
>
> *Որովհետև այս տուրքի ծառայությունը ոչ թե միայն սուր-*

բերի պակասությունն է լրացնում, այլև շատերի գոհությունը շատացնում է Աստծո համար: Որ այս ծառայության փորձով Աստծուն փառավորեն ձեր՝ Քրիստոսի Ավետարանին հնազանդ դավանության համար և այն առատաձեռնության համար, որ կիսում եք նրանց և ամենի հետ: Եվ ձեզ համար նրանց աղոթքով նրանց սրտերը կփափագեն ձեզ՝ Աստծո այն անգերազանցելի շնորհքի համար, որ ձեզանում է: Եվ շնորհակալություն Աստծուն Նրա անպատմելի պարգևի համար»:

– Բ Կորնթացիների 9.6-15, NIV

Ակնհայտ է, որ Աստված վարձահատույց է լինում նրանց, ովքեր առատաձեռն են: Բայց ես խոսում եմ **թիրախային զոհաբերության** և **թիրախային հունձքի** մասին: Հիշե՛ք, ես անուն եմ տալիս իմ սերմին զոհաբերության այս տեսակի ժամանակ: Առատաձեռն լինելը կարեկցանքի գործողություն է, և ես սովորաբար անուն չեմ տալիս իմ առատաձեռնության նվիրատվությանը, ավելի շուտ, ես հաստատում եմ այն, ինչ նոր կարդացինք Բ Կորնթացիների 9-րդ գլխում, այսինքն՝ Աստված կտա ինձ սերմ՝ առատաձեռն լինելու համար, և երբ շարունակեմ առատաձեռն լինել, Նա կավելացնի իմ հարստությունը, որպեսզի ես կարողանամ ավելացնել իմ նվիրատվությունը:

Թիրախային զոհաբերություն

Ես նշեցի, որ երբ ցանում եմ, ներգրավվում եմ, ինչպես ես եմ անվանում, թիրախային զոհաբերության մեջ: Կրկնեմ, այս զոհաբերությունն ունի թիրախային հունձք: Սա հենց այն է, ինչ Հիսուսն արեց Մարկոսի 6-րդ գլխում: Նա բախվեց շատ հստակ կարիքի, և Նրան շատ հստակ պատասխան էր անհրաժեշտ: Նա պետք է կերակրեր այդ 20.000 մարդուն, ուստի Նրան անհրաժեշտ էր շատ յուրահատուկ սերմ, որով հնարավոր էր աշխատել: Այս դեպքում Նա չէր ցանում սերմը. Նա ընդունում էր սերմը: Եվ սա կամավոր՝ «տվե՛ք այն, ինչ ցանկանում եք» զոհաբերություն չէր: Նա պետք է գտներ մեկին, ով կցաներ յուրահատուկ սերմ, որպեսզի այն բազմանար Աստծո ձեռքերում: Այս է պատճառը,

որ Նա ասաց. «Գնացեք և տեսեք, թե քանի հաց ունեք»: Հացն ու ձուկն այն էին, ինչ Նրան անհրաժեշտ էր այդ ժամանակ. ոչ փայտ, ոչ թիկնոց, այլ հենց հաց ու ձուկ:

Համոզված եղեք, որ երբ ցանում եք, տալիս եք հրահանգ՝ լրացնելու այն հստակ կարիքը, որ ունեք: Երբ որևէ բանի կարիք եմ ունենում, սովորաբար կատարում եմ այսպիսի զոհաբերություն՝ հստակ գիտակցելով իմ կարիքը և ցանելիս անուն տալով իմ սերմին: Երբ տալիս եմ, սովորաբար անում եմ դա չեկի միջոցով կամ առցանց, այնպես որ, ըստ էության, ես գրում եմ դա չեկի վրա: Իսկ եթե Համացանցի միջոցով եմ տալիս, գրառում եմ կատարում իմ նշումների մեջ՝ նշելով այդ զոհաբերությանը տված հրահանգը, այն տալու ամսաթիվը և ժամը: Հիշեք, դուք չեք ակնկալում, որ ապագայում կստանաք այն, ինչի համար աղոթեցիք կամ ինչ հռչակեցիք. դուք ստանում եք այն ժամանակ, երբ աղոթում եք:

> *«Սրա համար ասում եմ ձեզ, թե՝ այն, ինչ որ աղոթք անելով խնդրեք, հավատացեք, թե կառնեք, և կլինի ձեզ»:*
>
> – Մարկոս 11.24

Այս թիրախային զոհաբերությունը ցանվում է Թագավորության առաջադրանքի մեջ՝ որևէ բանի, որ Աստված իրականացնում է երկրային տիրույթում: Սովորաբար դա ծառայություն է, որտեղ Աստված որևէ տղամարդու կամ կնոջ տվել է առաջադրանք, որը ֆինանսավորման կարիք ունի: Կրկնեմ, սա տարբերվում է աղքատներին կամ կարիքավորներին օգնելուց, որը նույնպես Աստծո ծրագիրն է, և Աստված շատ հստակ է՝ այսպիսի զոհաբերության դիմաց վարձահատույց լինելու հարցում: Մենք խոսում ենք թիրախային զոհաբերության մասին: Իհարկե, դուք կարող եք այսպիսի զոհաբերություն կատարել ձեր տեղական եկեղեցում, և, ըստ էության, ձեր թիրախային զոհաբերությունը մեծ չափով պետք է ուղղվի հենց ձեր եկեղեցուն:

Խոսելով տնային եկեղեցու մասին՝ ձեր տասանորդը նույնպես պատկանում է ձեր տեղական եկեղեցուն: Շատերն ինձ հարցնում են, թե կարո՞ղ են արդյոք տասանորդ տալ մեր ծառայությանը, քանի որ մեր առցանց եկեղեցու մաս են կազմում: Ես պատաս-

խանում եմ նրանց. «Իհա՛րկե, կարո՛ղ եք»: Բայց նաև քաջալերում եմ գտնել լավ տնային եկեղեցի իրենց տարածքում: Բայց եթե մենք ենք նրանց հիմնական եկեղեցին, այդ դեպքում, այո՛, նրանք կարող են տասանորդն ուղարկել մեզ: Ինչևէ, որպես հովիվ, ես գիտեմ, որ մարդիկ ավելի արագ են աճում և ավելի ուժեղ են դառնում, երբ լավ տեղական եկեղեցու անդամ են: Մյուս կողմից, եթե դուք այնպիսի եկեղեցու անդամ եք, որը կասկածամտություն և անհավատություն է սովորեցնում, ապա չեք ցանկանա աջակցել նման եկեղեցուն կամ հաճախել նման եկեղեցի:

Այսպիսով՝ ինչ վերաբերում է առաջադրանքի մեջ ցանելուն, դուք կցանկանաք ցանել համաձայնության մեջ, ինչ-որ մեկի կամ ինչ-որ ծառայության մեջ, որը հասկանում է հավատքը և գիտի, թե ինչ է համաձայնությունը: Զգո՛ւյշ եղեք այն բազմությունից, որն ասում է. «Մենք կկործանվենք, եթե չցանեք»: Այս արտահայտության մեջ չկա հավատք: Աստվածաշունչը շատ հստակ ասում է՝ չցանել հարկադրանքից դրդված: Եթե Աստծո մարդկանցից մեկը ստիպում է ձեզ մեղավոր զգալ այն բանի համար, որ չեք ցանում, կամ ճնշում է գործադրում ձեզ վրա, որպեսզի ցանեք, ավելի լավ է՝ պահեք ձեր գումարը. հավատքը խթանման կարիք չունի:

Եթե ցանկանում եք ցանել, բայց իրականում առաջնորդություն չունեք որևէ տեղ տալու, այդ դեպքում ցանեք այնպիսի առաջադրանքի մեջ, որը զգում եք, որ ունի ակնհայտ արդյունքներ և սովորեցնում է հավատալ այն ամենին, ինչ Աստված ասում է: Երբեք մի՛ ցանեք այնպիսի եկեղեցու մեջ, որն ասում է, որ Աստված սպանում է մարդկանց կամ քաղցկեղով է հիվանդացնում, որպեսզի ինչ-որ բան սովորեցնի, կամ նմանատիպ անհեթեթություն է տարածում: Ցանե՛ք այնպիսի ծառայության մեջ, որը սովորեցնում է Աստծո Խոսքը:

Հիշե՛ք, ցանելիս պետք է դավանեք կամ խոսեք ձեր սերմին: Դրենդան ու ես արել ենք սա այն ժամանակվանից, երբ Տերը սովորեցրեց, թե ինչպես ստանամ իմ եղնիկին առաջին տարում: Իհարկե, եղավ մի տարի (որի մասին ես խոսեցի այս գլխում), երբ ես չդավանեցի իմ սերմի վրա, և դուք գիտեք, թե ինչ պատահեց: Տարիներ շարունակ մենք հետևողականորեն խոսում էինք մեր

սերմի վրա՝ առանց մտածելու դրա մասին կամ, նույնիսկ, իմանալու, որ դա էական էր ցանելու մեջ: Ես ենթադրում էի, որ ինքնին տալն այն ամենն էր, ինչ անհրաժեշտ էր իմ զոհաբերությունը Թագավորության իրավասության ներքո բերելու համար, և իրականում այդպես է: Բայց առանց հստակ հրահանգի՝ չկա կենտրոնացում, չկա ճշգրիտ հունձք, իսկ եթե դուք չգիտեք ճշգրիտ հունձքը, այդ դեպքում նաև բաց կթողնեք հունձքի ժամանակը:

Եղնիկների որսորդությունից ես շատ դասեր եմ քաղել: Եզրափակելով այս գլուխը՝ հավատքն արձակելու վերաբերյալ, կցանկանայի ավելացնել ևս մեկ պատմություն:

Հավատքով որսորդություն անել սովորելուց ընդամենը մի քանի տարի անց ինչ-ինչ պատճառով որոշեցի, որ այդ տարի սերմ չեմ ցանելու: Ես կնոջս հետ չխոսեցի այդ մասին. հրացանով որսաշրջանը մոտենում էր, բայց ես ոչինչ չէի անում ցանելու կամ եղնիկի համար աղոթելու ուղղությամբ: Նախորդ մի քանի տարիներին եղնիկների որսորդության հրաշալի պատմություններ էի ունեցել՝ գործի դնելով այն, ինչ Աստված սովորեցրել էր, բայց ենթադրում եմ, որ այդ ամենը նոր էր ինձ համար, և այն ժամանակ պարզապես զգացի, որ ունեմ հավատք իմ եղնիկի համար, և հարկ չկար հատուկ ցույց տալու, որ արձակում եմ հավատքս: Ինչևէ, դուք կարող եք կռահել, թե ինչ տեղի ունեցավ:

Որսաշրջանի բացման օրը՝ առավոտյան, տեսա մի եղջերուի, որը վազում էր ինձնից մոտավորապես 274 մետր հեռավորության վրա: Երեկոյան որսը նույնպես ձախողվեց: Երբ այդ օրը դատարկաձեռն վերադարձա տուն, Դրենդայի ընկերուհին մեր տանն էր, և նրան ասացի, որ որսորդության գործերն այդքան էլ լավ չեն: Ես ասացի, որ չեմ հետևել այն ցուցումներին, որ Աստված տվել էր իմ եղնիկին որսալու համար: Դրենդան ասաց. «Ես մտածում էի այդ մասին, երբ դու դուրս եկար»: Ես ընդունեցի իմ սխալը և խնդրեցի նրանց աղոթել ինձ հետ որսի համար: Ես չեկ գրեցի՝ որպես սերմ եղնիկի համար, բայց որևէ սեռ չնշեցի: Բոլորս ձեռքներս դրեցինք սերմի վրա, աղոթեցինք և հավատքով ստացանք եղնիկին:

Հաջորդ օրը չկարողացա որսի դուրս գալ առավոտյան, ուս-

տի գնացի երեկոյան: Ես աչք էի դրել տարածքի սահմանագծին գտնվող մի մեծ թխկիի, որը կարծում էի, որ հրաշալի դիտանոց կծառայեր, և հենց այդ ուղղությամբ էլ շարժվեցի: Շատ տաք երեկո էր դեկտեմբեր ամսվա համար, ու եթե ճիշտ եմ հիշում, գրեթե 21 աստիճան տաքություն էր, և քամոտ եղանակ էր: Մի քանի րոպե էր մնացել երեկոյան որսին, երբ մի հսկա եղնիկ դուրս եկավ անտառից և մտավ այն դաշտը, որին նայում էր թխկին: Նա կանգնեց կողքով՝ տալով ինձ գերազանց կրակոց արձակելու հնարավորություն: Երբ գնահատեցի իրավիճակը, հասկացա, որ եղնիկն ինձնից հեռու էր մոտավորապես 68 մետր, և ես մի փոքր անվստահ էի կրակոցի հասանելիության հարցում, քանի որ օգտագործում էի 12 տրամաչափի հարթափող հրացան: Բայց ես դիպուկ հարված հասցրի, և եղնիկը վայր ընկավ: Ես ոգևորված էի: Տուն հասա մինչև մութն ընկնելը, և Դրենդայի ընկերուհին կրկին եկավ, ու մենք ցնծացինք Թագավորության օրենքներով, միաժամանակ ես հասկացա, որ դաս էի քաղել:

Այս գլխում ամփոփեցինք Թագավորությունից ինչ-որ բան ստանալու երկրորդ սկզբունքը.

Քայլ 2. Արձակել սերմը Աստծո Թագավորության մեջ:

Մենք իմացանք, որ երբ մեր սերմը ցանում ենք Թագավորության առաջադրանքի մեջ, այն փոխում է թագավորությունները: Ամփոփեցինք նաև, թե ինչպես ենք արձակում մեր սերմը՝ խոսքերով և հրահանգով: Ահա ևս մի քանի կետ, որ պետք է հիշենք առաջ շարժվելիս.

1. Մենք կարող ենք անուն տալ փողին:
2. Մենք կարող ենք ցանել հստակ կարիքի համար:
3. Մենք չենք կարող անուն տալ տասանորդին:
4. Տալը բանաձև չէ. այն պետք է արվի հավատքով:
5. Հստակ զոհաբերությունն ունի հստակ հունձք:

Մենք արձակում ենք մեր սերմը խոսքերով:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՎԱՏՔԸ ԲԱՆԱԼԻՆ Է

Մեր եկեղեցին հիմնելուց մի քանի տարի հետո մեքենայով տուն էի վերադառնում և գրեթե հասնում էի մեր հին ագարակային տան մերձուղուն, երբ առջևում ոստիկանական մեքենայի վառվող լույսեր տեսա: Ոչ մի նոր բան. ես ենթադրեցի, որ ինչ-որ մեկը գերազանցել էր արագությունը: Եվ, իհարկե, երբ դանդաղեցրի մեքենայի ընթացքը, տեսա, որ ոստիկանական մեքենայի դիմացից մի մեքենա դանդաղորեն դուրս եկավ և շարժվեց ճանապարհի ուղղությամբ: Երբ մոտեցա ոստիկանական մեքենային և դանդաղեցրի ընթացքս, որպեսզի անցնեի նրա կողքով, ինչ-որ բան գրավեց ուշադրությունս: Այնտեղ՝ ճանապարհի եզրին, մի գեղեցիկ ութճյուղանի եղջյուրներով եղջերու էր ընկած: Անմիջապես հասկացա, թե ինչ էր պատահել: Այն մեքենան, որ հեռացավ, հարվածել էր եղջերուին:

Ես կանգնեցրի մեքենան, ապա մոտեցա ոստիկանական մեքենային և ոստիկանից հարցրի, թե ինչ էր պատրաստվում անել եղջերուին: Քանի որ իմ տան մերձուղին 365 մետր հեռու էր գլխավոր ճանապարհից, և ես ունեի երեխաներ, որոնց պետք էր կերակրել, մտածեցի, որ կհարցնեմ՝ արդյո՞ք կարող եմ վերցնել եղջերուին: Ոստիկանը կարծես թեթևացավ, երբ տեսավ մեկին, ով ցանկանում էր այդ եղջերուին: Նա գրի առավ իմ անունն ու հասցեն և ինձ պիտակ տվեց եղջերուի համար:

Նախքան հրաժեշտ կտայինք միմյանց, նա ասաց, որ ճանապարհին մշտապես եղջերուների են հարվածում, և եթե ես հետաքրքրված եմ, իմ անունը կընդգրկի ցուցակում, որպեսզի զանգի և տեղեկացնի ճանապարհին սպանված եղջերուների մասին:

Մտածեցի, որ դա հրաշալի է: Վաղ աշուն էր, և ես դեռևս դուրս չէի եկել որսի: Մինչ այս ես աղեղով որս չէի արել, իսկ հրացանով որսաշրջանը չէր սկսվելու մինչև դեկտեմբերի առաջին շաբաթը, այնպես որ՝ մտածեցի, որ որսի միս ունենալը հրաշալի կլիներ: Շատ ժամանակ չէր անցել, երբ ոստիկանական բաժնից զանգ ստացա մեկ այլ եղնիկի համար: Նախքան հրացանով որսաշրջանի սկսվելը՝ ես արդեն մորթել էի չորս կամ հինգ եղնիկ: Հստակ թիվը չեմ կարող հիշել, բայց գիտեմ, որ առնվազն չորսն էին: Ասածս այն է, որ իմ սառցախցիկներն արդեն լիքն էին, երբ հրացանով որսաշրջանը բացվեց:

Զարմանալի է, բայց Դրենդան քաղաքից դուրս էր լինելու մեկշաբաթյա որսաշրջանի ընթացքում: Չեմ հիշում, թե ինչու էր նա բացակայելու, բայց գիտեմ, որ մեզ համար անսովոր էր մի ամբողջ շաբաթ առանձին լինելը: Այնպես որ՝ ես նրա հետ չաղոթեցի եղնիկի որսի համար և նույնիսկ սերմ չցանեցի: Ենթադրում եմ, որ մտածում էի՝ ինձ համար միևնույն է՝ եղնիկ կորսամ, թե ոչ, քանի որ իմ սառցախցիկը լիքն էր: Բայց դուրս եկա որսի. դրանում կարող եք չկասկածել: Կարճ ասած՝ հրացանով որսաշրջանի ընթացքում ամբողջ շաբաթ դուրս եկա որսի և նույնիսկ մեկ կրակոց չարձակեցի: Երբ Դրենդան վերադարձավ տուն, ինձ հիշեցրեց, թե ինչ էր Աստված արդեն սովորեցրել՝ մեր եղջերուին ստանալու համար սերմ ցանելու և միասին աղոթելու վերաբերյալ:

Եկավ հաջորդ տարին, և այս անգամ ես չէի պատրաստվում կրկնել նույն սխալը: Չնայած ոստիկանական բաժանմունքից մի քանի անգամ զանգեցին մեզ ճանապարհին սպանված եղնիկների համար, կարծում եմ, ես վերցրի միայն դրանցից մեկը, քանի որ ծրագրում էի որսի մսի մեծ մասը ձեռք բերել իմ որսորդությունից: Այս անգամ Դրենդան ու ես ցանեցինք մեր սերմը և աղոթեցինք, երբ սերմն արձակեցինք եղջերուի համար: Մենք չհստակեցրինք, թե ինչ չափի եղջերու ենք ուզում, պարզապես՝ եղջերու: Ես չկարողացա որսի դուրս գալ որսաշրջանի բացման առավոտյան, բայց խանդավառությամբ սպասում էի երեկոյան որսին: Ցավոք, պետք է ասեմ, որ կրկին՝ ոչ մի եղնիկ: Ես իսկապես շփոթված էի, երբ անտառում նստելուց հետո այդ երեկո ճանապարհի ընկա տուն:

Երբ նստեցի ճաշի, հանկարծ հեռախոսը զանգեց: Ոստիկանական բաժանմունքից էր: Հաղորդեցին, որ ունեն ճանապարհին սպանված եղջերու և հարցրին, թե արդյո՞ք չեմ ցանկանա վերցնել: Ես հարցրի նրա գտնվելու տեղը, և նրանք փոխանցեցին հասցեն: Անհավատալի՜ էր: «Կարո՞ղ եք կրկնել հասցեն»,- հարցրի ես: Ոստիկանության աշխատակցուհին կրկնեց հասցեն, և հասկացա, որ դա իմ հասցեն էր: Ես ցնցված էի: Մոտեցա պատուհանին. տան մերձուղու վերջնամասում կարմիր թարթող լույսեր տեսա: Ես ասացի, որ հիմա կլինեմ այնտեղ: Մեր տան մերձուղին գլխավոր ճանապարհից հեռու էր մոտավորապես 274 մետր, և հիշում եմ, որ քայլելով անցա այդ տարածությունը գրեթե լիարժեք թերահավատությամբ: Երբ հասա եղնիկին, այն մի հսկայական երիտասարդ եղջերու էր՝ հրաշալի վիճակում: Ես որոշ ձևաթղթեր լրացրի, շնորհակալություն հայտնեցի ոստիկանին և եղնիկին քարշ տալով բերեցի ախոռ: Շփոթված էի: Շատ. ես այլևս չմտածեցի եղնիկների որսորդության մասին մինչև հաջորդ տարվա սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամիսը:

Ո՞րն է ձեր աղբյուրը

Չեմ կարող հիշել, թե որ ամիսն էր, բայց դուրս էի եկել տանս ետնամասում գտնվող դաշտում վազելու, ինչպես ժամանակ առ ժամանակ անում էի մարզվելու նպատակով: Մինչ վազում էի, աղոթում էի՝ թե ինչ տեղի ունեցավ վերջին երկու տարում: Հանկարծ, վազելիս շատ հստակ մտքիս եկան «ոստիկանության ցուցակ» բառերը: Մի պահ մտածեցի՝ Աստված ինչ-որ բա՞ն էր փորձում ասել: Եվ հասկացա. իմ վստահությունն Աստծո Խոսքի կամ Նրա Թագավորության մեջ չէր: Իմ վստահությունը ոստիկանության ցուցակի մեջ էր: Ես գիտեի, որ եթե չորսայի իմ եղջերուին, ոստիկանական բաժանմունքի ցուցակն ինձ եղջերու կտրամադրեր:

Այնուհետև հասկացա նաև, թե ինչու նախորդ տարի իմ եղջերուին ստացա տան մերձուղու վերջում, այլ ոչ թե այնտեղ, որտեղ պետք է կրակոց արձակեի: Իմ հավատքն իրականում ոստիկանության ցուցակի մեջ էր: Երբ Դրենդան ու ես ցանեցինք այդ

տարվա եղջերուի համար, առաջին անգամ եղջերուն հայտնվեց ճիշտ ժամանակին, բայց սխալ վայրում, այդպես չէ՞: Ես երկյուղած կանգնած էի այնտեղ, երբ Սուրբ Հոգին շատ հստակ ցույց տվեց դա: Այն ժամանակ ես հասկացա, որ եղջերուն հայտնվեց ճիշտ այնտեղ, որտեղ իմ հավատքն էր՝ ոստիկանության ցուցակում: Երբ գիտակցեցի դա, վազեցի ուղիղ տուն, անմիջապես զանգեցի ոստիկանական բաժանմունք և իմ անունը հանեցի այդ ցուցակից: Ես հասկացա, որ իմ պահեստային ծրագիրը իմ իրակա՛ն ծրագիրն է: Այդ տարվանից ի վեր երբեք չի եղել, որ եղնիկներն ամեն անգամ չհայտնվեն:

Բայց որքան խաբուսիկ են մեր սրտերը: Մեր վստահությունն այնքան հեշտորեն տեղափոխվում է բնական բաների վրա: Սա մի բան է, ինչից պետք է տեղյակ լինենք և մշտապես զգուշանանք: Հավատքը պահեստային ծրագրի կարիք չունի: Ես մինչև հիմա զարմացած եմ, որ թեև իմ հավատքը ոստիկանության ցուցակի մեջ էր, որսաշրջանի բացման օրը այդ եղնիկը հայտնվեց իմ տան մերձուղու վերջնամասում: Եվ սա ի հայտ է բերում երրորդ սկզբունքը, որ Աստված ցույց տվեց ինձ:

Քայլ 3. Արձակե՛ք ձեր սերմը, երբ հավատքի մեջ եք:

Սա լուրջ խնդիր է, ինչպես ավելի վաղ տեսանք այն պատմության մեջ, երբ աշակերտները չկարողացան տղայից հանել դևը: Հիսուսն ասաց, որ դրա պատճառը նրանց անհավատությունն էր կամ հավատքի պակասը: Ավելի վաղ քննարկեցինք, թե ինչ է հավատքը, և ինչպես կարող ենք հավատք ստանալ, բայց խիստ կարևոր է, որ սովորեք դատել ինքներդ ձեզ՝ արդյո՞ք հավատքի մեջ եք: Թույլ տվեք առաջարկել մի հեշտ թեստ, որով կարող եք իմանալ՝ իսկապես հավատքի մե՞ջ եք, թե՞ ոչ: Փակե՛ք ձեր աչքերը, ի՞նչ եք տեսնում:

> *«Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է»:*
>
> – Եբրայեցիների 11.1

ԵՐԲ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՔ ԱՍՏԾՈ ԽՈՍՏՄԱՆԸ ԵՎ ԼԻՈՎԻՆ ՀԱՄՈԶՎԱԾ ԵՔ, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՈՒՆԻ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԻՐ ԽՈՍՏՈՒՄԸ, ՁԵԶ ԿՏԵՍՆԵՔ ԱՅԴ ԽՈՍՏՈՒՄՈՎ:

Հավատքը հուսացած բաների հաստատությունն է: Հույսը մշտապես իր հետ պատկեր է կրում: Եթե ես ձեզ պաղպաղակ խոստանայի, ձեր մտքում անմիջապես պաղպաղակի կոն կպատկերացնեիք: Եթե հավատայիք, որ ես ազնիվ եմ իմ առաջարկում և ունեմ միջոցներ վճարելու համար, ձեզ կպատկերացնեիք այդ պաղպաղակի կոնով, ինչն էլ հուսացած բանի ապացույցն է:

Նույնը վերաբերում է Աստծո Խոսքին: Երբ հավատում եք Աստծո խոստմանը և լիովին համոզված եք, որ Աստված ունի մտադրություն և միջոցներ իրականացնելու Իր խոստումը, ձեզ կտեսնեք այդ խոստումով: Թեև հենց այդ պահին հնարավոր է՝ չունենաք խոստացված բանը, բայց կվարվեք այնպես, կարծես ունեք, որովհետև ինչ-որ առումով դուք ունեք այն: Խոստումն ուժի մեջ է, մտադրությունն ուժի մեջ է, և այն ձերն է: Ուստի՝ հավատքը, որը լիովին համոզված լինելն է Աստծո մտադրության և զորության մեջ, ձեզ տրված խոստումի հաստատությունն է: Այն նաև դեռևս չերևացող բաների ապացույցն է:

Դուք դեռ պետք է կանխիկացնեք չեկը, ինչն օրինական գործընթաց է, որ կատարվում է բնական տիրույթում և վերաբերում է նաև հոգևոր տիրույթին: Ուստի, երբ ասում եմ. «Փակե՛ք ձեր աչքերը. ի՞նչ եք տեսնում», ես նկատի ունեմ հետևյալը: Եթե դուք չեք կարողանում տեսնել, չեք էլ կարող վերցնել: Բացատրեմ սա շատ պարզ պնդումով: Եթե փակում եք ձեր աչքերը և չեք տեսնում ձեզ խոստումով, դուք հավատքի մեջ չեք: Եթե դուք հիվանդ եք, և երբ փակում եք ձեր աչքերը, տեսնում եք ձեզ բժշկված, նկատի ունեմ՝ տեսնում եք ձեզ բժշկված՝ առանց որևէ վախի, բացարձակ համոզվածությամբ, որ բժշկված եք, ապա դա հավատք է: Բայց եթե փակում եք ձեր աչքերը և դեռևս տեսնում եք ձեզ հիվանդ՝

սպասելով, որ կբժշկվեք, այդ ժամանակ դուք հավատքի մեջ չեք: Եթե փողի կարիք ունեք և հավատում եք Աստծո խոստումին, այդ դեպքում դուք այլևս չեք անհանգստանում փողի համար, այլ տեսնում եք ձեզ այն մատակարարմամբ, որի կարիքն ունեք:

Հավատքը վախի հակառակն է

Այսպիսի վստահության կողքին վախ գոյություն չունի: Եթե դուք շարունակում եք նյարդայնանալ արդյունքի համար, դուք հավատքի մեջ չեք: Ինչ վերաբերում է հավատքին, դուք պետք է իմանաք՝ հավատքի մե՞ջ եք, թե՞ ոչ: Դուք չեք ցանկանա ծանրակշիռ որոշումներ կայացնել, եթե հավատքի մեջ չեք, որովհետև եթե հավատքի մեջ չեք, վախի մեջ եք: Վախը մշտապես խուսափում է ռիսկի գնալուց և համարվում է անհավատություն: Այս է պատճառը, որ ձեզ ասացի, որ մշտապես ցանեք ձեր սերմն այն ժամանակ, երբ հավատքի մեջ եք: Դուք չպետք է ցանեք այն որպես բանաձև՝ պարզապես ցույց տալով, որ զոհաբերություն եք կատարում, որովհետև դա ոչ մի արդյունք չի տա: Դուք պետք է վստահ լինեք այն բանում, ինչ Աստված ասում է, որպեսզի երբ փակեք ձեր աչքերը, միայն տեսնեք ձեզ և այդ խոստումը: Դուք արդեն ունեք այն, դուք տիրում եք դրան, այն ձերն է, և խաղաղությունը փոխարինել է ցանկացած մտահոգության, որ միգուցե ունեցել եք:

> *«Ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով և աղաչանքով (խնդրանքով) և գոհությունով ձեր խնդրվածքները թող հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում»:*
>
> – Փիլիպեցիների 4.6,7

Երբ հավատքի մեջ եք, կա խաղաղություն, որը հիմնված է ոչ թե հանգամանքների, այլ՝ խոստմունքի վրա:

Հավատքի ապացույցը ձեր կարողությունն է՝ պաշտպանվելու օրենքի հոգևոր դատարանում: Քանի որ հավատքը հիմնված է Աստծո Խոսքի վրա, դուք պետք է իմանաք, թե ինչու եք հավա-

տում այն բանին, ինչին հավատում եք: Պատկերացրեք՝ դատական նիստերի դահլիճում եք, և դուք դատապաշտպանն եք: Մեղադրող կողմը նշում է, որ ձեր պաշտպանյալն ապօրինի ապրում է իր պաշտպանյալի տանը, և հայտարարում է, որ տունն իրականում չի պատկանում ձեր պաշտպանյալին, այլ պատկանում է իր պաշտպանյալին: Ի՞նչ կանեիք: Կասեի՞ք, որ ցավում եք, և ձեր պաշտպանյալն անմիջապես կազատի տունը: Եթե ձեր ձեռքում ունեք ստորագրված փաստաթուղթ, վախը կփոխարինվի վստահությամբ, և դուք դատավորին կասեք, որ այդ խաբեբաներին դուրս վռնդեն նիստերի դահլիճից: Ահա թե ինչպես է հավատքը գործում: Այն գիտի ճշմարտությունը, ինքնավստահ է և գրեթե մեծամիտի տպավորություն է թողնում: Այսպիսով՝ կարո՞ղ եք պաշտպանել ձեր դիրքը:

Մի օր Սառան եկավ մեր եկեղեցի՝ չիմանալով, թե որտեղ է հայտնվել, քանի որ նա մեքենայով շրջում էր նոր քաղաքում: Սառան և ամուսինը տեղափոխվել էին Կոլամբուս և աղոթում էին, որ եկեղեցի գտնեն: Երբ մեքենայով շրջում էին, նրանք թեքվեցին մեր մերձուղու կողմը և մտածեցին, որ գուցե փորձեն նաև մեր եկեղեցին: Նրանք այլևս չհեռացան: Ամբողջ կյանքում Սառան տառապել էր ասթմայով: Կյանքն անցկացրել էր հիվանդանոցներում, և հիվանդությունը պատանդ էր վերցրել նրան: Նա սովորել էր, թե ինչպես խուսափեր որոշակի միջավայրերից, որոնք ասթմայի նոպաներ էին առաջացնում, և ինհալատորը նրա հետ էր՝ ուր որ գնում էր:

«Հավատքի կյանք» եկեղեցում նա իմացավ, որ բժշկությունն իր օրինական իրավունքն է, և թե ինչպես կարող է հոգևորապես պաշտպանել իրեն: Մի հավաքույթի ժամանակ, լսելով մեր անդամներից մեկին, ով նկարագրում էր, թե ինչպես է բժշկվել կյանքին սպառնացող հիվանդությունից, նա որոշում կայացրեց: Աստված աչառ չէ: Նա պայուսակից հանեց ինհալատորը և փոխարինեց այն սուրբգրային քարտերով, որոնք նկարագրում էին բժշկվելու նրա օրինական իրավունքը: Ամեն օր նա կարդում էր դրանք: Ամեն անգամ, երբ զգում էր, որ ասթմայի նոպա է ունենալու, ինհալատորի փոխարեն ձեռքը մեկնում էր սուրբգրային

քարտին, և նա մեկընդմիշտ ազատվեց ասթմայի նոպաներից:

Մորաքույրս ընտանեկան մի հավաքույթի ժամանակ մոտեցավ ինձ: Նա խնդրեց, որ աղոթեմ իր համար, քանի որ թոքերում քաղցկեղ կար, և մեկուկես շաբաթից նրան վիրահատելու էին՝ մի մեծ ուռուցք հեռացնելու համար: Նա պատմեց, որ բժիշկները մեկուկես տարի հետևել են նրա թոքերում առաջացած թուրինջի մեծության ուռուցքին: Հանկարծակի այն սկսել է ավելի արագ աճել, և բժիշկներն ասել են, որ այն պետք է հեռացնել: Երբ այնտեղ կանգնած լսում էի նրա պատմությունը, մտաբերեցի, որ նա ամբողջ կյանքում մոլի ծխող է եղել, և գիտեի, որ տարիներ շարունակ եկեղեցի չի հաճախել: Ես խոստացա, որ կաղոթեմ նրա համար, բայց զգում էի, որ այդ պահին նա պատրաստ չէր աղոթքին: Հարցրի նրան, որ նախքան աղոթելը, կցանկանա՞ր կարդալ բժշկության վերաբերյալ նյութեր: Ես ասացի, որ սիրով կաղոթեմ նրա համար եկող կիրակի առավոտյան՝ երկրպագության ծառայությունից անմիջապես հետո: Նա համաձայնեց:

Ես գիտեի, որ տարիներ առաջ նա իր սիրտը հանձնել էր Տիրոջը, բայց չէր ապրել Նրա համար: Հուսով էի, որ բժշկության վերաբերյալ Աստծո խոստումների շուրջ խորհելը կքաջալերեր նրա հավատքը: Նաև գիտեի, որ դրական արդյունք տեսնելու հավանականությունը շատ ավելի մեծ էր, եթե աղոթեինք համաձայն Աստծո Խոսքի, որը մեր վստահության խարիսխն է և հույսը:

Հաջորդ կիրակի մորաքույրս եկավ եկեղեցի, ինչպես որ խոստացել էր: Երկրպագության ծառայությունից հետո խնդրեցի, որ նա առաջ գար, և մինչ կանգնած էր այնտեղ, հարցրի՝ արդյո՞ք կարդացել էր իմ տված նյութերը: Նա ասաց, որ կարդացել է, այն ժամանակ նրան ասացի. «Որտեղի՞ց գիտես, որ կբժշկվես, երբ ձեռքերս դնեմ քեզ վրա»: Նա մի քանի սուրբգրային խոսքեր մեջբերեց և հաստատեց, որ իր վստահությունն Աստծո Խոսքի մեջ է: Այդ պահին ես գիտեի, որ նա պատրաստ էր աղոթքին, և ձեռքերս դրեցի նրա վրա, աղոթեցի ու հռչակեցի, որ նա բժշկված է և ազատ է քաղցկեղից: Աստծո օծությունն իջավ նրա վրա, և նա Աստծո զորության ներքո ընկավ հատակին: Երբ վեր կացավ, դողալով բացականչեց. «Ես բժշկվա՞ծ եմ»:

Երեքշաբթի օրը նա գնաց վիրահատության՝ ուռուցքը հեռացնելու, բայց երբ սկսեցին վիրահատությունը, ոչինչ չգտան. ոչ մի ուռուցք, նույնիսկ մի սպի կամ մի նշան չկար, որ վկայեր, որ այնտեղ երբևէ որևէ բան է եղել:

ՄՇՏԱՊԵՍ ԿԱ ԺԱՄԱՆԱԿ «ԱՄԵՆ»-Ի ԵՎ «ԱՀԱ ԱՅՆ»-Ի ՄԻՋԵՎ: ՀԵՏԵՎԱԲԱՐ, ԿԵՆՍԱԿԱՆՈՐԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ՈՐ ԿԱՌՉԵՔ ՀԱՎԱՏՔԻ ԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՀԻՑ:

Այնքան տարօրինակ է տեսնել, թե ինչպես են մարդիկ ապրում իրենց կյանքը: Դուք կմտածեք, որ իմ մորաքույրն այնքան շնորհակալ էր լինելու Աստծուց իր բժշկության համար, որ բաց չէր թողնելու եկեղեցական որևէ հավաքույթ իր կյանքի մնացած տարիներին: Բայց այդպես չէր: Այդ կիրակնօրյա ծառայությունից հետո ես ընդամենը մեկ անգամ տեսա նրան: Նա մահացավ վեց կամ յոթ տարի հետո մեկ այլ տեսակի քաղցկեղից: Բայց այդ անգամ նա երբեք չխնդրեց, որ աղոթեմ իր համար:

Կառչե՛ք այն պահից, երբ արձակեցիք ձեր հավատքը

Մեկ բան, որ հիշեցնում եմ մարդկանց, այն է, որ մշտապես կա ժամանակ «Ամեն»-ի և «Ահա այն»-ի միջև: Հետևաբար, կենսականորեն անհրաժեշտ է, որ կառչեք հավատքի արձակման պահից: Առաջարկում եմ, որ գրի առնեք այն ձեր օրագրում կամ նոթատետրում՝ ինքներդ ձեզ հիշեցնելու համար: Ավելի վաղ ես նշեցի սա, բայց կարծում եմ, որ սա չափազանց կարևոր է: Օրինակ, ես կարող եմ գրել այսպես. «Նոյեմբերի 12-ին, ժամը 13:30-ին ես հավատում եմ, որ ստացա (գրում եմ հստակ խնդրանքը) համաձայն Մարկոսի 11.24-ի, և հավատում եմ, որ ստացա այն ժամանակ, երբ աղոթեցի»: Դուք կարող եք ավելացնել այլ նշումներ, ինչպես՝ ով համաձայնեց ձեզ հետ, որքան ցանեցիք և Աստծո ինչ առաջադրանքի մեջ ցանեցիք: Սա պարզապես օրինակ է, բայց կարևոր է, որ գրի առնեք այն, որովհետև դուք կարող եք պայքարել դրանով:

Երբ հանգամանքները ստիպում են, որ վախից նահանջեք, դուք կարող եք ինքներդ ձեզ հիշեցնել այն ամսաթիվը և ժամը, երբ ստացաք ձեր պատասխանը: Երբ վախը փորձում է գլուխ բարձրացնել, ես վերցնում եմ իմ կատարած նշումը և բարձրաձայն կարդում այն՝ որպես հռչակում. «Ո՛չ, վա՛խ, դու ստախո՛ս ես: Ես արդեն ստացել եմ դա այս օրը և այս ժամին՝ համաձայն... (նշում եմ աստվածաշնչյան այն խոսքը, որի հիման վրա կանգնած եմ)»: Երբեմն ստիպված եմ լինում մի քանի անգամ կարդալ նշումը՝ սիրտս հանդարտության և խաղաղության մեջ պահելու համար: Թույլ մի՛ տվեք, որ թվացյալ անհաջողությունը ստիպի ձեզ հրաժարվել ձեր հավատքից: Իրականում, այս սկզբունքն այնքան կարևոր էր, որ մինչ երեխաներս մեծանում էին, մեր շաբաթական ընտանեկան աղոթքին մենք ունենում էինք ընտանեկան օրագիր, որտեղ գրում էինք այն, ինչի համար աղոթել էինք, և այն, ինչին հավատում էինք, որ ստացել ենք: Մենք անվանում էինք այն «Հակոբոս 4»-ի օրագիր: Ի դեպ, եթե կցանկանաք ունենալ այդ օրագրերից, մենք վաճառում ենք դրանք ծառայության միջոցով:

Երբեմն Հոգու մեջ կատարվում են բաներ, որոնցից դուք տեղյակ չեք: Աստված աշխատում է կազմակերպել ամեն բան, բայց դա կարող է ժամանակ պահանջել: Փազլն ունի շատ կտորներ, որոնք պետք է դնել իրենց տեղերում: Օրինակ, եթե Աստված պատրաստվում է լրացնել որևէ ֆինանսական կարիք, հնարավոր է, որ Նա ստիպված լինի խոսել ինչ-որ մեկի հետ՝ այդ հարցը լուծելու համար, կամ տա ձեզ հնարավորություն՝ ձեռք բերելու այն գումարը, որի կարիքն ունեք: Կրկին, այդ ամենը ժամանակ է պահանջում:

> *«Եվ նա ինձ ասաց. «Մի՛ վախեցիր, ո՛վ Դանիել, որովհետև այն առաջին օրից, որ սիրտ տվիր հասկանալու և քո անձը խոնարհեցնելու քո Աստծո առջև, քո խոսքերը լսվել են, և ես եկա քո խոսքերի համար: Եվ Պարսից թագավորության իշխանը կանգնել էր իմ դիմաց քսանմեկ օր: Եվ ահա Միքայելը՝ առաջին իշխաններից մեկը, եկավ ինձ օգնելու, և ես մնացի այնտեղ՝ Պարսից թագա-*

վորի կողքին: Եվ ես եկա քեզ հասկացնելու, թե ինչ պիտի պատահի քո ժողովրդին վերջին օրերում, որովհետև տեսիլքը տակավին այն օրերի համար է»»:

– Դանիել 10.12-14

Եկեք մեկ այլ հայացք նետենք մեր մասնաշենքի պատմությանը, որի մասին խոսեցի ավելի վաղ: Մենք նայել էինք տարբեր շենքեր և դիտարկել էինք դրանցից մի քանիսում վարձակալական տարածք վերցնելու հարցը, բայց չէինք զգում, որ այդ ուղղությամբ պետք է քայլ անենք: Երբ որոշեցինք մասնաշենք գտնել, սերմ ցանեցինք, որպեսզի Աստված ցույց տար մեզ գերազանց վայրը: Ամեն անգամ, երբ գտնում էինք որևէ տեղանք և դիտարկում այն, մեր հոգում արգելք էինք զգում և գրեթե հուսահատվում էինք: Մենք ստուգեցինք բոլոր շինությունները, որոնք գտնվում էին այն տարածքում, որտեղ ցանկանում էինք բացել մեր մասնաշենքը, սակայն չկար որևէ մատչելի տարբերակ, որը մեզ հարմար կլիներ:

Որպես եկեղեցի՝ մեր գլխավոր արժեքներից է երեխաներին կրթելու և ընտանիքների համար հոգ տանելու ուժգին ցանկությունը: Մենք բազմիցս խոսել ենք այն մասին, որ մի օր կունենանք դպրոց, ցերեկային խնամքի կենտրոն, տարրական դասարանների երեխաների խնամքի ծրագիր և շատ ու շատ այլ ծրագրեր՝ մեր համայնքներին ծառայելու համար: Մենք առավելագույնս օգտագործել էինք մեր շենքի հնարավորությունները, ինչը թույլ չէր տալիս իրականացնելու այս կետերից որևէ մեկը:

Թվում էր, թե Թագավորությունը չէր մոտենում, բայց դուք պետք է հիշեք, որ մենք արդեն սերմ էինք ցանել գերազանց մասնաշենքի համար: Իրականությունն այն էր, որ Աստված գիտեր, որ այն դպրոցը, որ մենք գնեցինք, արգելանքի տակ էր դրվելու: Նա տեսնում էր համընդհանուր պատկերը: Այդ տարածքը հասանելի չէր, երբ մենք սկսեցինք մեր որոնումները:

Բացի նրանից, որ Աստված գիտեր, որ այդ դպրոցը լինելու էր մեր գերազանց մասնաշենքը, Նա նաև գիտեր, թե ինչպես էինք վճարելու դրա համար: Իմ օրացույցում առնվազն չորս անգամ

նշված էր ճաշի սեղանի շուրջ հանդիպում այն զույգի հետ, որը գնեց մասնաշենքը մեզ համար: Տարբեր հանգամանքներով երկուսս էլ ստիպված էինք լինում տեղափոխել այդ տեսակցությունը մինչև այն երեկո, երբ հանդիպեցինք: Մենք տեսել էինք տարածքը հենց այն օրվա առավոտյան, երբ ճաշեցինք նրանց հետ:

Ուրիշ ցանկացողներ էլ կային, բայց մենք առաջինն էինք, որ գնման առաջարկ արեցինք: Ամեն բան հրաշալիորեն հարմարեցված էր ժամանակի հետ: Երբ այդ հանդիպումից երկու օր առաջ Սուրբ Հոգու հրահանգով ցանեցինք 100.000 դոլարը, ես մտածում էի, որ սատանան կփորձի մեզնից թացքնել այդ դպրոցը կամ կբանեցնի այլ գործելակերպ՝ այն մեզնից պահելու համար: Երբ Աստված ասաց, որ ցանեմ այդ գումարը և արգելեմ սատանային խառնվել մասնաշենքը գտնելու գործին, ես հավատում եմ, որ կանգնեցվեց ինչ-որ ծրագիր, որով նա փորձելու էր խանգարել մեզ:

Այն զույգը, որը մեզ կանխիկ գումար տրամադրեց տարածքը գնելու համար, նույնպես կանգնած էր որոշման առջև. օգնե՞լ արդյոք ընկերներից մեկին տարածք գնելու հարցում: Եթե որոշեր օգնել, ապա կօգտագործվեր այն կանխիկ գումարը, որ նրանք տրամադրեցին մեր մասնաշենքի գնման համար: Այդ երեկո մեր պատմությունը լսելուց հետո նրանք ասացին, որ հասկացան, թե ինչու խաղաղություն չունեին ընկերոջը ֆինանսավորելու հարցում: Հիշե՛ք, երբ աղոթում եք հավատքով, իմանալով, որ ստանում եք աղոթելու պահին, դեռևս ժամանակ կա «Ամեն»-ի և «Ահա այն»-ի միջև: Այնպես որ՝ մնացե՛ք ուժեղ և եղե՛ք համբերատար:

Ամո՛ւր կանգնեք ձեր հավատքի վրա

> *«Իսկ համբերությունը թող կատարյալ գործ ունենա, որ կատարյալ և ամբողջ լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք»:*
>
> – Հակոբոս 1.4

Այս է պատճառը, որ առաջարկում եմ նշել ձեր հավատքն արձակելու ամսաթիվը և ժամը, որովհետև դուք պետք է կանգուն մնաք:

Երբ դուստրս որովայնում 5,9 կգ-անոց ուռուցք ուներ, նա հոգնել էր դրա պատճառած առողջական խնդիրների հետ համակերպվելուց. մշտական վարակներ երիկամներում, մշտական մեջքի ցավեր և մարսողական խնդիրներ: Նա որոշեց, որ արդեն բավական է, և վճռեց 30 օր հատկացնել Աստծո Խոսքի և բժշկության վերաբերյալ Աստծո խոստումների շուրջ խորհելուն: Այդ ժամանակահատվածի ավարտին նա խնդրեց, որ մայրը և ես ձեռքներս դնենք նրա վրա, քանի որ հավատում էր, որ բժշկված է: Այսպիսով՝ եկեղեցու երեցները և մայրն ու ես ձեռքներս դրեցինք նրա վրա և հավատացինք, որ նա բժշկված է՝ համաձայն Հակոբոսի 5.14-16 խոսքերի:

> *«Եթե ձեզնից մեկը հիվանդ է, թող եկեղեցու երեցներին կանչի, որ նրա համար աղոթք անեն, նրան յուղով օծեն Տիրոջ անունով: Եվ հավատքով աղոթքը կփրկի այն հիվանդին, և Տերը վեր կկացնի նրան: Եվ եթե մեղք գործած լինի, կթողվի նրան: Իրար խոստովանեք ձեր հանցանքները և իրար համար աղոթք արեք, որ բժշկվեք. շատ զորավոր է արդարի աղոթքը ներգործելով»:*
>
> – Հակոբոս 5.14-16

Այդ երեկո մենք գնացինք տուն նույն ձևով, ինչպես որ նա եկել էր. ուռուցքը դեռ կար: Բայց նա ասաց. «Ես բժշկվա́ծ եմ»: Երկու շաբաթ նա հավատարիմ մնաց իր դավանությանը՝ առանց որևէ փոփոխության, չնայած այն բանին, որ նա վերապրեց ամենասոսկալի ցավը, որ երբևէ ունեցել էր: Նա ինձ ասաց, որ այդ երկու շաբաթվա ընթացքում, մինչ սոսկալի ցավի մեջ էր, սատանային ասում էր. «Դու կարող ես փորձել և ցավեցնել ինձ, բայց ես բժշկվա́ծ եմ»:

Երկու շաբաթ անց նա պառկեց քնելու այդ ուռուցքով, սակայն արթնացավ՝ լիովին բժշկված: Քնած ժամանակ գոտկատեղի շրջանում նա կորցրեց գրեթե 6 կգ քաշ, և նրա մեջքը, որ կծկվել էր ու ծռվել, ուղղվեց, և ողնաշարը կատարելապես բժշկվեց:

Երբ վստահ եք խոստման մեջ, թույլ մի՛ տվեք, որ սատանան խաբի ձեզ ձեր բժշկության հարցում կամ խլի որևէ խոստում, որ Աստված տվել է:

Քրիստինը եկավ մեր եկեղեցի առանց եկեղեցական ամուր հիմքերի: Նրա համար ամեն բան նոր էր: Տարիներ շարունակ նա երկու լսողական սարք էր կրել և ընթացքում կորցրել էր լսողության զգալի մասը: Նրա մայրը նույն հիվանդությունն ուներ և գրեթե ամբողջովին խուլ էր:

Հաճախելով մեր եկեղեցի՝ Քրիստինը հանձնեց իր սիրտը Տիրոջը, և Աստված արմատապես փոխեց նրա կյանքը: Նա խանդավառված էր և ցանկանում էր՝ որքան հնարավոր է, շատ բան սովորել Աստծո Թագավորության մասին: Մենք ունենք «Կողմնորոշման դասեր» այն հավատացյալների համար, ովքեր նոր են միացել եկեղեցուն, և Քրիստինը ցանկություն հայտնեց հաճախել այդ դասերին: Այնտեղ քննարկվում են տարբեր թեմաներ, բայց այնպես պատահեց, որ այն դասին, որին հաճախում էր Քրիստինը, քննարկվում էր բժշկության մասին: Դասընթացի ավարտին ավագներն առաջարկեցին աղոթել նրանց համար, ովքեր բժշկության կարիք ունեին: Քրիստինն այնքան ոգևորված էր, որ առաջ գնաց, որպեսզի աղոթեն իր համար: Մինչ աղոթում էին, նրա ականջները հանկարծակի բացվեցին: Առաջին անգամ նա կարողացավ անթերի լսել:

ՀԻՇԵՑՆԵՄ, ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻ ՎՐԱ ԱՄՈՒՐ ԿԱՆԳՆԵԼԸ ԲԱՆԱԼԻ Է ՁԵՐ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

Այդ օրը, երբ նա հեռանում էր ծառայությունից, ես առաջնորդություն զգացի զգուշացնելու նրան այն մասին, ինչն անվանում եմ «սատանայի հակահարված»: Եվ իհարկե, նա ասաց, որ հաջորդ առավոտյան նրա ականջները հանկարծակի փակվեցին, և նա անհանգստանալու փորձության ենթարկվեց: Բայց ես նրան ասացի, որ դա լինելու է, և երբ լինի, նա պետք է հոչակի, որ բժշկված է, և սաստի սատանային: Նա արեց ճիշտ այնպես, ինչպես նրան ասացի: Նա սկսեց փառաբանել Աստծուն և հոչակեց, որ բժշկված է՝ կապելով թշնամուն: Մի քանի րոպե անց նրա ականջները բացվեցին և բաց են մինչև օրս. դա մոտավորապես չորս տարի առաջ էր:

Հիշեցնեմ, Աստծո Խոսքի վրա ամուր կանգնելը բանալի է ձեր ազատության համար:

Ես կրկին կասեմ. եղե՛ք հստակ

Ինչ վերաբերում է ձեր հավատքն արձակելուն, թույլ տվեք ևս մեկ անգամ հիշեցնել, որ լինեք հստակ: Այս պատմության միջոցով էր, որ Աստված իսկապես ցույց տվեց իմ խոսքերի կարևորությունը: Ես պատմել եմ սա տարիներ շարունակ, բայց այսօր դա նույնքան հզոր է, որքան այն ժամանակ, երբ տեղի ունեցավ:

Եղնիկների սովորական որսաշրջան էր, և ես այնպես պատրաստ էի անտառ դուրս գալու, քանի որ շատ ծանրաբեռնված էի եղել: Այդ տարի ես սերմ էի ցանել երկու եղջերուի համար՝ մեկը՝ չորս-ճյուղանի կամ ավելի մեծ եղջյուրներով, իսկ մյուսը երիտասարդ եղջերուի համար: Դրենդան ու ես ցանեցինք մեր սերմը համաձայնությամբ և հավատքով: Առավոտյան, երբ հազիվ էր լույսը նշմարվում, գնացի առաջին որսորդությանը: Երբ երկինքը դեռ նոր էր վարդագունում, ես որսացի իմ արու եղջերուին՝ ութճյուղանի եղջյուրներով: Իմ ծառի վրա գտնվելու ամբողջ ժամանակահատվածը 15 րոպե էր: Բավականին ոգևորիչ էր: Երկու շաբաթ անց մեծ վստահությամբ դուրս եկա իմ երիտասարդ եղջերուին որսալու: Կրկին, դուրս եկա առավոտյան և մոտավորապես 20 րոպե անց 274 մետր հեռավորության վրա նկատեցի ութճյուղանի մի արու եղջերուի, որը շարժվում էր ուղիղ դեպի իմ ծառը:

Օհայոյում դուք կարող եք որսալ եղջյուրներ ունեցող միայն մեկ արու եղջերու: Երկրորդ եղջերուն պետք է լինի էգ եղնիկ կամ երիտասարդ եղջերու: Երիտասարդ եղջերուները համարվում են որպես եղնիկներ, որովհետև եղջյուրներն այնքան փոքր են, որ իրականում հնարավոր չէ տեսնել հեռվից: Այսպիսով, երբ տեսա, որ եղջերուն անցնում էր դաշտով, ենթադրեցի, որ նախքան իմ ծառին հասնելը նա կշրջվի, բայց այդպես չարեց: Նա մոտեցավ իմ ծառին և մոտավորապես 20 վայրկյան կանգնած մնաց իմ դիտանոցի տակ: Ես միայն կարող էի դիտել, քանի որ նրան կրակելն օրինական չէր: 20 վայրկյան այնտեղ կանգնելուց հետո

նա հանկարծ սկսեց քայլել նույն ճանապարհով, որով եկել էր: Ի զարման ինձ՝ նա նույն 274 մետրն անցավ դաշտով և անհետացավ: Ես ցնցված էի և շփոթված:

Իմ դիտանոցի տակ երբեք չէր կանգնել որևէ եղջերու, որը չլիներ ճիշտ այն եղջերուն, որի համար սերմ էի ցանել. ես շփոթված էի: Վերադարձա տուն՝ ճանապարհին Հոգով աղոթելով: «Տեր, ինչո՞ւ էր այդ եղջերուն հայտնվել այնտեղ»: Հանկարծ լսեցի, որ Սուրբ Հոգին ասաց. «Ստուգի՛ր քո ցանած սերմը»: Ստուգեմ իմ ցանած սե՞րմը: Դա խենթություն է, ես գիտեմ, թե ինչի համար էի ցանել: Բայցևայնպես, այն բանկը, որից ես օգտվում եմ, ամսական հաշվետվությունների հետ ուղարկում է նաև չեղարկված չեկերի պատճենները: Ես արագ վերցրի հաշվետվությունը և գտա իմ չեկը: Չեկի ներքևում ես գրել էի այսպես. երկու եղջերու՝ չորս ճյուղանի կամ ավելի մեծ, մեկ երիտասարդ եղջերու: Որքա՞ն եղջերու եղավ: Ես հավատում էի ընդհանուր առմամբ երկու եղջերուի համար, մեկը՝ չորսճյուղանի կամ ավելի մեծ, մյուսը՝ երիտասարդ: Իսկ իմ գրածը ցույց էր տալիս, որ ես ցանում էի երկու եղջերուի համար, որոնք ունեին չորս կամ ավելի ճյուղեր, և մեկ երիտասարդ եղջերուի համար: Ես ապշած նստած էի: Այդ երկրորդ եղջերուն եկավ, որովհետև ես սերմ էի ցանել նրա համար: Ահա թե ինչու նա հայտնվեց այդ դաշտում և կանգնեց իմ ծառի տակ. նա պետք է այնտեղ լիներ:

Երբ տեսա դա, սկսեցի աղաղակել, բացականչել և վազվզել տան շուրջը: Ես այնքան ոգևորված էի, բայց միևնույն ժամանակ դա վախեցրեց ինձ: Որքա՞ն անգամներ եմ ասել բաներ, որոնք իրականում չեմ ցանկացել, որ կատարվեն, բայց իմ խոսքերով դրանք շարժման մեջ եմ դրել: Սա, անկասկած, կյանքի կոչեց Հակոբոսի 3.3,4-ը:

> *«Տե՛ս, ձիերի բերանը սանձ ենք դնում, որ նրանք հնազանդվեն մեզ, և նրանց ամբողջ մարմինը կառավարում ենք: Ահա նավերն էլ, որ այսչափ մեծ են և սաստիկ քամիներից քշվում են, մի փոքր ղեկով կառավարվում են՝ որ կողմ, որ ղեկավարի միտքը կամենա»:*
>
> – Հակոբոս 3.3,4

Հակոբոսը խոսում է այն մասին, թե որքան զորավոր են մեր խոսքերը: Պարզ է, որ երբ մեր խոսքերն ասում են մեկ բան, մինչդեռ մենք իրականում ցանկանում ենք տեսնել մեկ այլ բան, հայտնաբերում ենք, որ մեր կյանքը նավաբեկության է ենթարկվել, և չգիտենք, թե ինչպես ենք հասել այդտեղ:

Այսպիսով՝ հիշե՛ք, Թագավորությունը շատ հստակ է, և ձեր խոսքերը հստակ որոշում են, թե ուր եք գնում և ինչպես եք հասնում այնտեղ:

Համաձայնության կարևորությունը

Մենք դեռևս խոսում ենք ձեր սերմն արձակելու մասին, երբ հավատքի մեջ եք, և ահա մեկ բան, որ պետք է հիշեք: Եթե ամուսնացած եք, համաձայնության մեջ եղեք ձեր ամուսնու կամ կնոջ հետ: Եթե չունեք ամուսին կամ կին, մեկ րոպեից ես կանդրադառնամ դրան, բայց ենթադրենք, որ դուք ամուսնացած եք: Կրկնեմ. համաձայնության մեջ եղե՛ք ձեր ամուսնու կամ կնոջ հետ:

Իմ ամուսնության վաղ շրջանում ես ատում էի խնդրել Դրենդային, որ համաձայներ ինձ հետ իմ որսորդության հարցում: Պատճառն այն էր, որ եթե ես խոսեի որսորդության գնալու մասին, գիտեի, որ նա ինչ-որ բան կասեր աղբը թափելու, լամպը փոխելու կամ մի շարք այլ գործերի մասին, որոնք անհրաժեշտ էին անել: Սա այն ժամանակ էր, երբ ես հասուն չէի և եսասեր էի: Ամբողջ օրը նա երեխաների հետ էր լինում, բայց այն րոպեին, երբ տուն էի մտնում, ցանկանում էի դուրս գալ անտառ: Չեմ կարծում, որ Աստված կօրհնի այդ վերաբերմունքը: Այո՛, ես եսասեր էի: Նախքան կսովորեի հավատքով որսորդություն անել, ես օրեր էի անցկացնում որսորդության վրա՝ առանց որևէ հաջողության: Զարմանալի չէր, որ նա սոսկում էր որսաշրջանից:

Բայց ես սովորեցի դասել նրան առաջին տեղում: Ես ստիպված էի սովորել, որ մենք միասին ենք այս հարցում և միմյանց կարիքն ունենք: Երբ սկսեցի առաջին տեղում դնել նրա կարիքները, նա ավելի քան պատրաստ էր համաձայնելու ինձ հետ եղջերուների հարցում: Բայց նա հատկապես երջանիկ էր տեսնելու իմ հաջողությունը եղջերուներ որսալու գործում: Ես պետք է սո-

ԵՍ ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԵԻ, ՈՐ ՈՐՊԵՍ ԱՄՈՒՍԻՆ ԵՎ ԿԻՆ, ՄԵՆՔ ՄԵԿ ԷԻՆՔ ՀՈԳԵՎՈՐ ԱՌՈՒՄՈՎ, ԵՎ ՉԿԱՐ ԱՎԵԼԻ ԶՈՐԱՎՈՐ ԲԱՆ, ՔԱՆ ԱՅՆ, ԵՐԲ ՄԻԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԷԻՆՔ ԳԱԼԻՍ:

վորեի, որ որպես ամուսին և կին, մենք մեկ էինք հոգևոր առումով, և չկար ավելի զորավոր բան, քան այն, երբ միասին համաձայնության էինք գալիս: Դա միայն չէր վերաբերում եղնիկների որսորդությանը: Ես հայտնաբերեցի, որ եթե մենք քայլեինք միաբանության մեջ, դա կգործեր մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում:

«Նմանապես, մարդի՛կ, իմաստությունով բնակվեք նրանց հետ, ինչպես տկար անոթի՝ կանանց պատիվ տալով, իբրև կյանքի շնորհքի ժառանգակիցների, որ ձեր աղոթքը չխափանվի»:

– Ա Պետրոս 3.7

Ուշադրությո՛ւն դարձրեք, տղամարդի՛կ, որ եթե իմաստությունով չբնակվեք ձեր կանանց հետ, ձեր աղոթքները կխափանվեն: Իմաստությունով բնակվել՝ նշանակում է, որ դուք դիտում եք ձեր կնոջը՝ որպես հավասարի. դուք մեկ եք նրա հետ բոլոր որոշումներում: Այո՛, հոգևոր առումով տղամարդը ամուսնության գլուխն է, բայց ո՛չ բռնապետի տեսքով, այլ՝ ծառայի, որը դնում է իր կյանքը կնոջ համար և պատվում է նրան:

Իսկ եթե ձեր ամուսինը կամ կինը հավատացյալ չէ...

Ես նամակներ եմ ստանում, որտեղ մարդիկ հարցնում են, թե ինչ անեն, եթե ամուսնացած են մեկի հետ, ով չի ցանկանում ծառայել Տիրոջը: Ինչպե՞ս կարող են նրանք համաձայնության մեջ լինել: Համաձայնության մասին ձեր հասկացողությունը սխալ է: Ենթադրենք՝ դուք ամուսնացած եք մի մարդու հետ, որը չի ծառայում Տիրոջը: Այնուամենայնիվ, երկուսդ էլ համաձայնում եք, որ մեքենայի կարիք ունեք: Գիտե՞ք ինչ: Դուք համաձայնության

մե՞ջ եք: Եթե երկուսդ էլ համաձայն եք, որ ձեզ մթերք է անհրաժեշտ, ուրեմն՝ դուք համաձայնության մեջ եք: Աստվածաշունչը շատ հստակ ասում է, որ եթե կողմերից մեկը հավատում է Աստծո Խոսքին, այն ժամանակ Թագավորությունն ունի օրինական իրավասություն՝ գործելու այդ ընտանիքում:

> *«Որովհետև անհավատ մարդը սրբված է կնոջով, և անհավատ կինը սրբված է մարդով, ապա թե ոչ՝ ձեր որդիները պիղծ կլինեին: Բայց հիմա սուրբ են»:*
>
> – Ա Կորնթացիների 7.14

Ես չեմ կարծում, որ այստեղ ասվում է, որ անհավատ ամուսինը փրկված է իր կնոջ հավատքով կամ հակառակը: Ես կարծում եմ, որ յուրաքանչյուրն անձամբ պետք է կանչի Հիսուսի անունը: Սակայն, ես հավատում եմ, որ եթե ամուսիններից մեկը հավատում է Աստծո Խոսքին, նրա հավատքը սրբում է ամբողջ ընտանիքին կամ այն բերում է Թագավորության օրհնության ներքո: Ակնհայտորեն, հավատացյալ ամուսնու հետ ամուսնացած լինելն ավելի լավ է: Եվ Աստվածաշունչը հստակ քաջալերում է հավատացյալ ամուսնուն կամ կնոջը այն ճշմարտությամբ, որ նրա հավատքը կարող է շահել անհավատ ամուսնուն կամ կնոջը Թագավորության համար:

Եթե դուք ամուսնացած չեք, հարկ չկա գտնելու մեկ այլ անձնավորության՝ աղոթքի մեջ ձեզ հետ համաձայնելու համար: Դուք հավատում եք Խոսքին ինքներդ ձեզ համար և տեսնում եք, թե ինչպես է Թագավորությունը գործում:

Մինչ խոսում ենք հավատքի թեմայի շուրջ, ցանկանում եմ հաջորդ գլխում քննարկել հավանաբար ամենատարածված հարցերից մեկը, որ ստանում եմ ցանելու վերաբերյալ, ինչպես նաև այն սխալը, որ շատերը թույլ են տալիս:

ԳԼՈՒԽ 7

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ. ՄՆԱՑԵՔ ՁԵՐ ԶԱՐԳԱՑՐԱԾ ՀԱՎԱՏՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

«Ես որսալու եմ 408 կգ-անոց մարլին»: Դա էր իմ գործընկերներից մեկի հայտարարությունը, ով իմ գրասենյակի միջոցով մեկնում էր ուղևորության դեպի Մաուի՝ Հավայան կղզիներ: Մեր ընկերությունը շահել էր այդ ուղևորությունը, որը տրամադրվել էր մեր մատակարարներից մեկի կողմից: Մաուի մեկնելուց առաջ երեքով որոշեցինք, որ կգնանք ձկնորսության և կորսանք կապույտ մարլին, քանի որ գաղտնիք չէ, որ Մաուին հայտնի է որպես կապույտ մարլինի մայրաքաղաք: Այս իրադարձությունից առաջ մենք խոսում էինք հավատքից, և ես տղաներին սովորեցնում էի, թե ինչպես է այն գործում: Դենի համար հավատքի աշխարհը նոր էր, և ես մտածում էի, որ սա հրաշալի հնարավորություն էր նրա համար՝ քայլ անելու և իր աչքերով տեսնելու, թե ինչպես է Թագավորությունը գործում: Ուստի՝ նրան ասացի. «Դեն, գիտես, որ հնարավոր է, որ դու կապույտ մարլին որսաս, երբ գնաս Հավայան կղզիներ»: Այդ մեկնաբանությունը գրավեց նրա ուշադրությունը, և մենք շատ ժամեր անցկացրինք՝ քննարկելով հավատքի մասին, նախքան կմեկնեինք Մաուի: Դենը ցանեց իր սերմը, ինչպես նրան սովորեցրել էի, և լցվեց մեծ խանդավառությամբ իր երազանքին՝ կապույտ մարլինին հասնելու համար:

Իմ մյուս գործընկերը եկեղեցու անդամներից էր, որն արդեն ուներ լավ պատկերացում այն մասին, թե ինչպես է հավատքը

գործում, և տեսել էր, թե ինչպես է Աստված զարմանահրաշ բաներ անում իր կյանքում: Նա նույնպես ցանեց իր սերմը մարլին որսալու համար, բայց ոչ թե ցանկացած մարլին, այլ՝ 408 կգ-անոց: Ես հիշում եմ, որ մտածում էի. «Ա՜յ քեզ բան, դա մեծ ձուկ է»: Ես որոշակի մտահոգություն ունեի՝ կապված ձկան առանձնահատուկ չափի հետ, որի համար ընկերս սերմ էր ցանում, բայց այն ժամանակ ոչինչ չասացի նրան:

Իսկ Դենը չցանեց որևէ չափի ձկան համար: Մի խոսքով՝ Դենը որսաց 75 կգ-անոց կապույտ մարլին, իսկ մյուս գործընկերս ընդհանրապես մարլին չորսաց: Ինչո՞ւ Դենը որսաց իր մարլինին, իսկ մյուս ընկերս՝ ոչ: Սա լավ հարց է, և մարդկանց մեծ մասը, նույնիսկ քրիստոնյաների մեծ մասը կապշի այդ հարցից: Նրանք կծիծաղեն՝ ասելով. «Ձկնորսությունն այնպիսի ձեռնարկում է, որի ժամանակ երբեմն ձուկ որսում ես, երբեմն՝ ոչ»: Բայց ես սովորել եմ, որ Թագավորությունը շատ հստակ է և հուսալի:

> *«Եվ եղավ, երբ որ ժողովուրդը Նրա վրա կիփվում էր Աստծո Խոսքը լսելու, և Ինքը Գեննեսարեթի ծովակի մոտ կանգնած էր, և երկու նավ տեսավ՝ ծովակի մոտ կանգնած, ձկնորսներն էլ նրանցից դուրս էին եկած և ուռկանները լվանում էին: Եվ նա մտավ այն նավերից մեկի մեջ, որ Սիմոնինն էր, և խնդրեց նրան նավը ցամաքից մի քիչ ներս տանել: Նստեց և նավից սովորեցնում էր ժողովուրդներին:*
>
> *Եվ երբ որ խոսելուց դադարեց, Սիմոնին ասաց. «Նավը դեպի խո՛ր տար, և ձեր ուռկանները գցե՛ք որսի»:*
>
> *Եվ Սիմոնը պատասխանեց և ասաց Նրան. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց Քո խոսքի համար ուռկանը կգցեմ»:*
>
> *Եվ երբ որ այս արին, ձկների մի մեծ բազմություն ներս փակեցին, և նրանց ուռկանը պատռվում էր: Եվ նշան էին անում մյուս նավի մեջ լինող ընկերներին, որ գան իրենց օգնեն, և նրանք եկան և երկու նավը լցրին, մինչև որ թաղվում էին:*
>
> *Սիմոն Պետրոսն էլ, տեսնելով, ընկավ Հիսուսի ծնկնե-*

որի առջև և ասաց. «Ինձնից դուրս գնա, որ ես մեղավոր մարդ եմ, Տեր»: Որովհետև ահ պատեց նրան և ամենքին էլ, որ նրա հետ էին՝ այն ձկների որսի համար, որ բռնեցին: Այնպես էլ Զեբեդեայի որդիներին՝ Հակոբոսին և Հովհաննեսին, որ Սիմոնի ընկերներն էին»:

– Ղուկաս 5.1-10

Պետրոսը ձկնորսության նոր գործելակերպ բացահայտեց, ինչպես ես՝ եղնիկների որսորդության: Նա փորձել էր ձուկ որսալ, բայց ոչինչ չէր որսացել, մինչև այն պահը, երբ Հիսուսը նրան ասաց, թե որտեղ ձկնորսություն անի՝ խորը ջրում: Այնտեղ նա այնքան շատ ձուկ որսաց, որ երկու նավերը գրեթե սուզվում էին: Ես մարդկանց ասում եմ. «Ցանկացած ոք կարող է ձուկ որսալ, եթե Հիսուսն ասի, թե որտեղ և ինչպես պետք է որսալ»:

Ինչ վերաբերում է իմ ընկերոջը, որը չորսաց իր մեծ մարլինին, այո՛, ճշմարիտ է, որ Աստծո հետ ամեն բան հնարավոր է: Բայց եթե դուք ցանեիք սերմ՝ հավատալով, որ կորսաք կապույտ մարլին ձեր լոգարանում, ապա դուք կիմանայիք, որ դա չի գործի: Եթե դուք ցանկանայիք որսալ կապույտ մարլին, կցանեիք սերմ, և Սուրբ Հոգին կառաջնորդեր, թե որտեղ կարող էիք այն որսալ՝ իհարկե, օվկիանոսում, բայց օվկիանոսի ո՞ր մասում:

Հիշե՛ք. յուրաքանչյուր հունձք ունի յուրահատուկ տեղանք և ժամանակ: Եթե դուք ցանկանայիք ցանել համաշխարհային ռեկորդակիր կապույտ մարլինի համար, ապա չէիք կարող պարզապես ասել. «Ես կգնամ օվկիանոս»: Դուք պետք է կանգ առնեիք օվկիանոսի որոշակի հատվածում: Ինչո՞ւ: Որովհետև կապույտ մարլինը տեղափոխվում է և ամեն տարի շարժվում է որոշակի երթուղով: 408 կգ-անոց կապույտ մարլին որսալը նույնպես հազվադեպ բան է: Օրինակ, Ֆլորիդայի Միրամար քաղաքում անցկացվող «Էմերալդ ծովափի կապույտ մարլինի» դասական ձկնորսության մրցաշարն անցկացվում է արդեն 17 տարի: Այդ ժամանակաընթացքում ամենամեծ կապույտ մարլինը, որ երբևէ որսացել են, 407 կգ է եղել: Հնարավո՞ր էր արդյոք որսալ 408 կգ-անոց կապույտ մարլին Մաուիի ուղևորության ժամանակ. գուցե, քանի որ ռեկորդակիր կապույտ մարլինը, որ որսացել են Հավա-

յան կղզիներում, 624 կգ էր, բայց գրի՛ առեք հետևյալը:

Որքան հստակ կամ յուրահատուկ է ձեր հավատքի առարկան, այնքան կարևոր է ուշադրություն դարձնել տեղանքին, մեթոդին և ժամանակին:

Այդ օրը Մաուիում նավապետը մեզ ասաց, որ կապույտ մարլին դեռ չի երևացել: Նա ուներ երկու նավ, որոնք նախորդ չորս ամիսներին օրական ութ ժամ ջրում էին եղել, բայց ընդամենը մեկ գծավոր մարլին էին որսացել: Կապույտ մարլինն այդ ամիս ավելի ուշ էր հայտնվելու: Իհարկե, մենք որսացինք որսաշրջանի առաջին մարլինին: Բայց երբ ընկերս ավելի հստակ դարձրեց իր սերմը և հատկապես ցանկացավ որսալ ռեկորդակիր մարլին, հունձքի համար ավելի վճռորոշ դարձան տեղանքն ու ժամանակը: Ես անձամբ հավատում եմ, որ այդ ժամանակ տարածքում չկար ռեկորդային չափի մարլին: Մենք պետք է գիտակցենք նաև, որ հնարավոր է, որ իմ ընկերն իրականում չուներ հավատք մեծ ձկան համար: Բայց եթե նա իսկապես լրջորեն է տրամադրված 408 կգ-անոց մարլին որսալուն, այդ դեպքում ես գիտեմ, որ եթե նա ցանի իր սերմը և լսի Սուրբ Հոգուն, ինչ վերաբերում է տեղանքին և ճիշտ ժամանակին, ապա նա կստանա իր 408 կգ-անոց կապույտ մարլինը:

Տեղանքը և ժամանակը նշանակություն ունեն

Հունձքի տեղանքի և ժամանակի հարցում հստակ լինելը նույնքան կարևոր է, որքան այն հստակ սերմը, որ ցանում եք: Դուք տեսաք դրա դրսևորումը, երբ ես փորձարկում կատարեցի իմ յոթճյուղանի եղջերուի հետ: Ես ստիպված եղա սպասել այնքան ժամանակ, մինչև որ որսի դուրս գալու մղում ունեցա, և որսաշրջանի ընթացքում սպասեցի մեկ ամսից ավելի: Ինչո՞ւ: Ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ յոթճյուղանի եղջերուն դեռևս իմ տարածքում չէր, կամ, գուցե, կային այլ գործոններ, որոնք կարող էին խոչընդոտել իմ հաջողությանը, օրինակ՝ եղանակը և քամու ուղղությունը:

Սուրբ Հոգին գիտեր ժամանակը այդ հստակ հունձքի համար,

և Նա ճիշտ ժամանակին, ճիշտ օրը դրեց ինձ ճիշտ տեղում՝ հենց այդ եղնիկը որսալու համար:

Հաճախ ես լսում և տեսնում եմ հետևյալ սխալը. «Գա՛րի, եթե Թագավորությունը բերում է եղնիկին այնպես, ինչպես դու ես ասում, այդ դեպքում ինչո՞ւ պարզապես դուրս չես գալիս և սպանում աշխարհի ռեկորդակիր եղջերուին»: Լավ հարց է, և մենք պետք է անդրադառնանք դրան: Այդ պնդումը նման է այն էլեկտրոնային նամակներին, որ ստանում եմ մարդկանցից, որոնք ցանկանում են մարել 500.000 դոլարի հիփոթեքը, և ինձ ասում են, որ սերմ են ցանել, որպեսզի այն մարվի յոթ օրում: Երբ գումարը յոթ օրից չի հայտնվում, նրանք հուսահատվում են և հարցնում, թե ինչու այն չհայտնվեց: Մեկ այլ տարածված հարց, որ լսում եմ, սա է. «Ինչո՞ւ ես չեմ կարողանում պարզապես սերմ ցանել և շահել վիճակախաղում»:

ԹՈՒՅԼ ՏՎԵՔ ԿՐԿՆԵԼ: ԿԱՐԾՈՒՄ ԵՄ, ՈՐ ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԿՐԿԻՆ ԼՍԵՔ. ԱՍՏՎԱԾ ՈՒՆԻ ԾՐԱԳԻՐ ՁԵԶ ՀԱՄԱՐ:

Շատ լավ, առաջինը խոսենք ռեկորդակիր եղջերուի հարցի մասին: Այո՛, ես հավատում եմ, որ կկարողանայի սպանել ռեկորդակիր եղջերուի, եթե խիստ ցանկանայի, բայց դա իմ փափագը չէ: Սովորաբար ես որսում եմ մսի համար և չունեմ դրդապատճառ՝ հետամուտ լինելու ռեկորդակիր եղջերուի: Պատճառներից մեկը, որ ես չունեմ դրդապատճառ՝ որսալու այդ ռեկորդակիր եղջերուին, այն է, ինչ արդեն բացատրեցի. ձեր լոգարանում դուք կետ չեք որսա: Համաշխարհային ռեկորդակիր եղջերուն իմ տարածքում չէ: Եթե ես իսկապես լրջորեն տրամադրված լինեի որսալու այդ եղջերուին, ապա կիմանայի, որ պետք է մեկ ուրիշ տեղ գնամ՝ որսորդություն անելու համար: Միգուցե հարկ լիներ սովորել որոշ նոր գործելակերպեր, քանի որ ռեկորդակիր եղջերուները սովորաբար գիշերային կյանք են վարում և ունեն իրենց ուրույն սովորությունները: Ես ստիպված կլինեի շատ ուսումնասիրություն կատարել և աղոթել, որպեսզի տեղորոշեի այն տարածքը, որտեղ կարելի էր գտնել այդ կենդանուն: Բայց ես չեմ ուզում

անցնել այդ նեղություններով: Ես սիրում եմ որսորդություն անել իմ անտառում: Սիրում եմ դուրս գալ իմ ետնաբակ և որսալ լավ մսացու եղնիկ իմ անտառի տարածքում: Բայց, ի պատասխան ձեր հարցին, ես հավատում եմ, որ մարդը կարող է հավատալ Աստծուն այդ եղջերուի համար, սակայն հիշե՛ք այն, ինչ ասացի. որքան յուրահատուկ և հստակ է հունձքը, այնքան կարևոր են տեղանքը, ժամը և մեթոդը:

Սովորաբար, երբ էլեկտրոնային նամակ եմ ստանում ինչ-որ մեկից, ով հարցնում է, թե ինչու միլիոն դոլարը չհայտնվեց հինգ օրում, ես հասկանում եմ, որ հավանաբար, ոչ միշտ, խոսում եմ մի անձնավորության հետ, որը չի սովորել հավատքում լինելու և չափազանց ինքնավստահ լինելու տարբերությունը:

Դա նման է այն էլեկտրոնային նամակին, որը մի օր ստացա մարդկանցից, որոնք ասում էին, որ պատրաստվում են 30 օր-վա ընթացքում սերմ ցանել տասը միլիոն դոլարի համար, երբ նրանք նույնիսկ զուրկ էին մթերքից, չէին վճարել տան երեք ամս-վա վարձը և չունեին աշխատանք: Նրանք շատ հեռու էին իրենց զարգացրած հավատքից:

Այսպիսով՝ Գա՛րի, դուք ասում եք, որ Աստված չէ՞ր կարող ինչ-որ մեկին տասը միլիոն դոլար տալ: Իհարկե՝ կարող էր: Ամեն բան հնարավոր է Աստծո հետ: Հարցն այն չէ՝ Նա կարող է, թե ոչ, այլ՝ արդյո՞ք դուք իսկապես ունեք հավատք դրա համար: Եթե ձեր հավատքը չի կարող բերել այն կերակուրը, որի կարիքն ունեք, ես կասկածում եմ, որ այս պահին դուք ունեք հավատք տասը միլիոն դոլարի համար: Բայց դուք կարող եք հասնել դրան: Դուք պետք է սկսեք այնտեղից, որտեղ գտնվում եք, և սովորեք, թե ինչպես է հավատքը գործում, ինչպես նաև ընդլայնեք ձեր կարողությունը՝ կառավարելու ավելին, քան կառավարում եք հիմա:

Կարո՞ղ եք հավատալ, որ կհաղթեք վիճակախաղում

Ի՞նչ կասեք վիճակախաղի մասին:

Եկե՛ք առաջ ընթանանք և խոսենք այս մասին: Այդ «Powerball»

խոշոր շահումներն իրականում հսկայական թափ են հավաքել վերջին մի քանի տարիներին: Հիշում եմ, որ անցյալ տարի այն հասավ գրեթե մեկ միլիարդ դոլարի: Կյանքում երբևէ վիճակախաղի տոմս չեմ գնել, բայց այս անգամ, երբ այն հասավ մեկ միլիարդի, գրասենյակի աշխատակիցներից մի քանիսն ասացին. «Հեյ, եկեք գոնե մի քանի խաղատոմս գնենք»: Ես շատ չմտածեցի, ուստի որոշեցի, որ մի քանի դոլար էլ ես կդնեմ: Ես գիտեի հավանականությունը և վստահություն չունեի հաղթանակի մեջ, բայց, ըստ երևույթին, որոշեցի, որ ինքս էլ փող դնեմ վիճակախաղի մեջ: Ինչպես յուրաքանչյուրն ասում է. «Ինչ-որ մեկը պետք է շահի այն»: Ըստ երևույթին, մտածում էի, որ երբ ինչ-որ մեկը շահեր մեկ միլիարդ դոլարը, չէի ցանկանա մտածել, որ մեկ դոլարի պատճառով բաց թողեցի շահելու հավանականությունը. ամաչում եմ ասել, որ ես իսկապես խաբվեցի:

Այդ գիշեր Տերը խոսեց ինձ հետ երազում դրա մասին: Նա պարզապես ասաց. «Իմ բոլոր խոստումները քո՛նն են»: «Այո՛, Տե՛ր, ես պարզ ու հստակ լսում եմ Քեզ,- ասացի,- ես հասկանո՛ւմ եմ»: Այո՛, Նա ուղղեց ինձ, բայց նաև քաջալերեց: Նա հասկացրեց, որ ես այդ վիճակախաղի կարիքը չունեմ, ու եթե ինձ պետք լինի մեկ միլիարդ դոլար, Նա կմատակարարի այն, երբ դրա կարիքն ունենամ: Ես ունեմ 7.000-ից ավելի խոստումներ, որոնց հանդեպ կարող եմ օրինական պահանջ ներկայացնել, և դրանք ավելի, քան բավական են:

Այժմ, վերադառնալով վիճակախաղում կամ որևէ մրցույթում հաղթելու համար սերմ ցանելու հարցին՝ պատասխանեմ, որ դուք չունեք իրավասություն դրա վրա: Ես կարող եմ ցանել եղնիկի համար, որովհետև եղնիկները ենթարկվում են մարդուն: Ես ունեմ օրինական իրավասություն դրանց վրա: Բայց ես չունեմ իրավասություն վիճակախաղի վրա. այն հավանականության խաղ է:

Ինչպես հասկանաք, որ հավատքի մեջ չեք

Երբ սովորում եք դատել՝ հավատքի մեջ եք, թե ոչ, օգնում է ձեզ ճիշտ որոշումներ կայացնել և հասկանալ, որ չպետք է որոշում կայացնեք, եթե վախի մեջ եք: Հիշե՛ք, հավատքը վստահութ-

յուն է, սպասողականություն, և այն լի է խաղաղությամբ: Վստահությունն այն էր, ինչ ես չունեի, երբ ձեռնարկեցի իմ առաջին հաղթանշանային եղջերուն որսալու գործը. ես հավատքի մեջ չէի: Կարո՞ղ եք ասել, թե երբ դուք հավատքի մեջ չեք: Հուսով եմ՝ կարող եք:

Ինչպես գիտեք, Դրենդան ու ես ունենք 24 հա հողատարածք՝ անտառով, ճահճուտով և խոտհարքով: Այն կատարյալ վայր է եղնիկներ որսալու համար: Մեր հողատարածքի շուրջը մշակաբույսեր են ցանված, և անտառն ու ճահճուտը բնական մագնիս են եղնիկների համար: Իմ աշխատասենյակը կառուցել եմ ավտոտնակի վրա: Այնտեղ կան փայտե գրադարակներ և ներկառուցված գազի բուխարի: Այն հանգիստ, հարմարավետ, քարանձավային տիպի աշխատասենյակ է, որտեղ ես սիրում եմ աշխատել: Միակ բանը, որ պակասում էր, արու եղջերուի գեղեցիկ գլուխն էր գրասեղանիս վերևում: Անկեղծ ասած՝ ես երբեք չեմ հետաքրքրվել խոշոր արու կենդանիների որսով, քանի որ ես որսում էի մսատու կենդանիներ: Եվ երբեք չէի կրակել արու եղջերուի, որն այնքան մեծ լիներ, որ արժանանար ցուցադրման: Բայց որքան շատ էի մտածում դրա մասին, այնքան համաձայնում էի Դրենդայի հետ, քանի որ նա էր պնդում, որ խոշոր եղջերու որսամ իմ աշխատասենյակի համար:

Հինգ տարի էր՝ ապրում էինք այդ տանը, երբ ունեցանք այս քննարկումը, և ես երբեք հողատարածքում խոշոր եղջերու չէի տեսել: Ես որսորդություն էի արել եղնիկների բոլոր որսաշրջաններին և որսացել էի մի քանի գեղեցիկ ութճյուղանի եղջյուրներով եղջերուներ, բայց ո՛չ այնպիսին, որի գլուխը հարմար լիներ պատին փակցնելու համար: Բայց այդ տարի Դրենդային ասացի, որ մտադիր եմ աշխատասենյակիս պատի համար խոշոր եղջերու որսալ: Հիշեցնեմ, ես երբեք խոշոր եղջերու չէի տեսել անտառում: Մեր խոհանոցի պատուհանը նայում է անտառին ու դաշտին, բայցևայնպես, ես երբեք այդպիսի եղջերու չէի տեսել:

Սակայն Դրենդան ու ես սերմ ցանեցինք խոշոր եղջերուի համար: Իմ սերմի չեկի վրա գրեցի, որ ցանում եմ տասճյուղանի եղջյուրներով կամ ավելի մեծ եղջերուի համար: Մենք աղոթե-

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԱՐԴԵՆ ՁԵՐՆ Է, ԲԱՐԵԿԱ՛ՄՍ: ԱՍՏՎԱԾ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՎԵԼԱՑՆԵԼ ՈՐԵՎԷ ԲԱՆ ՆՐԱՆ, ԻՆՉ ԱՐԴԵՆ ՏՎԵԼ Է ՁԵԶ: ԴՈՒՔ ԱՐԴԵՆ ՈՒՆԵՔ ԱՅԴ ԱՄԵՆԸ:

ցինք այդ սերմի համար և դրեցի այն գրասեղանին՝ փոստով ուղարկելու համար: Այդ ծրարը մնաց այնտեղ երեք օր, և ես պարզապես չէի կարողանում ուղարկել: Գիտեի, որ չունեի հավատք տասնյուղանի եղջյուրներով եղջերուի համար: Ես ունեի հավատք ութ, վեց կամ չորսնյուղանի եղջերուի համար, բայց դժվարանում էի տեսնել այդ խոշոր եղջերուին այն հավատքով, որն ասում է. «Ես գիտեմ, որ գիտեմ, որ որսալու եմ տասնյուղանի եղջյուրներով կամ ավելի մեծ եղջերու, երբ դուրս գամ որսի»: Ես ունեի բավականաչափ փորձառություն Թագավորության հետ, որպեսզի հասկանայի, որ հավատքի մեջ չեմ: Ուստի՝ պատռեցի այդ չեկը և փոխարինեցի մեկ ուրիշով, որի վրա գրեցի «չորսնյուղանի կամ ավելի մեծ», և ուղարկեցի:

Այն գիշեր, երբ պատրաստվում էի դուրս գալ որսի, Դրենդային պատմեցի, թե ինչ էի արել: «Ես պարզապես չունեմ հավատք այդ խոշոր արու եղջերուի համար»,- ասացի ես: Նա նայեց ինձ և ասաց. «Դու ունես հավատք եղնիկի համար, իսկ ես կունենամ հավատք հաղթանշանային եղջերուի համար: Աստված կարող է առատությամբ անել բոլոր բաներից ավելի, քան խնդրում ես կամ մտածում»:

Լույսը բացվեց անտառում սկյուռների գանչյունով ու թռչունների ճռվողյունով, և աշնան տերևների հոտը հիշեցրեց ինձ եղնիկների որսորդությունները: Շատ երկար չէի նստել այնտեղ, գուցե 20 րոպե, երբ լսեցի անտառով անցնող եղջերուի ձայնը: Եղջերուն գալիս էր ուղիղ իմ ծառի ուղղությամբ, և ես պատրաստվեցի կրակելու: Երբ կենդանին մոտեցավ, տեսա, որ այն չորսնյուղանի էր, ճիշտ այնպիսին, ինչպիսին սովորաբար որսում եմ, որովհետև դրանց միսը շատ համեղ է: Եղջերուն կանգ առավ գրեթե 23 մետր հեռավորության վրա գտնվող բացատում, և ես

արձակեցի նետը: Տհաճությամբ տեսա, թե ինչպես նետը բարձր դիպավ ու հետ ընկավ, և ես գիտեի, որ պետք է հետևեմ եղջերուին: Եղջերուն սլացավ անտառի միջով, այնուհետև ցատկեց եգիպտացորենի դաշտի մեջ, որը սահմանակից էր անտառին, և անհետացավ: Ես դեռևս լսում էի, թե ինչպես է նա սլանում եգիպտացորենի դաշտով, և գիտեի, որ նա այնքան ուժեղ է վազում, որ ինձ երկարատև աշխատանք էր սպասում նրան գտնելու համար:

Գրեթե 20 րոպե սպասեցի ծառի դիտանոցում, այնուհետև որոշեցի ծառից իջնել և հետազոտել նետը: Վստահորեն կարող եմ ասել, որ հաստատ հարվածել էի եղջերուին, որովհետև արյան հետք նկատեցի: Երբ հետևեցի արյան հետքին, քաջալերվեցի, որովհետև այն բավականին ակնառու էր: Բայց գրեթե 100 մետրից հետքը չորացավ: Ես այս ու այն կողմ նայեցի, բայց արյան որևէ կաթիլ չգտա: Երկու ժամ փնտրելուց հետո հասկացա, որ եղջերուն անհետացել է: Ես այնքան հիասթափված էի: Նախևառաջ՝ ես երբեք չեմ ցանկանում եղջերու վիրավորել ու կորցնել, և երկրորդ՝ հիասթափված էի իմ կրակոցից:

Երբ եգիպտացորենի դաշտից սկսեցի քայլել տան ուղղությամբ, գլխումս միտք ծագեց. *«Ես դեռ հնարավորություն ունեմ, գուցե վախեցնեմ եղջերուին, երբ փուն գնամ եգիպտացորենի դաշտով, այնուհետև՝ ճահճուտով»:* Լիցքավորեցի արբալետս: Եվ երբ դանդաղորեն անցնում էի մոլախոտերի հեղեղատի երկայնքով, հանկարծ մի եղջերու ցատկեց ու ծառս եղավ իմ առջև: Չհասկանալով, թե ով եմ ես՝ եղջերուն կանգ առավ և հետ նայեց: Քանի որ ես քողածածկող հագուստով էի, եղջերուն (կարողացա տեսնել, որ այն արու էր) վարանեց, քանի որ չէր կարողանում զանազանել ինձ: Այդ ամենը կատարվեց մի ակնթարթում: Ես կարողացա տեսնել եղջյուրները, թեև չէի կարող ասել, թե որքան մեծ էին դրանք կամ քանի ճյուղանի էին: Գիտեի, որ ունեի մի ակնթարթ՝ որոշում կայացնելու համար: Նա դուրս էր իմ աղեղի հասանելիության սահմաններից մոտավորապես 50 մետրով և կանգնած էր կողքով: Ես արագորեն առաջ ձգվեցի, նշան բռնեցի մեջքի վերևի հատվածի վրա և արձակեցի նետը: Եղջերուն անմիջապես վայր ընկավ, երբ նետը մխրճվեց նրա մարմնի մեջ: Ես

ցնցված էի. մի՞թե դա հենց նոր պատահեց:

Երբ մոտեցա եղջերուին, առաջին բանը, որ ասացի, սա էր. «Դրենդայի հավատքը»: Դա խոշոր եղջերու էր, ուներ 26 ճյուղ՝ չհաշված կախ աճած ճյուղերը: Այդքան խոշոր եղջերու երբեք չէի տեսել: Ասել, որ ես ցնցված էի, ճշգրիտ չէր ներկայացնի այդ պահը: Ինչպես կռահում եք, եղջերուն այժմ իմ աշխատասենյակում է՝ գրասեղանի վերևում: Բայց ես ուզում եմ մի պահ խոսել այս եղջերուի մասին: Ինչպե՞ս կամ ինչո՞ւ նա հայտնվեց:

Չորսճյուղանին հայտնվեց ճիշտ ժամանակին, չնայած ես փչացրի որսը: Բայց Դրենդան ասաց, որ հավատում է հաղթանշանային եղջերուի համար: Նա ուներ առավելություն իմ հանդեպ: Նա եղջերու չի որսում, այնպես որ, նրա համար հաղթանշանային եղջերու որսալը նույնքան հեշտ է, որքան չորսճյուղանի եղջյուրներով եղջերու որսալը: Նրա համար բոլորն էլ եղջերու են: Քանի որ նա որսորդություն չի անում, նրա համար չկար անհնարինության պատնեշ: Մեր հողատարածքում ես երբեք չէի տեսել խոշոր ութճյուղանի եղջերու, բայց նրա հավատքը հիմնված չէր այն բանի վրա, թե ինչ կար հողատարածքում: Նա հավատում էր, որ Աստված կարող է բերել այդ եղջերուին:

Այս որսը տեղի ունեցավ եղջերուների բազմացման շրջանում, ինչպես ասում են, սեռական ակտիվության շրջանում, երբ արուները կարող են կիլոմետրերով ճանապարհ անցնել էգեր փնտրելու նպատակով: Ուստի, միշտ կա հնարավորություն, որ կենդանիների սեռական ակտիվության շրջանում կտեսնեք արու եղջերուների, որոնց սովորաբար չեք տեսնում ձեր հողատարածքում:

Համագործակցել հավատքում

Դրենդայի հավատքը բերեց այդ եղջերուին, թեև ես չունեի հավատք հաղթանշանային եղջերուի համար: Ուզում եմ, որ կրկին կարդաք. ես չունեի հավատք այդ հաղթանշանային եղջերուի համար: Գիտեմ, թե ինչ եք մտածում. «Սպասի՛ր, Գա՛րի: Ես խճճվեցի: Եթե դու չունեիր հավատք այդ եղջերուի համար, այդ դեպքում ինչո՞ւ այն հայտնվեց»: Թո՛ւյլ տվեք ցույց տալ:

«Եվ եղավ, երբ որ ժողովուրդը Նրա վրա կիփվում էր Աստծո Խոսքը լսելու, և Ինքը Գեննեսարեթի ծովակի մոտ կանգնած էր և երկու նավ տեսավ՝ ծովակի մոտ կանգնած, ձկնորսներն էլ նրանցից դուրս էին եկած և ուռկանները լվանում էին: Եվ նա մտավ այն նավերից մեկի մեջ, որ Սիմոնինն էր, և խնդրեց նրան նավը ցամաքից մի քիչ ներս տանել: Նստեց և նավից սովորեցնում էր ժողովուրդներին:

Եվ երբ որ խոսելուց դադարեց, Սիմոնին ասաց. «Նավը դեպի խո՛րը տար, և ձեր ուռկանները գցե՛ք որսի»:

Եվ Սիմոնը պատասխանեց և ասաց Նրան. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց Քո խոսքի համար ուռկանը կգցեմ»:

Եվ երբ որ այս արին, ձկների մի մեծ բազմություն ներս փակեցին, և նրանց ուռկանը պատռվում էր: Եվ նշան էին անում մյուս նավի մեջ լինող ընկերներին, որ գան իրենց օգնեն, և նրանք եկան և երկու նավը լցրին, մինչև որ թաղվում էին»:

– Ղուկաս 5.1-7

Գիտեմ, որ արդեն նայել ենք այս պատմությանը, բայց ցանկանում եմ մատնացույց անել մի բանի, որը կպատասխանի մեր հարցին:

*«Եվ երբ որ այս արին, ձկների մի մեծ բազմություն ներս փակեցին, և նրանց ուռկանը պատռվում էր: **Եվ նշան էին անում մյուս նավի մեջ լինող ընկերներին, որ գան իրենց օգնեն, և նրանք եկան և երկու նավը լցրին, մինչև որ թաղվում էին»:***

Ուզում եմ հարցնել: Որքա՞ն հավատք գործադրեցին Հակոբոսն ու Հովհաննեսը, որպեսզի իրենց նավերը լցնեին ձկներով: Պատասխանն է՝ ոչ մի: Եթե հիշում եք, Պետրոսի, ինչպես նաև Հակոբոսի և Հովհաննեսի նավերը ափին էին, և նրանք լվանում էին իրենց ուռկանները, երբ Հիսուսը եկավ: Հիսուսը Պետրոսից խնդրեց նրա նավը, որպեսզի քարոզի այնտեղից, այնուհետև

ԵՍ ՄՇՏԱՊԵՍ ԱՍՈՒՄ ԵՄ, ՈՐ ԱՍՏԾՈ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ ԾԱԾԿՎԱԾ ԵՆ ՁԵԶ ՀԱՄԱՐ, ՈՉ ԹԵ ՁԵԶՆԻՑ: ՍԱՏԱՆԱՆ ԲՆԱԿՎՈՒՄ Է ԽԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՉԳԻՏԻ ԱՍՏԾՈ ԾՐԱԳՐԵՐԸ:

ասաց, որ դեպի խորը գնա և ուռկանները նետի որսի: Արդյունքում, Պետրոսն այնքան ձուկ որսաց, որ ուռկանները սկսեցին պատռվել, և նավը սկսեց սուզվել: Պետրոսը կանչեց ափին կանգնած իր գործընկերներին, որպեսզի գան և օգնեն՝ ձկները հանելու: Նրանց նավը լեփ-լեցուն էր ճիշտ այնպես, ինչպես Պետրոսի նավը: Իմ հարցն՝ ուղղված ձեզ, սա է. «Որքա՞ն հավատք գործադրեցին Հակոբոսն ու Հովհաննեսը՝ իրենց նավը լցնելու համար»: Պատասխանն է՝ ոչ մի: Այդ դեպքում ինչո՞ւ նրանց նավում նույնքան ձուկ կար, որքան Պետրոսի նավում: Տեքստը պատասխանում է այդ հարցին. այն ասում է, որ նրանք գործընկերներ էին:

«Գործընկեր» բառի սահմանումը «Collins» անգլերեն բառարանում հետևյալն է.

«Մարդ, որը բաժնեկցում կամ գործակցում է մեկ ուրիշի հետ որևէ գործողության կամ ձեռնարկման մեջ՝ սովորաբար կիսելով ռիսկերն ու օգուտները»:

Գործընկերությունը կամ համագործակցությունը իրավաբանական միավոր է և կիսում է բիզնեսի ռիսկերը, ծախսերը և շահույթը: Այսպիսով՝ երբ Պետրոսի հավատքը հետևեց Հիսուսին, իրականում, իրավական առումով նա Հիսուսին փոխ էր տալիս բիզնեսը, այլ ոչ թե պարզապես նավը: Տեխնիկական առումով, այն նավը, որ Պետրոսը թույլ տվեց Հիսուսին օգտագործել, պատկանում էր նաև Հակոբոսին և Հովհաննեսին, և նրանց համագործակցության շնորհիվ երկու նավերն էլ հավասարաչափ լցվեցին: Այսպիսով՝ ո՞ւմ հավատքը բերեց այդ հունձքը: Ակնհայտ է, որ Պետրոսի: Նա էր, որ ասաց. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց Քո խոսքի համար ուռկանը կգցեմ»:

Այնպես որ՝ Հակոբոսն ու Հովհաննեսն ունեցան նույն հունձքը,

ինչ Պետրոսը, թեև այդ իրավիճակում նրանք հավատք չկիրառեցին: Նույնն էլ Դրենդայի դեպքում էր: Մենք գործընկերներ ենք, և մենք մեկ ենք: Նրա հավա՛տքն այդ օրը բերեց այդ եղջերուին: Դուք կարող եք տեսնել, որ համագործակցության այս գաղափարը հզոր հոգևոր սկզբունք է, ինչպես հենց նոր տեսանք այս պատմության մեջ: Պողոսը խոսում է համագործակցության այս սկզբունքի մասին Փիլիպեցիների թղթում.

> *«Գոհանո՛ւմ եմ իմ Աստծուց ամեն ժամանակ, որ ձեզ հիշում եմ, որ ամեն ժամանակ իմ բոլոր աղաչանքներում ձեր ամենի համար աղոթք եմ անում ուրախությունով՝ ձեր Ավետարանին հաղորդ լինելու համար, այն առաջին օրից մինչև հիմա: Եվ հաստատ համոզված եմ սրանում, թե Նա, որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը:*
>
> *Ինչպես որ պետք է ինձ մտածել այս բանը ձեր ամենի համար. որովհետև ձեզ իմ սրտի մեջ ունեմ իմ կապանքներում և Ավետարանի ջատագովության և հաստատության ժամանակ, որ դուք ամենդ ինձ հետ շնորհքին հաղորդ եղաք»:*
>
> – Փիլիպեցիների 1.3-7

Պողոսն ասում է, որ ուրախությամբ է հիշում Փիլիպեայի եկեղեցուն՝ իր ծառայության հետ նրանց շարունակական համագործակցության համար: Նա շարունակում է՝ հաստատելով, որ նրանց համագործակցության շնորհիվ այժմ նրանք հաղորդ են կամ բաժնեկից են Աստծո այն շնորհքին, որ իր ծառայության վրա է: Շնորհքն Աստծո զորությունն է կամ Աստծո կարողությունը, որը Պողոսի վրա էր՝ նրան հանձնարարված առաջադրանքն իրականացնելու համար: Փիլիպեայի եկեղեցին կիսում էր առաջադրանքի ծախսերը, և Հակոբոսի ու Հովհաննեսի նման բաժնեկից էր նաև այն օծությանը և շնորհքին, որ այդ առաջադրանքի վրա էին:

Բացենք չորրորդ գլուխը, և կտեսնեք այն զարմանալի արդյունքը, որ տալիս է համագործակցությունը.

«Սակայն, լա՛վ արիք, որ հաղորդ եղաք ինձ իմ նեղությունում: Դուք ինքներդ էլ, փիլիպեցիներ, գիտեք, որ Ավետարանի սկզբում, երբ որ Մակեդոնիայից դուրս եկա, ոչ մի եկեղեցի հաղորդություն չարեց ինձ տալու կամ առնելու հաշվով, բայց միայն դուք: Որովհետև Թեսաղոնիկեի մեջ էլ մի երկու անգամ ինձ պետք եղած բաները ուղարկեցիք: Իբր ոչ թե տուրքն եմ ուզում, այլ պտուղն եմ ուզում, որ ավելանա ձեր հաշվին: Բայց ես ամեն բան առել եմ և առատություն ունեմ. լիքն եմ, որ Եպափրոդիտոսի ձեռքով ընդունեցի այն, որ ձեզնից է՝ անուշ հոտ, ընդունելի պատարագ՝ Աստծուն հաճելի: Եվ իմ Աստված լրացնի ձեր ամեն կարոտությունն Իր հարստության չափով՝ փառքով Քրիստոս Հիսուսում»:

– Փիլիպեցիների 4.14-19

Հատուկ ուշադրություն դարձրեք, թե ինչ է Պողոսն ասում Փիլիպեայի եկեղեցուն. «Իմ Աստված լրացնի ձեր ամեն կարոտությունը»: Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը չասաց. «Ձեր Աստված լրացնի ձեր կարոտությունը, քանի որ դուք առատաձեռն եք եղել իմ հանդեպ»: Ո՛Չ: Նա ասաց. «Իմ Աստված լրացնի ձեր կարոտությունը»: Հասկանո՞ւմ եք, փիլիպեցիները Պողոսի հետ գործընկերներ էին և, որպես գործընկեր, բաժնեկից էին այն շնորհքին, որ Պողոսի առաջադրանքի վրա էր: Պողոսը հռչակում էր, որ նրանց կարիքները կլրացվեն իր հավատքի շնորհիվ, ինչպես Պետրոսի հավատքի շնորհիվ Հակոբոսն ու Հովհաննեսը որսացին այդ ձկներին: Հուսով եմ, դուք կարողանում եք տեսնել այս սկզբունքի առավելությունը:

Ենթադրենք՝ դուք մեքենայի կարիք ունեք և համագործակցում եք մեր ծառայության հետ: Ենթադրենք նաև, որ մեքենան արժե 30.000 դոլար: Երբ ցանում եք GaryKeesee.com կայքում, դուք հասկանում եք, թե ինչ է համագործակցությունը. դուք բաժնեկից կամ հաղորդ եք լինում այն օծությանը և շնորհքին, որ մեր ծառայության վրա են: Որպես ծառայություն՝ մենք կարող ենք հեշտությամբ համաձայնության գալ այդ 30.000 դոլարի շուրջ, որովհետև վաղուց հաղթահարել ենք 30.000 դոլարի շեմը: Մենք կարող ենք

հեշտությամբ հավատալ 30.000 դոլարի համար, քանի որ այժմ տարեկան միլիոնավոր դոլարներ ենք ծախսում: Բայց ժամանակին մենք ստիպված էինք հավատալ Աստծուն 30.000 դոլարի համար, որն այդ ժամանակ կարծես հսկայական սար լիներ: Այսպիսով, եթե ինձ հարցնեք, թե արդյո՞ք կարող եմ հավատալ Աստծուն 30.000 դոլարի համար, պատասխանը կլինի՝ միանշանակ: Երբ մենք համաձայնության մեջ ենք և հանդիսանում ենք գործընկերներ, Պողոսի նման ես էլ կարող եմ հռչակել, որ ձեր կարիքները լրացված են, սակայն ոչ թե ձեր, այլ իմ հավատքի շնորհիվ:

Ակնհայտ է՝ դուք պետք է հավատք ունենաք, երբ ցանում եք սերմ 30.000 դոլարի համար, և պետք է ունենաք վստահություն ոչ միայն Աստծո Խոսքի, այլև մեր հանդեպ: Դուք պետք է ունենաք հավատք իմ հանդեպ, վստահ լինեք, որ ես օծված եմ և կանչված եմ Աստծուց, որ գործում եմ սրբությամբ, և պետք է կարողանաք տեսնել ակնառու արդյունքներ իմ կյանքում և իմ ծառայության մեջ: Եթե նայեք, թե ինչ ենք մենք անում և որտեղից ենք սկսել, կիմանաք, որ ես ունեմ հավատք 30.000 դոլարի համար: Գուցե դուք չունեք հավատք 30.000 դոլարի համար, բայց մենք կարող ենք համագործակցել և տեսնել զարմանահրաշ բաներ: Նույնը վերաբերում է հաղթանշանային եղջերուին: Դրենդան որսի գնալու նախորդ գիշերն ասաց. «Դու հավատում ես եղնիկի համար, իսկ ես կհավատամ հաղթանշանային եղջերուի համար»: Ահա թե ինչպես է համագործակցությունը գործում:

Ընտրել մարտավարական գործընկերներ

Այսպիսով՝ թո՛ւյլ տվեք սահմանել մի քանի հիմնարար կանոն՝ տալով հետևյալ հարցը. եթե պատրաստվում եք հիմնել համակարգչային ընկերություն, կցանկանա՞ք, որպես գործընկեր, ունենալ մեկին, ով չունի փող և սովորում է համակարգչային գիտության դասընթացի առաջին կիսամյակում, թե՞ նրան, ով կառուցել է համակարգչային գործունեությամբ զբաղվող մուլտիմիլիոնդոլարանոց ընկերություն և ունի ֆինանսներ, որպեսզի օգնի ձեր ընկերության մեկնարկին: Անշուշտ, այստեղ կան շատ փոփոխա-

կան մեծություններ, և ես ընդամենը օրինակ եմ բերում: Բայց արտաքուստ կարծում եմ, որ ակնհայտորեն կընտրեք նրան, ով ունի փորձառություն, ստուգված նվաճումների ցանկ և սնանկանալու եզրին չէ:

Նույնը վերաբերում է այն բանին, երբ ցանկանում եք ցանել ծառայության մեջ: Խնդրում եմ, ասածս մի՛ շփոթեք որևէ մեկի հետ համագործակցելու հարցում Աստծո անմիջական առաջնորդության հետ: Այդպիսի առաջնորդությունը գերազանցում է նրան, ինչի մասին ես խոսում եմ: Շատ անգամներ Աստված կառաջնորդի ձեզ համագործակցելու Իր առաջադրանքներում, բայց երբեմն դուք պետք է ընտրեք: Ես խոսում եմ հատկապես այն մասին, երբ ցանելն ընտրություն է, որ դուք կատարում եք. դուք ցանում եք, երբ ցանկանում եք տեղափոխվել դեպի հաջորդ մակարդակ: Ես գիտեմ, որ ցանում եմ այն առաջադրանքների մեջ, որոնց հավատում եմ՝ հստակ նպատակ ունենալով արագացնել այն միջոցների հոսքը, որոնք անհրաժեշտ են իմ անձնական կյանքում: Կանոններից մեկը, որ չեմ խախտում, այն է, որ ես մշտապես ցանում եմ այնպիսի առաջադրանքի մեջ, որտեղ կա հասկացողություն հավատքի ու համաձայնության մասին, իհարկե, եթե չեմ տալիս աղքատներին կամ կարիքավորներին: Անշուշտ, մենք չենք ակնկալում, որ աղքատներն ու կարիքավորները կհասկանան, թե ինչ է հավատքը: Մենք սեր ենք ցանում նրանց հանդեպ, և Աստված վարձահատույց կլինի մեզ: Կրկնեմ, աղքատներին տալը տարբերվում է այն ցանքից, որի մասին մենք խոսում ենք: Մեկ այլ բան, որ փնտրում եմ ցանելիս, աստվածային այնպիսի առաջադրանք է, որն ունի նույն պտուղը, ինչի համար հավատում եմ Աստծուն:

Օրինակ, իմ ընկերությունն ունի երկու ինքնաթիռ: Նախքան դրանցից որևէ մեկը գնելը՝ ես ցանեցի աստվածային այնպիսի առաջադրանքի, այնպիսի ծառայության մեջ, որը գիտեի, որ անցյալում վճարել է բազմամիլիոն դոլարանոց շատ ինքնաթիռների համար: Երբ ասում եմ շատ, նկատի ունեմ՝ շատ, և բոլորն էլ վճարվել են կանխիկ գումարով: Այդ ծառայություններն ունեին ակնառու արդյունք, ինչ վերաբերում էր ինքնաթիռներին: Ես գի-

տեի, որ նրանք կարող էին հեշտությամբ համաձայնել ինձ հետ և հավատքով կանգնել ինքնաթիռի համար: Ես չէի համագործակցի այնպիսի ծառայության հետ, որն ասում էր, որ ինքնաթիռները չափազանց թանկ են, կամ չարժե ինքնաթիռ ունենալ: Այդտեղ չկա որևէ համաձայնություն: Ո՛չ, ես ցանկանում էի համաձայնության մեջ լինել մի ծառայության հետ, որը հասկանում էր, թե որտեղ էի ես, կարող էր ինձ հետ հավատալ Աստծուն ինքնաթիռի համար և ուներ պտուղ՝ դա ապացուցելու համար:

Ես ինքնաթիռ եմ վարում 19 տարեկանից և սովորել եմ թռչել քաղաքից դուրս գտնվող 914 մետր երկարությամբ մանրախիճային թռիչքուղուց: Ամբողջ կյանքում ինքնաթիռներ եմ վարձել, մինչև այն օրը, երբ մտածեցի. *«Հեյ, գիտեք՝ ինչ: Ես պարզապես պետք է սերմ ցանեմ և հավատամ Աստծուն իմ սեփական ինքնաթիռի համար»:* Հենց այդպես էլ արեցի: Ես հստակ գիտեի, թե ինչ ինքնաթիռի համար էի ցանում, ուստի չեկի վրա գրեցի այդ ինքնաթիռի անունը, և Դրենդան ու ես համաձայնեցինք դրա շուրջ: Այնուհետև ուղարկեցինք չեկը այն ծառայությանը, որի մասին հենց նոր հիշատակեցի:

Անցավ գրեթե մեկ ամիս, և ես հերթական այցելություն ունեի բժշկի մոտ: Երբ այդ օրը խոսում էի բժշկի հետ, նա հենց այնպես հարցրեց. «Կարո՞ղ է պատահաբար ճանաչեք մեկին, ով կցանկանար ինքնաթիռ գնել»: Ես մի փոքր զարմացա այդ հարցից, քանի որ կյանքում երբեք որևէ մեկն ինձ չէր տվել նպանատիպ հարց: Ես հարցրի՝ ինչպիսի՞ ինքնաթիռ է, և դա հենց այն ինքնաթիռն էր, որի համար սերմ էի ցանել: Ակնհայտորեն դա գրավեց իմ ուշադրությունը: Ես գնացի և տեսա ինքնաթիռը, կապ հաստատեցի սեփականատիրոջ հետ, և նա ինձ տարավ թռիչքի: Դա հրաշալի էր: Միայն մեկ խնդիր կար. այդ պահին ես չունեի անհրաժեշտ գումար այն գնելու համար: Բայց Աստված ծրագիր ուներ:

Նախորդ աշնանը (այդ ժամանակ մարտ ամիսն էր) հորիցս ստացել էի մի տուն, որը գարնանը մտադիր էի վերածել գրասենյակային շենքի: Հայրս ինձ ասաց, որ անցած ձմեռ ջուրն անջատել էր, և ես երբեք չէի ստուգել: Ինքնաթիռը տեսնելուց ընդամենը մի քանի օր հետո եղբայրս զանգեց և ասաց, որ տունը

վնասվել է: Նա հայտնեց, որ տան ամբողջ գիպսաստվարաթուղթը վնասվել է, և մեծ մասը պոկվել է պատերից: Ակնհայտորեն ջուրն անջատված չէր եղել և ձմռանը սառել էր: Մարտ ամիսն էր, եղանակը տաքացել էր, և ջուրը շարունակ լցվել էր տուն, ով գիտի, որքան ժամանակ, համենայն դեպս՝ մի քանի շաբաթ:

Եղբայրս տեղյակ չէր, որ ես արդեն պայմանագիր էի կնքել շինարարական ընկերության հետ՝ տունը գիպսաստվարաթղթից և արտաքին երեսպատումից մաքրելու վերաբերյալ: Այն վերակառուցման գործընթացի մի մաս էր՝ տունը գրասենյակային նոր համալիրի վերածելու նպատակով: Այժմ, ամենահրաշալի բանը, որ տեղի ունեցավ. ապահովագրական ընկերությունը հատուցեց ջրի պատճառած վնասը, և դա այն կանխիկ գումարն էր, որը վճարեցի իմ ինքնաթիռի համար: Ինքնաթիռը ձեռք բերվեց կանխիկ գումարով:

Այնպես որ՝ հիշե՛ք, համագործակցությունը հզոր հոգևոր սկզբունք է, որի մասին արժե տեղյակ լինել և որից պետք է օգտվել:

Սրանով ավարտում ենք մեր քննարկումն այն մասին, թե ինչպես արձակեք ձեր սերմը, երբ հավատքի մեջ եք: Այժմ, ի՞նչ է տեղի ունենում սերմը ցանելուց հետո: Հավատացե՛ք ինձ, մարդկանց մեծ մասը չգիտի, ինչի մասին վկայում են բազմաթիվ քրիստոնյաներ, որոնք ցանում են, բայց իրենց տվածի դիմաց չեն տեսնում ոչ մի հատուցում կամ արդյունք: Մի՞թե սա այն ժամանակն է, երբ կարելի է նստել սեղանի շուրջ և լիմոնադ խմել, մինչև ձեր հունձքը կհասնի:

Ավելի լավ է՝ դա չանեք: Հաջորդ գլխում կքննարկենք, թե ինչ պետք է անեք:

ԳԼՈՒԽ 8

ԴՈՒՔ ԾՐԱԳՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՔ

Երբ Բրեդն ու Չերիթին առաջին անգամ եկան մեր եկեղեցի, ես իսկապես նրանց չէի ճանաչում: Հիշում եմ, որ ողջունում էի նրանց և ժամանակ առ ժամանակ կարճ զրուցում: Առաջին անգամ, երբ նրանք հոգևոր առումով գրավեցին իմ ուշադրությունը, Դրենդայի կազմակերպած կանանց համաժողովին էր: Համաժողովն սկսվում էր հինգշաբթի երեկոյան և ավարտվում շաբաթ կեսօրին: Մասնակիցներից շատերն այնուհետև մնում էին մեր շաբաթօրյա եկեղեցական ծառայությանը: Այս ծառայությունից հետո էր, երբ Բրեդն ու Չերիթին մոտեցան ինձ խնդրանքով: Նրանք ցանկանում էին գործ սկսել և խնդրեցին, որ ընդունեմ իրենց սերմը մեր ծառայության մեջ և աղոթեմ այդ գործի համար:

Ավելի ուշ ես իմացա, որ Չերիթին կանանց համաժողովում վարձել էր տաղավար՝ աֆրոամերիկյան գանգուր մազերի համար իր պատրաստած խնամքի միջոցները վաճառելու համար: Նա համաժողովի տաղավարը վարձել էր 150 դոլարով և վաճառեց 350 դոլարի արժողության ապրանք, որից ստացավ 200 դոլարի զուտ եկամուտ:

Շաբաթ օրվա երեկոյան ծառայությանը նրանք բերեցին 200 դոլարը և ցանկացան ցանել այն մեր ծառայության մեջ՝ որպես սերմ իրենց գործի առաջընթացի համար: Ես, իհարկե, համաձայնեցի, և մենք աղոթեցինք: Ես այդքան շատ չմտածեցի դրա մասին, բայց նրանց աչքերում կարող էի տեսնել ջերմեռանդություն և կարող էի ասել, որ նրանք հավատքի մեջ էին, երբ արձակեցին իրենց սերմը:

Որպեսզի մի փոքր տեղեկություն տամ Բրեդի և Չերիթիի մա-

սին, ասեմ, որ այդ ժամանակ Բրեդն ինչ-որ ընկերությունում SS ոլորտի մենեջեր էր, իսկ Չերիթին կես դրույքով ժամում 10 դոլար էր աշխատում. նրանք ապրում էին այնպես, ինչպես աշխատավարձից աշխատավարձ ապրող սովորական ընտանիքը: Համաժողովից հետո նրանք շարունակեցին վաճառել իրենց ապրանքներն ընկերներին և առցանց, բայց խոստովանում էին, որ գործն իրականում վերելք չէր ապրում: Սակայն Աստված գործում էր կուլիսների հետևում՝ նախապատրաստելով նրանց ապագա աճը:

Ջայլամի յուղը նրանց պատրաստած միջոցների հիմնական բաղադրիչն էր, որը նրանք գնում էին Կալիֆոռնիայում ջայլամաբուծությամբ զբաղվող մի ագարակատիրոջից: Նրանք իմացան, որ վերջինս ցանկանում է վաճառել իր ընկերությունը: Արժեքը 40.000 դոլար էր: Չերիթին գիտեր, որ դա հրաշալի հնարավորություն է իրենց ընկերության ապագա աճի համար, բայց նրանք չունեին այդ 40.000 դոլարը: Նրանց ունեցած գումարը բավական էր միայն ինքնաթիռի տոմսեր գնելու, Կալիֆոռնիա մեկնելու և այդ ընկերությունը տեսնելու համար: Բրեդն ասում էր, որ որքան մոտենում էր Կալիֆոռնիային, այնքան ավելի նյարդայնանում էր: Ինչ էր ասելու սեփականատիրոջը, եթե իրենք չունեին գումար և միմյանց խոստացել էին, որ որևէ գումար պարտքով չեն վերցնի իրենց գործի համար: Երբ հասան Կալիֆոռնիա, ագարակատերը ցույց տվեց ամբողջ տարածքը, բայց ասաց, որ արդեն գտել է գնորդ յուղի արտադրությամբ զբաղվող ընկերության համար: Գործը կարծես գլուխ չէր գալիս: Բայց սեփականատերը Բրեդից խնդրեց SS ոլորտի որոշակի աշխատանք կատարել իր համար, և Բրեդն ընդունեց նրա խնդրանքը:

Այդ ընթացքում Բրեդն ու Չերիթին փոխհարաբերություններ կառուցեցին սեփականատիրոջ հետ, և մի օր նա ասաց, որ որոշել է վաճառել ընկերությունը նրանց: Բրեդն ու Չերիթին վճարումներ կատարեցին ընկերության համար և ունեցան ջայլամի յուղի արտադրությամբ զբաղվող իրենց ընկերությունը: Մոտավորապես այս ժամանակ էր, երբ Բրեդն ու Չերիթին լսեցին շինարարական նախագծի մասին, որը մենք մեկնարկեցինք «Հավատ-

քի կյանք» եկեղեցում, և ինչ-որ բան պարզապես շարժվեց նրանց ներսում: Նրանք տեսել էին, թե ինչպես ավելի վաղ ցանված առաջին սերմն արմատական փոփոխություն բերեց իրենց բիզնեսում, և հիմա գիտեին, որ ժամանակն է նշանակալի սերմ ցանելու և բիզնեսը հաջորդ մակարդակին բարձրացնելու համար: Կրկին, Բրեդն ու Չերիթին հանդիպեցին ինձ եկեղեցու առաջնամասում և ցանեցին իրենց բիզնեսի համար՝ առանձնահատուկ նպատակով: Նրանք չէին ցանում իրենց անձնական գումարների համար, այլ՝ վեցանիշ չեկի համար, որը ցանկանում էին տալ շինարարական նախագծին:

Կարճ ասած՝ կրկին խոշոր փոփոխություն կատարվեց նրանց արտադրանքի մեջ, և Աստված տվեց նոր բաղադրիչ, որը փոխեց արտադրանքն այնպես, որ այն դարձավ գերազանց ապրանք աֆրոամերիկյան գանգուր մազերի համար: Արտադրությունը վերելք ապրեց: Եվ շատ շուտով նրանք շինարարական նախագծին տվեցին այդ վեցանիշ չեկը: Այժմ նրանք աջակցում են նախագծերի ամբողջ Աֆրիկայով, և նրանց դրամական հոսքը յոթ նիշից ավելի է: Այս ամենը տեղի ունեցավ եռամյա ժամանակահատվածում: Ինչպիսի՜ անհավանական պատմություն՝ ժամում 10 դոլարից մինչև միլիոններ երեք տարում: Պարզապես հրաշալի՜ է:

Սա հրաշալի պատմություն է և գերազանց օրինակ այն բանի, թե ինչպես է Աստված գործում ձեզ հետ՝ ձեզ մատակարարելու և ձեր ազդեցությունն ընդլայնելու համար: Առաջին հերթին ինձ համար աչքի ընկան նրանց սրտերը Թագավորության հանդեպ և նրանց ընկերության նպատակը՝ ֆինանսապես աջակցել Աստծո Թագավորությանը: Երկրորդ՝ այն, թե ինչպես նրանք աշխատեցին Աստծո հետ՝ հիմնականում ոչնչից մշակելով կառուցվածք, արտադրանք և ծրագիր ընկերության համար: Սա պետք է ոգեշնչի ցանկացածի, ով ուզում է որևէ նշանակալի բան անել, ինչը չի որոշվում նրանով, թե սկսելիս որքան փող ունի կամ ինչ գիտի.: Աստված կաշխատի ձեզ հետ ամբողջ ճանապարհին:

Սա հանգեցնում է Թագավորության չորրորդ սկզբունքին, որ Աստված սովորեցրեց ինձ, և դա այն է, որ ցանելուց և ձեր հավատքն արձակելուց հետո դուք պետք է լսեք ծրագրի մասին:

Քայլ 4. Ցանելուց և ձեր հավատքն արձակելուց հետո դուք ծրագրի կարիք ունեք:

«Նա էլ պատասխանեց և նրանց ասաց. «Դո՛ւք կերակրեք նրանց»: Նրանք էլ ասացին Նրան. «Գնա՞նք երկու հարյուր դահեկանի հաց առնենք և դրանց տանք, որ ուտեն»:

Նա էլ նրանց ասաց. «Քանի՞ հատ հաց ունեք. գնացե՛ք և տեսե՛ք»:

Երբ որ իմացան, Նրան ասացին. «Հինգ և երկու ձուկ»:

Եվ հրամայեց նրանց, որ ամենքը գունդ-գունդ կանաչ խոտի վրա նստեն: Եվ դաս-դաս նստեցին, հարյուր-հարյուր և հիսուն-հիսուն: Եվ այն հինգ հացը և երկու ձուկն առած դեպի երկինքը նայեց, օրհնեց, կտրեց հացերը և Իր աշակերտներին տվեց, որ գցեն նրանց առջև, և այն երկու ձուկը բաժանեց ամենին: Եվ ամենքը կերան և կշտացան և փշրանքներից տասներկու կողով լիքը վեր առան և ձկներից էլ: Եվ հացը ուտողները հինգ հազարի չափ մարդիկ էին»:

– Մարկոս 6.37-44

Հիսուսն աշակերտներին տվեց իրագործման ծրագիր, նախքան ձուկն ու հացը կբազմանային: Համոզվեք, որ հասկանում եք սա: Հենց որ հավատքով ցանում եք ձեր սերմը, Սուրբ Հոգուց պետք է ստանաք ծրագիրը: Սա անելու լավագույն միջոցը որոշ ժամանակ Հոգով աղոթելն է: Դուք չեք ցանկանա որոշումներ կայացնել կամ ձեր ուժերով ինչ-որ բան մեկնարկել, մինչև չլսեք Աստծուց: Դրա համար կան մի քանի պատճառներ: Առաջին՝ դուք կփորձեք անել դա ձեր ուժերով և չափազանց նեղ կմտածեք: Երկրորդ՝ գուցե փորձեք կազմել ծրագիր մի բանի շուրջ, որն արդեն գիտեք, երբ Աստված, հնարավոր է, ցանկանում է առաջնորդել ձեզ նոր ուղղությամբ: Դուք արդեն փորձել եք այն, ինչ գիտեք, և նոր գաղափարի ու ծրագրի կարիք ունեք՝ ձեր հունձքը փոխելու համար: Ուստի՝ սպասեք Տիրոջը նոր գաղափարների

ՀԵՆՑ ՈՐ ՀԱՎԱՏՔՈՎ ՑԱՆՈՒՄ ԵՔ ՁԵՐ ՍԵՐՄԸ, ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՑ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱՔ ԾՐԱԳԻՐԸ:

և ծրագրի համար: Դրանք կարող են գալ ցանկացած տեղից: Դուք կարող եք տեսնել գովազդ, հանդիպել ինչ-որ անձնավորության կամ տեսնել երազ, ինչպես ես տեսա: Աստված կգրավի ձեր ուշադրությունը և կօգնի կազմելու ձեր նոր ծրագիրը: Թո՛ւյլ տվեք բերել օրինակ, թե ինչու է սա այսքան կարևոր:

Ծրագրի ուժը

Հավանաբար, նույն օրինակը պատմել եմ իմ՝ «Ձեր ֆինանսական հեղափոխությունը» գրքաշարի բոլոր գրքերում, բայց արժե կրկնել: Եթե ձեզ ասեի, որ կարող եմ լուծել ձեր բոլոր ֆինանսական խնդիրները հաջորդ մի քանի խոսքերի միջոցով, համոզված եմ, որ դուք գրի կառնեիք մանրամասները: Շատ լավ, պատրաստ եղեք, որովհետև ահա ձեր պատասխանը: Ստացեք 10 միլիոն դոլարի զուտ եկամուտ այս տարի: Այո՛, ես ասացի՝ ստացեք 10 միլիոն դոլարի զուտ եկամուտ՝ նախքան այս տարվա ավարտը: Մարդկանց մեծ մասի համար սա վճարունակության լավ ուղի կապահովի:

Ի՞նչ: Ինչ-որ մեկը քմծիծաղ է տալիս: Դուք ծիծաղո՞ւմ եք: Երբ իմ լսարաններում ասում եմ, որ մարդիկ անեն դա, ամենուրեք քմծիծաղ եմ լսում: Այնուհետև հարցնում եմ, թե ինչու են ծիծաղում: Նրանք ծիծաղում են, որովհետև նրանց համար դա կատակ է, դա հնարավոր չէ: Հետո ես նրանց ասում եմ, որ ինչ-որ պահի, երբ իջեցնեմ տարեկան եկամտի չափը, նրանք կդադարեն ծիծաղելուց և կասեն. «Օ՜, ես կարող եմ դա անել»:

Այսպիսով՝ ե՞րբ եք դադարում ծիծաղելուց. տարեկան 600.000 դոլարի դեպքո՞ւմ: Որտե՞ղ եք ձեզ տեսնում. տարեկան 200.000 դոլարի՞, թե՞ 100.000 դոլարի եկամտի մեջ: Գուցե ձեր թիվը շատ ավելի քիչ է՝ տարեկան 45.000 դոլար: Տարեկան 10 միլիոն դոլարի և 0 դոլարի միջև դուք կգտնեք մի թիվ, որի դեպքում կասեք. «Կարծում եմ, ես կարո՞ղ եմ դա անել»: Եվ խնդիրն էլ դա է. հենց

այդտեղ էլ դուք կմնաք: Հասկացեք սա, ոչ ոք չի փորձում որևէ բան, ինչը կարծում է, որ անհնար է իր համար: Ահա և խնդիրը. դուք կապված կամ սահմանափակված եք ձեր իսկ մտքերով:

Այժմ, ցույց տամ ծրագրի ուժը: Վերցնենք նույն պնդումը, որ ձեր բոլոր ֆինանսական խնդիրները կլուծվեն, եթե այս տարի 10 միլիոն դոլարի զուտ եկամուտ ստանաք: Բայց այս անգամ ձեզ առաջարկելու եմ պայմանագիր՝ գումար վաստակելու համար: Ես վճարելու եմ 500 դոլար յուրաքանչյուր տուփի համար, որի մեջ պետք է դնեք մեկ գնդակ, այնուհետև ժապավենով փակեք այն, նշեք, որ տուփը փոստային առաքման համար է, և դնեք մի կողմ: Ենթադրենք՝ դուք կարող եք փաթեթավորել ժամում 100 տուփ կամ ստանալ ժամում 50.000 դոլարի եկամուտ: Ենթադրենք նաև, որ դուք աշխատում եք օրական 10 ժամ՝ ունենալով օրական 500.000 դոլարի եկամուտ: Այժմ, երբ ասեմ՝ եկեք 10 միլիոն դոլար աշխատենք մինչև տարվա վերջ, ի՞նչ կասեք: «ՀԵՇՏ է, դա ընդամենը կպահանջի 20 օրվա աշխատանք»: Շա՛տ լավ, թույլ տվեք հարցնել, թե ինչը փոխվեց: Ոչինչ, բացի նրանից, որ այժմ դուք ունեք ծրագիր, որին հետևելու դեպքում երաշխավորվում է, որ դուք կհասնեք տարեկան 10 միլիոն եկամուտ ստանալու ձեր նպատակին:

Հասկացա՞ք: Եթե մնար ձեր երևակայությանը, հավանաբար երբեք չէիք մտածի, որ այդ նպատակն իրագործելի է, և կբավարարվեիք նրանով, ինչը ԴՈՒՔ կարծում էիք, որ հնարավոր է: Բայց ձեզ հարկավոր չէ ձեր կարծիքը. դուք արդեն բավականին ժամանակ է՝ ապրում եք այդ սահմանափակ աշխարհում: Ո՛չ, դուք Սուրբ Հոգու կարիքն ունեք, որպեսզի Նա օգնի ձեզ երազելու:

Աստված ունի ծրագիր ձեզ համար

Գրքում ավելի վաղ պատմեցի մեր սարսափելի ֆինանսական իրավիճակի, տագնապի նոպաների և ընկճվածության մասին, որոնք առաջացել էին ֆինանսների պատճառով: Երբ սկսեցի սովորել Թագավորության ապրելակերպը, բացի Աստծուց, ուրիշ ոչ մի տեղ չունեի հայացքս ուղղելու: Նա խոսեց ինձ հետ և տվեց ծրագիր՝ հիմնելու «Ֆորվարդ Ֆայնենշլ գրուպ» ֆինանսական ընկերությունը և ցույց տալու մարդկանց, թե ինչպես ազատվեն

պարտքերից: Դա խենթություն է: Հիշում եմ, որ այն ժամանակ, տանը նստած, խորհում էի Նրա ասածների շուրջ և ինքս ինձ մտածում. «Երանի՜ նախապես ինձ ասեիր»: Բայց Նա պատասխանեց՝ ասելով, որ ծրագիրն իրագործելուն զուգընթաց ես կազատվեմ պարտքերից:

Երբ Դրենդան ու ես մեկնարկեցինք այն ծրագիրը, որ Աստված տվեց մեզ, մենք չունեինք սարքավորում, համակարգիչ, ոչինչ: Բայց երբ տեսանք ծրագիրը, ես գիտեի, որ այն կաշխատի. գիտեի, որ այն հնարավոր է: Եվ ծրագիր ասելով՝ նկատի ունեմ այն մարտավարությունը և մանրամասները, որ Նա ցույց տվեց ծրագիրը մեկնարկելու վերաբերյալ: Ես կարող էի դա անել: Իրականում, ես սիրով կանեի դա:

Ինչպես Բրեդի և Չերիթիի դեպքում, Աստված մատակարարեց մեզ անհրաժեշտ բոլոր նախնական սարքավորումները: Տարօրինակ կերպով մի օր հայրս, որ պիցցայի սրահի սեփականատեր էր և համակարգչի կարիք չուներ, ինձ ասաց, որ ցանկանում է համակարգիչ գնել ու առաջարկեց միանալ իրեն: Մենք գնացինք ու նրա համար գնեցինք համակարգիչ և տեքստի մշակման ծրագիր: Նա ասաց, որ կարող եմ օգտվել նրա համակարգչից: Հասկանում եք, ես ոչինչ չգիտեի համակարգիչների մասին: Հայրս իմ տնից մի քիչ ներքև էր ապրում, և ես սկսեցի փորձարկել այդ համակարգիչն ու ծրագիրն այնքան, մինչև որ կարողացա հրաշալի զեկույց գրել հաճախորդների համար այն մասին, թե ինչպես կարող են ազատվել պարտքերից. Աստված ճանապարհ հարթեց, երբ ես փող չունեի:

Ընկերությունն աճեց, և ես սկսեցի վաճառքի գործակալներ վարձել: Այն օրերին մենք գործածում էինք ձեռքի ֆինանսական հաշվիչներ՝ յուրաքանչյուր ընտանիքի ծրագիրը հաշվարկելու համար: Այնուհետև այդ տվյալները մուտքագրում էինք իմ կողմից տեքստի մշակման համակարգչային ծրագրով ստեղծված ձևանմուշի մեջ, այնուհետև մեքենագրում էինք և հանձնում մեր գործակալներին՝ հաճախորդների տուն տանելու համար: Ամբողջ օրը լսվում էր կետացանցային տպիչի ձայնը (դուք հիշում եք դրանք, այնպես չէ՞): Շուտով իմ քարտուղարուհին չկարողացավ

հասցնել, և ես ստիպված եղա վարձել մեկ ուրիշի, որպեսզի օգնի մեքենագրելու և տպելու հաճախորդների զեկույցները:

Ես հասկացա, որ ինձ ավելի լավ միջոց էր անհրաժեշտ գործն անելու համար: Ինձ անհրաժեշտ էր համակարգչային ծրագիր, որը կկարողանար հաշվել բոլոր ֆինանսական հավասարումները, որոնք պետք է հաշվարկվեին յուրաքանչյուր հաճախորդի գործի մեջ, ինչպես նաև տպել դրանք: Դրենդան ու ես խնդրեցինք, որ Տերն օգնի մեզ և տրամադրի ծրագրավորող, որին ի վիճակի կլինենք վճարել՝ մեր ընկերության համար ամբողջական ծրագիր գրելու համար:

Այս աղոթքից մի քանի ամիս անց սովորականի պես ես այցելել էի մի հաճախորդի, որը, տեսնելով տպված թղթերը, հարցրեց. «Դուք սա ձեռքո՞վ եք անում»: Ես ասացի. «Այո՛, բայց իրականում ցանկանում ենք տեղափոխել այս ամենը համակարգչային ծրագրի մեջ»: Նա նայեց ինձ և բացատրեց, որ ինքը համակարգչային ծրագրեր է գրում և աշխատում է ամբողջ դրույքով, բայց սիրով կօգնի մեզ և մի ծրագիր կգրի մեզ համար երեկոյան՝ իր ազատ ժամերին: Նա գին ներկայացրեց և հնարավորություն տվեց ինձ՝ հաջորդ տարվա ընթացքում վճարելու իր աշխատանքի դիմաց:

Այդ ծրագիրը փոխեց ամեն բան և թույլ տվեց ինձ վարձել ավելի շատ մարդկանց: Շուտով մենք ունեցանք 300 ներկայացուցիչ Միացյալ Նահանգների արևելյան տարածաշրջանի մեծ մասում, որը հանգեցրեց նրան, որ մեր գրասենյակը դարձավ 5.000 գրասենյակներից առաջինը մեր մատակարարներից մեկի համար:

Մեկնարկելով մեր սեփական ընկերությունը և հետևելով Սուրբ Հոգուն՝ մենք լիովին ազատվեցինք պարտքերից, իսկ մնացածը ձեզ հայտնի է: Ասածս այն է, որ Աստված կտա ձեզ ծրագիր, եթե խնդրեք Նրանից և թույլ տաք, որ Նա անի դա: Նա կտանի ձեզ այնպիսի վայրեր, որտեղ երբեք չեք մտածել, որ կարող եք լինել:

Այսպիսով՝ թույլ տվեք շեշտել, որ դուք ծրագրի կարիք ունեք: Աստված ունի ծրագիր ձեր հաջողության համար: Իրականում, Նա ունի շատ ծրագրեր ձեր հաջողության համար: Նրա գաղափարները և իմաստությունն անվերջ են:

«Որովհետև Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղության խորհուրդները, և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը»:

– Երեմիա 29.11

Ինչպե՞ս եք լսում Աստծո ծրագիրը

Այսպիսով՝ ինչպե՞ս եք լսում ծրագիրը: Ինչպես ասացի, Հոգով աղոթելը լավագույն միջոցն է լսելու համար: Այստեղ ես մանրամասն չեմ անդրադառնա Հոգով աղոթելուն, որովհետև իմ՝ *«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Մարտավարության զորությունը»* գրքում մանրամասնորեն խոսվում է Սուրբ Հոգուն լսելու մասին: Բայց հակիրճ նշումն արդարացված է:

«Բայց իմաստություն ենք խոսում կատարյալների հետ, և ոչ թե այս աշխարհի իմաստությունը, և ո՛չ էլ այս աշխարհի իշխաններինը, որ պիտի խափանվի: Այլ՝ Աստծո ծածուկ իմաստությունն ենք խոսում խորհրդով, որ Աստված հավիտենից առաջ սահմանեց նրան մեր փառքի համար: Որն այս աշխարհի իշխաններից ոչ ոք չճանաչեց, քանի որ եթե ճանաչած լիներին, փառքի Տիրոջը խաչը չէին հանի:

Այլ ինչպես գրուած է՝ ինչ որ աչք չտեսավ, և ականջ չլսեց, և մարդու սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված իրեն սիրողների համար: Բայց մեզ հայտնեց Աստված իր Հոգով:

Որովհետև Հոգին բոլոր բաները քննում է և Աստծո խորքն էլ: Որովհետև մարդկանցից ո՞վ գիտի մարդու բաները, եթե ոչ մարդու հոգին, որ նրանում է. այնպես էլ Աստծո բաները ոչ ոք չգիտի, եթե ոչ Աստծո Հոգին: Եվ մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին, որ Աստծուց է, որ ճանաչենք այն բաները, որ Աստծուց տրվեցին մեզ»:

– Ա Կորնթացիների 2.6-12

Այն, ինչ չենք լսել, տեսել կամ ինչի մասին չենք մտածել, ինչպես նշված է այս խոսքում, հայտնվում է մեզ Սուրբ Հոգու միջոցով: Սա մեծ առավելություն է ինձ համար. ես կարող եմ օգտագործել դա: Երբ դուք դարձաք քրիստոնյա, Սուրբ Հոգին եկավ բնակվելու ձեր մեջ և սկսեց առաջնորդել ձեր կյանքը:

Բայց կա Սուրբ Հոգու մեկ այլ դրսևորում, որ Հիսուսը տվեց եկեղեցուն, որը կոչվում է Սուրբ Հոգու մկրտություն: Սա այն է, ինչ տեղի ունեցավ Պենտեկոստեի օրը, երբ Սուրբ Հոգին վերնատանը իջավ աշակերտների վրա, ինչպես Հորդանան գետում՝ Հիսուսի վրա: Այս ժամանակ է, որ Հիսուսը սկսեց Իր ծառայությունը: Այս ժամանակ է, որ Աստծո զորությունն իջավ Նրա վրա, որպեսզի Նա լիներ Թագավորության վկան: Հիսուսը երեխա ժամանակ հրաշքներ չարեց: Նա չբազմացրեց Իր ընտանիքի կերակուրը կամ չքայլեց ջրի վրայով: Սուրբ Հոգու մկրտությունը հասկանալու համար դուք պետք է հասկանաք, որ կա տարբերություն վերստին ծնվելու (երբ Աստծո Հոգին մուտք է գործում ձեր մեջ) և Սուրբ Հոգու մկրտության միջև (երբ Սուրբ Հոգին իջնում է ձեզ վրա):

> *«Եվ նույն օրը՝ միաշաբաթի իրիկունը, երբ որ դռները փակված էին, այնտեղ, որտեղ աշակերտները ժողովված էին հրեաների վախից, Հիսուսը եկավ և նրանց մեջ կանգնեց և նրանց ասաց. «Խաղաղությո՛ւն ձեզ»: Եվ սա ասելով՝ Իր ձեռքերը և Իր կողը ցույց տվեց նրանց: Եվ աշակերտներն ուրախացան, երբ որ Տիրոջը տեսան:*
>
> *Հիսուսը դարձյալ ասաց նրանց. «Խաղաղությո՛ւն ձեզ, ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում»: Եվ սա ասելով՝ փչեց նրանց վրա և ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին»»:*
>
> – Հովհաննես 20.19-22

Աշակերտները վերստին ծնվեցին հենց այնտեղ, որ գրված է Հովհաննեսի 20-րդ գլխում, մինչդեռ Հիսուսը նրանց ասաց, որ նրանք դեռ պետք է սպասեն Սուրբ Հոգու մկրտությանը, ինչը

հնարավորություն կտա նրանց՝ լինելու Աստծո Թագավորության վկաները:

> *«Որոնց էլ Իր չարչարանքից հետո Իրեն կենդանի կանգնեցրեց շատ ապացույցներով քառասուն օրվա մեջ երևալով նրանց և Աստծո արքայության համար խոսելով: Եվ նրանց միասին ժողովված ժամանակ պատվեր էր տալիս նրանց՝ Երուսաղեմից չհեռանալ, այլ սպասել Հոր ավետիքին, որ ասաց. «Ինձնի՛ց լսեցիք: Որովհետև Հովհաննեսը հիրավի ջրով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգով կմկրտվեք՝ ոչ թե շատ օրեր սրանից հետո»»:*
>
> – Գործք առաքելոց 1.3-5

> *«Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին <u>ձեզ վրա կգա</u>, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և ամբողջ Հրեաստանի և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը»:*
>
> – Գործք առաքելոց 1.8

Աստծո այս օծությունը բերում է Աստծո զորությունը և հնարավորություն տալիս ձեզ անելու Նրա գործերը: Խնդրում եմ, ուշադրությո՛ւն դարձրեք, որ այն գալիս է ձեզ վրա և ոչ թե ձեր մեջ: Դուք կհիշեք նաև, որ Պենտեկոստեի օրը բոլոր աշակերտները, որոնք Երուսաղեմում վերնատանը սպասում էին, մկրտվեցին Սուրբ Հոգով: Ո՞րն էր դրա ապացույցներից մեկը: Նրանք բոլորը խոսեցին լեզուներով: Ա Կորնթացիների 12-րդ գլխում գրված է լեզուներով խոսելու մասին՝ որպես ինը պարգևներից մեկի, որ տրվեց եկեղեցուն: Գուցե ասում եք, թե այդ պարգևների ժամանակն անցել է, բայց ես կտրականապես համաձայն չեմ: Սուրբ Հոգու մկրտությունը բերում է իր հետ բոլոր ինը հոգևոր պարգևները, բայց ես ցանկանում եմ կենտրոնանալ պարզապես մեկի՝ լեզուներով խոսելու պարգևի վրա:

ԱՍՏԾՈ ԱՅՍ ՕԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՐՈՒՄ Է ԱՍՏԾՈ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԻՍ ՁԵԶ ԱՆԵԼՈՒ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԸ:

Նախ՝ սա միգուցե անօգուտ

թվա, քանի որ դուք կարող եք մտածել, թե այս պարգևը միայն անհրաժեշտ է այն դեպքում, եթե դուք հաղորդակցվում եք մարդկանց հետ, որոնք խոսում են ուրիշ լեզվով, և դուք փորձում եք քարոզել Ավետարանը: Սակայն լեզուներով խոսելու պարգևի նպատակը երբեք չի եղել այն, որ կարողանաք խոսել մարդկանց հետ այն լեզվով, որ դուք չգիտեք: Թո՛ւյլ տվեք ցույց տալ, թե ինչու է այն համարվում անգնահատելի պարգև, և ինչու է այն կարևոր ձեր բարգավաճման համար:

> *«Որովհետև լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ՝ Աստծո հետ, որովհետև ոչ ոք չի լսում, բայց հոգով խորհուրդներ է խոսում: Իսկ մարգարեացողը մարդկանց հետ շինություն և մխիթարություն և սփոփություն է խոսում: Լեզվով խոսողն իր անձն է շինում, իսկ մարգարեացողը եկեղեցին է շինում: Ես կամենում եմ, որ դուք ամենդ լեզուներով խոսեք, բայց մանավանդ որ մարգարեանաք: Որովհետև ավելի մեծ է մարգարեացողը, քան թե լեզուներով խոսողը, միայն եթե թարգմանի, որ եկեղեցին շինություն առնի»:*
>
> – Ա Կորնթացիների 14.2-5

Մենք պետք է հասկանանք Պողոսի նամակի ենթատեքստը: Նա խոսում է այն մասին, թե ինչպես պետք է անցկացվի եկեղեցական հավաքույթը: Նա, ըստ էության, ասում է, որ լեզուներով խոսելը ոչ մի օգուտ չի տալիս նրանց, ովքեր այն լսում են եկեղեցական ծառայությանը, որովհետև նրանք չեն հասկանում, թե ինչ է տվյալ անձնավորությունն ասում: Պողոսն ասում է, որ եկեղեցում ավելի օգտակար է մարգարեանալ, քանի որ դա կինչի սովորական լեզվով և ավելի արդյունավետ կլինի:

Բայց երբ խոսքը վերաբերում է լեզուներով անհատական աղոթքին, դա բոլորովին այլ պատմություն է: Լեզուներով խոսելը մեծ օգուտ է նրան, ով խոսում է: Աստվածաշունչն ասում է, որ նա հոգով խորհուրդներ է խոսում: Դուք չգիտեք այս խորհուրդները և կարիք ունեք իմանալու: Երկրորդ՝ Պողոսն ասում է, որ լեզվով խոսողն իր անձն է շինում: Այստեղ «շինել» բառն ունի խրատել,

ցուցումներ տալ իմաստը: Ակնհայտ է, որ եթե դուք կարիք ունեք ինչ-որ բան իմանալու, տվյալ պահին այն գաղտնիք է: Բայց լեզուներով խոսելը ցուցումներ է տալիս նրան, ով խոսում է: Դուք և ես անկասկած դրա կարիքն ունենք, եթե պատրաստվում ենք մշակել ծրագրեր, որոնք վեր են այն ամենից, ինչ արդեն գիտենք: Ինչպես գրված է Ա Կորնթացիների 2.9,10-ում.

> *«…Ինչ որ աչք չտեսավ, և ականջ չլսեց, և մարդու սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար: Բայց մեզ հայտնեց Աստված Իր Հոգով…»:*

Ես այդ օգնության կարիքն ունեմ, դուք՝ նույնպես: Ձեր հաջորդ հարցն է. «Եթե դուք խոսում եք լեզուներով և չեք հասկանում, թե ինչ եք ասում, այդ դեպքում ինչպե՞ս եք որևէ բան ստանում ձեր ասածից»: Շա՛տ լավ, ահա՛ գաղտնիքը: Երբ Սուրբ Հոգին խոսում է ձեր մարդկային հոգու միջոցով, ձեր միտքը սկսում է որսալ որոշ մտքեր, որ հոսում են ձեր միջոցով: Մենք անվանում ենք սա հայտնություն, և բառն էլ առաջացել է «հայտնել» արմատից: Այնպես որ՝ Հոգով աղոթելով, ինչպես Աստվածաշունչն է ասում, լեզուներով խոսելով դուք ընդունակ եք լինում որսալու մտքեր և գաղափարներ, որոնք ձերը չեն:

Գիտեմ, որ բազմաթիվ հարցեր ունեք այս թեմայի վերաբերյալ, ուստի՝ թո՛ւյլ տվեք քաջալերել ձեզ, որ ձեռք բերեք իմ՝ *«Ձեր ֆինանսական հեղափոխությունը. Մարտավարության զորությունը» գիրքը:* Այնտեղ կգտնեք ձեր բոլոր հարցերի պատասխանները:

Դադա՛ր տվեք և աղոթե՛ք մարտավարության համար

Այս պահին պարզապես հասկանանք, որ հենց ցանում եք ձեր սերմը հավատքով, հաջորդ քայլը դադար տալն է և որոշ ժամանակ Սուրբ Հոգով աղոթելը, որովհետև դուք ծրագրի կարիք ունեք: Սա այն է, ինչ արեց Կարլան:

Կարլան ու Թոդն ապրում էին սովորական ամերիկյան ապրելակերպով՝ աշխատավարձից՝ աշխատավարձ, և ավելի ու ավելի

ընկղմվելով պարտքերի մեջ: Մի օր Կարլան նկատեց *«Ֆինանսների կարգավորում»* հեռուստահաղորդումը և հասկացավ, որ պետք է կարգավորեր իրենց ֆինանսական բնագավառը: Հիշում եմ այն նամակը, որ ստացա Կարլայից: Այն ժամանակ նա ասաց, որ չունեն ֆինանսական ծրագիր: Նրանք նույնիսկ չէին կարողանում մի քանի ամիս առաջ նայել. նրանք այնքան ճնշված էին: Բյուջեի ցանկացած պակասություն լրացվում էր վարկային քարտերի միջոցով:

Կարլան գիտեր, որ իրենք պետք է ազատվեին պարտքերից, բայց ինչպես: Իմ գիրքը կարդալուց հետո ամուսնու հետ նա սերմ ցանեց գործարար գաղափարի համար, մասնավորապես այնպիսի գործի, որը կարող էր տնից անել: Թոդն արդեն զբաղված էր տեղի դպրոցում, նա ուսուցիչ էր, ուստի Կարլան մտածում էր, թե ինչով կարող էր օգնել: Գաղափարի համար սերմ ցանելուց հետո ամեն առավոտ նա ժամանակ էր անցկացնում Տիրոջ հետ՝ սպասելով Սուրբ Հոգու ուղղորդմանը:

Մի առավոտ հոգու խորքում նա լսեց «քոթոթներ» բառը: Սկզբում Կարլան մի փոքր շփոթվեց: Քոթոթնե՞ր: Քոթոթնե՞ր բուծել: Մի ժամանակ նրանք շուն էին պահում, բայց քոթոթներ բուծելու մասին նա իրականում չէր մտածել: Երբ այդ երեկո Թոդը եկավ տուն, Կարլան ցանկացավ պատմել նրան, թե ինչ էր Աստված ասել: Ինչպես սպասվում էր, Թոդը մտավախություն հայտնեց ծրագրի վերաբերյալ, բայց քաջալերեց Կարլային ուսումնասիրել հնարավորությունները: Շուտով Թոդն ու Կարլան գնեցին գոլդենդուդելի երկու էգ ձագ և սկսեցին փոքրիկ քոթոթների բիզնեսը: Իհարկե, սկզբում նրանք պետք է մեծացնեին իրենց քոթոթներին, այնուհետև սկսեին բուծման գործընթացը:

Ընթացքում մի քանի անհաջողություններ եղան, բայց առաջին տարին նրանց շներն ունեցան 13 ձագ: Շները վաճառվեցին՝ յուրաքանչյուրը 1500 դոլարով, և Կարլան ասում է, որ արտասվեց, երբ հասկացավ, որ ճիշտ էր լսել Սուրբ Հոգուց: Այդ նույն տարում նաև բարձրացրին Թոդի պաշտոնը՝ դարձնելով նրան տեղի դպրոցի տնօրեն:

Քոթոթների բիզնեսը շարունակեց աճել, և ներկայումս նրանք

ունեն 300-ից ավելի քոթոթներ, իսկ գինը հասել է՝ յուրաքանչյուրը 2500 դոլարի: Նրանց ֆինանսական կյանքը 180 աստիճանով փոխվեց: Անցյալ տարի նրանք մարեցին իրենց տան գումարը և այժմ լիովին ազատ են պարտքերից: Նրանք հրաշալի ճամփորդություններ են կատարել երկրից դուրս և տեսել են, թե ինչքան բան է արել Աստված իրենց ընտանիքում, այնպես որ՝ Կարլան պետք է պատմեր մարդկանց Նրա Թագավորության մասին: Նա հենց նոր է լույս ընծայել իր առաջին գիրքը՝ *«Բարգավաճելու ծրագրեր. ինչպե՞ս Աստված տվեց մեզ ֆինանսական ազատություն քոթոթների միջոցով»* վերնագրով:

Թոդն ու Կարլան ապրում են Թագավորության ապրելակերպով, այն ապրելակերպով, որը գրավում է մարդկանց ուշադրությունը և ստիպում է նրանց կանգ առնել ու մտածել Աստծո մասին: Եսայի 61-րդ գլխում Եսայի մարգարեն խոսում էր եկեղեցու դարաշրջանի մասին՝ ասելով, թե ինչ է Աստված ցանկանում անել մեր կյանքերում, մինչ երկրի վրա ենք:

> *«…Եվ նրանց պիտի կոչեն արդարության կաղնիներ, որ Տերը տնկել է Իր փառավորության համար»:*
>
> – Եսայի 61.3, NIV

Կաղնին շատ ամուր ծառ է և սովորաբար ունի նաև մեծ չափեր: Աստվածաշունչն ասում է, որ մեր կյանքը նման կլինի կաղնու՝ խարսխված, հաստատուն և անշարժ: Այս ծառի պտուղը կլինի արդարությունը, ինչը պարզապես նշանակում է, որ մարդիկ կտեսնեն, թե ինչպիսին պետք է լինի կյանքը, թե ինչն է Աստված արդար անվանում: Մենք Տիրոջ տնկվածներն ենք, ինչը նշանակում է, որ Աստված մեզ, ովքեր ունեն տարբեր մասնագիտություններ և մշակույթներ, կդնի տարբեր տեղերում՝ այնտեղ, որտեղ հարմար է համարում: Աստված ցանկանում է, որ ձեր միջոցով գրավի մարդկանց ուշադրությունը: Նա ցանկանում է, որ մարդիկ ձեր կյանքում տեսնեն Իր ճանապարհների բարի պտուղը: Ինչպես պտղատու ծառը գրավում է իր համեղ պտղով, այնպես էլ Աստված ցանկանում է, որ ձեր կյանքը Երկրի վրա նման լինի երկնքին:

Այսպիսով՝ ինչպե՞ս Թոդն ո Կարլան արեցին դա: Իհարկե, մեծ աշխատանք պահանջվեց քոթոթներին բուծելու համար, բայց ազատությունը հաստատ արժեր դրան: Այդ ազատությունը սկսվեց, երբ Կարլան Աստծուց խոսք ստացավ, այսինքն՝ ծրագիր: Նա լսեց ընդամենը մեկ պարզ բառ՝ «քոթոթներ»: Բայց դա ամենն էր, ինչ անհրաժեշտ էր: Աստված ձեզ հետ էլ կխոսի: Նա կառաջնորդի ձեզ այն կանաչ արոտավայրերի և խաղաղության հանդարտ ջրերի մոտ, որոնց մասին գրված է Սաղմոս 23-ում:

Բայց ինչպես պատկերացնում եք, պարզապես ծրագիրը լսելը բավական չէ: Հաջորդ գլխում քննարկելու եմ հիգերորդ քայլը, և հնարավոր է, որ այն լինի ամենակարևոր գլուխը, քանի որ հինգերորդ քայլում է, որ մարդկանց մեծ մասը ձախողվում է: Բայց սա ձեզ չի վերաբերում, դուք քայլելու եք Աստծո բարության մեջ, ինչպես նրանք, ում պատմությունները կարդացիք այս գրքում: Պատրա՞ստ եք: Անցնենք հինգերորդ քայլին:

ԳԼՈՒԽ 9

ԳՈՐԾԵԼՈՒ ԺԱՄԱՆԱ՛ԿՆ Է

Յուրաքանչյուր հողագործ գիտի, որ ամեն հունձք ունի իր յուրահատուկ և հստակ ժամանակը: Որոշակի մշակաբույսի համար հունձքի ճիշտ ժամանակն իմանալը որոշիչ դեր է խաղում հաջողության կամ ձախողման համար: Լինենք շատ հստակ. դուք կարող եք բաց թողնել հունձքը: Այնպես որ՝ սա շատ լուրջ ու կարևոր թեմա է: Երբևէ եղե՞լ եք խանութում ու տեսել հրաշալի տեսք ունեցող կարմիր խնձոր ու մտածել. «Ինչ հրաշալի տեսք ունի այս խնձորը», բայց երբ տարել եք տուն և համտեսել, ասել եք. «Այս խնձորը համ չունի»: Դա ժամանակի խնդիր է:

Ես չեմ կարող պատմել, թե որքան շատ են ֆինանսական աղետները, որոնց մասին լսել եմ և որոնց հետ գործ եմ ունեցել: Դրանք պատահել են այն մարդկանց հետ, որոնք ցատկել են ինչ-որ գաղափարի մեջ և բաց թողել ժամանակը: Ժամանակին վերաբերող իմ սիրելի սուրբգրային խոսքը Մատթեոսի 13.44-ն է:

> *«Դարձյալ նման է Երկնքի արքայությունը մի արտի մեջ թաքցրած **գանձի**, որ նրան մի մարդ գտնելով թաքցրեց և ուրախությունից գնում, ամեն ինչ, որ ունի, ծախում է և արտը առնում»:*

Այս պատմության մեջ մարդն այնքան իմաստուն էր, որ գիտեր, որ տվյալ պահին ինքն անկարող էր տիրել այդ գանձին: Նա ստիպված էր գնալ և պատրաստվել այն գնելուն:

Որպես օրինակ, երբ Կարլան լսեց «քոթոթներ» բառը, դա չէր նշանակում, որ նա պետք է փակցներ իր քոթոթների գովազդային ցուցանակը: Նա դեռևս չուներ քոթոթներ: Նախապատրաս-

տական մեծ աշխատանք կար անելու: Սկզբում նրանք պետք է գնեին իրենց երկու էգ շներին: Պետք է կառուցեին կացարան նրանց համար և մշակեին ծրագիր ծնվող քոթոթների համար: Կային իրավական հարցեր, որոնք վերաբերում էին անհրաժեշտ պատվաստումներին, որ քոթոթները պետք է ստանային, եթե դրանք նախատեսված էին վաճառքի համար:

Կային նաև հարցեր՝ կապված արտոնագրման, մարքեթինգի, բանկային գործընթացների և հարկերի հետ, ես նշեցի ընդամենը մի քանիսը: Այս բաներն անհրաժեշտ է հաշվի առնել, նախքան կմտնեք ձեր բիզնես գաղափարի հունձքի ժամանակաշրջանի մեջ:

Պատշաճ ջանքեր գործադրելուց հետո դժվարը դեռ առջևում է: Դուք պետք է քայլ անեք այն տեսիլքի մեջ, որի մասին Աստված խոսել է ձեզ հետ: Այո՛, գաղափարն ավելի մեծ կլինի, քան դուք, և քայլ անելիս հնարավոր է՝ որոշակի վախ ունենաք: Բայց վախը բնորոշ էր ձեր հին էությանը: Հիշե՛ք, սա ձեր նոր էությունն է:

Երբ Աստված խոսեց ինձ հետ մեր նոր բիզնեսը սկսելու վերաբերյալ, ես իսկապես անհանգիստ էի: Ես սկսում էի ոչնչից: Թեև Աստված երազում հայտնեց, որ քայլ անեմ, և ես գործադրեցի պատշաճ ջանասիրություն, դեռևս նյարդայնանում էի այդ կապակցությամբ: Ամեն բան կախված էր ինձնից. ես պետք է քայլ անեի և իրականացնեի դա: Երբևէ ունեցե՞լ եք ընկեր կամ ճանաչե՞լ եք մեկին, ով մշտապես խոսում է այն մասին, թե ինչ է անելու, բայց երբեք չի անում: Ես շատերին եմ ճանաչել: Հիշե՛ք, 30 տարուց ավելի է՝ ես պատրաստում եմ առևտրական գործակալների:

Երբ մեկնարկեցի իմ բիզնեսը, ես չունեի դրա նախատիպը: Ապրում էի բացարձակապես միջնորդավճարներով և գործում էի մենակ: Բայց մեկ բան, որ ունեի, խանդավառությունն էր: Երբ Աստված առաջնորդեց ինձ հիմնելու մի ընկերություն, որը կօգներ մարդկանց ազատվելու պարտքերից, ես լցվեցի վճռականությամբ: Կյանքի մեծ մասը տառապել էի ֆինանսական խնդիրներով, և հիմա, երբ գտել էի պատասխանը՝ Աստծո Թագավորությունը, բոլորին ցանկանում էի պատմել այդ մասին: Ես ավելի, քան խանդավառված էի, երբ Աստված օգնեց ինձ իրագործելու

այն ծրագիրը, որը ցույց էր տալիս, թե ինչպես կարող էի ընտանիքների համար մշակել ֆինանսական ծրագրեր, որոնք հնարավորություն կտային նրանց հինգից յոթ տարում, առանց եկամտի փոփոխության, ազատվել պարտքերից, այդ թվում՝ հիփոթեքային վարկից: Ես գիտեի, որ ինձ համար տեղ կար ֆինանսական շուկայում, և ես պատմելու բան ունեի: Բայց պետք է ունենայի արդեն հստակեցված նախատիպ, նախքան կմիացնեի անջատիչը:

Անշուշտ, միշտ կան բաներ, որոնք սովորում եք ճանապարհին, բայց երբ ցատկում եք, պետք է ունենաք արդեն մշակված հիմնական կառուցվածք: Որքան էլ մեծ լինեն հնարավորությունները, արտադրանքը կամ պոտենցիալ վարձատրությունը, միշտ այսօր է այն օրը, որ պետք է քայլ անեք ծրագրի մեջ:

Սա հիշեցնում է ինձ այն իրական խնդիրը, որը, կարծում եմ, հիմնական պատճառն է նրա, որ շատերը չեն հասնում իրենց նպատակներին, չնայած որ Աստծուց ուղղորդում և պատասխան են ստացել իրենց ֆինանսական խնդիրների վերաբերյալ:

Հետաձգում

Հետաձգումը կարող է պայմանավորված լինել անապահովությամբ, վախով կամ պարզապես ծուլությամբ: Բայց մեկ բան հստակ է. հեշտ է անել: Ես կարդացել եմ հետևյալ ուսումնասիրությունը, որը վերաբերում է հետաձգելու հետ կապված շրջանավարտների սովորություններին:

> *Ջենին մաքրում է իր բնակարանը: Քեթին լուծում է մաթեմատիկական գլուխկոտրուկներ: Մեթը ստուգում է մարզական արդյունքները, իսկ Կարմենը թարմացնում է իր ֆեյսբուքյան էջը: Բոլորը հոգեբանության ֆակուլտետի ուսանողներ են, որոնք հետաձգում են այն առաջադրանքները, որ պետք է անեն: Գործողության մեջ է դասական հետաձգումը:*
>
> *Սա դժվար կոտրվող սովորություն է, հատկապես այս օրերին, երբ համացանցը թույլ է տալիս ուսանողներին*

> *մկնիկի սեղմումով խուսափել ուսումնական կարգապահությունից: Ըստ 2007 թվականի մետավերլուծության, որը կատարվել է Կալգարիի համալսարանի հոգեբան, փիլիսոփայության դոկտոր Պիրս Սթիլի կողմից, քոլեջի ուսանողների 80-95 տոկոսը հետաձգում է իր անելիքը, մասնավորապես, երբ հերթը հասնում է գրավոր աշխատանքները կատարելուն[6]:*

Կարծում եմ՝ սա չի վերաբերում միայն շրջանավարտներին: Շեղումներն ուժգին են: Հեռախոսը վերցնելը կամ էլեկտրոնային նամակները բացելն անկասկած ժամանակ սպանող միջոցներ են: Բայց հետաձգումն ունի ավելի աննկատ, դիվային կողմ, որի մասին պետք է տեղյակ լինեք: Այս վտանգավոր թեման լուսաբանելու համար (այո՛, ես ասացի՝ վտանգավոր) ցանկանում եմ, որ կարդանք Ա Կորնթացիների 2.6-8 խոսքերը.

> *«Բայց իմաստություն ենք խոսում կատարյալների հետ, և ոչ թե այս աշխարհի իմաստությունը, և ո՛չ էլ այս աշխարհի իշխաններինը, որ պիտի խափանվեն: Այլ՝ Աստծո ծածուկ իմաստությունն ենք խոսում խորհրդով, որ Աստված հավիտենից առաջ սահմանեց նրան մեր փառքի համար: **Որն այս աշխարհի իշխաններից ոչ որ չճանաչեց, քանի որ, եթե ճանաչած լիներին, փառքի Տիրոջը խաչը չէին հանի**»:*
>
> – Ա Կորնթացիների 2.6-8

Օ՜, ավելի լավ է, որ ինչ-որ տեղ գրի առնեք սա: Սատանան կփոխի իր գործելակերպը, եթե հասկանա, թե ինչ եք դուք անում: Սա է պատճառը, որ Աստված առակներով է խոսում: Սա է պատճառը, որ Աստված երբեմն սպասում է մինչև կեսգիշեր, նախքան կհայտնի ձեր պատասխանը: Դուք պետք է իմանաք և հիշեք, որ մենք թշնամի ունենք: Ձեր թշնամին պարզապես այլաբանական կերպար չէ՝ եղանով ու կարմիր համազգեստով: Աստվածաշունչը հստակ է.

---

6 https://www.apa.org/gradpsych/2010/01/procrastination

«Արթո՛ւն եղեք, հսկո՛ւմ արեք, որովհետև ձեր ոսոխ թշնամին՝ սատանան, գոռոզ առյուծի պես ման է գալիս և որոնում է, թե որին կուլ տա»:

– Ա Պետրոս 5.8

ՀԵՏԱԶԳՈՒՄԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՀԱՑՈՒ ԼԻՆԵԼ:

Անշուշտ, նա չի կարող կուլ տալ որևէ մեկին, բայց ցանկանում է հանել ձեզ երկնքի իրավասությունից և մտցնել իր օրինական իշխանության ներքո, որպեսզի սպանի, գողանա և կործանի: Աստվածաշունչն ասում է՝ ձեր թշնամին: Սատանայի գործելակերպերից մեկը ձեզ գայթակղելն է և ինքնագոհության, հետաձգման մեջ մտցնելը: Սա նրան կտա ժամանակ՝ հասկանալու, թե ինչ եք մտադիր անելու դուք և Աստված:

Մի օր երազ տեսա: Երազում գիշեր էր, և իմ ննջասենյակի պատուհանից լույսն իջավ սիզամարգի վրա, այնուհետև մարեց մթության մեջ: Այնտեղ, որտեղ լույսը մարեց, ստվերում տեսա երկու դև, որոնք դեմառդեմ կանգնած էին իմ պատուհանի առջև՝ ձեռքներին օրագրեր: Գիտեի, որ նրանք ուղարկվել էին՝ դեպի իմ տուն օրինական մուտք գտնելու համար: Նրանք նշումներ էին անում, փնտրում թուլության որևէ կետ, որով կփորձեին կանգնեցնել Աստծո աշխատանքը:

Հետաձգումը կարող է մահացու լինել: Դա ուժեղ է հնչում, այնպես չէ՞: Այն հնչում է ճիշտ հակառակը նրա, ինչ հետաձգման գայթակղությունն ասում է ձեզ: Նրա ձայնը նուրբ է և համոզիչ. «Բան չի լինի, եթե դա ավելի ուշ անես»: Դուք միշտ կարող եք ուշ անել: Բայց մի՞թե դա ճիշտ է: Թույլ տվեք բերել մի օրինակ, որը ցույց կտա, թե որքան վտանգավոր կարող է լինել հետաձգումը:

«Եվ փղշտացին էլ եկավ և Դավթին մոտեցավ, և նրա վահանը կրող մարդը նրա առջև էր: Եվ երբ որ փղշտացին նայեց և Դավթին տեսավ, արհամարհեց նրան, որովհետև նա կարմիր գույնով և գեղեցկադեմ պատանի էր: Եվ փղշտացին ասաց Դավթին. «<u>Մի՞թե ես շուն եմ, որ ինձ վրա ցուպով ես գալիս</u>»: Եվ Փղշտացին նզովեց

Դավթին իր աստվածներով: Եվ փղշտացին ասաց Դավթին. «Եկ ինձ մոտ, և ես քո մարմինը երկնքի թռչուններին և դաշտի գազաններին տամ»»:

– Ա Թագավորաց 17.41-44

«Եվ երբ որ փղշտացին վեր կացավ և եկավ, դիմավորելով Դավթին մոտեցավ, Դավիթն էլ շուտով վազեց պատերազմի ասպարեզը՝ փղշտացուն դիմավորելու: Եվ Դավիթն իր ձեռքը իր մախաղի մեջ կոխեց և այնտեղից մի քար առավ և պարսով շպրտեց և փղշտացու ճակատին զարկեց, և քարը նրա ճակատի մեջ փորվեց, և նա երեսնիվայր գետինն ընկավ»:

– Ա Թագավորաց 17.48,49

Դավթի և Գողիաթի պատմությունը փառահեղ պատմություն է: Իսրայելի ամբողջ ժողովուրդը համակվում է վախով, երբ լսում է Գողիաթի հոխորտանքները: Բայց Դավիթն ասում է, որ կկռվի նրա հետ մեկ պայմանով. ինքն է ընտրելու իր զենքը: Այն մի պարսատիկ է, որը նա տարիներ շարունակ օգտագործել է ոչխարներին պահելիս: Երբ Դավիթը մոտենում է Գողիաթին, վերջինս շփոթվում է և բղավում. «Մի՞թե ես շուն եմ, որ ինձ վրա ցուպով ես գալիս»: Այն, ինչ Գողիաթը մտածում է, որ ցուպ է, իրականում Դավթի մահակն է: Նա չի տեսնում պարսատիկը, որ Դավթի գոտու տակ է: Ո՛չ, Դավիթն օգտագործում է մահակը՝ որպես խայծ, որպեսզի Գողիաթի ուշադրությունը գրավի դրա, և ոչ թե պարսատիկի վրա: Երբ Գողիաթն առաջ է շարժվում Դավթի ուղղությամբ, Դավիթը վազում է ընդառաջ: Սա մեկ այլ մարտավարություն է, որ Դավիթն օգտագործեց: Նա գիտեր, որ Գողիաթի համար շատ ավելի դժվար կլիներ տեսնել պարսատիկը, եթե նա հանկարծակի շարժվեր նրա ուղղությամբ:

ՍԱ ՀԵՆՑ ԱՅՆ Է, ԻՆՉ ՍԱՏԱՆԱՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԱՆԵԼ ՁԵԶ ՀԵՏ: ՆԱ ՈՒԶՈՒՄ Է ԳԵՐԻ ՎԵՐՑՆԵԼ ՁԵՐ ԾՐԱԳՐԵՐԸ:

Բայց ի՞նչ կլիներ, եթե Դավիթը վարվեր այնպես, ինչպես շատերն են վարվում: Վախենալով մտնել

հակամարտության մեջ՝ նրանք պարզապես հապաղում են: Ինչ կլիներ, եթե Դավիթը պարեր Գողիաթի շուրջն այնքան, մինչև որ զգար, որ պատրաստ է իր քայլն անելու: Ես կարծում եմ, որ Գողիաթը կտեսներ պարսատիկը, կհասկանար Դավթի մարտավարությունը և համապատասխանաբար կփոխհատուցեր: Կռիվը տանուլ կտրվեր, և Իսրայելի ամբողջ ժողովուրդը գերի կտարվեր:

Սա հենց այն է, ինչ սատանան ցանկանում է անել ձեզ հետ: Նա ուզում է գերի վերցնել ձեր ծրագրերը: Եթե նա կարողանա ստիպել ձեզ դադար տալ, սպասել, մինչև զգաք, որ պատրաստ եք, նա կունենա ժամանակ՝ փոխելու իր մարտավարությունը և հակահարված տալու Աստծո ծրագրին: Այսպիսով՝ արդյո՞ք հետաձգումը վտանգավոր է: Միանշանակ: Համոզված եմ, որ ձեր կյանքում այն արդեն հազարավոր դոլարներ է արժեցել ձեզ: Դավթի պարագայում այն կարող էր հազարավոր կյանքեր արժենալ:

Սա է պատճառը, որ երբ գիտեք ժամանակը և ունեք ձեր ծրագիրը, քա՛յլ արեք վստահությամբ: Հավատում եմ, որ դուք կունենաք մղում Սուրբ Հոգուց՝ իմանալու, թե երբ է քայլ անելու ճիշտ ժամանակը: Բայց սխալ ուսմունքների պատճառով շատերը վարանում են կամ քայլ են անում, այնուհետև, երբ հակամարտության առջև են կանգնում, հետադարձ քայլ են անում և մտածում, որ հավանաբար բաց են թողել Աստծուն:

Մի՛ վախեցեք հակամարտությունից

Մարդիկ ինձ ասում են, որ երբ իրենք քայլ արեցին, ամբողջ դժոխքը բաց թողնվեց: Դուք սպառազինվել եք առանց վախի դիմակայելու դժոխքին: Թշնամին ապտակ ստացավ այն ծրագրից, որ Սուրբ Հոգին տվեց ձեզ, և այժմ հակազդում է՝ այն խափանելու համար: Նա չի կարող կանգնեցնել այն: Չափազանց ուշ է: Բայց եթե նա կարողանա այնպես անել, որ դուք կասկածեք Տիրոջ այն խոսքին, որն առաջնորդեց ձեզ այստեղ, վախը ձեզ հետ կմղի: Նա ցանկանում է առաջացնել այնպիսի աղմուկ, որը կստիպի ձեզ նահանջել: Բայց հիմա դուք պետք է կանգնեք ամուր ավելի,

քան երբևէ, և օգտագործեք ձեր իշխանությունը՝ նրան հսկողության տակ պահելու համար: Մի՛ վախեցեք ասելուց. «Ո՛չ, դու դա չե՛ս անի», կամ՝ «Ես կապո՛ւմ եմ խառնաշփոթության այս ոգուն, որը փորձում է չարչարել ինձ: Ես գիտեմ, թե ինչ է Տերն ասել, որ անեմ, և ես անում եմ այն, Հիսուսի անունով: Այժմ նահանջի՛ր, սատանա՛»:

Դժբախտաբար, այսօր անուս քրիստոնյաների մեծ մասը զարմանքով է արձագանքում սատանայի հակահարվածին: Նրանք հավատում են, որ եթե Աստված խոսել է իրենց հետ և տվել է Իր ծրագիրը, ուրեմն ամեն բան կընթանա հարթ և արագ՝ առանց անակնկալների:

Այժմ, սխալ մի՛ հասկացեք այն, ինչ ասում եմ: Մենք ունենք բացարձակ իշխանություն չար ոգիների վրա, բայց մենք չունենք բացարձակ իշխանություն մարդկանց վրա: Պետք է նկատի ունենալ, որ չնայած ես Աստծո իրավասության տակ եմ, ինձ շրջապատող շատ մարդիկ Աստծո իրավասության տակ չեն և կդառնան ասեկոսեների ու խառնաշփոթության գերի: Նրանք կարող են սխալ գնահատել իմ շարժառիթները կամ հալածանք բորբոքել իմ դեմ:

Բայց նրանք չեն կարող կանգնեցնել Սուրբ Հոգուց ներշնչված ձեր ծրագիրը: Թշնամին կշարունակի մոտենալ ուշացումով և պակաս ջանասիրությամբ: Աստված նրանից առաջ է և կառաջնորդի ձեզ դեպի ձեր հաղթանակը, եթե ամուր մնաք հավատքում և հրաժարվեք փոխզիջումից:

Քայլ անելու փուլն այն փուլն է, որի մեջ մտնելու համար կպահանջվի ավելի շատ խիզախություն, քան հավատք: Հավատքը հասցրեց ձեզ այս կետին, բայց այժմ կպահանջվի խիզախություն՝ քայլ անելու համար: Կարծում եմ, որ խնդիրն այն է, որ մարդիկ շփոթում են Կարմիր ծովի և Հորդանան գետի պատմությունները:

Կարմիր ծովի պատմության մեջ Իսրայելի ժողովուրդն ազատվում է Եգիպտոսից և հասնում մինչև Կարմիր ծով, որտեղ, կարծես, շրջափակված է ծովով ու լեռներով, քանի որ փարավոնը մտափոխվել է և գալիս է նրանց հետևից: Թվում է, թե չկա փա-

խուստի ճանապարհ: Բայց Մովսեսը բարձրացնում է իր գավազանը (իշխանություն), և Կարմիր ծովը երկու մասի է բաժանվում: Նրանք անցնում են ցամաքով, և փարավոնի զորքը փորձում է հետևել նրանց: Բայց հենց ոտք է դնում ծովի մեջ, ծովը կլանում է նրանց՝ սպանելով բոլորին: Իսրայելն ազատ է Եգիպտոսից և ազատ է ստրկությունից: Սա ազատագրման հզոր գործողություն է, և բոլորս սիրում ենք երգել Աստծո ազատագրման մասին:

Առջևում նրանց խոստումն է՝ Քանանի երկիրը: Այն նրանց հայրերի երկիրն է և խոստացվել է Աբրահամի սերնդին: Երբ նրանք անցնում են անապատով, Մովսեսի խոսքերը հնչում են նրանց ականջներում. այն կաթ ու մեղր բխող երկիր է: Սա անհավատալի է այն մարդկանց համար, որոնք իրենց ամբողջ կյանքում միայն ստրկություն են տեսել: Բայց կա մի խնդիր: Երկիրն արդեն բնակեցված է այլ ազգերով: Երբ նրանք մոտենում են Հորդանան գետին, Մովսեսը որոշում է լրտեսներ ուղարկել, որպեսզի ստուգեն լավագույն ճանապարհը, որով նրանք կշարժվեն գետն անցնելուց հետո, ինչպես նաև բերել այդ երկրի պտուղներից, որպեսզի մարդկանց ապացուցեն, որ այն հնարավորություններով լի հիասքանչ երկիր է:

Բայց լրտեսները ներկայացնում են այնպիսի պատմություն, որն Իսրայելի ժողովրդի մեջ Եգիպտոս վերադառնալու ցանկություն է առաջացնում: Երկիրը լի է պարսպապատ քաղաքներով ու մարդկանցով, որոնք ավելի մեծ են ու ավելի բարձրահասակ, քան իսրայելցիները: Իսրայելցիները հիասթափությունից լաց են լինում և մեղադրում Աստծուն ու Մովսեսին՝ կարծելով, թե իրենց սուտ են ասել: Անհավատության պատճառով Աստված չի առաջնորդում նրանց խոստման մեջ, քանի որ Նա գիտի, որ առանց հավատքի նրանք կկործանվեն: Այդ սերունդն ապրում և մահանում է անապատում այնքան ժամանակ, մինչև որ նրանից ոչ ոք չի մնում:

Աստված հրամայում է Հեսուին առաջնորդել նրանց: Բայց կրկին, երբ մոտենում են Հորդանան գետին, խնդիր է առաջանում: Գետը վարարած է, և ժողովուրդը չի կարող անցնել արագահոս ջրով: Բայց Աստված ևս մեկ անգամ բաժանում է ջուրը, և

իսրայելցիներն անցնում են ցամաքով՝ այս անգամ ոչ թե փախչելով հակամարտությունից, ինչպես այն ժամանակ, երբ հեռացան Եգիպտոսից, այլ՝ մտնելով հակամարտության մեջ, քանի որ պատրաստվում են վերցնել իրենց խոստումը:

Սա այն է, ինչ դուք պետք է իմանաք. երբ քայլ եք անում, կարող են լինել հարցեր կամ խնդիրներ, որ պետք է լուծեք, սակայն մի՛ վախեցեք: Աստված կօգնի և կպաշտպանի ձեզ: Միշտ հիշե՛ք, որ հենց այդ խնդրի հետևում խոստումն է: Երբեք մի՛ մոռացեք դա:

Իրականում, ես պատրաստվում եմ ասել մի բան, որը գուցե ցնցի ձեզ: Եղե՛ք խնդիրներին տեղեկացված: Ո՛չ, ես չեմ խոսում ձեր անձնական խնդիրների շուրջ վախով խորհելու մասին: Ես խոսում եմ հնարավորություն փնտրելու մասին: Հասկանում եք, մարդիկ մեծ գումարներ են վճարում խնդիրներ լուծելու կամ կարգավորելու համար: Բիզնեսը իսկապես պատասխան է ինչ-որ մեկի խնդրին: Օրինակ, մարդիկ ունեն խնդիր. նրանք քաղցած են, ուստի ինչ-որ մեկը «Սաբվեյ» խանութ է բացում: Համոզված եմ, որ նախկինում դուք պատրաստել եք գլանաձև սենդվիչներ, բայց դա չեք վերածել գործարար գաղափարի: Բայց այսօր, «Սաբվեյն» ունի տասնյակ հազարավոր խանութներ երկրագնդով մեկ, որովհետև դրանք լուծում են ինչ-որ մեկի խնդիրը: Եվ դուք կասեք. «Ես կարող էի դա անել», այո՛, կարո՛ղ էիք: Բայց դուք այլ կերպ պետք է մտածեք:

Դրենդան ու ես այսօր միլիոնատերեր ենք ոչ այն պատճառով, որ մենք խելացի ենք կամ հրաշալի տեսք ունենք: Մենք պարզապես սովորեցինք, թե ինչպես է Աստծո Թագավորությունը գործում, և Աստված ցույց տվեց, թե ինչպես լուծենք մեր խնդիրը: Այնուհետև Աստված ցույց տվեց, թե ինչպես օգնենք այլ մարդկանց՝ լուծելու նույն խնդիրը: Սա այնքան էլ դժվար չէ:

Նախապատրաստման վայրը

Հավատքով ցանելուց և ծրագիրն ստանալուց հետո պարզապես մի՛ ցատկեք՝ առանց մտածելու: Հիշե՛ք Մատթեոսի 13-րդ գլխի մեր խոսքը.

*«Դարձյալ նման է Երկնքի արքայությունը մի արտի մեջ թաքցրած **գանձի**, որ նրան մի մարդ գտնելով թաքցրեց, և ուրախությունից գնում, ամեն ինչ, որ ունի, ծախում է և արտը առնում»:*

– Մատթեոս 13.44

Աստված սկզբում կանչում է ձեզ նախապատրաստման վայր: Ուստի՝ չնայած, որ դուք լսում եք Աստծուց, և Նա տվել է ձեզ գաղափար, որով հիանալի գործ եք սկսելու, վստա՛հ եղեք ժամանակի հարցում: Աստված մշտապես ցույց է տալիս գանձը՝ սկզբում մղելով ձեզ նախապատրաստման: Ուշադրություն դարձրեք, որ ես չասացի, որ Աստված տալիս է ձեզ գանձը: Ես ասացի, որ Նա ցույց է տալիս գանձը, այսինքն՝ հայտնում է պատասխանը: Շատերը գանձի մասին հայտնությունը սխալմամբ մեկնաբանել են որպես գանձը վերցնելու ժամանակ, ինչը սարսափելի հետևանքներ է ունեցել: Աստված մշտապես կառաջնորդի ձեզ մարզման և նախապատրաստման վայր, նախքան կուղարկի՝ տիրելու ձեր գանձին:

Ինչ վերաբերում է ինձ, երիտասարդ հասակում Աստված տեսիլք տվեց: Տեսիլքում կանգնած էի՝ Աստվածաշունչը ձեռքիս: Մինչ կանգնած էի՝ ես ոչ միայն տեսա ինձ Աստվածաշունչ քարոզելիս, այլև տեսա այն սենյակը և մարդկանց, որոնց քարոզում էի: Տեսիլքի ժամանակ մի ձայն ինձ ասաց. «Ես կանչում եմ քեզ՝ քարոզելու Իմ Խոսքը»: Ես լսեցի դա երեք անգամ, այնուհետև տեսիլքը վերացավ: Ես 19 տարեկան էի: Այդ ժամանակ ղեկավարում էի հայրիկիս պիցցայի սրահը և իրականում գաղափար չունեի, թե ինչ էր տեսիլքը նշանակում: Գիտեի, որ կանչված եմ քարոզելու Աստծո Խոսքը, բայց դեռևս չգիտեի, թե ինչպես կամ որտեղ էր դա տեղի ունենալու:

Իրականում, դա նախապատրաստման կոչ էր: Այդ հայտնությունը տալուց կարճ ժամանակ անց Աստված ասաց, որ սովորեմ Աստվածաշնչյան դպրոցում, այնուհետև՝ Օրալ Ռոբերտսի համալսարանում: Այնտեղ ես հանդիպեցի իմ կյանքի սիրուն՝ Դրենդային: Օրալ Ռոբերտսի համալսարանն ավարտելուց հետո հիմնեցինք մեր ֆինանսական ընկերությունը՝ մի ծրագիր, որն այդ

պահին պարզապես չէի հասկանում: Ի՞նչ կատարվեց այն կոչման հետ, որ Աստված ուներ իմ կյանքի համար: Բայց Աստված ուներ ծրագիր: Նա օգտագործեց այդ ժամանակը, որպեսզի մարզեր ինձ կյանքի ֆինանսական ոլորտներում, կրթեր Իր Թագավորության օրենքներում ու սկզբունքներում, որոնք դարձան իմ ծառայության անկյունաքարը: Նա նաև օգտագործեց այդ ժամանակը, որպեսզի օգներ ինձ աճելու ինքնավստահության մեջ, քանի որ երիտասարդ տարիքում ես վախենում էի մարդկանց հետ խոսելուց:

Միայն 1995 թվականի սեպտեմբերի 1-ին էր, որ Աստված առաջնորդեց մեզ հիմնելու մեր եկեղեցին՝ տեղական քրիստոնեական ռադիոկայանի նկուղում: Մեր առաջին ծառայությունը գիշերն էր, և երբ կանգնած էի այնտեղ, տեսա այն տեսիլքի հստակ պատկերը, որ Աստված տվել էր ինձ 21 տարի առաջ:

Այնպես որ՝ հասկացե՛ք. երբ ստանում եք տեսիլք, ուղղություն կամ գաղափար, դա սովորաբար չի նշանակում, որ այդ պահին պետք է ցատկ կատարեք: Ինչպես Աստված տվեց ձեզ ծրագիր, այնպես էլ Նա կասի, թե երբ քայլ անեք: Նա կխոսի ձեզ հետ, և դուք կիմանաք դա:

Ինչ վերաբերում է ինձ, 1995 թվականին մենք հաճախում էինք մի փոքրիկ եկեղեցի, որը մոտ էր մեր տանը, և կիրակնօրյա երեկոյան ծառայությանը Աստված սկսեց աշխատել ինձ հետ: Ես նույնիսկ չէի կարողանում լսել, թե ինչ է հովիվն ասում, քանի որ Աստծո Հոգին ուժգին համակել էր ինձ: Ես գիտեի, որ քայլ անելու ժամանակն էր: Դուք նույնպես կիմանաք:

Դրենդան ու ես մեծ սիրով ենք հետևել այն ամենին, ինչ Աստված արել է, բայց մեր փափագն այն ամենն է, ինչ Նա անում է: Մենք նվիրվել ենք՝ մեր ամբողջ կյանքում քարոզելու և սովորեցնելու Թագավորության այս ուղերձը: Ոչինչ չի հուզում մեզ ավելի, քան այն, երբ տեսնում ենք, թե ինչպես են մարդկանց դեմքերը փայլում հայտնությամբ, երբ սովորեցնում ենք նրանց: Մենք գիտենք, թե ինչ է դա նշանակում. նրանք պատասխաններ են լսում:

Մենք գիտենք, որ Թագավորությունը նույնպես ձեր պատասխանն է: Այսպիսով՝ ո՞րն է հինգերորդ սկզբունքը, որ Աստված սովորեցրեց ինձ:

Քայլ 5. Երբ գիտեք ժամանակը, մեթոդը և վայրը, մի՛ հետաձգեք: Երկրորդ՝ մի՛ զարմացեք հակամարտությունից:

Դուք և Աստված կարող եք ավարտին հասցնել աշխատանքը, դրանում կասկած չկա: Պարզապես հիշե՛ք. Աստծո կամքն է, որ դուք բարգավաճեք:

> *«Սիրելի՛, աղոթք եմ անում, որ ամեն բանի մեջ բարգավաճես և առողջ լինես, ինչպես քո հոգին է բարգավաճում»:*
>
> – Գ Հովհաննես 2, NASB

Թույլ մի՛ տվեք, որ որևէ մեկն ասի, որ Աստծո կամքը և Նրա լավագույն ցանկությունը չէ, որ դուք առողջ լինեք և բարգավաճեք կյանքում: Սա այն է, ինչը սատանան գողացավ երկրային տիրույթից, և ինչն Աստված վերականգնեց ձեզ համար Հիսուս Քրիստոսում: Կրոնը մարդկանց սովորեցրել է այսպիսի ստեր Աստծո մասին: Երբեմն մարդիկ պետք է մոռանան այն հերյուրանքը, որ սովորեցրել են նրանց, նախքան կկարողանան սովորել ճշմարտությունը: Վերջերս ես ստացա հետևյալ էլեկտրոնային նամակը, որը ցույց է տալիս, թե որքան կարևոր է նորոգել միտքը՝ համաձայն նրա, ինչ Աստված իսկապես ասում է:

> *Հարգելի՛ Գարի,*
>
> *Իմ անունն Անետ է: Ես մեծացել եմ մկրտական եկեղեցում՝ հովվի ընտանիքում, մանուկ հասակում փրկվել եմ և ուժգնորեն սիրել Հիսուսին: Դառնալով չափահաս երիտասարդ՝ մկրտվել եմ Սուրբ Հոգով և սկսել հասկանալ ճշմարիտ երկրպագությունը, բժշկությունը, ազատագրումը, հոգևոր պարգևները և այլ ճշմարտություններ Աստծո Թագավորության մասին: Ես սովորել եմ ցանելու և հնձելու հիմնական սկզբունքները Քրիստոսի մարմնի տարբեր ուսուցիչների միջոցով: Բայց երբ իմ ամուսինը՝ Ջոնը, հանդիպեց ձեր ուսմունքներին, միայն այդ ժամա-*

նակ ես գիտակցեցի, որ ունեմ իսկական խնդիր՝ հավատալու, որ քրիստոնյաները, հատկապես հովիվները կամ ծառայողները, հիմնական կարիքները լրացված տեսնելուց վեր, պետք է ձգտեն բարգավաճելուն: Մենք բացահայտեցինք, որ մեզնից ոչ ոք իրականում չի հասկանում, թե ինչպես է Աստծո Թագավորությունը գործում:

Մենք ծառայության մեջ էինք և հավատարիմ էինք տասանորդին: Մենք նաև առատաձեռնորեն տալիս էինք և նույնիսկ սովորեցնում էինք ցանելու և հնձելու սկզբունքը: Բայց համարում էինք, որ ապրում ենք համեմատաբար հարմարավետ կյանքով, և դա այն ամենն էր, ինչ պիտի ակնկալենք: Այդպես էր մինչև 2003 թվականը, երբ ուժեղ հրդեհ բռնկվեց մեր նավամատույցում, որտեղ տեղակայված էին մեր բիզնեսի և ծառայության գրասենյակները: Այնուհետև տեղի ունեցան մի շարք այլ իրադարձություններ, որոնք փոխեցին ամեն բան: Ջոնը սրտի խնդիրներ ունեցավ, և անհրաժեշտ եղավ սրտի բաց վիրահատություն անել: Այդ ժամանակ մենք չունեինք առողջության ապահովագրություն և ընկանք հիվանդանոցային մեծ ծախսերի տակ: Նրա անաշխատունակ լինելն ավելի վատացրեց իրավիճակը: Այնուհետև մեր կողմից կայացված մի քանի վատ որոշումների հետևանքով ավելի մեծ ֆինանսական խնդիրների առջև կանգնեցինք: Մինչև 2015 թվականը մեր ֆինանսական կյանքը բարեկեցիկից վերածվեց խոշոր պարտքերով, այդ թվում՝ հարկային պարտքերով բեռնավորված կյանքի:

Մենք մշտապես եղել ենք առատաձեռն, որովհետև սիրում ենք տալ և հավատում ենք ցանելուն ու հնձելուն: Մենք ավելի, քան երբևէ հուսահատորեն փնտրում էինք Տիրոջը՝ պատասխանների համար: Այն ժամանակ Ջոնը հեռուստատեսությամբ հանդիպեց ձեր ուսմունքներին: Սկզբում նա ասաց. «Դուք չեք կարող գնել Աստծուն այդպես», և անջատեց հեռուստացույցը: Բայց մի քանի օր անց կրկին հանդիպեց ձեր հաղորդմանը և այդ ժամանակ չկարողացավ չլսել: Վերջում նա պատվիրեց այդ պահին հասանելի ձեր բոլոր ուսումնական նյութերը:

Երկու տարի շարունակ մենք սերտեցինք այդ նյութերը, մինչև որ երկուսս էլ ընդունակ էինք բաց թողնելու այն խելացնոր համոզմունքը, թե սխալ է ձգտել առատության և ունենալ ավելի, քան բավական է:

Մի օր գրեթե տասներորդ անգամ դիտում էինք այն տեսասկավառակը, որտեղ սովորեցնում եք Մատթեոսի 17-րդ գլխից՝ այն մասին, թե ինչպես է Հիսուսը Պետրոսին պատվիրում մի ձուկ բռնել և ձկան բերանում եղած մետաղադրամով վճարել հարկերը, միաժամանակ օրինակ եք բերում Դ Թագավորաց 4-րդ գլխից՝ մի կնոջ մասին, որն օգտագործեց այն, ինչ ուներ տանը:

Հանկարծ հիշեցի, որ մի քանի տարի առաջ մեր ընկերներից մեկը տվել էր մեզ ոսկե մետաղադրամ՝ նրա համար կատարած աշխատանքի դիմաց: Այն բավական չէր մեր պարտքը մարելու համար, բայց «ինչ-որ բան» էր, որ ունեինք մեր տանը և կարող էինք ցանել: Այդ մետաղադրամը ցանեցինք ձեր ծառայության մեջ և դարձանք «Ներքին շղթայի» գործընկեր ու սկսեցինք հետևել, թե ինչ էր Աստված անելու:

Հաջորդ մի քանի ամիսներին շարունակեցինք սերտել ձեր ուսմունքները և պայքարում էինք մեր գլուխները ջրից վերև պահելու համար՝ միաժամանակ վճարումներ կատարելով պարտքերի դիմաց: Այնուհետև մի գիշեր երազ տեսա, որ Աստված ցույց տվեց, որ հսկայական գումար է գալիս մեզ մոտ: Հաջորդող շաբաթների ընթացքում մենք տեսանք մի քանի փոքրիկ ֆինանսական օրհնություններ: Մենք շարունակեցինք աղոթել և տալ ավելին, ինչպես որ Աստված ուղղորդում էր, և հոչակեցինք Աստծո ճշմարտությունները՝ ուշադիր հետևելով, որ հնազանդվենք այն ամենին, ինչ հավատում էինք, որ Նա ասում է մեզ անել:

Այնուհետև փոխվեց անհնարին թվացող մի իրավիճակ: Կարճ ժամանակ անց մենք տեսանք երազանքի իրականացումը: Այն գումարը, որ ստացանք, շատ ավելին էր նրանից, ինչ մեզ անհրաժեշտ էր պարտքը մարելու

համար: Այժմ մենք ազատ ենք պարտքերից: Այժմ մենք փնտրում ենք մարտավարություններ, թե ինչպես իմաստուն կերպով ներդրում կատարենք և ապրենք կրկնակի չափի կյանքով, որպեսզի կարողանանք տալ առատաձեռնորեն՝ մշտապես և ամեն առիթով:

– Ջոն և Անետ

Ամեն ժամանակ մենք ստանում ենք այսպիսի էլեկտրոնային նամակներ այն մարդկանցից, որոնք սովորում են ճշմարտությունն Աստծո և Նրա Թագավորության մասին ու գիտակցում են, որ կրոնը խաբել է իրենց:

Ես հայտնաբերեցի, որ երբ իմ միտքը նորոգվեց Աստծո բարության և Նրա Խոսքի համար, ես ընդունակ եղա աճելու այն հայտնության մեջ, որն ինձ անհրաժեշտ էր՝ ազատ լինելու համար: Հիշե՛ք, երբեք չկասկածեք Աստծուն: Եթե ձեր կյանքում կա իրավիճակ, որը թվում է, թե ձախողում է Աստծո Թագավորության կողմից, արե՛ք այն, ինչ արեցին աշակերտները: Նրանք չհարցրին. «Հիսո՛ւս, ինչո՞ւ չհանեցիր այդ դևին»: Ո՛չ, նրանք հարցրին. «Ինչո՞ւ մենք չկարողացանք հանել դևին»: Նրանք գիտեին, որ կարճ միացումն իրենց կողմից է, և խնդրեցին Հիսուսին օգնել իրենց, որ հասկանան այն: Եթե ձեր կյանքում չեք տեսնում այն, ինչ Աստվածաշունչն ասում է, որ ձերն է, խնդրե՛ք Աստծուն, որ ցույց տա պատճառը: Նա կխոսի ձեզ հետ և կօգնի հասկանալու, թե ինչպես է Իր զարմանահրաշ Թագավորությունը գործում:

Հենց երեկ իմ եկեղեցուց մի գործարար իր բանկից լսեց, որ դաշնային դրամաշնորհը, որ սկզբում խոստացել էին իրեն, մերժվել է: Նա սպասում էր այդ գումարին և դրա հետ կապված ծրագրեր էր կազմել: Առանց այդ օգնության՝ նա ստիպված կլիներ ազատել իր աշխատակիցներին: Երբ նա բանկից հարցրեց, թե ինչու է գումարը մերժվել, նրանք չկարողացան պատասխանել: Քանի որ նա մտածում էր, որ բավականին շատ գումար է ստանա-

ՆԱ ԿԽՈՍԻ ՁԵԶ ՀԵՏ ԵՎ ԿՕԳՆԻ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ, ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ԻՐ ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ:

լու, նախապես իր ունեցած փողը ներդրել էր անհրաժեշտ պարագաների մեջ: Բայց հիմա, երբ գումարը չէր լինելու, նա մնացել էր առանց փողի և չգիտեր ինչ անել: Միակ բանը, որ նա ուներ, գրպանում դրված նվեր քարտն էր, որ ստացել էր ինչ-որ մեկից: Նա անմիջապես մեքենայով ուղևորվեց եկեղեցի, քանի որ գիտեր, որ պետք է ցաներ այն, ինչ ուներ, և հավատար, որ Աստված կօգնի իրեն այդ դժվար ժամանակաշրջանում: Եկեղեցում նվեր քարտը որպես սերմ ցանելուց ժամեր անց բանկը զանգեց նրան և ներողություն խնդրեց՝ ասելով, որ հավանաբար սխալ է եղել: Եվ գումարը պետք է ուղարկեին նրան:

Դուք դեր ունեք խաղալու

Գիրքն ավարտելիս՝ թո՛ւյլ տվեք փոխանցել իմ վերջին խոսքերը, որոնք վերաբերում են ձեզ անհրաժեշտ դրամական միջոցները ստանալուն: Ես հայտնաբերեցի, որ Աստծո մարդկանցից շատերն ունեն սիրտ՝ տալու համար, սիրտ՝ մարդկանց համար, բայց չունեն փող: Կարծում եմ, որ հիմնական պատճառը, որ մարդիկ չեն տեսնում իրենց զոհաբերության հատուցումը, սխալ ընկալումն է այն ամենի, ինչ պետք է տեղի ունենա տալուց հետո: Շատ քրիստոնյաներ սխալմամբ կարծում են, որ Աստված պարզապես բերելու է նրանց այն գումարը, որի համար հավատում են: Բայց դա հնարավոր չէ, քանի որ Աստված չունի փող: Ամբողջ փողը երկրային տիրույթում է, և այն ընդամենը առևտրի (ինչ-որ բան գնելու կամ վաճառելու) միջոց է:

Ուստի՝ երբ տալիս ենք, եթե հասկանում ենք գործընթացի այս կողմը, ապա պետք է լսենք Սուրբ Հոգուն ծրագրի, ուղղորդման կամ գաղափարի համար, որոնք կօգնեն մեզ կա՛մ ստեղծելու, կա՛մ ձեռք բերելու նյութական բարիքներ շուկայում: Սա չի նշանակում, որ դուք պետք է ունենաք բիզնես՝ որպես այդպիսին, բայց Սուրբ Հոգին կուղղորդի ձեզ շուկայում որևէ տեղ՝ ձեր ուռկանը գցելու համար: Ուռկանը մի բան է, որն ունի ընդունակություն որսալու կամ ստեղծելու փող շուկայում: Աստված կուղղորդի ձեր քայլերը և այն ծրագիրը, որին դուք պետք է հետևեք: Մարդկանց մեծ մասի համար ես հավատում եմ, որ ամենալավ, ամենաարագ և

ամենից հավանական ուռկանը բիզնեսն է: Երբ ասում եմ բիզնես, ես չեմ բացառում որևէ խոշոր ընկերությունում աշխատելը, բայց ուռկանը պետք է բավականաչափ մեծ լինի, որպեսզի որսա այն ձկներին, որոնց կարիքն ունեք: Դա կարող է լինել ձեր կամ մեկ ուրիշի բիզնեսը:

Բայց երբ խոսքը վերաբերում է ուռկաններին, իմ փորձառությունից գիտեմ, որ մարդկանց մեծ մասը կետեր է որսում լոգարանում: Թո՛ւյլ տվեք բացատրել: Ենթադրենք՝ ինչ-որ մեկն աշխատում է տեղական մթերային խանութում՝ վաստակելով ժամում 10 դոլար: Բայց նա ցանկանում է մարել իր 150.000 դոլարանոց տան գումարը և ուզում է գործի դնել Թագավորության օրենքը՝ այն իրականացնելու համար: Շա՛տ լավ, առայժմ ամեն ինչ լավ է:

Նա լսում է Թագավորության օրենքներից մեկի՝ ցանելու և հնձելու մասին, և ցանում է ու հավատում, որ կմարի տան գումարը: Կրկին, առայժմ ամեն ինչ լավ է: Բայց ինչ-ինչ պատճառով կարծում է, որ գումարը պարզապես հայտնվելու է: Նա գիտի, որ իր աշխատանքը հնարավորություն չի տալիս «որսալու» այնքան գումար, որ մարի տան պարտքը, ուստի իր հույսը դնում է Տիրոջ վրա (և դա լավ է): Բայց երբ ասում եմ «հույսը դնել Տիրոջ վրա», դուք պետք է հասկանաք, որ մեր հույսը դնում ենք Տիրոջ վրա, որպեսզի Նա տա մեզ իմաստություն և ուղղորդում՝ այդ գումարը «որսալու» համար: Եվ դա կարող է նշանակել, որ խոշոր փոփոխություններ են տեղի ունենալու:

Մարդիկ չեն կարողանում հասկանալ այն, որ գուցե անհրաժեշտ լինի, որ կետ որսալու համար Աստված ուղղորդի նրանց դեպի նոր լիճ, այլ ոչ թե իրենց ծանոթ լոգարանը: Հասկանո՞ւմ եք, ձեր լոգարանում կետեր չկան: Ժամում 10 դոլար վաստակելով՝ 150.000 դոլարանոց տան գումարը մի քանի տարում մարելը դժվար կլինի: Բայց Աստված գիտի, թե որտեղ են այն ձկները, որոնք ձեզ անհրաժեշտ են՝ ձեր նպատակին հասնելու համար: Հիշե՛ք Պետրոսի և ձկների հսկայական որսի պատմությունը: Պետրոսը ձկնորսություն էր արել ամբողջ գիշեր և ոչինչ չէր բռնել, բայց Հիսուսն ասաց նրան, թե որտեղ ձկնորսություն անի, և դրանից հետո Պետրոսի նավը չէր կարողանում պահել բոլոր

ձկներին: Ո՞րն է տարբերությունը: Ուղղորդման խոսք. «Ուռկանները խո՛րը նետեք»: Հասկանո՞ւմ եք, Պետրոսը սխալ վայրում էր ձկնորսություն անում, բայց Հիսուսը նրան ասաց, թե ինչ անի, և նա հաջողություն ունեցավ:

Երբ Դրենդան ու ես լուրջ պարտքերի մեջ էինք, մենք ստիպված էինք սովորել լսել Աստծուն և հետևել Նրան՝ ուռկանները նետելով ավելի ու ավելի մեծ լճերի մեջ, որպեսզի որսայինք այն ձկներին, որոնց կարիքն ունեինք: Աստծո ուղղորդումը շարունակ տանում էր մեզ ավելի ու ավելի խորը ջրերի մեջ: Անկեղծ ասած՝ Աստված առաջնորդեց մեզ այնքան հեռու, որ այլևս չէինք կարողանում տեսնել ցամաքը: Այն շատ ահարկու վայր էր, քանի որ երբեք չէինք եղել այնտեղ, և հատկապես ահարկու էր, երբ փոթորիկներ էին բարձրանում:

Քանի որ մարդկանց մեծ մասն ապավինում է Աստծուն՝ սպասելով, որ փողը կհայտնվի, նրանք այդպես էլ չեն լսում որևէ բան, որն անծանոթ է իրենց և առաջնորդում է դեպի նոր ու ահարկու վայրեր, որտեղ նախկինում երբեք չեն եղել: Մարդկանց մեծ մասը նայում է նրան, ինչը ծանոթ է իրեն, ինչն արդեն գիտի: Բայց կետերը ձեր լոգարանում չեն. դուք պետք է մտնեք խորը ջրերի մեջ:

Այնպես որ՝ հիշե՛ք. մենք չպետք է ձեռքներս ծալած նստենք, երբ ցանում ենք: Երբ իսկապես ցանում ենք, մենք կարող ենք կառչել Աստծո Խոսքից և իմանալ, որ Աստված կառաջնորդի մեզ դեպի հունձքը: Բայց մենք պետք է ականջ դնենք ուղղորդմանը, հետևենք դրան և ունենանք ուռկաններ, որպեսզի որսանք կետերին, երբ հասնենք խորը ջրերին:

Շատերը քայլեր են անում՝ փոխելու լճերը, բայց չեն փոխում մեթոդները, որոնք օգտագործում էին իրենց բերքը հնձելու համար: Կապտախռիկի կարթը չի պահի կետին: (Ի դեպ՝ ես չեմ ասում, որ մենք պետք է կետեր որսանք: Ես ընդամենն օգտագործում եմ սա, որպես օրինակ, իր չափերի համար):

Այն պահից, երբ դուք ճիշտ վայրում եք, ձեր մեթոդները պետք է կարողանան դիմանալ ավելի մեծ ծանրության և ճնշման, որ կպահանջի ավելի մեծ հունձքը: Ժամանակ է հարկավոր այս ամենը կազմակերպելու համար: Շատ անգամներ Աստված գիտի, որ

մենք ընդունակ չենք ճիշտ վարվելու այն կետի հետ, որին որսում ենք: Բայց Աստված կմարզի մեզ, և մենք կարող ենք վստահ լինել, որ այդ որսն ափ կհասցնենք, եթե չթուլանանք:

Որպես ամփոփում՝ մենք պետք է վերջ տանք այն մտածելակերպին, թե փողը հրաշքով կհայտնվի կամ, ինչպես ես եմ անվանում, փոստարկղային մտածելակերպին (թեև Աստված անում է զարմանահրաշ բաներ): Ավելի շուտ, մենք պետք է աշխատենք Աստծո հետ, պատրաստվենք հունձքին և անենք մեր մասը՝ օգտագործելու յուրաքանչյուր հնարավորություն, որ Աստված դնում է մեր առջև:

Ձեր ձեռքերում է մատակարարման զորությունը: Ո՛չ, ես չեմ խոսում իմ գրքի վերնագրի մասին: Ես խոսում եմ Սուրբ Հոգու և Թագավորության մասին, որի մեջ Աստված դրել է ձեզ: Այնպես որ՝ անցե՛ք գործի և ձեր հաջողությամբ ու օրինակով շատերին շահե՛ք Քրիստոսի համար:

Այս էլեկտրոնային նամակը հենց նոր ստացա և մտածեցի, որ, նախքան ավարտելը, այն հրաշալի հիշեցում կլինի:

> *«Համաշխարհային տնտեսության անկման ժամանակ մեր ընկերությունն ունեցավ ընդամենը 4.000 դոլարի պարտք, իսկ 8.000 դոլարի պարտքը չեղարկվեց: Այնուամենայնիվ, կա ավելին: Մենք նայում էինք մեր ընկերության ֆինանսներին և հասկացանք, որ այսօրվա դրությամբ մեր ընկերության զուտ եկամուտը 2020 թվականի համեմատ գերազանցել է ամբողջ 2019 թվականի զուտ եկամուտին: Մենք բարգավաճում ենք շատ ավելի, քան կարող ենք խնդրել կամ մտածել (տես Եփես. 3.20), մինչդեռ երկրային անիծված համաշխարհային տնտեսությունն անկում է ապրում: Մենք այնքան խանդավառված ենք նրանով, ինչ Աստված անում է: Նա ԱՅՆՔԱՆ հավատարիմ է Իր Խոսքին:*
>
> *Շնորհակալությո՛ւն, շնորհակալությո՛ւն, շնորհակալությո՛ւն Գարիին ու Դրենդային, նրանց ընտանիքին, աշխատակազմին և գործընկերներին Աստծո Խոսքը մեր*

կյանքի մեջ բերելու համար: 17 տարի մենք ապրել ենք աղքատության ու չքավորության մեջ այնպես, ինչպես Գարին ու Դրենդան՝ 9 տարի, մինչև որ մեր հովիվները սկսեցին եկեղեցում չորեքշաբթի օրերին ցուցադրել «Ֆինանսների կարգավորում» հաղորդաշարը: Դա 5.5 տարի առաջ էր, և մենք երբեք նույնը չենք եղել: Կրկին շնորհակալությո՛ւն, եղե՛ք օրհնված»:

Պատմե՛ք ինձ ձեր պատմությունները GaryKeesee.com կայքում: Ուրիշները կարիք ունեն լսելու, թե ինչ հզոր կերպով է Թագավորությունը գործում ձե՛ր կյանքում:

Գարի Կիսիի
«Ձեր ֆինանսական հեղափոխությունը»
գրքաշարի գրքերը

Համաձայնության զորությունը
Հանգստի զորությունը
Մարտավարության զորությունը
Առատաձեռնության զորությունը

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մատակարարման զորությունը

Պայքարում եք գոյատևելու համա՞ր...
թե՞ կարող եք մեծ երազանքներ ունենալ:

Պարտքի գերի՞ եք...
թե՞ հետամուտ եք Աստծուց սահմանված ձեր նպատակին:

Ո՞րն է առավել բնորոշ ձեզ:

Ի՞նչը կարևոր նշանակություն կունենա ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ:

Մատակարարում:

Բոլորս կարող ենք համաձայնել, որ կյանքում մեզ անհրաժեշտ բաների համար մատակարարումն ունենալը կենսական անհրաժեշտություն է:

Բայց արդյո՞ք իսկապես հասկանում եք մատակարարման ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

Գարի Կիսին ցանկանում է հեշտացնել այն ձեզ համար:

«Ձեր ֆինանսական հեղափոխությունը» գրքաշարի չորրորդ հերթական հրապարակման մեջ Գարին բացահայտում է իր և ուրիշների հաջողության կարևոր բաղադրիչներից մեկը և Աստծո Թագավորության մեկ այլ ՎՃՌՈՐՈՇ գաղտնիք. Մատակարարման զորությունը:

Դուք կսովորեք.

- ՀԻՆԳ ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ, որոնց միջոցով կարող եք ստանալ ձեզ անհրաժեշտ մատակարարումը:
- Հավատքի կարևորությունը, և ինչպես կարող եք ասել, որ հավատքի մեջ չեք:
- Ինչպես հետաձգումը կարող է մահացու լինել:
- Արդյո՞ք կարող եք հավատալ, որ կհաղթեք վիճակախաղում (այս մասին նույնպես խոսվում է):
- Եվ շատ ավելին:

Միացե՛ք Գարիին այս հետաքրքրաշարժ ճանապարհորդության մեջ և բացահայտե՛ք, թե ինչպես գործի դնեք Մատակարարման զորությունը ձեր կյանքում:

Գարի Կիսին հեղինակ է, քարոզիչ, գործարար, ֆինանսական մասնագետ և հովիվ, որի ձգտումն է օգնել մարդկանց հաղթելու կյանքում, հատկապես՝ հավատքի, ընտանիքի և ֆինանսների բնագավառներում: Գարին և կինը՝ Դրենդան, ստեղծել են մի քանի հաջողակ ընկերություններ և «Հավատքի կյանք՝ հիմա» ծառայության հիմնադիրներն են, որը թողարկում է երկու հեռուստատեսային հաղորդում՝ «Ֆինանսների կարգավորում» և «Դրենդա» անվանումներով, կազմակերպում է համաժողովներ աշխարհով մեկ և տրամադրում է գործնական նյութեր: Կիսիները հովվում են նաև «Հավատքի կյանք» եկեղեցին, որը գտնվում է Օհայո նահանգի Կոլամբուս քաղաքի մոտակայքում:

GKM GARY KEESEE MINISTRIES

garykeesee.com